ՄՈՒԳԱ ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԴԵՄ ՀԱԿԱԶԴՈՒՄ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ, ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տեղեկատվական միջավայրի հետազոտություն.

ՀԱՅԱՍՏԱՆ

INFO OPS POLSKA

www.infoops.pl | www.dfrlab.org

DFRLab

MUGA նախագիծ

Տեղեկատվական միջավայրի ուսումնասիրություն:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒԳԱ նախագիծը իրականացվում է INFO OPS Polska հիմնադրամի և DFRLab-ի (Atlantic Council) կողմից:

Նախագիծը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի «Հանրային դիվանագիտություն 2024-2025 – եվրոպական դիտանկյուն և ապատեղեկատվության դեմ պայքար» մրցույթի շրջանակներում:

Հրապարակումը արտահայտում է միայն հեղինակների տեսակետները և չի կարող համարվել Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պաշտոնական դիրքորոշում:

Ministerstwo Spraw Zagranicznych

Բովանդակություն՝

Ներածություն 6

1. Տեղեկատվական միջավայր՝ բնութագրում 10

ա) Ավանդական մեդիա 11

1. Պետական 11
2. Մասնավոր 12
3. Կապված որոշ քաղաքական, կրոնական և էթնիկ խմբերի հետ 34
4. Օտարերկրյա 34

բ)Այլընտրանքային մեդիա (բլոգերներ, ինֆլուենսերներ, սոցիալական մեդիա, YouTube և այլն) 38

1. Սոցիալական մեդիայի առանցքային հաշիվներ 40
2. Այլ Telegram-յան ալիքներ. 44
3. Սփյուռք 45
4. Տարեկան կրկնվող ազգային և տարածաշրջանային միջոցառումներ և իրադարձություններ 46

գ) Հասարակական կազմակերպություններ և այլ ոչ պետական կառույցներ, որոնք ազդում են հանրային կարծիքի վրա 47

2. Հասարակության տեղեկատվական սովորույթները 52

ա) Պետական մեդիայի դիտումներն ու ընկալումը 60

բ) Ոչ պետական, այդ թվում՝ կուսակցական և կրոնական մեդիաների դիտումներն ու հանրային ընկալումը 63

գ) Համացանցային աղբյուրների, այդ թվում՝ չհաստատված տեղեկությունների տարածվածությունը 72

դ) Օտարերկրյա լրատվամիջոցների սպառման միտումները 76

ե) Բամբասանքային բնույթի տեղեկությունների հանդեպ խոցելիությունը, այդ թվում՝ դավադրության տեսությունների նկատմամբ 80

զ) Կրոնական կառույցների դիտարկումը որպես տեղեկատվության աղբյուր 82

3. FIMI-ի առանցքային ռեսուրսները.....84

ա) Ընկերություններ.....84

բ) NGO (ՀԿ – հասարակական կազմակերպություններ) 88

դ) Կրոնական առաջնորդներ.....89

ե) Ռազմական ղեկավարներ, ռազմական համագործակցություն և ոչ պետական զինված կազմավորումներ 93

զ) Ավանդական մեդիա 97

է) Այլընտրանքային մեդիա.....99

ը) Գիտական և ակադեմիական համագործակցություն 100

4. Ընտրված մանիպուլյացիոն տեխնիկաներ և տակտիկաներ, լեզվային ազդեցության մեխանիզմներ, գործողություններ և հոգեբանական հետևանքներ – նույնացում և վերլուծություն.....102

5. Արևմուտքի մասին ընկալումները թիրախավորող քարոզչական գործողություններ.....150

ա) Արտաքին գործոններով պայմանավորված.....151

բ) Ներքին գործոններով պայմանավորված 151

գ) Գործողությունների օրինակներ 152

6. Լեհաստանի դեմ ուղղված քարոզչական գործողություններ 169

ա) Արտաքին գործոններով պայմանավորված.....170

բ) Ներքին գործոններով պայմանավորված 170

գ) Գործողությունների օրինակներ 170

7. Դեպքի ուսումնասիրություն՝ Լեհաստանի դեմ ուղղված նարատիվի վերլուծություն՝ հիմնված DISARM մոդելի վրա.....178

8. Դեպքի ուսումնասիրություն՝ Հայաստանի եվրոպական ձգտումների թուլացում 189

9. Առաջարկություններ.....203

ա) Տեղեկատվական միջավայրի ամփոփում 203

բ) Ռազմավարական վերլուծություն. տարածաշրջանային իրավիճակի ազդեցությունը Լեհաստանի ռազմավարական նպատակների վրա 206

գ) Տարածաշրջանում ռուսական քարոզչության հիմնական ուղերձների ամփոփում 208

դ) Իրականացման ուղիներ.....210

ե) Դասընթացներ 212

զ) Տեղեկատվական և կրթական գործողություններ.....213

է) Հասարակական բևեռացման կանխարգելում և հաղթահարում 215

ը) Հետագա ուսումնասիրություններ 215

Ներածություն

2018 թվականին, աճող ավտորիտարիզմի և համատարած կոռուպցիայի դեմ զանգվածային բողոքների ալիքի արդյունքում իշխանության եկավ Նիկոլ Փաշինյանը և նրա ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը: Դա նշանավորեց ժողովրդավարական բարեփոխումների մեկնարկը և Հայաստանի աստիճանաբար մերձեցումը Արևմուտքին: Սակայն գործընթացն ուղեկցվեց Ռուսաստանի հակազդեցությամբ. Մոսկվան ձգտում էր պահպանել Հայաստանն իր ազդեցության գոտում և խոչընդոտել երկրի քաղաքական ինքնուրույնացմանը: Ռուսաստանը շահարկում է Ադրբեջանի կողմից ներկայացվող սպառնալիքը Հայաստանի համար, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը: Այս հանգամանքները երկար տարիներ Հայաստանին պահել են ռուսական ազդեցության ներքո: Փաշինյանի իշխանության օրոք, սակայն, Հայաստանը փորձեց դուրս գալ այդ կախվածությունից, ինչին Ռուսաստանը հակադարձում է գնալով ավելի ագրեսիվ քայլերով՝ նպատակ ունենալով ապակայունացնել երկրի ներքին իրավիճակը:

Վրաստանում զգալի փոփոխություններից հետո այսօր Հայաստանը Հարավային Կովկասում մնացել է միակ լիարժեք ժողովրդավարական պետությունը, որը միաժամանակ գիտակցում է իր դարավոր քաղաքակրթական կապերը Եվրոպայի հետ: Տարբեր կազմակերպությունների զեկույցները վկայում են, որ Հայաստանը խոսքի ազատության մի կղզի է՝ շրջապատված ավելի կամ պակաս ավտորիտար ռեժիմներով: Հայաստանում առկա ազատությունը նաև հույս է ներշնչում փոխելու հարևան Վրաստանի որդեգրած՝ դեպի ռուսամետ ավտորիտարիզմ տանող բացասական ուղղությունը: Միևնույն ժամանակ, Վրաստանի օրինակը ցույց է տալիս, որ ժողովրդավարացման գործընթացը և ռուսական ազդեցությունից ազատագրման ձգտումը անշրջելի չեն: Այսպիսով, Արևմուտքի՝ հատկապես Եվրոպական միության վրա դրված է մեծ պատասխանատվություն՝ աջակցելու

Հայաստանի ժողովրդավարական ու եվրոպամետ ուղուն: Դա ոչ միայն բարոյական հրամայական է, այլև Եվրամիության վստահելիության փորձություն՝ իր հռչակած սկզբունքների ու արժեքների համատեքստում: Հայ ժողովուրդը խորապես տրավմավորված է, ինչը նպաստում է Ռուսաստանից եկող կոգնիտիվ (ճանաչողական) ազդեցությանը: Ռուսական կողմը շահարկում է հայերի էմոցիոնալ զգացումները՝ հատկապես վիրավորվածության զգացումը, զայրույթը և վախը՝ հասարակությունը բևեռացնելու, ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ վստահությունը քայքայելու, ներքին կայունությունն ապակայունացնելու, ինչպես նաև հարևանների հետ հարաբերությունների նորմալացմանը խոչընդոտելու նպատակով: Այս տրավմայի հիմնական պատճառներն են 1915 թվականին Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև 20-րդ դարում Թուրքիայի և Ադրբեջանի կազմում հայտնված տարածքներում հայկական մշակութային ժառանգության համակարգված ոչնչացումը: Սա լուրջ հոգեբանական արգելքներ է ստեղծում Հայաստանի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ջանքերի համար, մանավանդ վերջին տարիներին ավելացած նոր վերքերի ֆոնին՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմում կրած պարտությունը, ինչպես նաև 2023 թվականին Արցախի կորուստը և բնակչության զանգվածային արտահոսքը: Ռուսաստանի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններն էլ չեն նպաստում կարգավորման գործընթացին, քանի որ Ռուսաստանը շահագրգռված է Հայաստանի և այդ երկրների միջև առկա լարվածության պահպանմամբ: Ռուսաստանը, Հայաստանի գործող իշխանությունները, ինչպես նաև երկրի եվրոպամետ ընդդիմությունը լավ գիտակցում են, որ արտաքին սպառնալիքների վերացումը, որոնք ուղղված են Հայաստանի տարածքային ամբողջականությանն ու սահմանների անխախտելիությանը, կարող է ճանապարհ բացել երկրի ինքնիշխանացման, իսկ դրանից հետո՝ Եվրամիության հետ ինտեգրման համար: Ռուսաստանն իր հերթին ամեն կերպ փորձում է խոչընդոտել այդ հեռանկարի իրականացմանը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի անկախության պատմության դրամատիկ էջերը չեն սահմանափակվում միայն Արցախի համար Ադրբեջանի հետ պատերազմով: 1998 թվականին Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ հրաժարական տալ, և նրան փոխարինեց «Ղարաբաղյան կլանի» ռուսամետ առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը: Նրա իշխանության տարիներին Հայաստանը խորացավ կոռուպցիայի և տնտեսական ճգնաժամի մեջ: 1999 թվականին, Ազգային ժողովում տեղի ունեցած զինված հարձակման ժամանակ, սպանվեց վարչապետ Վազգեն Սարգսյանը: Շատ աղբյուրներ մատնանշում են Ռուսաստանի հնարավոր ներգրավվածությունը այդ հանցագործության մեջ: Վազգեն Սարգսյանը համարվում էր անհարմար գործիչ, քանի որ ծրագրում էր պայքարել ստվերային տնտեսության դեմ: Նրա սպանությունը, ըստ որոշ վերլուծությունների, նպատակ ուներ խափանել ԵԱՀԿ հովանու ներքո ընթացող՝ Ադրբեջանի հետ խաղաղ կարգավորման գործընթացը:

Այս օրինակը ցույց է տալիս, որ Ռուսաստանը պատրաստ է դիմել ամեն տեսակ միջոցների՝ Հայաստանում իր ազդեցությունը պահպանելու և երկրի՝ դեպի Եվրոպա ուղղված քաղաքական ուղղությունը խոչընդոտելու նպատակով: Կան հիմքեր ենթադրելու, որ 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված հարձակումն ի սկզբանե համաձայնեցված էր Ռուսաստանի հետ, որը փորձում էր այդպիսով տապալել Փաշինյանի իշխանությունը կամ նրան ստիպել գնալ ավելի մեծ զիջումների: Այդուհանդերձ, հայ հասարակության մեծ մասը ճանաչեց Ռուսաստանի երկակի խաղը, ինչի հետևանքով Հայաստանում աճեցին հակառուսական և արևմտամետ տրամադրությունները: Սա ստիպեց Փաշինյանին որդեգրել ավելի վճռական և ինքնիշխան քաղաքականություն: 2023 թվականի հուլիսին Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը Լեհաստան կատարած այցի ժամանակ հստակ հայտարարեց, որ Հայաստանի ռազմավարական նպատակը Եվրամիության անդամակցությունն է: Նույն ժամանակահատվածում Հայաստանը սկսել է քայլեր ձեռնարկել՝ դուրս գալու Ռուսաստանին գերակշռող դեր

ունեցող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ), սահմանափակելու Ռուսաստանի ռազմական ներկայությունը երկրում և խորացնելու անվտանգության ոլորտում համագործակցությունը Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ արևմտյան երկրների հետ:

Սա կտրուկ ակտիվացրեց Ռուսաստանի հոգեբանական ազդեցության և ապատեղեկատվության տարածման գործունեությունը: Ռուսաստանը խթանեց զանգվածային բողոքներ, որոնք սանձազերծվեցին ռուսաստանյան հայազգի քարոզիչների, այդ թվում՝ Russia Today-ի ղեկավար Մարգարիտա Սիմոնյանի միջոցով: Նպատակը վարչապետ Փաշինյանին մեղադրելն էր Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական հակամարտությունում կրած պարտությունների համար և նրան տապալելը՝ քաղաքացիական անկարգությունների կամ ռազմական հեղաշրջման միջոցով:Թեև այս նպատակն առայժմ չի իրականացվել, Ռուսաստանը չի դադարում ջանքեր գործադրել՝ դրան հասնելու համար: Միևնույն ժամանակ Մոսկվան ձգտում է խափանել Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ նպատակ ունենալով վերահսկել հակամարտությունը և Հայաստանը պահել որպես պատանդ՝ իր ազդեցության շրջանակում:

Ռուսական ազդեցության առավել զգայուն և խոցելի ոլորտներից մեկը տեղեկատվական միջավայրն է, որի վերլուծությունն այս զեկույցի հիմնական նպատակն է: Զեկույցում ներկայացված եզրակացությունները և առաջարկությունները նախատեսված են աջակցելու քաղաքական որոշումներ կայացնողներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և միջազգային գործընկերներին՝ ամրապնդելու Հայաստանի դիմադրողականությունը ռուսական հիբրիդային ազդեցությունների հանդեպ, որոնք սպառնում են երկրի ինքնիշխանությանը և ժողովրդավարությանը: Նպատակն է նաև ընդգծել Եվրոպական Միության կարևոր դերը՝ Հայաստանին

աջակցելու համար՝ դուրս գալու ռուսական ազդեցության ոլորտից և ինտեգրվելու ԵՄ հետ:

1. Տեղեկատվական միջավայր՝ բնութագրում

Հայաստանում խոսքի և մեդիայի ազատությունը բավական բարձր մակարդակի վրա է. «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության մամուլի ազատության վարկանիշում երկիրը զբաղեցնում է 43-րդ հորիզոնականը: Սակայն ազատության այս աստիճանը ունի նաև հակառակ կողմը՝ այն մեծացնում է մեդիա միջավայրի խոցելիությունը ապատեղեկատվության և հոգեբանական ազդեցության (կոգնիտիվ գործողությունների) նկատմամբ: Տեղեկատվական դաշտը զգալիորեն արտացոլում է հասարակության քաղաքական բևեռվածությունը. հակառուսական դիսկուրսի կողքին նկատվում են նաև ռուսամետ և հակաարևմտյան թեզեր: Չնայած այդ բևեռացվածությանը՝ հայկական մեդիան համեմատաբար անկախ է և ուղղակիորեն կապված չէ որևէ կոնկրետ քաղաքական ուժի հետ: Էլեկտրոնային լրատվամիջոցների մեծ մասը, հայերեն տարբերակից բացի, հասանելի է նաև ռուսերենով, ինչը մեծացնում է տեղեկատվական ազդեցության դաշտը ռուսախոս լսարանի վրա: Հայաստանի տեղեկատվական միջավայրի վրա ազդեցություն ունեն ոչ միայն տեղական, այլև արտաքին աղբյուրներ. ռուսական և ադրբեջանական մեդիաները հաճախ հանդես են գալիս որպես ապատեղեկատվության աղբյուր, իսկ որոշ չափով ազդում են նաև թուրքական, իրանական և իսրայելական լրատվամիջոցները: Թեև նախկինում Ադրբեջանի մեդիայի նկատմամբ որոշ սահմանափակումներ գործել են, ներկայումս նման արգելքներ չկան: Միևնույն ժամանակ, որոշ սահմանափակումներ կիրառվում են ռուսական պետական քարոզչության նկատմամբ, օրինակ՝ արգելվել են «RTR Planeta»-ի եթերով հեռարձակվող Վլադիմիր Սոլովյովի հաղորդումները:

ա) Ավանդական մեդիա

1. Պետական

- **Հայաստանի Հանրային հեռուստատեսություն» (Հ1)** — պետական հեռուստաընկերություն է, որը ներառում է մի քանի ալիք, այդ թվում՝ բացառապես տեղեկատվական բովանդակությամբ: Բացի հեռուստաթերից, գործում է նաև պաշտոնական կայքը՝ https://www.1lurer.am/, որը հասանելի է հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կայքը տրամադրում է բազմազան տեղեկատվական բովանդակություն: Հանրային հեռուստաընկերությունն ակտիվ է նաև սոցիալական մեդիայի հարթակներում՝ Facebook, Instagram, YouTube և Telegram, ինչպես նաև ապահովում է ուղիղ հեռարձակման հնարավորություն:

- **«Հանրային ռադիո»** — պետական ռադիոկայան է, որն ունի նաև պաշտոնական կայք՝ հասանելի 12 լեզվով՝ հայերեն, քրդերեն (կուրմանջի), եզդիերեն, ֆարսի, արաբերեն, վրացերեն, հունարեն, անգլերեն, ռուսերեն, ասորերեն, ադրբեջաներեն և թուրքերեն: Կայքը՝ https://hy.armradio.am/: Հանրային ռադիոն իրականացնում է նաև ուղիղ հեռարձակումներ: Այն ակտիվ է սոցիալական մեդիայի հարթակներում՝ X և Facebook, սակայն ներգրավվածությունը համեմատաբար ցածր է:

- **«Արմենպրես»** — Հայաստանի պաշտոնական լրատվական գործակալությունը, որը լուրեր է տարածում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Գործակալությունը պաշտոնական կայք ունի, որը հասանելի է 10 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն, իսպաներեն, պարսկերեն, չինարեն և այլ: Կայքում գործում է նաև փաստերի ստուգման բաժին, որը սակայն զարգացած չէ: Հղում՝ https://armenpress.am/: Արմենպրեսը ակտիվ է սոցիալական ցանցերում, հատկապես X հարթակում, որտեղ, թեև ակտիվությունն բարձր է, ներգրավվածության մակարդակը համեմատաբար ցածր է:

2. Մասնավոր

Հեռուստատեսություն

- **Shant TV** («Շանթ» հեռուստաընկերություն) ունի նաև նորությունների կայք՝ https://www.shantnews.am/, որը հասանելի է հայերեն: Այն ակտիվ է սոցիալական մեդիայի հիմնական հարթակներում՝ Facebook, YouTube, Instagram և Telegram: Լրատվությունը համեմատաբար օբյեկտիվ է, և կայքում կան բազմաթիվ հարցազրույցներ փորձագետների հետ, նվիրված Կովկասյան տարածաշրջանին և Հայաստանում ընթացող զարգացումներին:
- **Azatutyun** («Ազատություն» ռադիոկայան)՝ Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայությունը, գործում է ռադիոյի, հեռուստատեսության և առցանց լրատվամիջոցի ձևաչափով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հեռարձակվում է ուղիղ եթերում՝ ինչպես ռադիոյով, այնպես էլ հեռուստատեսությամբ: Ակտիվ է սոցիալական մեդիայի հարթակներում՝ Telegram, Facebook, YouTube, Instagram և X, որտեղ ունի մոտ 45 հազար հետևորդ: Կայքը՝ https://www.azatutyun.am/: Լրատվական բովանդակությունը հիմնականում կենտրոնացած է Հայաստանի ներքաղաքական և հասարակական գործընթացների լուսաբանման վրա՝ հայրենասիրական շեշտադրումներով: Թեմաների ընտրությունն ու դրանց ներկայացումը հաճախ դիտարկվում են որպես համեմատաբար համակրելի գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության հանդեպ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղ գործընթացին: Հարթակը բացահայտ արևմտամետ է և քննադատաբար է մոտենում Ռուսաստանի և Իրանի քաղաքականությանը: «Ազատություն»-ը, որպես Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայություն, ֆինանսավորվում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից՝ ԱՄՆ Գլոբալ լրատվամիջոցների գործակալության (USAGM) միջոցով: 2023 թվականին դրա բյուջեն կազմել է 787 հազար դոլար, 2024-ին՝ մոտ 900 հազար, իսկ

2025-ի համար ներկայացվել է 1.1 միլիոն դոլար ֆինանսավորման հայտ: Այս ցուցանիշով այն ունի երկրորդ խոշորագույն բյուջեն Եվրասիական տարածաշրջանում:

- **H2** (Հ2) — մասնավոր արբանյակային հեռուստաալիք, որն իրականացնում է ուղիղ հեռարձակում ԱՄՆ-ից (https://www.tv.am/am), Այն տեղեկատվական ալիք չէ, այլ ունի ընդհանուր բովանդակություն և իր պաշտոնական կայքում լրատվական բաժին չի պարունակում:
- **Armenia TV** («Արմենիա» հեռուստաընկերություն) — մասնավոր հեռուստաընկերություն է, որը, թեև տեղեկատվական ալիք չէ, սակայն հեռարձակում է տեղեկատվական և վերլուծական-հանրային ծրագրեր: Կայքը՝ https://armeniatv.am/: Հեռուստաընկերությունը պատկանում է Panarmenian Media խմբին: Հիմնական բաժնետերը Արթուր Ջանիբեկյանն է՝ հայ գործարար, որը բիզնես է վարում հիմնականում Ռուսաստանում և ունի կապեր Gazprom-Media-ի հետ: «Armenia: Profile of Media Ownership and Potential Foreign Influence Channels» զեկույցի համաձայն (հղում՝ docs.aiddata.org/reports/media-resilience/arm/Armenia-Profile-of-Media-Ownership-and-Potential-Foreign-Influence-Channels.pdf)՝ հեռուստաընկերությունը պաշտոնապես գրանցված է Ռոբերտ Հովհաննիսյանի անունով, սակայն նա համարվում է միջնորդ, իսկ իրական շահառուն՝ Արթուր Ջանիբեկյանն է:
- **Kentron TV** («Կենտրոն» հեռուստաընկերություն) — մասնավոր հեռուստաընկերություն է, որը, թեևամբողջությամբ տեղեկատվական ալիք չէ, սակայն հեռարձակում է տեղեկատվական և վերլուծական հաղորդումներ: Նախկինում համագործակցել է Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանի հետ: Կայքը՝ https://www.kentron.tv/: Հեռուստաընկերությունը հայտնի է իր բացասական վերաբերմունքով գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ: AidData զեկույցի համաձայն՝ այն փաստացի վերահսկվում է Գագիկ Ծառուկյանի գլխավորած Բարգավաճ Հայաստան կուսակցության կողմից, որը դիտվում է որպես ռուսամետ և եվրոսկեպտիկ քաղաքական ուժ:

- **Yerkir Media** («Երկիր Մեդիա» հեռուստաընկերություն) կապված է Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ: Հեռուստաընկերությունն ակտիվ է YouTube-ում՝ https://www.youtube.com/channel/UCzcoHjOzAcTRbHAgzT7QXMw, ինչպես նաև Telegramում՝ (t.me/s/yerkir123) również. Facebook-ում (facebook.com/YerkirWebsite) գործունեությունն աննշան է: Հեռուստաընկերությունը հաճախ հանդես է գալիս ռուսամետ շեշտադրումներով և հանդես է գալիս գործող վարչապետ Փաշինյանի քննադատությամբ:
- **A-TV** («Ա-ԹԻՎԻ») մասնավոր հեռուստաընկերություն է, որը, թեև ամբողջությամբ տեղեկատվական ալիք չէ, սակայն հեռարձակում է լուրեր, ինչպես նաև վերլուծական և հանրային-քաղաքական հաղորդումներ: Կայք՝ https://atv.am/; Հեռուստաընկերությունը նախկինում կապված է եղել PanArmenian Media Group մեդիա միավորման հետ (web.archive.org/web/20171021111858/http://armtoday.info/deafult.asp?Lang=Ru&NewsID=58937&SectionID=1&RegionID=0&Date=01&2F23&2F2012&PagePosition=3).

Ներկայումս դրա հիմնական սեփականատերը Դավիթ Ավետիսյանն է: «Ա-ԹԻՎԻ»-ն համագործակցում է ռուսական դաշնային «ՏՆՏ» հեռուստաընկերության հետ, ինչը, ենթադրաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ «ՏՆՏ»-ի հետ կապ ունի նաև Արթուր Ջանիբեկյանը՝ «Արմենիա Թի-վի»-ի հիմնական բաժնետերը, որը բիզնես է վարում հիմնականում Ռուսաստանում: Վերջինս նախկինում ևս մասնակցել է PanArmenian Media Group-ի գործունեությանը: 2019 թվականի տվյալներով՝ PanArmenian Media Group-ը լուծարվել է, ինչի արդյունքում «Ա-ԹԻՎԻ»-ի մեծամասնության բաժնեմասը փոխանցվել է Դավիթ Ավետիսյանին, իսկ 49%-ը պահպանվել է Panarm Inc. ընկերության մոտ (arminfo.info/full_news.php?id=39033&lang=3). Նույն գործընթացի արդյունքում Արթուր Ջանիբեկյանը դարձել է «Արմենիա Թի-վի»-ի միանձնյա սեփականատերը:

- **21TV** (21ԹԻՎԻ)՝ երաժշտական հեռուստաալիք է https://www.youtube.com/channel/UCsjjpCGaUrG68evSB2lpILg: Սփյուռ տեղեկատվական համակարգի տվյալներով՝ հեռուստաալիքի տնօրենն է Արմեն

Սարգսյանը (spyur.am/en/companies/21-tv-tv-company/3741/): Հեռուստաալիքի հիմնադիրներ են համարվում Նաիրա Աղաբաբյանը և Աշոտ Աղաբաբյանը (media.am/en/media_block): Վերջինս նաև քաղաքական գործիչ է՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ (hetq.am/en/article/45873):

- **5TV** (5-րդ ալիք) https://www.5tv.am/ հեռուստաընկերությունը կապված է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Ըստ պաշտոնական կայքում ներկայացված տեղեկատվության՝ այն հիմնված է նախկին Արարատ TV-ի հիմքի վրա և պատկանում է Shark LLC ընկերությանը: 5-րդ ալիքը հանդես է գալիս ընդդիմադիր դիրքերից՝ ակտիվորեն քննադատելով Նիկոլ Փաշինյանի կառավարությանը: Հեռուստաընկերության սեփականատերը Արմեն Թավադյանն է, ով սերտ կապեր ունի Ռոբերտ Քոչարյանի հետ: Ալիքի տնօրենն է Հարություն Հարությունյանը, փոխտնօրենը՝ Արմեն Անդրեասյանը, իսկ լրատվական բաժնի ղեկավարն է Արտակ Հերիքյանը: Հարությունյանը 2019 թվականի դեկտեմբերի 27-ին մասնակցել է Սպուտնիկ-ի կազմակերպած համաժողովին (լուսանկարներ՝ photolure.am/photoset/186686): Նույն օրը տրված մեկնաբանությունում նա դժգոհել է կառավարության կողմնակալ վերաբերմունքից «5-րդ ալիքի» նկատմամբ (news.am/eng/news/552051.html): 2021 թվականին տված հարցազրույցում նշել է, որ իր ղեկավարած հեռուստաընկերությունն «անհարմար» է Հայաստանի կառավարության համար (en.168.am/2021/08/04/42651.html):
- **Free News TV** (Ֆրի Նյուզ հեռուստաընկերություն) — https://freenews.am/, https://www.facebook.com/freenews.am/,https://www.youtube.com/channel/UC6VGQAulthbhJmQEW5blDGg: Հեռուստաընկերությունն հիմնադրել է Էդգար Ավագյանը: Խմբագրական կազմում ընդգրկված է նաև Մարիամ Մարգարյանը՝ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի կինը: Վերջինս և Էդգար Ավագյանը, ըստ տարբեր աղբյուրների, ունեն բարեկամական հարաբերություններ: Այս հանգամանքները հիմք են տալիս դիտարկելու, որ «Ֆրի նյուզ» հեռուստաընկերությունը որդեգրել է իշխանամետ և եվրոպամետ խմբագրական քաղաքականություն:

- **Nor Hayastan TV** (Նոր Հայաստան TV), https://www.facebook.com/NorHayastanTV/ հեռուստաընկերության հիմնադիրն է Վարդուհի Երանոսյանը՝ լրագրող, որը համագործակցել է մասնավորապես news.am լրատվական պորտալում:
- **Horizon TV** (Հորիզոն TV), https://horizonarmeniantv.com/; հեռուստաընկերությունը հեռարձակվում է Կալիֆոռնիայից, հիմնականում առցանց ձևաչափով: Լրատվական պորտալ չի գործում:
- **PanArmenian TV** (Պանարմենիան TV), https://www.panarmenian.tv/: Հեռարձակվում է ԱՄՆ-ից: Հիմնադրվել է Panarmenian Media Group մեդիա միավորման կողմից: 2019 թվականի տվյալներով՝ հեռուստաընկերության սեփականատերը Դավիթ Ավետիսյանն է:
- **ԱՄՆ-ից** հեռարձակվող այլ հեռուստաընկերություններ՝ Amga (https://amga.tv/), ARTN (https://www.artn.tv/en), USArmenia TV (https://www.youtube.com/@usarmenia_tv):

Ռադիո

- **Radio Aurora** — հեռուստաալիքի հիմնական ալիքից բացի գործում է նաև տեղեկատվական «Aurora News» ալիքը, ինչպես նաև առցանց լրատվական կայք՝ https://auroranews.am/: Վիդեո պոդքաստները հասանելի են Facebook-ում: Հեռարձակումը իրականացվում է ուղիղ եթերով՝ առցանց: Հեռուստաընկերության տնօրենն է Մայքլ Ջանպոլադյանը: Ընդհանուր առմամբ, ալիքի խմբագրական գիծը դիտարկվում է որպես չեզոք:
- **«Ազատություն»** ռադիոկայանը հանդիսանում է Ազատ Եվրոպա / Ազատություն ռադիոկայանի հայկական ծառայությունը: Այն իրականացնում է ուղիղ հեռարձակումներ և գործում է այնպիսի հարթակում, որը նման է հեռուստատեսային ալիքներին:

- **«Ռադիո Վան»,** https://radiovan.fm/: Ռադիոկայանը հեռարձակվում է ռուսերեն և ներկայություն ունի սոցիալական ցանցերում, այդ թվում՝ X հարթակում, սակայն ունի սահմանափակ լսարան և ցածր ներգրավվածություն: Ռադիոյի խմբագրական գիծը ընդհանուր առմամբ արևմտամետ է. հաճախ մատնանշվում է լրագրողների նկատմամբ Ռուսաստանի խտրական վերաբերմունքը՝ այդ թվում՝ նրանց նկատմամբ ահաբեկչության քարոզման մեղադրանքներով հարուցվող դատավարությունները: 1998 թվականից ռադիոկայանի տնօրենն է Շուշանիկ Արեւշատյանը՝ Օդեսայում ծնված, ով 1990-ականներին աշխատել է Ռուսաստանում և հիմնադրել է «ՌՈՒՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ-ԵՐԵՎԱՆ»-ը: Հաղորդումների տնօրենն է Գոռ Գրիգորյանը (նույն ինքը՝ Եգոր Գլումով), որն աշխատում է նաև «Շանթ» հեռուստաընկերությունում:
- **«Ռադիո Ջան»** — հիմնադրվել է 2012 թվականին: (radiojan.am, Instagram-ում՝ @radio_jan_90.7_officiall ունի մոտ 2980 հետևորդ, հրապարակումները կատարվում են կանոնավոր: Facebook-ի էջն ունի շուրջ 11,000 հետևորդ՝ facebook.com/Radio-JAN-332536306808108/: Երկու հարթակներում էլ տարածվում է նմանատիպ բովանդակություն՝ հիմնականում ստուդիայից փոդկաստներ): Ռադիոկայանի գլխավոր խմբագիրն է Անուշ Նիկողոսյանը:
- **«FM-105.5»** ռադիոկայան (կայք՝ 1055.am, Facebook՝ facebook.com/staywiththebest՝ մոտ 1400 հետևորդ, կանոնավոր հրապարակումներով; Instagram ՝ @fm105.5yerevan՝ շուրջ 9160 հետևորդ, նույնպես ակտիվ գրառումներով): «FM-105.5»-ը իր կայքում ներկայացվում է որպես Հայաստանի առաջին առևտրային ռադիոկայանը՝ հիմնադրված 1994 թվականին: Հեռարձակվում է Երևանում և հարակից շրջաններում: Ռադիոկայանի ներկայիս տնօրենն է Գուրգեն Իսրայելյանը: Այն կապվում է նաև «Հայ» ռադիոկայանի հետ, քանի որ երկու ռադիոկայանների սեփականատերը Անահիտ Թարխանյանն է՝ 2013 թվականի նախագահական ընտրություններին մասնակցած Անդրիաս Ղուկասյանի կինը: Վերջինս հայտնի է իր ընդդիմադիր դիրքորոշմամբ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի նկատմամբ:-ը իր կայքում ներկայացվում է որպես Հայաստանի

առաջին առևտրային ռադիոկայանը՝ հիմնադրված 1994 թվականին: Հեռարձակվում է Երևանում և հարակից շրջաններում: Ռադիոկայանի ներկայիս տնօրենն է Գուրգեն Իսրայելյանը: Այն կապվում է նաև «Հայ» ռադիոկայանի հետ, քանի որ երկու ռադիոկայանների սեփականատերը Անահիտ Թարխանյանն է՝ 2013 թվականի նախագահական ընտրություններին մասնակցած Անդրիաս Ղուկասյանի կինն է՝ վերջինս հակասություններ է ունեցել նախկին նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

● **FM 106.5** — «Լրատվական ռադիո» (նախկինում՝ «Իմպուլս-Մայակ»), ներկայում հայտնի է նաև որպես «Իմպուլս» կամ «News Radio»: Կայք՝ lratvakan.am, Facebook էջ՝ facebook.com/LratvakanRadio՝ մոտ 36,000 հետևորդ, կանոնավոր հրապարակումներով: Instagram՝ @armeniannewsradio՝ 532 հետևորդ, պարբերաբար տեղադրվում են կարճ տեսանյութեր հարցազրույցներից: Telegram ալիք՝ t.me/s/lratvakanam՝ 292 բաժանորդ, YouTube՝ youtube.com/@LratvakanRadio՝ շուրջ 66,100 բաժանորդ, մոտ 9,400 վիդեո՝ կանոնավոր թարմացմամբ: Ռադիոկայանը հիմնադրվել է 1997 թվականին Կորյուն Խումարյանի կողմից: 2011 թվականի ապրիլին Խումարյանը, հանդես գալով որպես ռադիոկայանի ներկայացուցիչ, ստորագրել է համագործակցության հուշագիր Չինաստանի պետական «China Radio International» կազմակերպության հետ: Ռադիոկայանի եթերում պարբերաբար հայտնվում են ռուսաստանամետ փորձագետներ: Նրանց թվում է նաև Հայկ Խալաթյանը՝ քաղաքական գիտությունների թեկնածու, որը միաժամանակ ղեկավարում է ռուսալեզու AlphaNews լրատվական կայքի խմբագրությունը:

● Այլ ռադիոկայաններ՝ Ռադիո Երևան, 1FM, Ռադիո Kiss FM, Pop FM, Ռադիո ջազ 107 FM, Radio Marshall, To.sport FM 96.3 և Զարկ FM:

Մամուլ (առավել ազդեցիկ թերթեր և լրատվամիջոցներ)

● **«Առավոտ» (aravot.am)** — օրաթերթ և համանուն լրատվական կայք՝ հասանելի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Լրատվամիջոցը քննադատում է Նիկոլ Փաշինյանի ղեկավարած կառավարությանը և բացասաբար է տրամադրված

Հայաստանի արևմտամետ քաղաքական ուղեգծի հանդեպ: Նախկինում դիտարկվել է որպես լիբերալ լրատվամիջոց, սակայն ներկայումս հաճախ ասոցացվում է Սերժ Սարգսյանի հետ:

- **«Հրապարակ» (hraparak.am)** — օրաթերթ և համանուն լրատվական կայք: Լրատվամիջոցը ակտիվորեն քննադատում է Նիկոլ Փաշինյանի իշխանությունը: Շատ ակտիվ է Facebook սոցիալական ցանցում՝ ունենալով մոտ 250 հազար հետևորդ, սակայն գրառումների ներգրավվածությունը համեմատաբար ցածր է: Բովանդակության մեջ հաճախ արտահայտվում են հակաարևմտյան և ռուսամետ դիրքորոշումներ:
- **«Հայկական Ժամանակ» (Armenian Times)** — տպագիր օրաթերթ, որն ունի նաև առցանց հարթակ հայերեն և ռուսերեն լեզուներով՝ https://www.armtimes.com/: Լրատվամիջոցը բավական ակտիվ է Facebook-ում՝ մոտ 150,000 հետևորդով, սակայն օգտատերերի ներգրավվածությունը ցածր է: Կայքի ստորին հատվածում նշվում է, որ «Հայկական Ժամանակ»-ը վերաբացվել է Նիկոլ Փաշինյանի ջանքերով: Փաշինյանն այն գլխավորել է մինչև 2008 թվականի մարտի 1-ը, երբ բերման է ենթարկվել Սերժ Սարգսյանի նախագահական ընտրությունից հետո տեղի ունեցած բողոքի ցույցերին մասնակցելու համար: Մինչ այդ նա եղել է «Օրագիր» թերթի լրագրող, որը հետագայում փոխարինվել է «Հայկական Ժամանակ»-ով: Այժմ թերթի գլխավոր խմբագիրն է Աննա Հակոբյանը՝ Նիկոլ Փաշինյանի կինը:
- **«Հայաստանի Ձայնը»** — ռուսերեն լեզվով տպագրվող օրաթերթ, որն ունի նաև առցանց տարբերակ՝ հասանելի ինչպես ռուսերեն, այնպես էլ հայերեն լեզուներով՝ https://golosarmenii.am/: Լրատվամիջոցը կրում է ռուսամետ ուղղվածություն, կայքում հաճախ հայտնվում են նաև «Սպուտնիկ Արմենիա»-ի նյութեր: Թերթն ունի որոշակի ներկայություն սոցիալական հարթակներում՝ շուրջ 15,000 հետևորդ Facebookում, ինչպես նաև ակտիվություն VKontakte (VK) հարթակում: Գլխավոր խմբագիրն է Ֆլորա Նախշքարյանը (media.am/en/media_block): Թերթը համարվում է

խորհրդային տարիների «Կոմունիստ» օրաթերթի իրավահաջորդը (media.am/en/viewpoint/2016/03/19/6142/) :

- **«Ազգ»** — ազդեցիկ շաբաթաթերթ է (նախկինում՝ օրաթերթ), վերլուծական բնույթի: Ունի նաև կայք՝ հայերեն լեզվով՝ https://azg.am/: Թերթն ակտիվ է X և Facebook սոցիալական հարթակներում, սակայն ունի համեմատաբար քիչ հետևորդներ: Իր պատմության ընթացքում «Ազգ»-ը ենթարկվել է ճնշումների Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմի կողմից, ապա ցուցաբերել բարենպաստ վերաբերմունք Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ: Կայքի ստորին հատվածում նշվում է, որ թերթը կապված է Լիբանանում հիմնադրված Տեքեյան մշակութային հիմնադրամի (tekeyancentre.am) հետ, որի առաքելությունն է հայկական մշակույթի պահպանությունը և սփյուռքի հետ աշխատանքը: 2022 թվականի նոյեմբերի 16-ին azg.am-ում հրապարակված հոդվածում նշվում է, որ «Ազգ»-ը ֆինանսավորվում է տվյալ հիմնադրամի կողմից: Իսկ media.am կայքի համաձայն (media.am/en/viewpoint/2016/02/19/5875)՝ թերթի բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է Արմեն Աբրահամյանին:
- **«168 Ժամ» (168.am)** — շաբաթաթերթ և տեղեկատվական կայք, գործում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Սոցիալական մեդիայում ակտիվ է՝ Facebook-ում ունի մոտ 188 հազար հետևորդ և օրական մի քանի հրապարակում, մինչդեռ X հարթակում գրեթե աննկատելի է: Հրատարակչական գիծն ընդգծված հակաարևմտյան է, մոտ է Սերժ Սարգսյանի քաղաքական դիրքորոշումներին և ցուցաբերում է թշնամական վերաբերմունք վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ: Կայքի գլխավոր խմբագիրն է Սաթիկ Սեյրանյանը (ypc.am/people/seyranyan-satik), ով աշխատել է մի շարք հայկական լրատվամիջոցներում, այդ թվում՝ «Առավոտ» և «Հայկական Ժամանակ» թերթերում: 2017 թվականից նա ղեկավարում է Հայաստանի ժուռնալիստների միությունը: Իր հարցազրույցներում Սեյրանյանը հաճախ մեղադրել է ԱՄՆ-ին հայկական մամուլի նկատմամբ ճնշումներ գործադրելու մեջ: Թեև կայքը հիմնականում հրապարակում է արևմտյան կառույցներին քննադատող նյութեր, երբեմն հանդես է գալիս նաև

Ռուսաստանի հասցեին քննադատությամբ: Օրինակ՝ 2024 թ. դեկտեմբերի 12-ի հրապարակման մեջ https://168.am/2024/12/12/2139635.html ներկայացված է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հարցազրույցը CBN-ին, որտեղ նա նշել է. «Ռուսաստանի լայնածավալ ներխուժումից ի վեր՝ ռուսական զորքերը Ուկրաինայում սպանել են 50 հոգևորական և ոչնչացրել գրեթե 700 եկեղեցի»:

- **«Իրավունք» (iravunk.com)** — շաբաթաթերթ և վերլուծական տեղեկատվական կայք՝ հասանելի հայերեն և ռուսերեն լեզուներով: Լրատվամիջոցն ունի ռուսամետ ուղղվածություն և ակտիվ է սոցիալական մեդիայում, մասնավորապես Facebook-ում: Տեղեկատվական քաղաքականությունը միանշանակ ռուսամետ է, հատկապես Ուկրաինայի պատերազմի համատեքստում. լուսաբանվում են բացառապես Ուկրաինայի ձախողումները և Ռուսաստանի հաջողությունները: Telegram-ում գործող ռուսական «Z» ռազմական բլոգերից բովանդակությունը հաճախ վերատպվում է: Ընդհանուր ուղերձը ներկայացնում է Ռուսաստանը որպես վճռական և նպատակասլաց պետություն, իսկ Ուկրաինան՝ որպես արևմտյան աջակցությունից կախյալ և պարտության դատապարտված երկիր: media.am հարթակի տվյալներով՝ «Իրավունք»-ը հիմնադրվել է Սահմանադրական Իրավունքների Միության (ՍԻՄ) կողմից՝ ռուսամետ, եվրոսկեպտիկ և պահպանողական քաղաքական ուժ, որի մասին առավել մանրամասն՝ en.wikipedia.org/wiki/Constitutional_Rights_Union:
- **«Երևան» ամսագիր (evnmag.com)** — ամսական հանդես և առցանց հարթակ, որի բովանդակությունն ավելի շուտ հասարակական-մշակութային է, քան քաղաքական կամ տեղեկատվական:
- **«Դրոշակ»՝** ամսագիր, որի վերջին համարը հրապարակվել է 2024 թվականի սեպտեմբերին (arfd.am/droshak): Հանդեսը Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) պաշտոնական տպագիր լրատվամիջոցն է:
- **Այլ՝ Անկախ, Եթեր, Ժողովուրդ (ընդդիմադիր Փաշինյանի նկատմամբ), Զարթոնք**

Առավել նշանավոր առցանց լրատվական հարթակներ

- **Armenia Today (armeniatoday.news)**՝ նորություններ տրամադրող կայք հայերեն և ռուսերեն լեզուներով: Հիմնադիրն ու գլխավոր խմբագիրն է լրագրող Արգիշտի Կիվիրյանը, ով 2009 թվականին դաժան ծեծի է ենթարկվել (ypc.am/armenian-media/news-agencies-and-online-media/): Նա հաճախ հանդես է գալիս Նիկոլ Փաշինյանի քննադատությամբ, սակայն կայքը չի դրսևորում ռուսամետ ուղղվածություն:

- **PanARMENIAN.Net**՝ նորությունների կայք, գործում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Facebook-ում ունի շուրջ 232 հազար հետևորդ, ցուցաբերում է համեմատաբար բարձր ակտիվություն, սակայն ներգրավվածությունը միջին մակարդակի է: Այլ սոցիալական հարթակներում ներկայություն գրեթե չունի: Կայքի գլխավոր գործադիր տնօրենն ու համահիմնադիրներից է Արմեն Ազարյանը (am.linkedin.com/in/azaryan), իսկ լուսանկարիչ Վահան Ստեփանյանը հիմնադրել է կայքի հետ կապված PAN Photo գործակալությունը: Կայքում կասկածելի կամ կողմնակալ բովանդակություն չի հայտնվում, հիմնականում հրապարակվում են չեզոք, փաստային նյութեր: 2020 թվականից սկսած՝ գրեթե բացակայում են երկար վերլուծական հոդվածները: Ընդհանուր առմամբ կայքի կառավարումը մասնագիտական առումով որոշ թերություններ ունի:
- **Hetq «Հետք» առցանց պարբերական (hetq.am)**՝ լրատվական հարթակ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, մասնագիտացած է հետաքննական լրագրության մեջ և հրապարակում է նաև վերլուծական հոդվածներ (https://hetq.am/): Ակտիվ է սոցիալական մեդիայում. X հարթակում ունի մոտ 17 հազար հետևորդ, Facebook-ում՝ շուրջ 248 հազար: Կայքի մենեջերն է Քրիստինե Բարսեղյանը, գլխավոր խմբագիրը՝ Էդիկ Բաղդասարյանը, ով 2008 թվականին ենթարկվել է դաժան ծեծի, իսկ 2006-ին՝ ստացել սպառնալիքներ Գագիկ Ծառուկյանի կողմնակիցների կողմից: Կայքը հստակ ռուսամետ ուղղվածություն

չունի: «Հետք»-ը հրատարակվում է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի կողմից, որը անդամակցում է OCCRP-ին (Organised Crime and Corruption Reporting Project), ինչպես նաև Global Investigative Journalism Network-ին և Association of European Journalists-ին: Կազմակերպությունը արժանացել է գնահատանքի USAID-ի Երևանի գրասենյակի և Transparency International-ի կողմից: 2019 թվականին «Հետք»-ը հիմնադրել է «Hetq Media Factory»՝ հետաքննական և մուլտիմեդիա լրագրության դպրոց:

- **Tert.am**՝ առաջատար լրատվական կայքերից է, գործում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ներկայացնում է լայնածավալ թեմաներ ինչպես Հայաստանից, այնպես էլ միջազգային զարգացումներից: Կայքի գլխավոր խմբագիրն է Արկադի Գրիգորյանը, ով միաժամանակ նաև ATV հեռուստաընկերության նորությունների բաժնի ղեկավարն է: ATV-ն նախկինում պատկանում էր այժմ արդեն չգործող Panarmenian Media Group-ին: Կայքում նորությունները հրապարակվում են համեմատաբար ցածր հաճախականությամբ՝ օրական միջինում 1–2 նյութ, իսկ երբեմն՝ մեկ հրապարակում երկու օրը մեկ:
- **News.am**՝ խոշոր տեղեկատվական կայք, հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ունի ակտիվ ներկայություն սոցիալական մեդիայում՝ շուրջ 869 հազար հետևորդ Facebook-ում, 3.5 հազար՝ X-ում, ինչպես նաև ներկայացված էTelegram-ում: Կայքն առանձնանում է բարձր պրոֆեսիոնալիզմով՝ հրապարակելով բազմաբնույթ նորություններ տարբեր աղբյուրներից, օրինակ՝ Politico-ից: Նյութերը ընդգրկում են լայն թեմատիկա, իսկ հրապարակման հաճախականությունը բավականին բարձր է: Կայքի գլխավոր խմբագիրն է Արմենիկա Կիվիրյանը, ով 2003-2004 թվականներին աշխատել է ռուսական REGNUM լրատվական գործակալությունումREGNUM լրատվական գործակալությունում (ypc.am/people/kiviryan-armenika)
- **Factor TV (factor.am)**՝ https://www.facebook.com/factor.am/, https://www.youtube.com/channel/UCkI5KAJDh9S-BQFc6QzSUiA, հիմնադրվել է «Factor Information Center» հասարակական կազմակերպության կողմից: Հիմնադիրն

է Արևիկ Սահակյանը, իսկ գլխավոր խմբագիրը Վանիկ Հակոբյանն է: 2022 թվականի հոկտեմբերին Factor.am-ը պաշտոնական նամակ է ստացել Ռուսաստանի մեդիայի վերահսկող մարմնից՝ Ռոսկոմնադզորից, որով պահանջվել է հեռացնել Բուչայի դեպքերի վերաբերյալ հրապարակումը, որը Ռուսաստանի կողմից ճանաչվել է որպես ապատեղեկատվություն: Factor.am-ը հրաժարվել է ջնջել հոդվածը՝ շեշտելով խմբագրական անկախությունն ու փաստերի ներկայացման իրավունքը: 2024 թվականին «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության զեկույցում Factor.am-ը, ինչպես նաև Civilnet.am, Hetq.am և Azatutyun.am կայքերը ներկայացվել են որպես անկախ լրատվական հարթակներ, որոնք հանդես են գալիս որպես watchdog և կարևոր դեր ունեն Հայաստանի ժողովրդավարության զարգացման գործում:

- **1in.am** (https://www.facebook.com/1in.am, https://t.me/arajinTV)՝ նախկինում կապ է ունեցել 1908-ին Շավարշ Միսաքյանի կողմից հիմնադրված «Ժամանակ» հայ-ամերիկյան քաղաքական օրաթերթի հետ: 2014 թվականին տեղի է ունեցել իրավական վեճ Ռոբերտ Քոչարյանի և 1in.am կայքի և «Ժամանակ» օրաթերթի հիմնադիրների միջև՝ Քոչարյանի կողմից ներկայացված դատական հայցի պատճառով: Երկու լրատվամիջոցներն էլ նախկինում հակասություններ են ունեցել Սերժ Սարգսյանի շրջապատի ազդեցիկ դեմքերի, այդ թվում Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի հետ: Ներկայում 1in.am-ի գլխավոր խմբագիրն է Աստղիկ Սափեյանը, ով մինչ այդ եղել է նախկին նախարար Վահան Քերոբյանի մամուլի խոսնակը (Փաշինյանի թիմից): Սա որոշ վերլուծաբանների կողմից դիտարկվում է որպես կայքի իշխանամետ և հակառուսական դիրքորոշման նշան:
- **ArmLur.am** (https://www.facebook.com/armlur.am/, https://x.com/armlurnews)՝ հայկական տեղեկատվական պորտալ է, որը գործարկվել է 2012 թվականի մարտի 1-ին և պատկանում է «Ժողովուրդ» օրաթերթի մեդիախմբին: «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիրն է Քնար Մանուկյանը, իսկ ArmLur.am-ի գլխավոր խմբագիրը Սոնա Գրիգորյանն է: Կայքը ներկայացնում է իրեն որպես անկախ,

սակայն քննադատում է Փաշինյանի կառավարությունը: 2022 թվականի դեկտեմբերի շրջանում՝ պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի հետ վեճի պատճառով, Քնար Մանուկյանը զրկվեց խորհրդարանի հավատարմագրից: Կայքը կողմնակից է Բագրատ Գալստանյանին:

- **Iravaban.net** (https://www.facebook.com/Iravabannet/, https://www.youtube.com/@iravabannet, https://iravaban.net/en/category/videos)՝ տեղեկատվական հարթակ է, որը հիմնադրվել է 2012 թվականին և գործում է Հայ իրավաբանների ասոցիացիայի նախաձեռնությամբ: Իր գործունեության շրջանակում իրականացնում է Եվրամիության ֆինանսավորմամբ ծրագիր, որի նպատակն է նպաստել կոռուպցիայի դեմ պայքարին Հայաստանում: 2019 թվականին փաստերի ստուգմամբ զբաղվող fip.am հարթակը մեղադրեց Iravaban.net-ին Փաշինյանի կառավարության քննադատության մեջ մանիպուլյատիվ մոտեցումների կիրառման համար: Այնուհանդերձ, 2021 թվականի դեկտեմբերի 2-ին Media.am-ում հրապարակված հոդվածում ներկայացվեցին «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց Iravaban.net-ը համարվում է Հայաստանի ամենաթափանցիկ լրատվամիջոցներից մեկը՝ Aravot.am-ի և Hetq.am-ի հետ միասին:
- **Lurer.com** (https://www.facebook.com/lurercom)՝ ստեղծվել է 2012 թվականին: Կայքի գլխավոր խմբագիրն է Նելլի Ավետիսյանը: Լրատվական հարթակը պատկանում է International Media Holding LLC ընկերությանը, որի սեփականատերը Արման Վարդանյանն է: Նա Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսական տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի հոգաբարձուների խորհրդի նախագահն է և ղեկավարում է «Միասնություն» համառուսական շարժումը: Կայքը ունի հստակ ռուսամետ ուղղվածություն:
- **Shabat.am** -՝ Facebook՝ շուրջ 195,000 հետևորդ, YouTube՝ մոտ 50,500 բաժանորդ և ավելի քան 3,400 տեսանյութ, Instagram՝ @shabat.am՝ 5,114 հետևորդ, 921 հրապարակում, անկանոն ակտիվություն, X՝ @am_shabat՝ 253 հետևորդ, վերջին հրապարակումը 2021 թվականին: հիմնականում հրապարակում է այլ

լրատվամիջոցների նյութերի վերահրապարակումներ: Կայքի հետ կապված են Մարիամ Մելքումյանը (նոյեմբեր 2021-ից Հայաստանի արդարադատության նախարարության մամուլի քարտուղար), Կարեն Անդրեասյանը՝ ՀՀ նախկին մարդու իրավունքների պաշտպան և արդարադատության նախկին նախարար (Փաշինյանի կառավարության կազմում), ինչպես նաև Աստղիկ Վարդանյանը:

- **Shamshyan.com** — Facebook՝ շուրջ 49,000 հետևորդ, YouTube՝ youtube.com/@shamshyan_com, 100,000 բաժանորդ, 6,300 նյութ՝ կանոնավոր թարմացումներով, Telegram՝ t.me/s/shamshyan_com, 15,400 բաժանորդ, ՏիկՏոկ՝ 37,300 բաժանորդ, Instagram՝ @shamshyan.news, 7,086 հետևորդ, X՝ x.com/shamshyan.com, 2,100 հետևորդ, սակայն X-ի պրոֆիլը դադարեցրել է գործել 2019 թվականից: հիմնականում վերահրապարակում է այլ լրատվամիջոցների տեղեկություններ՝ հատկապես վերնագրեր և նյութերի կարճ ամփոփումներ, որոնք մեծապես հիմնված են Past.am-ի հրապարակումների վրա: Այս հրապարակումների մեծ մասը քննադատական են Նիկոլ Փաշինյանի կառավարության հասցեին՝ հաճախ պարունակելով մեղադրանքներ Հայաստանի քայքայման և կոռուպցիոն սխեմաների մեջ ներգրավվածության վերաբերյալ:
- **301 News (301.am)**՝ հասանելի է հայերեն և անգլերեն լեզուներով, ակտիվ է X հարթակում՝ շուրջ 49 հազար հետևորդով, ինչպես նաև Facebook-ում՝ 6 հազար, YouTube-ում և Instagram-ում: Կայքը նաև պատրաստում է փոդքաստներ: Նյութերի մեծ մասը նվիրված է Լեռնային Ղարաբաղում ընթացող իրադարձություններին:
- **MAMUL (mamul.am)**՝ տեղեկատվական գործակալություն, որի կայքը հասանելի է հայերեն, անգլերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուներով: Հրապարակում է բովանդակություն ինչպես սոցիալական մեդիայից, այնպես էլ ավանդական լրատվամիջոցներից: Շատ ակտիվ է սոցիալական ցանցերում. Facebookում ունի շուրջ 536,000 հետևորդ, X-ում՝ մոտ 4,500, ինչպես նաև ներկայացված է այլ հարթակներում: MAMUL-ը պատկանում է “Social Media Internet Holding”-ին (facebook.com/social.media.holding), որի հիմնադիրն ու սեփականատերը Սևակ Մելիքյանն է: Կայքում հաճախ հրապարակվում են Փաշինյանի հասցեին կոշտ

քննադատություններ, սակայն երբեմն ներկայացվում են նաև Ռուսաստանի նկատմամբ քննադատական նյութեր:

- **Arminfo (arminfo.info)** հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կայքը ներկայացված է Facebook-ում և Telegram-ում, սակայն սոցիալական մեդիայում ունի ցածր ակտիվություն: Խմբագրական քաղաքականությունը հաճախ դիտվում է որպես ընդդիմադիր գործող իշխանությանը՝ Նիկոլ Փաշինյանի կառավարությանը, և նկատվում են ռուսամետ ուղղվածության տարրեր: Գլխավոր խմբագիրն է Էմանուիլ Մկրտչյանը: Կայքում պարբերաբար հրապարակվում են Ռոբերտ Քոչարյանի մեկնաբանությունները, ինչպես նաև վերլուծություններ ու կարծիքներ, որտեղ ներկայիս կառավարությունը ներկայացվում է որպես «Արևմուտքի շահերին ծառայող ռեժիմ»:
- **Arka.am**՝ հասանելի է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Սա բարձրորակ նորությունների կայք է: Ներկայացված է Facebook-ում և Telegram-ում: Կայքը աչքի է ընկնում համեմատաբար հավասարակշռված տեղեկատվական քաղաքականությամբ՝ հրապարակելով նորություններ թե՛ Արևմուտքից, թե՛ Ռուսաստանից, հատկապես անդրադառնալով հայ-ադրբեջանական հարաբերություններին: Գլխավոր խմբագիրն է Կոնստանտին Պետրոսովը, որը ծնվել է Բաքվում և 1990-ականներին համագործակցել է SNARK գործակալության հետ:
- **Radar Armenia (radar.am)** նյութեր է հրապարակում հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կայքը ակտիվ է սոցիալական ցանցերում և համարվում է որակյալ լրատվական հարթակ: Այն պատկանում է Radar ARM ընկերությանը, որի հիմնադիրներն են Սերժ Վարագ Սիսեռյանը, Հարություն Ազգլդյանը և Հայկ Գրիգորյանը: Սիսեռյանը նախկինում եղել է ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի գրասենյակի ղեկավար, իսկ Ավինյանը այժմ Երևանի քաղաքապետն է: Կայքն ունի իշխանամետ խմբագրական դիրքորոշում:
- **Aysor.am**՝ լրատվական հարթակ է, որն առաջարկում է բովանդակություն հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Խմբագրական քաղաքականությունը

հիմնականում չեզոք է, երբեմն նկատվում է արևմտամետ ուղղվածություն: Կայքի թեմատիկան հիմնականում վերաբերում է հայկական օրակարգին: Գլխավոր խմբագիրն է Թամարա Ավանեսովա:

- **CivilNet (civilnet.am)**՝ հասանելի է 4 լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն: Այն ակտիվ է Facebook, X , Telegram, YouTube և Instagram հարթակներում: Կայքի գլխավոր խմբագիրն է պատմաբան Կարեն Հարությունյանը, ով քննադատաբար է անդրադառնում Նիկոլ Փաշինյանին՝ մեղադրելով Ղարաբաղի հարցում զիջումների պատրաստակամության մեջ, սակայն հարթակը ռուսամետ չէ: Ներկայիս տնօրենն է ԱՄՆ-ում հայկական սփյուռքի ներկայացուցիչ Աբրահամ (Ապո) Բողինյանը: Կայքը գործում է «Սիվիլիթաս» հիմնադրամի հովանու ներքո(civilitasfoundation.org), որի նպատակը քաղաքացիական հասարակության զարգացումն ու ժողովրդավարական արժեքների տարածումն է: CivilNet-ի գործընկերներն են ԱՄՆ դեսպանատունը Հայաստանում, Եվրոպական միությունը, Շվեդիայի, Նորվեգիայի և Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարությունները: Կայքում գործում է փաստերի ստուգման բաժին, որը համագործակցում է Meta-ի և Միջազգային փաստերի ստուգման ցանցի (IFCN) հետ civilnet.am/en/civilnetcheck :
- **Tsayg.am** կայքը հասանելի է երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, և ակտիվորեն ներկայանում է սոցիալական մեդիայում: Կայքը հիմնականում արևմտամետ ուղղվածություն ունի: Հիմնադրվել է Արտուր Ղանդիլյանի և Արտուր Եզեկյանի կողմից՝ վերջինս նաև Shant TV-ի հիմնադիրն է (ypc.am/people/yezekyan-artur): Tsayg.am-ի հետ համագործակցել է Նազելի Բաղդասարյանը, ով Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից և ներկայումս հանդիսանում է վարչապետ Փաշինյանի մամուլի խոսնակը: Կայքի նյութերը հիմնականում կենտրոնացած են Կովկասի տարածաշրջանի վրա՝ մի քիչ անդրադառնալով նաև Եվրոպական Միության հարցերին: Կայքը, ընդհանուր առմամբ, դրական է վերաբերում Փաշինյանի քաղաքականությանը:

- **JAM News (jam-news.net)**՝ լրատվական հարթակ է, որը հրապարակումներ է կատարում հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ ամբողջ Կովկասի տարածաշրջանից: Հայտնի է իր պրոֆեսիոնալ և օբյեկտիվ լուսաբանմամբ:
- **AntiFake.am**՝ YouTube — մոտ 42,000 բաժանորդ https://www.youtube.com/@AntiFakeam: Տեսականորեն, հարթակի նպատակը կեղծ լուրերի դեմ պայքարն է, սակայն գործնականում այն կենտրոնանում է Նիկոլ Փաշինյանի և գործող կառավարության, ինչպես նաև Հայաստանի արևմտամետ քաղաքական կուրսի քննադատության վրա: Կայքը նախկինում գրանցված էր Սանկտ Պետերբուրգում գտնվող սերվերի վրա, իսկ այժմ պաշտպանված է Cloudflare ծառայությամբ, ինչի պատճառով դրա մասին տեխնիկական տվյալներն անհասանելի են: Չնայած ռուսական կապերը բացահայտ ապացուցված չեն, մի շարք վերլուծություններ այն դասում են «կեղծ փաստերի ստուգման» հարթակների շարքին: Բացի այդ, կայքը տարածել է հակապատվաստման քարոզչություն և COVID-19 համավարակի լրջությունն ու իրողությունը հարցականի տակ դնող նյութեր: AntiFake.am-ը կապված է նաև «Ադեկվադ» միաբանության հետ https://adekvad.am/, որը համարվում է ռադիկալ հակակառավարական, ռուսամետ կազմակերպություն և հաճախ մեղադրվում է ծայրահեղ աջ գաղափարախոսության տարածման մեջ: «Ադեկվադ»-ի քարոզչությունը հակալիբերալ և հակաարևմտյան է՝ ընդգծելով այնպիսի թեզեր, ըստ որոնց՝ Արևմուտքը, Սորոսի միջոցով, նպաստում է բարոյական քայքայմանը (այդ թվում՝ ԼԳԲՏ իրավունքների միջոցով), և որ Փաշինյանը գործում է սորոսյան շրջանակների հովանու ներքո: AntiFake.am-ը, որպես կանոն, խուսափում է Ռուսաստանին առնչվող քննադատական թեմաներից, ինչը դիտարկվում է որպես հնարավոր ռազմավարություն՝ ռուսական կապերը քողարկելու նպատակով: «Ադեկվադ» միաբանության հետ կապերը ևս կարող են դրա վկայությունը լինել: Թեմայի շուրջ առավել մանրամասն՝ https://medium.com/dfrlab/armenia-assailed-by-deceptive-fact-checking-groups-part-2-the-coordination-2276bb6e3b2e: Կայքի գլխավոր խմբագիրն է Աստղիկ Մաթևոսյանը՝

իրավաբան, ով աշխատում է «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ-ում: Այդ ՀԿ-ն հիմնադրել է Նարեկ Սամսոնյանը (facebook.com/samsonyan.narek), ով հակասության մեջ է մտել Փաշինյանի թիմի հետ և հետագայում ձերբակալվել: Այս դեպքը բարձր արձագանք է գտել լրատվամիջոցներում՝ մտահոգություններ առաջացնելով խոսքի ազատության սահմանափակման վերաբերյալ: Ենթադրվում է, որ հենց Սամսոնյանն է AntiFake.am հարթակի հիմնադիրը (orer.eu/2024/04/03/we-draw-the-attention-of-international-organizations-to-the-encroachments-of-the-authorities-on-the-right-to-free-press-free-speech-free-expression-of-opinion-uja): Նա հիմնել է նաև «Իմ ուժեղ համայնք» քաղաքական կուսակցությունը, որը 2021 թվականի խորհրդարանական ընտրություններում աջակցել է Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ ձևավորված «Պատիվ ունեմ» դաշինքին:

- **«Նովոստի–Արմենիա» (newsarmenia.am)** (newsarmenia.am, https://x.com/armnews, մոտ 2,500 հետևորդ)՝ լրատվական հարթակ է, որը հրապարակում է հայերեն և ռուսերեն լեզուներով: Ունի բացահայտ ռուսամետ խմբագրական կողմնորոշում: Գլխավոր խմբագիրն է Գալինա Դավիդյանը: Նրա անձնական էջում՝ Երևանի մամուլի ակումբի կայքում (ypc.am/people/davidyan-galina), հրապարակված է հղում դեպի newsarmenia.ru տիրույթը, որը շատ նման է newsarmenia.am-ին: Այդ տիրույթը վերաուղղորդում է դեպի ռուսաստանյան պետական «Սպուտնիկ Արմենիա» լրատվամիջոց: Նմանատիպ տեղեկատվություն ներկայացված է նաև մեկ այլ հարթակում՝ areg.am/en/novosti_armenia: 2015 թվականին «ԱՌԿԱ» գործակալությանը տված հարցազրույցում Գալինա Դավիդյանը բացահայտ նշել է, որ «Նովոստի Արմենիա» գործակալությունը ստեղծվել է ՌԻԱ Նովոստի-ի հետ գործընկերության շրջանակում և հանդիսանում է Ռուսաստանի «փափուկ ուժի» (soft power) գործիք: Նրա գնահատմամբ՝ Հայաստանը տարածաշրջանում Ռուսաստանի միակ իսկական դաշնակիցն է:
- **A1plus.am** (https://x.com/a1plusnews, մոտ 10,000 հետևորդ)՝ լրատվական կայք, որը գործում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: A1+–ը համարվում է Հայաստանի կարևոր լրատվամիջոցներից մեկը: Ռոբերտ Քոչարյանի

նախագահության տարիներին կայքը հակասության մեջ է հայտնվել իշխանությունների հետ: Ներկայումս կայքի բովանդակությունն ունի որոշակի լեզվային տարբերություններ. հայերեն և ռուսերեն բաժիններում հիմնականում լուսաբանվում են ներքաղաքական զարգացումները և հայ–ադրբեջանական հակամարտությանը վերաբերող թեմաները, մինչդեռ անգլերեն բաժնում շեշտը դրված է եվրոպական հարցերի վրա: Ուկրաինայի հետ կապված նյութեր գրեթե չեն հրապարակվում: Լրատվամիջոցի դիրքորոշումն ընդհանուր առմամբ չեզոք է, սակայն երբեմն այն հանդես է գալիս քննադատությամբ Նիկոլ Փաշինյանի քաղաքականության նկատմամբ:

- **Mediamax.am** (https://x.com/MediamaxNews, շուրջ 4,800 հետևորդ)՝ լրատվական հարթակ, որը հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կայքը հաճախ հանդես է գալիս Ռուսաստանի նկատմամբ քննադատական դիրքորոշմամբ՝ միաժամանակ մեղադրելով Նիկոլ Փաշինյանին ռուսամետ քաղաքականության մեջ: Հարթակում հրապարակվում են բազմաթիվ վերլուծական հոդվածներ, որոնց հեղինակներից են, այդ թվում՝ Սերգեյ Մելքոնյանը և Հարութ Սասունյանը: Կայքի գլխավոր խմբագիրն է Արա Թադևոսյանը:
- **Epress.am**՝ հաճախ հանդես է գալիս Ռուսաստանի քննադատությամբ և դրսևորում է ձախակողմյան մոտեցում՝ շեշտը դնելով մարդու իրավունքների, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց թեմաների վրա: Կայքը հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նրա ակտիվությունը սոցիալական ցանցերում ցածր է: Կայքի գլխավոր խմբագիրն է Յուրի Մանվելյանը, ով հայտնի է Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հասցեին հնչեցրած քննադատությամբ:
- **24news.am**՝ լրատվական կայք է, որը հասանելի է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ներկայություն ունի սոցիալական ցանցերում, սակայն ակտիվությունը հարաբերականորեն ցածր է: Գլխավոր խմբագիրն է Նարեկ Գալստյանը (miatsir.net/services/24news.am), ով միաժամանակ հանդիսանում է TASS գործակալության թղթակիցը Հայաստանում: Նա հայտնի է որպես Բագրատ

արքեպիսկոպոս Գալստանյանի կողմնակից և հանդես է գալիս Նիկոլ Փաշինյանի դեմ: Կայքը քարոզում է ռուսամետ և հակաՆԱՏՕ-ական հռետորաբանություն:

● **Panorama.am** (Facebook՝ https://www.facebook.com/PanoramaAM/՝ 30 հազար հավանում և 44 հազար հետևորդ)՝ գրանցված է Լալա Թեր-Գազարյանի անունով, գլխավոր խմբագիրն է Անահիտ Ոսկանյանը: Կայքը հիմնադրել են Ռոբերտ Քոչարյանի աջակից շրջանակները:

● **Nagorno Karabakh Observer (nkobserver.com)** հարթակ է, որը նվիրված է Ղարաբաղի վերաբերյալ տեղեկատվությանը: X-ում այն ունի 20 հազար հետևորդ https://x.com/NKobserver:

● **Fact Investigation Platform (FIP.am)՝** Facebook (facebook.com/fiparmenia) — 25,000 հետևորդ, կանոնավոր հրապարակումներ, YouTube (youtube.com/@FIPFactInvestigationPlatform) — 2,260 բաժանորդ, 600 տեսանյութ, կանոնավոր հրապարակումներ, Telegram (t.me/s/fiparmenia) — 1,300 բաժանորդ, կանոնավոր գրառումներ, X (x.com/@FIPArmenia) — 526 հետևորդ; Instagram (@fiparmenia) — 236 հետևորդ, կանոնավոր հրապարակումներ: Հարթակը զբաղվում է ապատեղեկատվության բացահայտմամբ՝ թե ազգային, թե միջազգային մակարդակով: Հարթակը կառավարվում է «Union of Informed Citizens» (UIC) կազմակերպության կողմից, որն աշխատում է քաղաքացիական գիտակցության բարձրացման և հանրային ոլորտի թափանցիկության խթանման ուղղությամբ: FIP.am-ը վայելում է բարձր հեղինակություն և արդյունավետ համագործակցում է մի շարք միջազգային և տեղական հաստատությունների հետ՝ ներառյալ Democracy Development Foundation-ը, Հայաստանում ԱՄՆ և Ֆրանսիայի դեսպանատները, National Endowment for Democracy-ն և Internews-ը: FIP.am-ի կայքում հրապարակված է հստակ և թափանցիկ փաստերի ստուգման մեթոդաբանություն (fip.am/methodology): Հարթակը հետևողականորեն հետևում է ռուսամետ և ռուսաստանյան լրատվամիջոցներին՝ այդ թվում՝ «Սպուտնիկ Արմենիա», «Կոմերսանտ», «Ռեգնում» և «ՌԻԱ Նովոստի»: 2024 թվականի մայիսից գլխավոր խմբագրի պաշտոնը զբաղեցնում է Հասմիկ Համբարձումյանը:

- **Media.am**՝ տեղեկատվական հարթակ, որը գործում է հայերեն և անգլերեն լեզուներով: Ուսումնասիրում է Հայաստանի լրատվական ոլորտը:
- **Aliq Meid (Aliqmedia.am)**՝ համարվում է անկողմնակալ լրատվական և վերլուծական հարթակ:
- **Ampop.am**՝ ընդգրկում է սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակին, առողջապահությանը, կրթությանը և մարդու իրավունքներին վերաբերող հոդվածներ:
- **Mediapoint.am**՝ լուսաբանում է Գորիսին և Արցախին առնչվող թեմաները հիմնականում համայնքային և սոցիալական բնույթի, և քիչ ուշադրություն է դարձնում ընթացիկ նորություններին:
- **Այլ՝ Pastinfo.am**-ը քննադատում է Նիկոլ Փաշինյանին և ունի ռուսամետ ուղղվածություն: Կայքը հասանելի է հայերեն և ռուսերեն լեզուներով; **Past.am**՝ նույնպես քննադատում է Փաշինյանին, հիմնականում ռուսամետ, գործում է հայերեն և ռուսերեն լեզուներով: **Rusarminfo**՝ ինտենսիվ ռուսական քարոզչություն, ստեղծված Մոսկվայում, ունի հայերեն և ռուսերեն տարբերակներ: **Infocom.am և Medialab.am**՝ կտրուկ քննադատում են Փաշինյանին: **Oragir.News և Irates.am**՝ ռուսամետ և կտրուկ քննադատում են Փաշինյանին: **Irakanum.am և LIVEnews.am**՝ ռուսամետ և կտրուկ քննադատում են Փաշինյանին: **Yerevan.today, Armday.am, Newday.am, Hayastan.news, MediaHub.am, Orer.eu** (Պրագայում թողարկվող Orer ամսագրի կայք՝ եվրոպամետ ուղղվածությամբ), **Infoport.am, Ararat News, Orbeli.am, Asekose.am, Politik.am, Generalnews.am, MediaMall.am, NewsPress.am, Alphanews.am**՝ լրատվական հարթակներ: **Free Political Prisoners** (freearmenianprisoners.com)՝ կայք է, նվիրված Արցախում ադրբեջանական բանտերում պահվող քաղաքական գերիների ազատմանը, մասնավորապես՝ Ռուբեն Վարդանյանի խնդրին, ունի հիմնականում ռուսամետ ուղղվածություն:

3. Կապված որոշ քաղաքական, կրոնական և էթնիկ խմբերի հետ

- **Shoghakat TV** (shoghakat.am)՝ հեռուստատեսային ալիք, որը պատկանում է Հայաստանի Առաքելական Եկեղեցուն և հիմնականում հեռարձակում է կրոնական հաղորդումներ:
- Xiret՝ եզդիական տեղեկատվական հարթակ, որը գործում է հայերեն և եզդիերեն լեզուներով:

4. Օտարերկրյա

Հայաստանի վերաբերյալ թեմաները հաճախ են հայտնվում ադրբեջանական մեդիայում՝ պարզ պատճառներով և հաղորդումները հաճախ կրում են ապատեղեկատվական բնույթ: Կարևոր է ընդգծել, որ ադրբեջանական մեդիան խիստ վերահսկվում է Ալիևի ռեժիմի կողմից և կատարում է պետական տեղեկատվական քաղաքականություն, որն ակնհայտորեն թշնամական է Հայաստանի հանդեպ: Հայաստանին առնչվող թեմաները հաճախ լուսաբանվում են նաև ռուսական մեդիայում՝ հատկապես «Սպուտնիկ Արմենիա» կամ Russia Today-ի կողմից: Հատկանշական է, որ Russia Today-ի ղեկավար Մարգարիտա Սիմոնյանը, լինելով հայազգի, ակտիվորեն ներգրավված է Հայաստանի վերաբերյալ ապատեղեկատվության տարածման մեջ: Հայաստանյան թեմաները պարբերաբար հայտնվում են նաև Վլադիմիր Սոլովյովի հաղորդումներում, որը փորձում է ներկայանալ որպես Հայաստանի դաշնակից:

Հայաստանին առնչվող ապատեղեկատվություն կարող է հայտնվել նաև թուրքական, իսրայելական և իրանական մեդիայում: Այս երեք երկրները տարբեր պատճառներով հետաքրքրված են Հայաստանի իրավիճակով և նրա հակամարտությամբ Ադրբեջանի հետ:

- **Ռուսական**

Większość Ռուսական լրատվամիջոցների մեծ մասը չի հեռարձակում հայերեն հաղորդումներ, սակայն ռուսերենի լայն տարածվածությունը Հայաստանում թույլ է տալիս, որ դա լուրջ խոչընդոտ չդառնա: Այդ պատճառով ռուսական մեդիայի ազդեցությունն այստեղ բավականին մեծ է: Բացի այդ, այդ լրատվամիջոցները հեշտությամբ հասանելի են, թեև վերջին շրջանում Հայաստանի իշխանությունները սկսել են պայքարել դրանցից տարածվող ապատեղեկատվության դեմ: Մասնավորապես՝ 2024 թ. մարտին հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող «ՌՏՌ–Պլանետա» հեռուստաալիքով արգելափակվել են «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» և «Կիրակնօրյա երեկո Վլադիմիր Սոլովյովի հետ» հաղորդումները: Մինչ այդ, որոշ ժամանակով արգելափակվել էր նաև «Սպուտնիկ Արմենիա» ռադիոն, սակայն 2024 թ. սկզբին այդ արգելքը հանվել է: Բացի այդ, ռուսական լրատվամիջոցների նկատմամբ վերաբերմունքը փոխվել է՝ կապված Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի բռնազավթման ընթացքում Ռուսաստանի վարքագծի հետ, ինչը նպաստել է Հայաստանում հակառուսական տրամադրությունների աճին: Հայաստանում հատկապես լայն հասանելիություն ունեն հետևյալ ռուսական լրատվամիջոցները՝

- **Russia Today** (հեռուստաալիք և լրատվական կայք. չունի հայերեն տարբերակ: Կայքը հիմնականում ռուսերենով է, իսկ հեռուստաալիքը՝ անգլերենով: Արգելափակված է X-ում և բացակայում է YouTube-ից, սակայն հասանելի է ռուսական սոցիալական ցանցերում, Tik Tok-ում և Telegram-ում):
- **«Սպուտնիկ Արմենիա»** (լրատվական կայք՝ ռուսերեն և հայերեն տարբերակներով, իսկ ռադիոն՝ միայն ռուսերենով: Հասանելի է միայն ռուսական սոցիալական հարթակներում, ինչպես նաև Tik Tok-ում և Telegram-ում),
- **Ռուսական հեռուստաալիքներ՝ «ՌՏՌ-ՊԼԱՆԵՏԱ», «Պերվիյ կանալ»,** ինչպես նաև լրատվական կայք՝ **Lenta.ru և ռադիոկայան՝ «Էխո Մոսկվի»**

- **Թուրքական**

Թուրքական առաջատար լրատվամիջոցները հիմնականում բացասաբար են վերաբերվում հայերին: Բացառություն են կազմում ձախակողմյան և քրդամետ լրատվամիջոցները: Այդ պատճառով թուրքական մեդիան հաճախ դառնում է հայերի վերաբերյալ բացասական նարատիվների և ապատեղեկատվության աղբյուր: Այնուամենայնիվ, թուրքական լրատվամիջոցները զգալի ազդեցություն չունեն հայկական լսարանի վրա՝ մի քանի պատճառներով. Հայաստանում և սփյուռքում ձևավորված է կայուն բացասական վերաբերմունք Թուրքիայի նկատմամբ: Թուրքական մեդիայի մեծ մասը հասանելի է միայն թուրքերենով կամ երբեմն՝ անգլերենով, ինչն ինքնին սահմանափակում է դրանց սպառումը հայախոս լսարանի կողմից: Թուրքիայում գործող հայկական մեդիայի օրինակներ՝ «Ակոս» (agos.com.tr) – ձախակողմյան, առաջադեմ և արևմտամետ շաբաթաթերթ, որտեղ պարբերաբար հրապարակվում են նաև թուրք ձախակողմյան հրապարակախոսների հոդվածներ: Հրատարակվում է ինչպես տպագիր, այնպես էլ առցանց տարբերակով: Կայքի բովանդակությունը հասանելի է հայերեն, թուրքերեն և անգլերեն լեզուներով, հիմնականում վերլուծական և կարծիքային բնույթի: «Ժամանակ» (jamanak.com) – ամենօրյա թերթ և կայք՝ միայն հայերեն լեզվով: «Նոր Մարմարա» (normarmara.com) – թերթ և կայք՝ հայերեն լեզվով:

HyeTert (hyetert.org) – տեղեկատվական պորտալ, հասանելի է 9 լեզվով:

Արևմտյան

Սրանք հիմնականում միջազգային լրատվամիջոցներ են, որոնք, սակայն, չունեն հայերեն տարբերակներ (թեև հաճախ հասանելի են ռուսերենով): Բացի այդ, խոսքը վերաբերում է նաև սփյուռքահայ լրատվամիջոցներին, որոնք գործում են Արևմուտքում: Դրանք գործում են լրատվական լիակատար ազատության պայմաններում, ինչը նշանակում է, որ ունեն բազմազան քաղաքական կողմնորոշումներ: Այնուամենայնիվ, քանի որ հիմնականում կենտրոնանում են

սփյուռքի խնդիրների վրա, այդ լրատվամիջոցները սահմանափակ ազդեցություն ունեն Հայաստանի ներքին տեղեկատվական դաշտում: Տեղեկատվական և վերլուծական առումով առավել կարևոր համարվող սփյուռքահայ լրատվամիջոցներից են. Asbarez (asbarez.com) – ստեղծվել է Կալիֆոռնիայում, հրապարակվում է հայերեն և անգլերեն լեզուներով: Armenian Weekly/ Hairenik (armenianweekly.com) – անգլերեն և հայերեն պարբերական, ունի նաև հայերեն առցանց ռադիո: Horizon Weekly (horizonweekly.ca) – հրատարակվում է Մոնրեալում, հասանելի է հայերեն և ֆրանսերեն լեզուներով: The Armenian Report (thearmenianreport.com) – անգլերեն լեզվով լրատվական կայք, հիմնված Լոս Անջելեսում: Թեև նյութերի ծավալը համեստ է, կայքն աչքի է ընկնում պրոֆեսիոնալ ձևավորմամբ: Հիմնադիրն է ամերիկահայ լրագրող Աննա Քաչիկյանը: Caucasus Watch (caucasuswatch.de) – Գերմանիայում գործող լրատվական կայք, որն անդրադառնում է ամբողջ Հարավային Կովկասի տարածաշրջանին: Հասանելի է անգլերեն և գերմաներեն լեզուներով:

Իրանական

Իրանի առաջատար լրատվամիջոցները, որպես կանոն, հայերեն հաղորդումներ չեն հեռարձակում (բացառությամբ «Հայերեն ռադիոժամ» հաղորդման, որը ներկայացվում է Իրանի պետական ռադիոյի շրջանակում): Սակայն պետք է նշել, որ Իրանի պարսկալեզու մեդիայում ձևավորվող Հայաստանին վերաբերող նարատիվները երբեմն կարող են ներթափանցել նաև հայկական տեղեկատվական դաշտ: Բացի այդ, Իրանում գործում են հայկական ազգային փոքրամասնությանը պատկանող լրատվամիջոցներ, սակայն պետք է հաշվի առնել, որ Իրանը ոչ ժողովրդավարական երկիր է, որտեղ խոսքի ազատությունն էապես սահմանափակված է: Այս հանգամանքը մեծ ազդեցություն ունի տեղի հայկական մամուլի խմբագրական քաղաքականության և տեղեկատվական բովանդակության վրա: Իրանում ամենահիմնավորված և հայտնի հայկական լրատվամիջոցներից է «Ալիք» օրաթերթը, որը հանդիսանում է Հայ Հեղափոխական Դաշնակցության

պաշտոնաթերթը: Այն հրատարակվում է տպագիր տարբերակով և հասանելի է նաև առցանց՝ PDF ձևաչափով: Թերթին կից գործում է տեղեկատվական կայք՝ alikonline.ir, որը հասանելի է հայերեն և պարսկերեն լեզուներով: Թերթի ներկայությունն սոցիալական մեդիայում համեմատաբար սահմանափակ է՝ ներկայացված է հիմնականում Facebook, Instagram և Telegram հարթակներում (սակայն չի գործարկվում X-ում): Այլ հայկական լրատվամիջոցներից կարելի է նշել՝ «Արաքս» շաբաթաթերթը, «Հույս» երկշաբաթաթերթը, «Լույս» հասարակական-մշակութային ամսագիրը, «Ապագա» հասարակական-մշակութային եռամսյա հանդեսը, պարսկերեն լեզվով հրատարակվող «Պայման» ամսագիրը, ինչպես նաև թեմական պարբերականներ՝ «Արտազ»՝ Թավրիզում «Նոր Ջուղա Թաղեկաթու»՝ Իսֆահանում:

բ)Այլընտրանքային մեդիա (բլոգերներ, ինֆլուենսերներ, սոցիալական մեդիա, YouTube և այլն)

Հայաստանում քաղաքական գործիչները X հարթակում մեծ ներգրավվածություն չունեն և առանձնապես ակտիվ չեն նաև Facebook-ում: Օրինակ՝ Ռոբերտ Քոչարյանը X-ում ունի մոտ 1,700 հետևորդ, Սերժ Սարգսյանը այդ հարթակում ընդհանրապես օգտահաշիվ չունի, իսկ Նիկոլ Փաշինյանի անգլալեզու էջը ունի շուրջ 182,000 հետևորդ:

Հայաստանում, հաշվի առնելով, որ երկիրը գտնվում է հետխորհրդային տարածքում և ռուսերենի իմացությունը լայն տարածում ունի[1], ինչպես նաև Ռուսաստանում կա մեծաթիվ հայկական սփյուռք, որոշակի ժողովրդականություն ունեն ռուսական սոցիալական հարթակները՝ մասնավորապես Telegram, Odnoklassniki և VK: Այնուամենայնիվ, հայ օգտատերերի ակտիվությունն այս հարթակներում նվազման

[1] https://www.cia.gov/the-world-factbook/field/languages/

միտում ունի: Թեև Odnoklassniki, VK և Telegram հարթակները շարունակում են օգտագործվել, դրանք չեն դասվում սոցիալական մեդիայի առաջատար հարթակների շարքին: Երևանի պետական համալսարանի Անրիետա Կարապետյանը իր “Popularity of Social Networks Among Armenian Users” հոդվածում (russia-world.ru/jour/article/view/220) շեշտում է Facebook-ի և Instagram-ի գերակայությունը, ինչպես նաև ռուսական սոցիալական մեդիայի համեմատաբար ցածր ներկայությունը: Ըստ հոդվածի՝ Facebook-ի օգտատերերի թիվը կազմում է մոտ 2.1 միլիոն, (ներառյալ Հայաստանում և սփյուռքում բնակվողները): VK-ի և Odnoklassniki օգտատերերի թիվը մոտ 390 հազար է յուրաքանչյուրի դեպքում: Digital 2024 Armenia զեկույցի համաձայն՝ Հայաստանի բնակչության 74.5%-ը օգտվում է սոցիալական մեդիայից

Media.am-ը հայտնում է, որ Հայաստանում Facebook-ի օգտատերերի թիվը մոտ 1.5 միլիոն է: Նշվում է նաև ռուսական Telegram հարթակի մեծ տարածվածությունը, թեև հստակ թվեր չեն ներկայացվում: Similarweb պլատֆորմի տվյալներով՝ Android օպերացիոն համակարգով աշխատող սարքերի օգտատերերի շրջանում Telegram-ը զբաղեցնում է տասներորդ տեղը՝ առաջ անցնելով TikTok, Threads, Snapchat, WhatsApp և Instagram հավելվածներից: Մինչդեռ iOS համակարգի օգտատերերի շրջանում նկատվում է հակառակ միտում. այստեղ Threads, WhatsApp և TikTok հավելվածները ավելի տարածված են, քան Telegram-ը: Google-ի որոնումների վերաբերյալ զեկույցն արձանագրում է, որ Odnoklassniki-ի և VK-ի նկատմամբ հետաքրքրությունն անկում է ապրում, իսկ Telegram-ի նկատմամբ՝ աճում: Նկատվում է նաև որոշակի անկում Facebook-ի նկատմամբ հետաքրքրության՝ ինչը հավանաբար պայմանավորված է այդ հարթակի կողմից շուկայի հագեցվածությամբ: Բացի այդ, TikTok-ի նկատմամբ հետաքրքրությունն այս պահին մնում է համեմատաբար ցածր:

Ahrefs հարթակի տվյալների համաձայն՝ Facebook-ն ու Instagram-ը որոնումների թվով զգալիորեն գերազանցում են OK VK սոցիալական հարթակներին, թեև վերջիններս դեռ պահպանում են որոշ ազդեցություն: Մասնավորապես՝ Facebook– 795,000, Instagram – 427,000, OK – 240,000, VK – 118,000, Pinterest – 113,000, TikTok – 68,000, Twitter – 39,000: Semrush հարթակի տվյալները ևս վկայում են, որ Google.com-ը և YouTube-ը նկատելիորեն գերազանցում են Yandex-ին, իսկ Facebook-ն ու Instagram-ը՝ VK-ին և Telegram-ին:

1. Սոցիալական մեդիայի առանցքային հաշիվներ

Իմնեմնիմի

https://www.youtube.com/playlist?list=PLDXUQCigq_napon2LqYFYnEpdwXRil55r, AntyFakeTV հարթակի շրջանակում YouTube-ում հրապարակվող փոդքասթների շարք է: Այն վարում են Վազգեն Սաղաթելյանը (https://www.facebook.com/vazgen.sagatelyan, մոտ 14,000 հետևորդ) և Նարեկ Սամսոնյանը: Շարքի հաճախակի հյուրերից է Լեհաստանում Հայաստանի նախկին արտակարգ և լիազոր դեսպան Էդգար Ղազարյանը, ով սերտորեն կապված է Սերժ Սարգսյանի հետ:

Հակակոռուպցիոն բլոգ՝ (https://www.facebook.com/anticorruptionblog, 33 հազար հետևորդ) կապված է Մարինա Պողոսյանի (https://www.facebook.com/marinapoghosyan13, 44 հազար հետևորդ) հետ:

Groong՝ Armenia News Network-ը Facebook սոցիալական ցանցում գործող խումբ է՝ շուրջ 9,000 անդամով, և ունի նաև փոդքասթների շարք YouTube-ում: Խումբը վարում է Կաթիա Մինաս Պելթեքյանը: Facebook-ում գոյություն ունեն այլ նմանատիպ հայկական խմբեր ևս, սակայն դրանց անդամների թիվը, որպես կանոն, չի գերազանցում 10,000-ը:

Para TV՝ YouTube-յան ալիք, որը կապված է Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի հետ:

Աննա Հակոբյան (լրագրող և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կին) ունի պաշտոնական կայք՝ https://annahakobyan.am/ (հասանելի է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով), Instagram՝ https://www.instagram.com/annahakobyan.official/ շուրջ 120,000 հետևորդ, X՝ https://x.com/wifeofArmPM շուրջ 6,200 հետևորդ, Facebook՝ https://www.facebook.com/wifeofarmenianPM: Նրա սոցիալական մեդիա հարթակները աչքի են ընկնում բարձր ներգրավվածությամբ:

Գագիկ Ծառուկյան՝ ազդեցիկ օլիգարխ և ռուսամետ քաղաքական գործիչ: https://tsarukyan.am, Facebook՝ https://www.facebook.com/GagikTsarukyan շուրջ 115 հազար հետևորդ: **X** հարթակում ակտիվ չէ:

Ալեն Սիմոնյան՝ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ: https://x.com/alensimonyan՝ մոտ 10 հազար հետևորդ, https://www.facebook.com/simonyanalen՝ 93 հազար հետևորդ, Telegram՝ https://t.me/s/AlenSimonyanonline/ 572,970 բաժանորդ

Արտակ Բեգլարյան՝ «Արցախի միություն» կազմակերպության նախագահ, Արցախի նախկին մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսմեն): https://x.com/Artak_Beglaryan՝ շուրջ 60,000 հետևորդ և ներգրավվածության բարձր մակարդակ: https://www.facebook.com/ArtakBeglaryan՝ շուրջ 43,000 հետևորդ: https://t.me/s/ArtakBeglaryan ՝ 3,180 բաժանորդ:

Տիգրան Բալայան՝ Բելգիայում, Լյուքսեմբուրգում և Եվրոպական միությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան: https://x.com/tbalayan՝ շուրջ 18,000 հետևորդ, https://www.facebook.com/tbalayan՝ շուրջ 5,000 հետևորդ:

Telegram-ում անձնական ալիք չունի, սակայն իր X-ի էջում պարբերաբար խորհուրդ է տալիս հետևել https://t.me/s/sehidlerinfo ալիքին:

Տիգրան Ավինյան՝ Երևանի քաղաքապետ: https://x.com/AvinyanTigran՝ 29 հազար հետևորդ, https://www.facebook.com/tigran.avinyan 8՝ 108 հազար հետևորդ:

Արմեն Թաթոյան՝ Հայաստանի մարդու իրավունքների նախկին պաշտպան: https://x.com/atatoyan՝ շուրջ 23,000 հետևորդ, https://www.facebook.com/profile.php?id=100017676420633 ՝ շուրջ 75,000 հետևորդ:

Վարդան Ղուկասյան՝ ռուսամետ քաղաքական գործիչ, սերտորեն կապված Սերժ Սարգսյանի հետ:FB՝ https://www.facebook.com/VardanGhukasyanVideos/ շուրջ 28,000 հետևորդ, Telegram ալիք՝ https://t.me/s/vardangukasyan/16950՝ շուրջ 223,000 բաժանորդ (երկրորդ տեղը՝ բաժանորդների թվով հայկական քաղաքական ալիքների մեջ):

Արամ Սարգսյան՝ նախկին վարչապետ և 1999 թվականին խորհրդարանում սպանված նախկին վարչապետի եղբայր: Նա համարվում է արևմտամետ ընդդիմության առաջատար գործիչներից: Facebook-ում ունի շուրջ 50 հազար հետևորդ՝ https://www.facebook.com/profile.php?id=100016322520223:

Ռուբեն Վարդանյան՝ ռուսաստանաբնակ օլիգարխ հայկական ծագմամբ, ներկայումս կալանավորված է Ադրբեջանում: Հաճախ ներկայացվում է որպես ռուսամետ շարժումների առաջատար դեմքերից: https://x.com/RubenVardanyan_՝ շուրջ 15 հազար հետևորդ (անգլերեն, 2024 թ. հունիսից նոր գրառումներ չկան): https://t.me/s/rubenvardanyanofficial/646՝ շուրջ 15 հազար բաժանորդ:

Բագրատ Գալստանյան՝ https://x.com/SrbazanBagrat (անգլերեն, 2,500 հետևորդ), https://www.facebook.com/archbishopbagrat.galstanyan՝ 19,600 հետևորդ: Տավուշի

թեմի նախկին հոգևոր առաջնորդ, ում հոգևոր ծառայությունը ժամանակավորապես դադարեցվել է քաղաքական գործունեության պատճառով:

Հրաչյա Արզումանյան՝ հակառուս քաղաքական վերլուծաբան Արցախից, նախկինում՝ Արցախի կառավարության խոսնակ: https://www.facebook.com/hrachya.arzumanianշուրջ 11,000 հետևորդ:

Հովսեփ Խուրշուդյան՝ կարևոր հակառուս և արևմտամետ քաղաքական վերլուծաբան: https://www.facebook.com/@hovsep.khurshudyan՝ շուրջ 22,000 հետևորդ:

Անի Պողոսյան՝ https://x.com/aniboghoss՝ 12,000 հետևորդ

Անժելա Մնացականյան՝ քաղաքական գիտությունների թեկնածու, https://x.com/ANZHELA_YAN 13,000 հետևորդ

Օլեսյա Վարդանյան, https://x.com/Olesya_vArt 10,000 հետևորդ

Արայիկ Գալստյան՝ բլոգեր (@araikgalstyanmoscowschool), ով անդրադառնում է նաև քաղաքական, տնտեսական և միջազգային իրավիճակին վերաբերող թեմաների araikgalstyanmoscowschool՝ շուրջ 163,000 բաժանորդ:

Баграмян 26 ՝ Հայաստանյան իրականությանը նվիրված Telegram-յան ալիք, որը գործում է ռուսերեն լեզվով՝ https://t.me/s/bagramyan26 — շուրջ 118,000 բաժանորդ:

†Армянин՝ Telegram-յան փակ ալիք՝ շուրջ 102,956 բաժանորդ: Ալիքը լուսաբանում է համաշխարհային իրադարձություններ և տեղեկատվական թեմաներ:

планета Жопа – ռուսերեն լեզվով գործող բլոգ, որը վարում է կին բլոգեր: https://t.me/s/planetapopa՝ շուրջ 102,000 բաժանորդ:

Radar Armenia՝ հայերենով գործող Telegram ալիք՝ https://t.me/s/radararm – 81 800 բաժանորդ

Զաքար Քեշիշյան՝ https://www.facebook.com/zakar.keshishian.3, լիբանանահայ հայտնի կոմպոզիտոր, ով Շուշիում հիմնադրել է երգչախումբ: Նա խորապես ներգրավված է հայկական հարցերում և ունի մեծ հեղինակություն:

Արամ MP3 Սարգսյան՝ հանրահայտ երաժիշտ:

- Instagram՝ aram_mp3՝ շուրջ 369,000 հետևորդ,
- Facebook՝ AramMp3Official՝ շուրջ 250,000 հետևորդ,
- YouTube՝ AramMp3Official՝ շուրջ 191,000 բաժանորդ,
- Telegram ալիք՝ arammp3՝ 772 բաժանորդ:

2. Այլ Telegram-յան ալիքներ.

Antifake՝ https://t.me/s/AntiFake_am շուրջ 3,490 բաժանորդ: Հաշիվը կապված է Antifake լրատվական հարթակի հետ:

@srbazan_payqar (Սրբազան պայքար)՝ Telegram-յան ալիք, որը կապված էԲագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի հետ: Ալիքի անվանումը նշանակում է «Սուրբ պայքար» և հանդիսանում է հարթակ, որտեղ նա կիսվում է իր մտքերով և տարածում է տեղեկություն իր հասարակական ու հոգևոր գործունեության մասին — https://t.me/s/srbazan_payqar/1116

Անդրանիկ Հովհաննիսյան՝ լուսաբանում է ներքին քաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացներ Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում —https://t.me/s/andranik_official 7,652 բաժանորդ, FB՝ https://www.facebook.com/andran1k.official

Նարեկ Սամսոնյան Telegram՝ https://t.me/s/nareksamsonyantelegram 876 բաժանորդ: VELES՝ https://veles.am/, FB՝ https://www.facebook.com/veleshumanrightsngo՝ շուրջ 8,000 հավանում, Telegram ալիք՝ https://t.me/s/veles_human_rights_ngo՝ շուրջ 7,570 բաժանորդ:

3. Սփյուռք

Մարգարիտա Սիմոնյանի X հարթակի հաշիվ՝ https://x.com/M_Simonyan շուրջ 557,000 հետևորդ: Թեև այն ամբողջությամբ նվիրված չէ հայկական թեմաներին, այն նպատակահարմար է ներառել՝ հաշվի առնելով Սիմոնյանի ազդեցությունն Հայաստանում և նրա լայն լսարանը:

Գարո Պայլան՝ Թուրքիայի խորհրդարանի նախկին պատգամավոր ընդդիմադիր, քրդամետ HDP կուսակցությունից: Instagram՝ https://www.instagram.com/garopaylan/?hl=en շուրջ 49,800 հետևորդ: Twitter՝ https://x.com/GaroPaylan?fbclid=IwY2xjawF4avpleHRuA2FlbQIxMAABHfh85CSEwyoy-n1vFrli1Qd1ITcepjo9WWburFiWCRsB8kJyMfDO8J-VqA_aem_8UA3m9mb4eipHOquynCRGw շուրջ 539,000 հետևորդ: Telegram-ում ակտիվ հաշիվ չունի:

Սերժ Թանկյան՝ https://x.com/serjtankian (628,000 հետևորդ): Կալիֆոռնիայում բնակվող System of a Down ռոք խմբի մենակատար, ով երկար տարիներ ակտիվ մասնակցություն է ունեցել հայանպաստ նախաձեռնություններին: Telegram-ում ակտիվ ալիք կամ հաշիվ չունի:YouTube՝ Serj Tankian՝ շուրջ 760,000 բաժանորդ, Facebook՝ SerjTankian՝ շուրջ 1.9 միլիոն հետևորդ,

Արևմուտքում կան բազմաթիվ հայտնի անձինք և հանրահայտ դեմքեր հայկական ծագմամբ, ովքեր սոցիալական ցանցերում ունեն լայն լսարան: Նրանցից մի քանիսը ժամանակ առ ժամանակ ներգրավվում են հայկական հարցերին: Այդպիսիք են, օրինակ, Քիմ Քարդաշյանը և Ալեքսիս Օհանյանը:

4. Տարեկան կրկնվող ազգային և տարածաշրջանային միջոցառումներ և իրադարձություններ

- Ամենակարևոր իրադարձությունը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է, որը նշվում է ամեն տարի ապրիլի 24-ին։
- Կրոնական տոներ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդ (հունվարի 6-ին) և Սուրբ Զատիկ՝ ըստ Հայ Առաքելական եկեղեցու օրացույցի, որը տարբերվում է ուղղափառ և կաթոլիկ տոների ժամանակացույցից։
- Պետական տոներ՝ Հայոց բանակի օր — հունվարի 28, Կանանց միջազգային օր — մարտի 8, Աշխատավորների օր — մայիսի 1, Հաղթանակի օր — մայիսի 9 (նշում՝ մայիսի 8-ին նախկինում նշվում էր Շուշիի ազատագրման օրը, սակայն ներկայում քաղաքը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ), Հանրապետության օր — մայիսի 28 (հիշատակում է 1918 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրումը), Անկախության օր — սեպտեմբերի 21 (հիշատակում է 1991 թ. անկախության հռչակումը)
- Փոքրամասնությունների տոներ՝ Յալդա (ձմեռային արևադարձի գիշեր, զրադաշտական հին ավանդույթ), Եզդիների նոր տարի՝ ապրիլի 17, Նորուզ (նշվում է եզդիների, քրդերի և իրանցի զբոսաշրջիկների կողմից)
- Փառատոներ՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն (հուլիս), Hay Festival թատերական փառատոն (հոկտեմբեր)
- Ռուսական մշակութային իրադարձություններ՝ հունիսի 6՝ ռուսաց լեզվի օր և Ալեքսանդր Պուշկինի ծննդյան տարեդարձ, հոկտեմբերի 19՝ լիցեյական բարեկամության օր (Ցարսկոյե Սելոյի լիցեյի շրջանավարտներին նվիրված), հոկտեմբերին հաճախ անցկացվում են նաև ռուսական մշակույթի օրեր

գ) Հասարակական կազմակերպություններ և այլ ոչ պետական կառույցներ, որոնք ազդում են հանրային կարծիքի վրա

Հայաստանում քաղաքացիական հասարակությունը բավականին զարգացած է, ինչի արդյունքում գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ և հետազոտական կենտրոններ (think tank-եր)։ Հատկապես վերջին տարիներին՝ Նիկոլ Փաշինյանի իշխանության գալուց և դրան ուղեկցող ժողովրդավարացման գործընթացներից հետո, այդ կառույցներն արձանագրել են նկատելի աճ։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտը նաև նախկինում բնութագրվել է պլյուրալիզմով։ Հայաստանի տեղեկատվական միջավայրի ձևավորման գործում կարևոր դեր են խաղում նաև սփյուռքի հետ առնչվող կառույցները՝ պայմանավորված Հայաստանի և սփյուռքի միջև սերտ և շարունակական կապերով։ Սա վերաբերում է ինչպես արևմտյան սփյուռքին (հատկապես Կալիֆոռնիայում և Ֆրանսիայում), այնպես էլ Մերձավոր Արևելքի (Լիբանան, Սիրիա, Թուրքիա) և Ռուսաստանի հայ համայնքներին։ Հասարակական կազմակերպություններն ու հետազոտական կենտրոնները հիմնականում ունեն եվրոպամետ և ժողովրդավարական կողմնորոշում։ Միևնույն ժամանակ, կիսառազմական խմբերի, մասնավորապես վետերանների կազմակերպությունների պարագայում, իրավիճակն առավել բարդ և բազմաշերտ է։

Կիսառազմական և հայրենասիրական կազմակերպություններ

Ադրբեջանի հետ պատերազմը և անվտանգության հանդեպ մշտական սպառնալիքը հանգեցրել են նրան, որ Հայաստանում գործում են մի շարք կիսառազմական կազմակերպություններ.

Երկրապահ կամավորական միություն՝ https://ekm.am/, հիմնադրվել է Ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում Վազգեն Սարգսյանի կողմից։ Նա խարիզմատիկ հրամանատար էր, որը հետագայում դարձել է Հայաստանի

վարչապետ: Վազգեն Սարգսյանը սպանվել է 1999 թվականին՝ Հայաստանի Ազգային ժողովի վրա կատարված ահաբեկչական հարձակման ընթացքում: Միության ներկայիս ղեկավարը Սասուն Միքայելյանն է: Կազմակերպությունը լիովին հավատարիմ է վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Արցախի ազատամարտի վետերանների միություն՝ բացասական դիրքորոշում վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ: Միության ներկայացուցիչները նրան մեղադրում են դավաճանության, Արցախի հանձման, ինչպես նաև Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացը նախաձեռնելու մեջ, https://www.facebook.com/XPVMHK/

Պահեստազորի սպաների միություն՝ հիմնադրվել է 2021 թվականի ապրիլին: Կազմակերպությունը ընդդիմադիր դիրքորոշում ունի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ և հրապարակավ աջակցում է Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին, https://www.facebook.com/profile.php?id=100070844574443

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ)՝ աշխարհի ամենամեծ հայկական հասարակական կազմակերպությունն է, որը գործում է սփյուռքում: Այն ակտիվորեն ներգրավված է Հայաստանի և սփյուռքի հարցերում, խթանում է հայկական մշակույթը, կրթությունն ու հայրենասիրությունը, հատկապես երիտասարդ սերնդի շրջանում: Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է ԱՄՆ-ում, https://agbu.org/

Ռուսաստանի հետ առնչվող կազմակերպություններ և հաստատություններ

Հայաստանի Ռուսական տուն՝ https://www.facebook.com/RSGOVArmenia, ունի երկու մասնաճյուղ՝ Երևանում և Գյումրիում: Կազմակերպությունը գործում է միջկառավարական համաձայնագրի հիման վրա:

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանը Աբովյան քաղաքում: https://www.facebook.com/Friendshipmuseumarmrus/

Երևանի **Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան** (https://rau.am/am), ռեկտոր՝ Էդվարդ Սանդոյան

Ռուս – Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնը (ՌՀՄԱԿ) հիմնադրվել է 2015 թվականի մայիսի 19-ին Մոսկվայում ստորագրված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև համաձայնագրի հիման վրա: Կենտրոնի տնօրենն է Ա.Ե. Բուտիրսկին (Ռուսաստան), համատնօրեն՝ Պ.Ս. Գոզալյանը (Հայաստան):

- https://www.rachr.ru/en/about/;
- https://www.facebook.com/rachremercom

Ուսումնա-սպորտային համալիր, կառուցված է ԳԱԶՊՐՈՄ-ԱՐՄԵՆԻԱ ընկերության կողմից: Բացվել է 2019 թվականին, նույն տարում համալիրում բացվել է մանկապարտեզ, ապա՝ տարրական դպրոցի դասարաններ: 2023 թվականին բացվել է առաջին ռուսալեզու դասարանը: https://gaus.am/en/about-us/history

«Լազարյան ակումբը», որն անվանվել է հայ բարերարների՝ Լազարյանների հռչակավոր ընտանիքի՝ Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի հիմնադիրների անունով, իրեն ներկայացնում է որպես Ռուսաստանի և Հայաստանի հասարակությունների միջև հանդիպումների ու կարծիքների փոխանակման հարթակ, https://t.me/s/lazarevsky_club

2012 թվականին ստեղծվեցին **«Պուտինի ակումբները»,** սակայն ներկայումս չկա դրանց գործունեության մասին տեղեկություններ: 2012 թվականից հետո փաստացի

տվյալներ չկան: Ըստ տարբեր աղբյուրների՝ հիմնադրվել են երկու ակումբ, որոնց նախաձեռնողն է Արարատ Ստեփանյանը: https://iwpr.net/global-voices/derision-servile-putin-fan-club-armenia https://www.kavkaz-uzel.org/articles/200187/

Մոսկվայի տունը Երևանում՝ Մոսկվայի տները ստեղծվում են Մոսկվայի իշխանությունների և այնտեղ գործող կազմակերպությունների, ձեռնարկությունների միջև համագործակցության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապերի խթանման նպատակով:

Եվրասիայի ժողովուրդների ասամբլեան իրականացնում է նախագծեր նաև Հայաստանում: Օրինակներից են՝
– Երջանկության դարբնոց նախաձեռնությունը.

- http://www.eurasia-assembly.org/ru/kuznica-schastya,
- http://www.eurasia-assembly.org/ru/news/schaste-narodov-mira-armeniy,
- Դիվանագիտության հանրային առաջնորդ 2023 մրցույթը՝ http://www.eurasia-assembly.org/ru/news/startoval-obrazovatelnyy-intensiv-ii-mezhdunarodnogo-konkursa-lider-narodnoy-diplomatii-2023; Ասամբլեան գործընկեր է Ռուսաստանի հայկական միության հետ՝ https://sarinfo.org/about/Ideology/goals/:

0. **Տնտեսական սուբյեկտներ, որոնք կարող են ազդել լրատվամիջոցներում ներկայացվող բովանդակության ձևավորման և մատչելիության վրա:**

Քոչարյանի և Սարգսյանի կառավարման տարիներին Հայաստանի քաղաքական-տնտեսական համակարգը, հատկապես խորքային կոռուպցիայի առկայության պայմաններում, հանգեցրեց օլիգարխիկ կառույցների ձևավորմանը: Այն հանգամանքը, որ Ռուսաստանում նույնպես ձևավորվել էր օլիգարխիկ համակարգ, նպաստեց հայ և ռուս օլիգարխների միջև կապերի խորացմանը և հայկական օլիգարխների ազդեցիկ ներկայությանը Ռուսաստանում: Շատ օլիգարխներ, այդ

թվում՝ նախկին նախագահներ, որոնք ըստ էության իրենք էլ դարձան օլիգարխներ, պարբերաբար ձգտել են (և շարունակում են ձգտել) ազդեցություն ունենալ ինչպես Հայաստանի քաղաքական դաշտի, այնպես էլ տեղեկատվական միջավայրի վրա: Սա հատկապես վերաբերում է Ռոբերտ Քոչարյանին, Սերժ Սարգսյանին, Ռուբեն Վարդանյանին, ով ֆինանսավորում է տարբեր ռուս լրագրողներին և քարոզիչներին, օրինակ՝ նախկինում Սեմյոն Պեգովին՝ հայտնի որպես Վարգոնզո, Գագիկ Ծառուկյանին, Սամվել Կարապետյանին՝ ռուս օլիգարխ, «Tashir Group»-ի ղեկավար, որ աջակցում է Քոչարյանին, Սերգեյ Սարգսովին, որի ներգրավվածության մասին Հայաստանում բացահայտ տեղեկություններ չկան, սակայն հայտնի է, որ նա կրեմլամետ դիրքորոշում ունի, ինչպես նաև Կարեն Կարապետյանին, ով աշխատել է «Գազպրոմում», եղել է Հայաստանի վարչապետ և սերտ կապեր ունի Սերժ Սարգսյանի հետ:

Gazprom Armenia ընկերությունն առանցքային դեր ունի Հայաստանում: Գլխավոր տնօրենը՝ Աշոտ Հակոբյանն է (https://armenia.gazprom.com/press/news/2024/09/234/): Ընկերության հետ կապ ունի նաև Վարդան Հարությունյանը, ով 2020 թվականին դատի էր տվել Hetq.am հետաքննական լրագրողների՝ իբր զրպարտության համար: Gazprom Armenia-ն, հանդիսանալով ռուսական պետական Gazprom ընկերության տեղական մասնաճյուղը, տնօրինում է Հայաստանի ողջ գազաբաշխման ենթակառուցվածքը: Այն նաև ծառայում է որպես Ռուսաստանի «փափուկ ուժի» գործիք՝ իրականացնելով տարբեր ծրագրեր, այդ թվում՝ դպրոցների և այլ հաստատությունների կառուցում https://gaus.am/en/school/general-description: 2024 թվականի սեպտեմբերին Gazprom Armenia-ն բացեց նոր սպորտային համալիր Հայաստանում https://armenia.gazprom.com/press/news/2024/09/231/: Նույն ամսին, ընկերության վարչության նախագահ և գլխավոր տնօրեն Աշոտ Հակոբյանի անձնական նախաձեռնությամբ և Երևանում Ռուսաստանի Գիտության և Մշակույթի Կենտրոնի (Ռոսսոտրուդնիչեստվո) ակտիվ աջակցությամբ, Gazprom Armenia-ի կադրային քաղաքականության շրջանակում ձեռք է բերվել

պայմանավորվածություն՝ Ի.Մ. Գուբկինի անվան Ռուսաստանի Նավթի և Գազի Պետական Համալսարանի բակալավրիատի 10 դիմորդի անվճար ուսուցման վերաբերյալ՝ https://armenia.gazprom.ru/press/news/2024/09/1639/: Բացի այդ, Gazprom Armenia-ն գրքեր և ուսումնական նյութեր է տրամադրում Երևանի Ռուսական Տան համար՝ նպաստելով Հայաստանում ռուսական մշակույթի և կրթության տարածմանը կրթության տարածմանը Հայաստանում https://vk.com/wall-211411848_2488:

Բացի այդ, Հայաստանում մեդիա դաշտի վրա ազդեցություն ունեցող հիմնական ընկերություններից են՝ Viva Armenia-ն (բջջային կապի օպերատոր, որը պատկանում է ռուսական MTS խմբին), Ameriabank-ը, Grand Candy-ն, SoftConstruct-ը, Zangezur Copper Molybdenum Combine-ը, Yerevan Brandy Company-ն (որը պատկանում է ֆրանսիական ընկերությանը), ինչպես նաև Galaxy Group of Companies-ը:

2. Հասարակության տեղեկատվական սովորույթները

Հայաստանում խոսքի և մամուլի ազատությունը բարձր է գնահատվում միջազգային կազմակերպությունների կողմից, սակայն դա դեռ չի նշանակում, որ հասարակությունն ունի վստահություն մեդիայի նկատմամբ: Ըստ «Լրագրողներ առանց սահմանների» վերջին վարկանիշի՝ Հայաստանը զբաղեցնում է 43-րդ հորիզոնականը և դիտարկվում է որպես տարածաշրջանում մամուլի ազատության «միայնակ կղզի»: 2024 թ-ի Freedom House-ի՝ համացանցի ազատությանը նվիրված զեկույցում Հայաստանը գնահատվում է որպես ազատ երկիր՝ ցուցաբերելով շարունակական առաջընթաց: Հետազոտությունների համաձայն՝ խոսքի

ազատության վերաբերյալ հանրային ընկալումները նույնպես դրական են. հարցվածների 75 տոկոսը կարծում է, որ Հայաստանում կա խոսքի (լրիվ կամ մասնակի) ազատություն, իսկ 72 տոկոսը՝ որ մեդիան որոշ չափով ազատ է: Սակայն այս ազատության ընկալումը միշտ չէ, որ համընկնում է մեդիայի նկատմամբ վստահության մակարդակին: 2022 թ. CRRC Caucasus Barometer զեկույցի համաձայն՝ հարցվածների մոտ 72 տոկոսը չի վստահում մեդիային, մինչդեռ ընդամենը 9 տոկոսն է հայտնել, որ վստահում է: Ուշագրավ է, որ անվստահության մակարդակը կտրուկ աճել է 2019 թվականից հետո՝ ժողովրդավարացման գործընթացի ֆոնին: Այս անվստահության աճը կապված է նաև 2020 թ. Արցախյան պատերազմի ընթացքում կրած պարտության հետ, որն էապես բևեռացրեց հասարակական տրամադրությունները:

Հայաստանում լրատվամիջոցների նկատմամբ վստահություն (2022)



Էբերտի հիմնադրամի զեկույցում ևս ներկայացված են համանման տվյալներ, ըստ որոնց՝ հարցվածների միայն 12 տոկոսն է վստահում կամ մասամբ վստահում մեդիային: Բացի այդ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի զեկույցների համաձայն՝ 2023 թվականից սկսած աճում է լրագրողների նկատմամբ ճնշումը, հատկապես դատական գործերի միջոցով, ինչը կարող է հանգեցնել ինքնագրաքննության: Այնուամենայնիվ, Internews (Ինտերնյուս) կազմակերպության հետազոտությունը ցույց է տվել մեդիայի հանդեպ վստահության աճ. եթե 2023 թվականին այն կազմել է 49 տոկոս, ապա 2024 թվականին հասել է 53 տոկոսի: Նկատվում են զգալի տարբերություններ տարբեր հետազոտությունների արդյունքներում, ինչը պայմանավորված է հարցերի ձևակերպման եղանակով: Այնուամենայնիվ, մեդիայի հանդեպ ցածր վստահությունն արձանագրվում է բազմաթիվ ուսումնասիրություններում, իսկ Internews-ի կողմից արձանագրված աճը կարող է որոշ չափով հուսադրող, թեև զգուշավոր լավատեսության հիմք հանդիսանալ: Չի կարելի բացառել, որ այս միտումը պայմանավորված է մեդիայի պրոֆեսիոնալիզմի համեմատաբար բարձրացմամբ, ինչպես նաև Հայաստանի՝ այս ոլորտում միջազգային զեկույցներում ստացած գնահատականների վերաբերյալ աճող հանրային իրազեկվածությամբ: Սա որոշ չափով կարող է պայմանավորված լինել նաև տարածաշրջանային համատեքստով՝ նկատի ունենալով հակադրությունն այնպիսի հարևան երկրների հետ, ինչպիսիք են Ռուսաստանը, Ադրբեջանը, Իրանը, Թուրքիան, իսկ որոշ դեպքերում՝ նաև Վրաստանը:

Այդուհանդերձ, 2024 թ. մարտին հրապարակված Zinc Network-ի զեկույցը (USAID-ի աջակցությամբ) մատնանշում է Հայաստանի մեդիա ոլորտի ինստիտուցիոնալ թուլությունները, որոնք կարող են հանգեցնել լրատվամիջոցների կառավարման կամ մանիպուլյացիայի, մասնավորապես՝ արտաքին տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության (FIMI) շրջանակներում: Զեկույցում հատկապես ընդգծվում է այն հանգամանքը, որ մեդիայի անկախությանը նպաստող

ֆինանսավորման մոդել գոյություն չունի, մինչդեռ հասարակությունը դեռ ցածր պատրաստակամություն ունի վճարելու մեդիա բովանդակության համար: Թեպետ ըստ Internews-ի՝ 2023-ից 2024 թ. այդ ցուցանիշը աճել է՝ 17 տոկոսից հասնելով 24 տոկոսի, հատկապես առցանց մեդիայի պարագայում այն դեռ մնում է սահմանափակ: Այս պայմաններում մեդիան հաճախ դառնում է կախված հովանավորներից, որոնցից շատերը կարող են ունենալ սեփական քաղաքական օրակարգ կամ կապեր կոռուպցիոն շրջանակների հետ: Ֆինանսավորման մեկ այլ աղբյուր է նաև հայկական սփյուռքը, որը երբեմն հանդես է գալիս որպես օտար երկրների շահերի կրող, մասնավորապես՝ Ռուսաստանի մոտ մեկ միլիոնանոց հայկական համայնքի և այնտեղի օլիգարխների դեպքում: Ե՛վ հայաստանյան հասարակությանը, և՛ մեդիա դաշտին բնորոշ է ծայրահեղ բևեռացվածությունը: Այդ բևեռացվածությունն ու առցանց մեդիայի տարածման աճը 2018 թ. հեղափոխությունից հետո խթանել են ապատեղեկատվության տարածումը՝ էապես նվազեցնելով մեդիայի նկատմամբ հանրային վստահությունը:

CivilNet լրատվական հարթակը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և մի շարք եվրոպական երկրների կառավարությունների կողմից, մեդիայի հանդեպ վստահության պակասը պայմանավորում է մի շարք գործոններով.

«Ապատեղեկատվության և կեղծ նորությունների աճող ալիքներ, քաղաքական բևեռացվածություն, որը արտացոլվում է լրատվամիջոցներում, անվտանգության մշտական սպառնալիքներ, որոնք ստեղծում են շահարկումների և մանիպուլյացիաների համար նպաստավոր միջավայր՝ միաժամանակ լռեցնելով փորձագետների իրական ձայները: Արտաքին դերակատարների օրակարգերի առաջխաղացում՝ տեղայնացված բովանդակության և հռետորաբանության միջոցով: Սոցիալական մեդիայի գերիշխանություն, որտեղ բացակայում են էթիկական նորմերն ու պատասխանատվության ստանդարտները: Մեդիագրագիտության ցածր մակարդակ: «Տեղեկատվական պղպջակ» (echo

chamber) երևույթ, երբ մարդիկ՝ անկախ կրթական մակարդակից, սպառում են միայն այնպիսի տեղեկատվություն, որը հաստատում է իրենց ունեցած համոզմունքները։ Վերջապես, նշվում են լրագրողական կրթության բացերը Հայաստանում և դեպքի վայրից հաղորդող թղթակիցների լուրջ պակասը»։

Հեռուստատեսությունը շարունակում է մնալ տեղեկատվության երկու հիմնական աղբյուրներից մեկը՝ ինտերնետային հարթակների կողքին, սակայն միտում կա հեռուստատեսության դերի նվազման՝ համացանցի, հատկապես սոցիալական մեդիայի աճող ազդեցության հաշվին։ Տնային տնտեսությունների շուրջ 98%-ն ունի հասանելիություն հեռուստատեսությանը, և ըստ Internews-ի՝ 2023 թվականի հարցման՝ հարցվածների 56%-ը նշել է այն որպես տեղեկատվության երկու հիմնական աղբյուրներից մեկը։ Միևնույն ժամանակ, ինտերնետը նշել է 75%-ը, ռադիոն՝ ընդամենը 6%-ը, իսկ տպագիր մամուլը, որի սպառումը վերջին տարիներին զգալիորեն նվազել է, ընդամենը 2%-ը։ 2024 թվականի տվյալներով՝ հեռուստատեսությունից տեղեկատվություն ստանալու մասին հայտնել է արդեն միայն 45%-ը, մինչդեռ ինտերնետից՝ 81%-ը։ Սոցիալական մեդիայի մասնաբաժինը կազմել է 62%՝ նախորդ տարվա 58%-ի փոխարեն։



2022 թվականին իրականացված Caucasus Barometer հետազոտության համաձայն՝ հարցվածների 46%-ը հեռուստատեսությունը նշել է որպես հիմնական տեղեկատվության աղբյուր: Իսկ 2021 թվականին Colab Medios կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության տվյալներով՝ 62%-ը տեղեկատվության աղբյուր է համարել հեռուստատեսությունը, 76%-ը՝ սոցիալական ցանցերը, 21%-ը՝ նորությունների կայքերը, և 10%-ը՝ ռադիոն: Այս համատեքստում ուշագրավ է տեղեկատվական նախընտրությունների տարիքային տարբերությունը. 18–24 տարեկանների շրջանում 87.4%-ը որպես հիմնական տեղեկատվության աղբյուր նշել է սոցիալական ցանցերը, մինչդեռ 65 և բարձր տարիքային խմբում այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 43.9%: Հեռուստատեսության պարագայում հարաբերակցությունը հակառակն է՝ 18–24 տարեկանների մոտ՝ 33.9%, 65+ խմբում՝ 87.9%:





Մի փոքր ավելի վաղ՝ 2019 թվականին, Advanced Public Research Group (APRG) կազմակերպության կողմից անցկացված հետազոտության ընթացքում, մեկ ընտրությամբ հարցման արդյունքներով՝ ինտերնետը որպես հիմնական տեղեկատվության աղբյուր նշել է հարցվածների 36.5%-ը, հեռուստատեսությունը՝ 35.7%-ը, ռադիոն՝ 3.7%-ը, իսկ տպագիր մեդիան՝ 1.5%-ը: Ուշագրավ է, որ նույն հետազոտության տվյալներով՝ ամենաբարձր վստահությունը վայելել են ռադիոն և տպագիր մամուլը՝ համապատասխանաբար 59% և 54%: Հեռուստատեսության նկատմամբ վստահությունը կազմել է 50%, ինտերնետային մեդիային՝ ընդամենը 36%, իսկ սոցիալական մեդիային՝ ընդամենը 27%, այն դեպքում երբ 42%-ը բացահայտ նշել է, որ չի վստահում սոցիալական մեդիային:





Սրանից պարզ է դառնում, որ մեդիայի օգտագործման սովորությունները միշտ չէ, որ պայմանավորված են տեղեկատվության վստահելիության գնահատմամբ, այլ հաճախ՝ հարմարավետությամբ և նորաձևությանը հետևելու ցանկությամբ: Այդուհանդերձ, այս միտումը ուղեկցվում է աճող անվստահությամբ, ինչպես նաև որոշ (թեև սահմանափակ) հակվածությամբ՝ տեղեկատվությունը ստուգելու այլ աղբյուրներում և այն քննարկելու ընտանիքի անդամների ու մտերիմների հետ՝ միաժամանակ պահպանելով անվստահություն անծանոթների նկատմամբ:

Ուշադրության են արժանի նաև տարբեր մեդիա տեսակների դեպքում քաղաքացիների լեզվական նախապատվությունները: APRG կազմակերպության ուսումնասիրության համաձայն՝ հայերենը որպես նախընտրելի լեզու նշել է հարցվածների՝ 76%-ը՝ տպագիր մամուլի դեպքում, 71%-ը՝ ռադիոյի, 61%-ը՝ հեռուստատեսության, 57%-ը՝ ինտերնետի: Ռուսերենը նախընտրել է՝ համապատասխանաբար 21%, 25%, 35% և 35%, իսկ անգլերենը՝ 1.6%, 1.5%, 3% և 7%:



ա) Պետական մեդիայի դիտումներն ու ընկալումը

Պետական հեռուստատեսությունը չի վայելում ամենաբարձր դիտողականություն և զբաղեցնում է միայն երրորդ տեղը՝ զիջելով երկու մասնավոր հեռուստաընկերությունների՝ Armenia TV-ին և Shant TV-ին: Internews-ի 2024 թ. ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 45%-ը նշել է, որ դիտում է պետական հեռուստատեսությունը, ինչը աճ է 2023 թվականի 37%-ի համեմատ: Բացի այդ, ևս 8%-ը հայտնել է, որ դիտում է պետական հեռուստատեսության լրատվական ալիքը: 2019 թ. APRG կազմակերպության ուսումնասիրության արդյունքներով՝ հարցվածների 12.4%-ը պետական հեռուստատեսությունն անվանել է որպես առավել նախընտրելի (մեկ ընտրությամբ հարցման ձևաչափով), ինչը նույնպես երրորդ տեղն էր՝ կրկին Armenia TV-ի և Shant TV-ի հետևում, որոնք յուրաքանչյուրը նախընտրել է 24.6%-ը: Պետական հեռուստատեսությունն ակնհայտ առավելություն ունի սոցիալական մեդիայի հարթակներում. YouTube — 636 հազար բաժանորդ (աննշան զիջում Armenia TV-ին), Facebook — 651 հազար հետևորդ (այստեղ զիջում է Shant TV-ին), Instagram — 217 հազար, X (նախկին Twitter) — 8 հազար: Պետական հեռուստատեսության լրատվական ալիքը նույնպես զգալի լսարան ունի. YouTube — 418 հազար բաժանորդ, Facebook — 782 հազար հետևորդ, Instagram — 72 հազար, Telegram — 67 հազար, X — 2 հազար: Ընդհանուր առմամբ, պետական հեռուստատեսության սոցիալական մեդիայի լսարանը կազմում է մոտ 1,512,000, իսկ նրա լրատվական ալիքի լսարանը՝ 1,341,000: Համեմատության համար՝ Shant TV-ն ունի 2,413,000 լսարան, իսկ Armenia TV-ն՝ 1,190,000: Մյուս հեռուստաընկերությունները զգալիորեն փոքր լսարան ունեն:





Պետական հեռուստատեսությունը, սակայն, շարունակում է վայելել ամենամեծ վստահությունը: IRI-ի կողմից 2024 թվականին իրականացված հետազոտության համաձայն՝ որի ընթացքում հարցվածներին առաջարկվել է նշել առավել վստահություն ներշնչող երկու մեդիա, 20%-ը պետական հեռուստատեսությունը նշել է որպես առաջին ընտրություն, իսկ 8%-ը՝ որպես երկրորդ ընտրություն: Միևնույն ժամանակ, 41%-ը հայտարարել է, որ վստահություն չունի որևէ մեդիայի հանդեպ կամ հրաժարվել է պատասխանել: Caucasus Barometer-ի 2022 թ. տվյալներով ևս պետական հեռուստատեսությունը գնահատվել է որպես ամենավստահելի մեդիա, այն նշել է հարցվածների 24%-ը (մեկ ընտրության հնարավորությամբ): Իսկ APRG կազմակերպության 2019 թ. ուսումնասիրության արդյունքում՝ պետական հեռուստատեսությունը որպես ամենավստահելի հեռուստատեսություն նշել է 13.7%, մինչդեռ 6.8%-ը այն համարել է ամենաանվստահելի՝ երկու դեպքում էլ զբաղեցնելով առաջին տեղը: Internews-ի բազմակի ընտրության հնարավորությամբ հարցման համաձայն՝ պետական հեռուստատեսության նկատմամբ վստահությունը կազմել է 42%, ինչը ցածր է Armenia TV-ի ցուցանիշից (53%), սակայն զգալի աճ է՝ համեմատած նախորդ 25%-ի հետ: Armenia TV-ի և Shant TV-ի նկատմամբ նույնպես արձանագրվել է վստահության աճ, մինչդեռ մյուս հեռուստաալիքներն ունեն անհամեմատ ցածր ցուցանիշներ:

Պետական ռադիոն շարունակում է մնալ հանրահայտ ռադիոկայանների շարքում՝ կողք կողքի Radio Aurora-ի և Radio Van-ի հետ: Internews-ի 2024 թ. հետազոտության համաձայն՝ այն լսում է հարցվածների 17%-ը, ինչը զգալի աճ է 2023 թ. 8% ցուցանիշի համեմատ: նույնքան՝ 17%, ունի նաև Radio Aurora-ի լսարանը: Սակայն սոցիալական մեդիայում պետական ռադիոն իր լսարանով զիջում է ինչպես Radio Aurora-ին, այնպես էլ Radio Van-ին: Armenpress լրատվական գործակալությունն ունի համեմատաբար սահմանափակ ներկայություն սոցիալական մեդիայում՝ 220 հազար հետևորդ՝ Facebook-ում, 21 հազար՝ YouTube-ում, և 5.8 հազար՝ X -ում:

Այս ցուցանիշները զգալիորեն ցածր են, քան մի շարք այլ նորությունների կայքերի համապատասխան տվյալները: Այնուամենայնիվ, APRG-ի կողմից 2019 թ. անցկացված մեկ ընտրության ձևաչափով հարցման համաձայն՝ Armenpress-ը ճանաչվել է որպես ամենավստահելի ռադիոկայան հարցվածների 17.7%-ի կողմից: Նմանատիպ արդյունք է արձանագրել միայն Radio Azatutyun-ը՝ 16.5%-ով: Իսկ 2024 թ. Internews-ի բազմակի ընտրության հնարավորությամբ հարցման տվյալներով՝ Armenpress-ը կրկին հիշատակվել է որպես ամենավստահելի ռադիոկայան հարցվածների ամենամեծ տոկոսի՝ 25%-ի կողմից:

Պետական մեդիաները հիմնականում հանդիսանում են հարձակման թիրախ՝ հատկապես ռուսամետ հակակառավարական ընդդիմության կողմից: 2024 թվականի հոկտեմբերին, երբ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը բողոքի ակցիա էր կազմակերպել պետական հեռուստատեսության շենքի դիմաց, հեռուստաընկերությունն արձագանքեց՝ հրավիրելով նրան հարցազրույցի: Սակայն Գալստանյանը հրաժարվեց պատասխանել հարցերին և ցանկացավ ուղղակի հղել ուղերձ՝ կոչ անելով տապալել վարչապետ Փաշինյանին: Այս մոտեցումը բացահայտորեն դուրս է ժողովրդավարական պետության հանրային մեդիայի առաքելության շրջանակներից, ուստի նման պահանջը մերժելը չի կարող դիտարկվել որպես կողմնակալություն կամ անհավասարակշռվածություն:

Հանրության մի հատվածի կողմից տրվող բացասական գնահատականները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են երկրի ներսում առկա խոր բևեռացվածությամբ և Ռուսաստանի կողմից իրականացվող տեղեկատվական մանիպուլյացիայի (FIMI) գործողություններով: Նշենք, որ պետական հեռուստատեսության՝ թե՛ հիմնական, թե՛ լրատվական ալիքներով ամեն օր ցուցադրվում է հինգ բոպեանոց հաղորդում, որը նվիրված է ապատեղեկատվության բացահայտմանը:

Պետական մեդիայի վերաբերյալ քննադատական կարծիքներ հնչում են նաև անկախ մեդիայի, մասնավորապես՝ CivilNet-ի հրապարակումներում: Վերջինիս գլխավոր խմբագիր Կարեն Հարությունյանը նշում է, որ. «Չնայած 2018 թ. հեղափոխությունից հետո դիտվող բազմակարծության աճին, պետական հեռուստատեսությունը երբեք չդարձավ հանրային օրակարգին ծառայող մեդիա: Փոխարենը՝ այն շարունակում է գործել գործող իշխանության օգտին»: Նա նաև ընդգծում է, որ պետական հեռուստատեսությունում հաճախ նկատվում է ինքնագրաքննության երևույթ: Իշխող քաղաքական ուժի շահերին ծառայելու օրինակներից մեկն, ըստ Հարությունյանի, այն է, որ 2024 թվականին պետական հեռուստատեսությունը առաջին անգամ չհեռարձակեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ամանորյա ուղերձը: Դա, ըստ հրապարակման, կապված է իշխող ուժի և Կաթողիկոսի միջև առկա հակասությունների հետ:

Բ) Ոչ պետական, այդ թվում՝ կուսակցական և կրոնական մեդիաների դիտումներն ու հանրային ընկալումը

Մասնավոր մեդիայի մի մասն ունի ռուսամետ ուղղվածություն, իսկ որոշները կախված են հովանավորներից: Միևնույն ժամանակ, որոշ մասնավոր մեդիա հարթակներ առանձնանում են եվրոպամետ և ժողովրդավարական դիրքորոշմամբ,

իսկ մի քանիսն էլ առանձնանում են բարձր պրոֆեսիոնալիզմով: Այնուամենայնիվ, մասնավոր մեդիայի վերաբերյալ ընդհանուր գնահատականները մատնանշում են մի շարք թերություններ, որոնք նպաստում են հասարակական վստահության ցածր մակարդակին: Ռուսաստանյան ռեժիմի վերահսկողության տակ գտնվող մեդիայի ազդեցությունը որոշ հայկական լրատվամիջոցների վրա հաճախ անուղղակի է և չի բխում դրանց գաղափարական կողմնորոշումից: Դա պայմանավորված է, մի կողմից, Հայաստանում տեղեկատվական սեփական աղբյուրների սահմանափակությամբ, իսկ մյուս կողմից՝ ռուսերեն լեզվի լայն տարածվածությամբ (շատ ավելի, քան անգլերենի): Այս հանգամանքների հետևանքով հայկական մի շարք լրատվամիջոցներ հաճախ օգտվում են ռուսաստանյան աղբյուրներից՝ նորություններ տրամադրելու համար:

Հայաստանում երկու ամենադիտված մասնավոր հեռուստաալիքներն են Armenia TV-ն և Shant TV-ն: Ըստ Internews կազմակերպության 2024 թվականի հարցման՝ հարցվածների 66%-ը դիտում է Armenia TV, իսկ 50%-ը՝ Shant TV: Սրանք շուկայում առաջատար են նաև սոցիալական մեդիայի հարթակներում: Բացի այդ, որոշակի ճանաչելիություն և լսարան ունեն նաև հետևյալ հեռուստաալիքները՝ Azatutyun, Kentron, Yerkir, 5TV, ATV, Free News, Nor Hayastan, H2 և Shoghakat: APRG կազմակերպության կողմից 2019 թ. անցկացված հետազոտության համաձայն՝ որպես նախընտրելի հեռուստաալիք հարցվածների շրջանում առաջատար էին. Armenia TV — 24.6%, Shant TV — 24.6%, Kentron TV — 4.3%, ATV — 3%, Yerkir TV — 2%, H2 — 1.7%: Առաջատարների թվում հիշատակվել են նաև հանրային հեռուստատեսությունը, ինչպես նաև երեք ռուսաստանյան հեռուստաալիք՝ RTR, ORT և NTV:



Սա ցույց է տալիս, որ Armenia TV-ի և Shant TV-ի ներկայությունը երեք ամենահայտնի հեռուստաընկերությունների շարքում և հանրային հեռուստատեսության գլխավոր մրցակից լինելու հանգամանքը շարունակական և կայուն երևույթ է, որը պահպանվում է՝ անկախ քաղաքական բևեռացման աճից: Այլ հեռուստաալիքները շուկայում ունեն անհամեմատ ավելի փոքր մասնաբաժին, սակայն դրանցից մի քանիսը՝ օրինակ Azatutyun, Kentron, ATV, Yerkir, 5TV, H2 և Nor Hayastan, նույնպես որոշակի դեր են խաղում:

Վստահության առումով ևս Armenia TV-ն և Shant TV-ն ունեն ամենաբարձր գնահատականները, սակայն զիջում են հանրային հեռուստաընկերությանը: IRI-ի հետազոտության համաձայն՝ Armenia TV-ն (որը հակակառավարական կողմնորոշում ունի և սեփականատերերի մակարդակով կապեր ունի Ռուսաստանի հետ, սակայն բացահայտ ռուսական քարոզչություն չի տարածում) վայելում է հարցվածների վստահությունը՝ համապատասխանաբար 10% և 8% (որպես առաջին և երկրորդ ընտրություն), մինչդեռ Shant TV-ն՝ 7% և 8%: Պատասխանողները նշել են

նաև. Azatutyun հեռուստաընկերությունը (օբյեկտիվ՝ թեթև արևմտամետ ուղղվածությամբ)՝ 6% և 1%, 5TV (ռուսամետ կողմնորոշմամբ)՝ 3% և 2%, Kentron TV (ռուսամետ կողմնորոշմամբ)՝ 3%, Free News TV՝ 2%, և News.am կայքը (օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և առանց ակնհայտ կապերի)՝ 2%:



Ընդհանուր առմամբ՝ 2022 թ. Caucasus Barometer-ի հետազոտության տվյալներով Armenia TV-ն հանրային հեռուստատեսությունից հետո համարվել է երկրորդ ամենավստահելի հեռուստաընկերությունը (20%), իսկ Shant TV-ն զբաղեցրել է երրորդ տեղը (16%): Հաջորդ հորիզոնականներում են գտնվել՝ արդեն չգործող Armnews-ը (3%), 5TV-ն (3%) և (ռուսամետ) Yerkir Media-ն (2%): Միևնույն ժամանակ հարցվածների 27%-ը նշել է, որ չի վստահում որևէ հեռուստաընկերության կամ ընդհանրապես չի դիտում հեռուստատեսություն: 2019 թ. APRG-ի ուսումնասիրության համաձայն՝ ամենամեծ վստահությունը վայելել է Shant TV-ն (26,6%, իսկ նվազագույն անվստահություն՝ 2,3%): Armenia TV-ն զբաղեցրել է

երկրորդ տեղը՝ համապատասխանաբար 21,5% վստահություն և 2,8% անվստահություն: Հաջորդ դիրքերում են եղել Kentron TV-ն (3,9% վստահություն և 8,6% անվստահություն) և Yerkir TV-ն (2,5% և 6,4%): Լիակատար անվստահության ամենաբարձր ցուցանիշը՝ 9,3%, արձանագրվել է Քոչարյանի հետ կապ ունեցող 5TV-ի նկատմամբ: Իսկ 2024 թ. Internews-ի հետազոտության (բազմակի ընտրության հարցում) տվյալներով՝ հարցվածների 53%-ը վստահություն է հայտնել Armenia TV-ին, իսկ 38%-ը՝ Shant TV-ին: Մյուս հեռուստաընկերությունները (հանրային հեռուստատեսությունից բացի) ստացել են զգալիորեն ցածր արդյունքներ՝ 5TV-ն՝ 8%, Kentron TV-ն՝ 6%:

Ինչ վերաբերում է լրատվական կայքերին, ապա սոցիալական մեդիայում հետևորդների և բաժանորդների ամենամեծ քանակն ունեն Azatutyun.am (ամենաանկախ, ժողովրդավարամետ և պրոֆեսիոնալ մեդիա հարթակներից մեկը, կապված է RFE/RL-ի հետ և միաժամանակ կախված է արտաքին ֆինանսավորումից)՝ ընդհանուր առմամբ 6.7 միլիոն հետևորդ սոցիալական մեդիայում (հիմնականում՝ Facebook, YouTube և Instagram), News.am՝ 1.3 մլն, 1in.am՝ 1.2 մլն, Civilnet.am՝ 837 հազար, Tert.am՝ 802 հազար, Factor.am՝ 766 հազար, Mamul.am՝ 600 հազար, Armlur.am՝ 555 հազար: News.am-ը նաև առաջատար է ինտերնետային այցելությունների քանակով. ըստ Semrush հարթակի 2024 թ. օգոստոսի հաշվետվության՝ կայքն ունեցել է շուրջ 2.84 միլիոն այցելություն:



2019 թ. APRG-ի հետազոտության համաձայն՝ Azatutyun.am-ը նշվել է որպես ամենանախընտրելի լրատվական կայք՝ 18% ցուցանիշով: Հաջորդ հորիզոնականներում են եղել՝ News.am (10,7%), 1in.am (6,1%) և 168.am (4,3%): Նշվել են նաև Tert.am, Aravot.am և Armlur.am կայքերը: Միաժամանակ, հարցվածների 30%-ը չի նշել որևէ նախընտրելի կայք: Նույն ուսումնասիրությունում Azatutyun.am-ն արժանացել է նաև ամենաբարձր վստահելիության գնահատականի՝ գերազանցելով News.am-ին, 1in.am-ին և 168.am-ին: 2024 թ. Internews-ի ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 17%-ը նշել է, որ առնվազն շաբաթական մեկ անգամ այցելում է Azatutyun.am: Հաջորդում են՝ 1in.am (13%), News.am (10%) և Lurer.com (7%): Նրանց հետևում են 168.am, Mamul.am, Shamshyan.com, Tert.am, Aravot.am և Civilnet.am: Նույն հարցման բազմակի ընտրության ձևաչափով՝ որպես ամենավստահելի կայք նշվել է Azatutyun.am-ը (23%), ապա՝ 1in.am-ը (16%) և News.am-ը (14%):



Ամփոփելով, կարելի է նշել, որ Azatutyun-ը պահպանում է կայուն և հստակ գերիշխող դիրք օնլայն լրատվամիջոցների շրջանում. այն ունի ակտիվ ներկայություն սոցիալական մեդիայում և վայելում է ամենաբարձր վստահությունը: Մնացած օնլայն հարթակներից առավել ամուր դիրքեր ունեն News.am-ը և 1in.am-ը

Ռադիոն, համեմատած այլ տեղեկատվական աղբյուրների հետ, ունի ավելի սահմանափակ տարածում: Zinc կազմակերպության զեկույցի համաձայն՝ հարցվածների 25%-ը նշել է, որ շաբաթական առնվազն մեկ ռադիոկայան է լսում: Հանրային ռադիոյից հետո ամենահայտնի ռադիոկայաններն են. Ռադիո Ջան – մոտ 5%, Ռադիո 105,5 FM – 4%, Ռադիո Ավրորա – 3%, Ռադիո Վան – 2%, Ռադիո 106,5 FM – 2%, Ռադիո Հայ – 2%, Ռադիո Երևան – 1%:



Իսկ 2019 թ. APRG-ի հետազոտության համաձայն՝ Հանրային ռադիոյից հետո (որը նախընտրելի է եղել հարցվածների 19.7%-ի կողմից) ամենահայտնի ռադիոկայաններն են եղել Ռադիո Ազատություն՝ 15.9%, Ռադիո Ավրորա՝ 10.3%, Ռադիո Վան՝ 7.9%, Ռադիո Հայ՝ 7.1% և Ռադիո Ջան՝ 6.7%: Վստահության ցուցանիշներով ևս Ռադիո Ազատություն-ը հանրային ռադիոյի հետ միասին զբաղեցրել է առաջատար դիրք՝ 16.5%, իսկ Ռադիո Ավրորա-ն և Ռադիո Վան-ը համապատասխանաբար վաստակել են 6.6% և 5.4%:



Նման պատկեր է արձանագրվել նաև 2024 թ. Infonews-ի կողմից իրականացված բազմակի պատասխաններով հարցման արդյունքներում: Հարցվածների 25%-ը որպես ամենավստահելի ռադիոկայան նշել է Հանրային ռադիոն, 14%-ը՝ Ռադիո Ավրորա, իսկ 13%-ը՝ Ռադիո Ազատություն: Ավելի ցածր վստահության մակարդակ են գրանցել Ռադիո Ջան, Ռադիո 105,5 FM, Ռադիո Վան, Ռադիո Երևան և Ռադիո Հայ:

Տպագիր մամուլի ընթերցման մակարդակը Հայաստանում շատ ցածր է և շարունակում է նվազել: Սակայն ZINC կազմակերպության տվյալներով՝ բնակչության մոտ 3%-ը դեռևս ընթերցում է տպագիր թերթեր: 2019 թ. APRG-ի հետազոտության համաձայն՝ «Հայկական ժամանակ»-ը նշվել է որպես ամենաընթերցվող և ամենավստահելի պարբերական, իսկ հաջորդ հորիզոնականներում եղել են «Առավոտ», «Հրապարակ» և «Իրավունք» թերթերը:

գ) Համացանցային աղբյուրների, այդ թվում՝ չհաստատված տեղեկությունների տարածվածությունը

Հայաստանում համացանցային աղբյուրների տարածումը վերջին տարիներին արագ աճում է, հատկապես՝ երիտասարդների և միջին տարիքի անձանց շրջանում, մինչդեռ տարեցները շարունակում են հիմնականում օգտվել հեռուստատեսությունից: 2018–2023 թթ. ընթացքում համացանցի հասանելիություն ունեցող անձանց տոկոսը աճել է 68%-ից մինչև 85%, ինչը, սակայն, դեռ դժվար է համարել տպավորիչ մակարդակ: ZINC կազմակերպության 2024 թ. հետազոտության համաձայն՝ համացանցային հարթակները (սոցիալական ցանցեր, բլոգեր, վլոգեր և փոդքաստներ) դարձել են տեղեկատվության ամենատարածված աղբյուրը՝ փոքր առավելությամբ առաջ անցնելով հեռուստատեսությունից: Caucasus Barometer-ի տվյալներով՝ հարցվածների 72%-ը նշել է, որ ամեն օր օգտվում է համացանցից, մինչդեռ 18%-ը հայտարարել է, որ ընդհանրապես չի օգտվում:



ZINC կազմակերպության 2024 թ. ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների 58%-ը սոցիալական մեդիան նշել է որպես տեղեկատվության երկու հիմնական աղբյուրներից մեկը, մինչդեռ համացանցային լրատվական կայքերը՝ 16%: 2022 թ. Caucasus Barometer-ի տվյալներով՝ հարցվածների 46%-ը նշել է, որ իր համար համացանցային աղբյուրներն են հիմնական տեղեկատվության աղբյուրը, որոնցից 32%-ը՝ սոցիալական ցանցերը, իսկ 14%-ը՝ այլ համացանցային հարթակները: Համացանցային հարթակներից ամենահայտնին Facebook-ն է, որին հաջորդում են YouTube-ը, Instagram-ը և ժողովրդականություն վայելող Telegram-ը, մինչդեռ X հարթակը զգալիորեն հետ է մնում: ZINC-ի զեկույցի համաձայն՝ հարցվածների 58%-ը օրական մի քանի անգամ օգտվում է Facebook-ից և YouTube-ից: Հարցվածների 91%-ը նշել է, որ տարածում է տեղեկատվություն Facebook-ում, 14%-ը՝ YouTube-ում և Instagram-ում, 9%-ը՝ Telegram-ում, 6%-ը՝ TikTok-ում, իսկ ընդամենը 1%-ը՝ X հարթակում:



Նման արդյունքներ է ցույց տալիս նաև Caucasus Barometer-ի հետազոտությունը. հարցվածների 37%-ը նշել է, որ օգտվում է Facebook-ից, 31%-ը՝ YouTube-ից, 17%-ը՝ Instagram-ից, իսկ TikTok-ից՝ 7%, Odnoklassniki-ից՝ 4%, VKontakte-ից՝ 2%, իսկ X-ից՝ ընդամենը 1%:



Այս համատեքստում նկատվում է Odnoklassniki և VKontakte հարթակների օգտագործման նվազման միտում: Այնուամենայնիվ, հասարակության բևեռացվածության պայմաններում կարելի է ենթադրել, որ այս հարթակներից հիմնականում հրաժարվում են նրանք, ովքեր բացասական վերաբերմունք ունեն Ռուսաստանի հանդեպ, մինչդեռ Ռուսաստանի կողմնակից հատվածը, ամենայն հավանականությամբ, չի լքում այդ հարթակները: Հարցվածների 84%-ը հայտարարել է, որ սոցիալական ցանցերը օգտագործում է տեղեկատվություն ստանալու նպատակով: Միևնույն ժամանակ Telegram-ը հետազոտության մեջ ընդգրկված է որպես հաղորդակցման հարթակ և այս կատեգորիայում զիջում է Viber, Messenger և WhatsApp հարթակներին. հարցվածների ընդամենը 9%-ն է հայտարարել, որ օգտվում է այդ հավելվածից: Այնուամենայնիվ, միայն 39%-ն է նշել,

որ հաղորդակցման հավելվածները օգտագործում է տեղեկատվություն ստանալու համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հայաստանցիների մեծամասնությունը բարձր գիտակցում ունի ապատեղեկատվության վտանգների հանդեպ, թեև շատերը բավարար գիտելիքներ չունեն այն արդյունավետորեն ճանաչելու և կանխելու համար: Caucasus Barometer-ի 2022 թ. տվյալներով՝ հարցվածների 56%-ը կարծում է, որ սոցիալական մեդիան բացասաբար է ազդում Հայաստանի հասարակական և քաղաքական իրականության վրա, իսկ 90%-ը հայտնել է, որ մտահոգված է ապատեղեկատվության տարածմամբ (որից 69%-ը՝ խորը մտահոգությամբ):

Միևնույն ժամանակ, հարցվածների 77%-ը սոցիալական մեդիան համարում է օգտակար տեղեկատվություն ստանալու համար, սակայն 63%-ը վստահ է, որ այն նաև գործիք է ապատեղեկատվություն տարածելու համար: Բացի այդ, 14%-ը կարծում է, որ սոցիալական մեդիան հանգեցնում է նրան, որ մարդիկ կամ հավատում են ամեն ինչին, կամ էլ չգիտեն՝ ինչին հավատալ՝ ինչին հավատալ, իսկ 6%-ը այն դիտարկում է որպես ատելություն և ծայրահեղականություն տարածելու միջոց:



Այնուամենայնիվ, Internews կազմակերպության կողմից 2024 թ. իրականացված հետազոտության համաձայն՝ հարցվածների 37%-ը նշել է, որ չի ստուգում համացանցից ստացած տեղեկատվության ճշգրտությունը, իսկ ևս 37%-ը փորձում է

այն հաստատել այլ համացանցային աղբյուրներով: Միայն 13%-ն է նշել, որ տեղեկության ճշգրտությունը ստուգում է՝ հարցնելով մեկին, ում վստահում է: APRG-ի կողմից 2019 թ. անցկացված հարցման արդյունքներով՝ հարցվածների 50,3%-ը համացանցը համարել է տեղեկատվության ամենահուսալի աղբյուրը, մինչդեռ 42,5%-ը հակառակ կարծիք է հայտնել: Ընդհանուր առմամբ, տարբեր ուսումնասիրություններ վկայում են որոշակի քննադատական մտածողության և ապատեղեկատվությանը դիմադրելու կարողության մասին, սակայն դրանք դեռևս բավարար չեն՝ կանխելու դրա հաճախակի և ոչ գիտակցված տարածումը: Internews-ի զեկույցի համաձայն՝ ապատեղեկատվությունը ճանաչելու և փաստերի ստուգում իրականացնելու ունակության մակարդակը կազմում է ընդամենը 18%: Միևնույն ժամանակ, նշվում է, որ նման տեղեկացվածությունը ավելի բարձր է երիտասարդների, կրթված անձանց և քաղաքաբնակների շրջանում:

դ) Օտարերկրյա լրատվամիջոցների սպառման միտումները

Օտարերկրյա մեդիայի շրջանակում առավել լայն տարածում և ազդեցություն ունեն ռուսական լրատվամիջոցները, ինչի հիմնական պատճառը լեզվական գործոնն է: Թեպետ CoLab-ի կողմից 2021 թ. իրականացված ուսումնասիրության տվյալներով՝ հարցվածների միայն 9%-ն է նշել, որ տեղեկատվություն ստանում է ռուսերեն աղբյուրներից (հարևան Վրաստանում այս ցուցանիշը կազմել է 22%): Internews կազմակերպության 2024 թվականի հետազոտության համաձայն՝ հարցված հայերի 18%-ը նշել է, որ շաբաթական առնվազն մեկ անգամ դիտում է ռուսական հեռուստաալիքներ, իսկ ընդհանուր առմամբ՝ ռուսական հեռուստատեսություն դիտելու փաստը հաստատել է 47%-ը: Հարցվածների 34%-ը օգտվում է ռուսական կայքերից, 29%-ը՝ ռուսալեզու բլոգերից, վլոգերից և փոդքաստներից, 15%-ը լսում է ռուսական ռադիո, իսկ 8%-ը ընթերցում է ռուսալեզու թերթեր:



է հայկական տեղեկատվական աղբյուրների համեմատ, սակայն տարբերությունը չի կարելի համարել էական, և այն, միևնույն ժամանակ, համեմատաբար բարձր է: Այս արդյունքը մասնակիորեն կարող է պայմանավորված լինել Ռուսաստանի՝ 2022 թ. Ուկրաինա ներխուժումից հետո ուժգնացած ռուսական ներգաղթի ալիքով: Բացի այդ, տեղեկատվության սահմանափակ մատչելիության պայմաններում՝ նույնիսկ ոչ ռուսամետ լրագրողները հաճախ են դիմում ռուսական աղբյուրներին՝ լրատվություն ստանալու նպատակով: Ռուսական լրատվամիջոցներից բացի այլ արտասահմանյան մեդիաների տարածվածությունը զգալիորեն ցածր է՝ հիմնականում լեզվական խոչընդոտների, ինչպես նաև ռուսական հեռուստատեսության անհամեմատ ավելի լայն հասանելիության պատճառով: 2024 թ. միջազգային լրատվական կայքեր այցելել է հարցվածների 30%-ը, իսկ բլոգերի, վլոգերի և փոդքաստների դեպքում այդ ցուցանիշը կազմել է 26%:

Ռուսական մեդիայի տարածվածությունը Հայաստանում ակնհայտ է նաև համացանցային ակտիվության վերաբերյալ զեկույցներում: Ahrefs և Semrush (առաջատար SEO գործիքների մատակարարներ) զեկույցները փաստում են, որ

Հայաստանի օգտատերերի շրջանում զգալի տեղ են զբաղեցնում .ru դոմենի ներքո գործող կայքերը: Տվյալների համաձայն՝ Հայաստանում ամենաշատ որոնվող կայքերի շարքում են՝ rambler.ru-ն (ռուսական լրատվական պորտալ, որը պատկանում է Sberbank-ին. ամսական շուրջ 128 հազար որոնումով այն զբաղեցնում է առաջին տեղը՝ առաջ անցնելով News.am-ից, որը հավաքում է մոտ 109 հազար որոնում) և ria.ru-ն (ռուսական պետական լրատվական գործակալություն RIA Novosti, մոտ 35 հազար ամսական որոնումով): Semrush-ի վերլուծության համաձայն՝ 2024 թ. օգոստոսին Հայաստանում ամենաշատ այցելվող կայքերի հնգյակում, YouTube, Wikipedia, Instagram և News.am-ից հետո, հինգերորդ տեղում է եղել lenta.ru-ն՝ 1,01 մլն այցելությամբ: Ցուցակում են եղել նաև՝ rambler.ru (159 հազար), sputniknews.ru (96 հազար) և news.ru (94 հազար):





Ոչ ռուսական արտասահմանյան մեդիա աղբյուրներից 2024 թ. օգոստոսին ամենաշատ այցելություններ ունեցել է bbc.com-ը, որը, թեև չունի հայերեն բաժին, սակայն ունի ռուսերեն տարբերակ. գրանցվել է 557 հազար այց:

Ըստ APRG-ի հաշվետվության՝ 2019 թ. ռուսական ամենառեյտինգային հեռուստաալիքները եղել են RTR-ը (նախընտրել է հարցվածների 6%-ը), ORT-ը (5%)

և NTV-ն (2,5%)։ Ընդհանուր առմամբ, ռուսական հեռուստաալիքները նախընտրել է հարցվածների 13,5%-ը, մինչդեռ Հանրային հեռուստատեսությունը՝ 12,4%-ը։ Այնուամենայնիվ, այս երեք հեռուստաալիքներից միայն 5,5%-ն է դրանք համարել ամենահուսալի, մինչդեռ հանրային հեռուստատեսությանը վստահություն է հայտնել 13,7%-ը։



Այս հետազոտությունը իրականացվել է նաև 2020 թ.՝ 44-օրյա պատերազմից առաջ, որի ավարտից հետո Ռուսաստանի նկատմամբ բացասական վերաբերմունքը կտրուկ աճել է։

ե) Բամբասանքային բնույթի տեղեկությունների հանդեպ խոցելիությունը, այդ թվում՝ դավադրության տեսությունների նկատմամբ

Օտարերկրյա մեդիայի շրջանակում առավել լայն տարածում և ազդեցություն ունեն ռուսական լրատվամիջոցները, որի հիմնական պատճառը լեզվական գործոնն է: Թեպետ CoLab-ի կողմից 2021 թ. իրականացված ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների միայն 9%-ն է նշել, որ տեղեկատվություն ստանում է ռուսերեն աղբյուրներից, մինչդեռ հարևան Վրաստանում այս ցուցանիշը կազմել է 22%: Internews-ի 2024 թ. հետազոտության տվյալներով՝ հարցված հայերի 18%-ը նշել է, որ շաբաթական առնվազն մեկ անգամ դիտում է ռուսական հեռուստաալիքներ, իսկ ընդհանուր առմամբ՝ ռուսական հեռուստատեսություն դիտելու փաստը հաստատել է 47%-ը: Ռուսական լրատվական այլ հարթակների դեպքում տվյալները հետևյալն են. ռուսական կայքեր – 34%, ռուսալեզու բլոգեր, վլոգեր և փոդքաստներ – 29%,ռուսական ռադիո – 15%, ռուսալեզու թերթեր – 8%:



Համեմատության համար նշենք, որ հեռուստատեսության նկատմամբ վստահության մակարդակը կազմել է 50%, ռադիոյի՝ 59%, իսկ տպագիր մեդիայի՝ 54%, մինչդեռ համացանցային աղբյուրների հանդեպ վստահությունը զգալիորեն ավելի ցածր է եղել: Սա ցույց է տալիս, որ միջանձնային շփումները տեղեկատվության շրջանառության կարևոր աղբյուր են, սակայն դրանց նկատմամբ վստահությունը ընտրովի է, ինչը որոշ չափով սահմանափակում է բամբասանքների և դավադրության տեսությունների տարածման հավանականությունը, թեև նման վտանգը լիովին չի բացառվում: Դավադրության տեսությունների հանդեպ ընկալունակությունը մեծացնում են նաև հիմնական քաղաքական ուժերի միջև տիրող փոխադարձ մեղադրանքները՝ դավաճանության, թշնամիների հետ համագործակցության և այլ նմանատիպ հարցերում: Հաշվի առնելով, որ Հայաստանը փաստացի գտնվում է բարդ անվտանգության և աշխարհաքաղաքական իրավիճակում, քաղաքացիների համար հաճախ դժվար է տարբերել դավադրության տեսությունները իրական դավադրություններից: Արցախյան պատերազմում կրած պարտության շուրջ նույնպես տարածվում են բազմաթիվ դավադրության տեսություններ, այդ թվում՝ ռուսական քարոզչության կողմից տարածվող կասկածներ, թե Փաշինյանը դավաճան է:

Դավադրության տեսությունների նկատմամբ խոցելիությունը աճել է 44-օրյա պատերազմում կրած պարտությունից և հետագա՝ Արցախի անկումից հետո հասարակության տրավմատիզացիայի հետևանքով: Դավադրական ենթադրություններ հնչում են նաև փորձագետների կողմից: Օրինակ՝ 2023 թ. Արմեն Այվազյանը NEWS.am-ի հետ զրույցում կարծիք էր հայտնել, թե Հայաստանը նպատակային կերպով դուրս է բերվում ռուսական ազդեցության ոլորտից և հանձնվում Արևմուտքի վերահսկողությանը, քանի որ այս գործընթացի հիմքում իբր գոյություն ունեն որոշ գաղտնի համաձայնություններ: Միևնույն ժամանակ, ռուսամետ շրջանակներն ու ռուսական մեդիան՝ մասնավորապես Sputnik-ը, ակտիվորեն տարածում են դավադրության տեսություններ՝ ակնարկելով, թե իբր

գոյություն ունեն գաղտնի պայմանավորվածություններ Փաշինյանի և Ալիևի միջև, այդ թվում՝ որոշ տարածքների Ադրբեջանին փոխանցելու վերաբերյալ:

զ) Կրոնական կառույցների դիտարկումը որպես տեղեկատվության աղբյուր

Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է վայելել բարձր վստահություն, թեև վերջին շրջանում այն որոշ չափով նվազել է՝ պայմանավորված հասարակության բևեռացվածությամբ: IRI-ի կողմից 2024 թ. սեպտեմբերին անցկացված հետազոտության արդյունքներով՝ հարցվածների 48%-ը հայտնել է եկեղեցու նկատմամբ վստահություն, մինչդեռ 46%-ը՝ անվստահություն: Համեմատության համար՝ 2019 թ. հոկտեմբերին այս ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 74% և 21%: Caucasus Barometer-ի տվյալները ցույց են տալիս նմանատիպ պատկեր՝ հարցվածների 35%-ը վստահություն է հայտնել, իսկ 44,5%-ը՝ անվստահություն: 2019 թ. այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 80% և 8%: 2022 թ. նոյեմբերին իրականացված այլ ուսումնասիրությունները վկայում են, որ հայ հասարակության մեջ նկատվում է Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ զգալի անվստահություն: Մասնավորապես՝ հարցվածների 30,5%-ը համարել է եկեղեցին բարձր մակարդակով կոռումպացված, իսկ 20,3%-ը՝ միջին աստիճանի կոռումպացված:





Այս ցուցանիշները վկայում են կրոնական հաստատության նկատմամբ վստահության ճգնաժամի մասին և ընդգծում նրա գործունեության մեջ բարեփոխումների, ինչպես նաև ավելի մեծ թափանցիկության անհրաժեշտությունը։

Վստահության անկման այս միտումը, մի կողմից, պայմանավորված է պետական և հանրային ինստիտուտների նկատմամբ ընդհանուր վստահության նվազումով, իսկ մյուս կողմից՝ հոգևորականության որոշ շրջանակների, մասնավորապես՝ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի, քաղաքական ակտիվ ներգրավվածությամբ։ Գալստանյանը հասարակության մեջ խորը բևեռացում առաջացնող գործիչ է և վարչապետ Փաշինյանի ամենահայտնի ընդդիմախոսներից մեկը։ Միևնույն ժամանակ, նա ավելի ու ավելի է նույնացվում Հայաստանի նախկին ռուսամետ նախագահների՝ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ, ինչը բացասաբար է ազդում Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ հանրային վստահության վրա այն շրջանակներում, որոնք բացասաբար են վերաբերվում նշված նախկին ղեկավարներին։ Մյուս կողմից՝ վարչապետ Փաշինյանի կողմնակիցները Եկեղեցուն մեղադրում են քաղաքականացվելու մեջ։

Քաղաքական ակտիվության մեկ այլ օրինակ են հոգևորականների մեղադրանքները վարչապետ Փաշինյանի կառավարությանը՝ Ադրբեջանի հետ հարաբերություններում «պարտության» կամ «զիջումների» քաղաքականություն վարելու համար, հատկապես 2024 թ. ապրիլին Տավուշի մարզի մի քանի գյուղերի հանձնելու համատեքստում։ Նրանք պնդում էին, որ այս քաղաքականությունը թուլացնում է Հայաստանի դիրքերը և օրինականացնում Ադրբեջանի տարածքային պահանջները։ Հոգևորականները նաև քննադատեցին Փաշինյանի՝ միակողմանի զիջումների վրա հիմնված «խաղաղության դարաշրջան» տեսլականը՝ այն որակելով որպես վտանգավոր մոլորություն։ Փաշինյանի կառավարության հասցեին հնչեցվող քննադատությունը ներառում է նաև ժողովրդի բարոյական և հոգևոր արժեքներին սպառնացող ենթադրյալ վտանգները։ Փաշինյանը, իր հերթին, մեղադրում է Հայ

Առաքելական Եկեղեցու բարձրագույն ղեկավարությանը ժողովրդի հոգևոր առաջնորդության գործում ձախողումների համար: Նրա խոսքով՝ Եկեղեցին չի կարողացել պատշաճ կերպով արձագանքել հասարակության առջև ծառացած մարտահրավերներին, հատկապես դժվարին ժամանակներում, և նրա ղեկավարությունը չի կարողացել միավորել ազգին ճգնաժամերի ընթացքում: Այս քննադատությունը տեղավորվում է ավելի լայն համատեքստում՝ կառավարության և հոգևորականության միջև առկա լարված հարաբերությունների ֆոնին:

3. FIMI-ի առանցքային ռեսուրսները

ա) Ընկերություններ

«Forbes» ամսագրի միլիարդատերերի ցուցակում ընդգրկվել է 9 հայազգի գործարար. բոլորն էլ բնակվում են սփյուռքում, իսկ նրանցից 6-ը Ռուսաստանի քաղաքացիներ են: Հատկապես մեծ դեր ունի ռուսաստանաբնակ օլիգարխ Ռուբեն Վարդանյանը, որը 2023 թ. սեպտեմբերից գտնվում է ադրբեջանական բանտում՝ ձերբակալված Արցախի Հանրապետության պետական նախարարի պաշտոնը (2022 թ. նոյեմբերից մինչև 2023 թ. փետրվար) զբաղեցնելուց հետո: Վարդանյանը դարձել է խորհրդանշական դեմք ռուսամետ շրջանակների համար, որոնք մեղադրում են Փաշինյանի կառավարությանը՝ Ադրբեջանի կողմից պահվող հայ գերիների ճակատագրի հանդեպ անտարբեր լինելու մեջ: Միևնույն ժամանակ նշվում է, որ Ռուսաստանի միջամտությունը կարող էր արագ ապահովել նրա ազատ արձակումը, սակայն Մոսկվան, կարծես, դիտավորյալ խուսափում է այդ քայլից, որպեսզի ռուսամետ ընդդիմությունը չկորցնի իր համար կարևոր քարոզչական լծակներից մեկը: Վարդանյանը հարստացել է Troika Dialog ներդրումային ընկերության միջոցով (ներկայում՝ Sberbank), որի բաժնեմասերը վաճառել է 2012 թ. : Դրանից հետո, Միխայիլ Բրոյթմանի հետ, հիմնել է ներդրումային ընկերություն,

որի 75%-ը մինչ օրս պատկանում է իրեն: Այս ընկերության միջոցով նա վերահսկում է մի շարք ձեռնարկություններ, այդ թվում՝ Հայաստանի խոշորագույն առևտրային բանկերից մեկը՝ Ameriabank-ը: Նա նաև հիմնադիրն է Global Blue Russia ընկերության: Բարեգործության ոլորտում Վարդանյանը ներգրավված է բազմաթիվ նախագծերում (թեև նրա շարժառիթները հաճախ հարցականի տակ են դրվում), հատկապես՝ Հայաստանի զարգացման նախաձեռնություններ (IDEA) ծրագրում: Այս ծրագրի շրջանակներում նա ֆինանսավորել է UWC Դիլիջան քոլեջի հիմնադրումը, Տաթևի վանքի վերականգնումը, ինչպես նաև համահիմնադիրն է Aurora Humanitarian Initiative նախագծի (որը, սակայն, գտնվում է իր վերահսկողությունից դուրս): Վարդանյանը եղել է նաև Մոսկվայի հայկական տաճարի կառուցման համահիմնադիրներից մեկը, ինչն ապահովել է նրա ազդեցությունը Հայ Առաքելական Եկեղեցու շրջանակներում: Վարդանյանը հայտնի է իր սերտ կապերով Վլադիմիր Պուտինի հետ և հաճախ մեղադրվում է Ռուսաստանի ազդեցության ընդլայնմանը նպաստելու մեջ՝ թե՛ Ուկրաինայում, թե՛ ողջ հետխորհրդային տարածքում: Նրան վերագրվում են նաև ձգտումներ՝ Հայաստանը պահելու Ռուսաստանի քաղաքական վերահսկողության ներքո:

Այլ ռուսաստանաբնակ հայազգի օլիգարխներն են՝ Սերգեյ Գալիցկին – Հարությունյան («Մագնիտ» սուպերմարկետների ցանցի և «Կրասնոդար» ֆուտբոլային ակումբի սեփականատեր), Սամվել Կարապետյանը, Ալբերտ Ավդոլյանը (Yota ընկերության հիմնադիր, որը դարձել է Ռուսաստանում առաջին LTE օպերատորը; Հեռավոր Արևելքի և Սիբիրի ածխի արդյունահանման ու գազի ընկերությունների սեփականատեր), Արտեմ Խաչատրյանը (Fix Price ռուսաստանյան մանրածախ խանութի համահիմնադիր՝ 2007 թվականից) և Անդրեյ Անդրեև–Օհանջանյանցը (2004 թվականից ստեղծել է հինգ առցանց ժամադրությունների կայք և հավելված՝ Mamba, Badoo, Bumble, Chappy և Lumen):

Սամվել Կարապետյանը 1999 թ. հիմնադրել է «Տաշիր» ընկերությունների խումբը, որի միջոցով ֆինանսավորվել են մի շարք նախաձեռնություններ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: Այս խմբի միջոցով նա վերահսկում է Երևանի երկու խոշոր առևտրի կենտրոններ: 2013 թ. Կարապետյանի ֆինանսավորմամբ Ստեփանակերտում կառուցվել է հիվանդանոց: 2021 թ. սեպտեմբերին Կարապետյանը հայտարարեց Հայաստանի էներգետիկ համակարգի արդիականացման նպատակով 600 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրման ծրագրի մասին, սակայն առայսօր չկա հստակ տեղեկություն կամ պաշտոնական հաստատում, որ այն իրականացվել է:

2017 թ. «Տաշիր» խումբը ձեռք բերեց Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության (ՀԷՑ) 70% բաժնեմասը, որը երկրի էլեկտրաէներգիայի հիմնական բաշխիչ օպերատորներից է: Սակայն, JAM News-ի 2024 թ. դեկտեմբերին հրապարակված տեղեկության համաձայն, ՀԷՑ-ը ներդրումներ չի իրականացնում էլեկտրաէներգիայի փոխանցման ենթակառուցվածքներում, ինչը համարվում է մատակարարման խափանումների հիմնական պատճառներից մեկը: Փոխարենը ընկերությունը ներդրել է հաշվիչների տեղադրման մեջ՝ հեշտացնելու համար հոսանքի անջատումը այն բաժանորդների համար, ովքեր ուշացնում են վճարումները: Կարապետյանը սերտ կապեր ունի ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ. 2020 թ. հունիսին նա վճարել է 5 միլիոն ԱՄՆ դոլար գրավ՝ Քոչարյանին կալանքից ազատելու համար: Նա պարգևատրվել է բազմաթիվ պետական շքանշաններով և մեդալներով՝ թե՛ Ռուսաստանի, թե՛ Հայաստանի կողմից, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու կողմից: 2020 թ. Կարապետյանը ֆինանսավորել է Բեյրութի հայկական թաղամասի վերականգնումը, որն ավերվել էր նավահանգստում տեղի ունեցած պայթյունի հետևանքով: Նա սերտ կապեր ունի Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Հայաստանում ամենահարուստ անձանց թվում են Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը և Գագիկ Ծառուկյանը: Վերջինս, մասնավորապես, հանդիսանում է

Multi Group ընկերության սեփականատերը, որի կազմում է նաև Երևանի «Արարատ» կոնյակի, գինու և օղու գործարանը (NOY ապրանքանիշ)։ Բացի նրանցից, խոշոր գործարարների թվում է նաև Սամվել Ալեքսանյանը, Սերժ Սարգսյանի ղեկավարած Հանրապետական կուսակցության պատգամավոր, որը վերահսկում է Yerevan City և Kaiser սուպերմարկետների ցանցերը, ցածրորակ օղու արտադրությունը, ինչպես նաև Alex Grig ընկերությունը, որն ունի առանցքային դիրք սննդամթերքի ներմուծման շուկայում։ Ռուբեն Հայրապետյանը հայտնի է որպես Սերժ Սարգսյանի հետ կապ ունեցող գործարար։

Հայաստանում գործող առավել ազդեցիկ ընկերություններից մեկն է «Գազպրոմ Արմենիա»-ն, որը երկրի ողջ գազամատակարարման ենթակառուցվածքի սեփականատերն է։ Ընկերության հետ կապ ունեն նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը, ինչպես նաև Աշոտ Հակոբյանը և Վարդան Հարությունյանը։ Բացի այդ, Viva Armenia բջջային կապի օպերատորը պատկանում է ռուսական MTS խմբին։ Ռուսական GeoProMining Gold ընկերությունը շահագործում է Սոթքի ոսկու հանքավայրը, որը գտնվում է հայ-ադրբեջանական սահմանին։ Ընկերությունը նաև վերահսկում է Zangezur Copper Molybdenum Combine-ը, որը Հայաստանի ամենախոշոր ձեռնարկությունն է և ունի մոտ 4,500 աշխատակից։

Ռուսաստանի և Ռուսաստանում գտնվող հայ համայնքի ազդեցությունը պայմանավորված է նաև այնտեղ աշխատող հայերի կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներով, որոնք 2022 թ. կազմել են մոտ 3,6 միլիարդ ԱՄՆ դոլար։ Բացի այդ, Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերն է։ Ուկրաինայում պատերազմի բռնկումից հետո Հայաստանից Ռուսաստան արտահանման ծավալները զգալիորեն աճել են, սակայն դա հիմնականում վերաբերում է պատժամիջոցների տակ հայտնված ապրանքների վերաարտահանմանը։ 2022 թ. Ռուսաստան արտահանումը կազմել է Հայաստանի

ընդհանուր արտահանման արժեքի 41%, ինչը Ռուսաստանին տալիս է Հայաստանի վրա ճնշում գործադրելու լուրջ լծակ՝ պատժամիջոցներով սպառնալիքի տեսքով։

բ) NGO (ՀԿ – հասարակական կազմակերպություններ)

Այն կազմակերպությունների շարքում, որոնք արդեն ենթարկվել են կամ կարող են ենթարկվել ռուսական ազդեցության գործողություններին, հատկապես պետք է նշել հետևյալները՝

- «Արցախի միություն» կազմակերպությունը ստեղծվել է Արցախի փախստականների շահերը ներկայացնելու նպատակով (հաշվի առնելով ռուսամետ նարատիվը, որը Պաշինյանին մեղադրում է Արցախի անկման համար)։
- «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» կազմակերպությունը, որի հիմնական նպատակը մարդու իրավունքների պաշտպանությունն է, սակայն նրա նախագահ Ավետիկ Իշխանյանը հանդես է գալիս ռուսամետ նարատիվով՝ մեղադրելով Նիկոլ Փաշինյանին «դավաճանության» մեջ և քննադատելով ներկայիս իշխանություններին «հակառուսական հռետորաբանություն» վարելու համար։
- «Արցախի ազատամարտիկների միություն» կազմակերպությունը՝ բացասական վերաբերմունքով Փաշինյանի իշխանության և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացի նկատմամբ։
- «Պահեստազորային սպաների միություն»՝ հիմնադրված 2021 թվականի ապրիլին, ընդդիմադիր է Փաշինյանի իշխանությանը և աջակցում է Բագրատ եպիսկոպոս Գալստանյանին։
- «Ռուսական տուն»՝ երկու մասնաճյուղով՝ Երևանում և Գյումրիում, գործում է միջկառավարական համաձայնագրի հիման վրա։
- «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» (ՌՀՄԱԿ)՝ ստեղծված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքված համաձայնագրի հիման վրա։

- «Լազարյան ակումբ»՝ Ռուսաստանի և Հայաստանի հասարակությունների հանդիպումների և կարծիքների փոխանակման հարթակ:
- «Պուտինի ակումբներ»՝ 2012 թվականին ստեղծված նախաձեռնություն, հիմնադրվել են երկու ակումբներ՝ Արանատ Ստեփանյանի կողմից:
- «Մոսկվայի տուն» Երևանում
- «Եվրասիայի Ազգերի Ժողով»՝ կազմակերպություն, որը հիմնված չէ Հայաստանում, սակայն իրականացնում է տարբեր ծրագրեր երկրի ներսում:

դ) Կրոնական առաջնորդներ

Հայաստանը կրոնական առումով հիմնականում միատարր պետություն է, որտեղ կրոնական փոքրամասնությունները, այդ թվում՝ Հայ Առաքելական Եկեղեցուց բացի քրիստոնեական այլ դավանանքները (օր.՝ կաթոլիկություն, ուղղափառություն), երկրորդական դեր ունեն: Եկեղեցին սերտորեն կապված է հայկական ինքնության հետ, քանի որ հանդիսանում է ազգային եկեղեցի, թեև դա միշտ չէ, որ համընկնում է հայերի իրական կրոնական կյանքին: Կրոնի դերը հայ ժողովրդի պատմության և ներկայի մեջ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանը տարբեր ժամանակներում նվաճվել է մուսուլմանական կայսրությունների՝ արաբների, սելջուկների, պարսիկների և Օսմանյան կայսրության կողմից: Հայ-մուսուլմանական հարաբերությունները, սակայն, միշտ չէ, որ ունեցել են հակամարտային բնույթ: Թուրքիայի և Ադրբեջանի հետ հակամարտությունը ազգայնական հիմք ունի, իսկ կրոնական տարբերությունները՝ կարևոր, բայց երկրորդական դեր, որոնք հաճախ ենթարկվել են շահարկման: Հոգևորականների մասնակցությունը մուսուլման հակառակորդի դեմ ազգային պայքարին նպաստել է այն տպավորության ձևավորմանը, թե սա կրոնական պատերազմ է: Թուրքիայի (20-րդ դարում) և Ադրբեջանի (20-րդ և 21-րդ դարերում) կողմից հայկական եկեղեցիների և խաչքարերի ոչնչացումը ևս խորացրել է նման տպավորությունը, թեև իրականում այդ գործողությունները պայմանավորված չեն եղել կրոնական

պատճառներով, այլ՝ դրանց կապով հայկական ազգային ինքնության հետ: Այնուամենայնիվ, նման մոտեցումը նպաստել է եկեղեցու դերի ամրապնդմանը հասարակության մեջ:

Հայկական եկեղեցին ունի ազգային բնույթ և, հակառակ հաճախ տարածվող կարծրատիպերին, կապ չունի ուղղափառության հետ՝ ոչ դոգմատիկ, ոչ էլ պատմական տեսանկյունից: Տեսականորեն սա պետք է ապահովեր եկեղեցու անկախությունը արտաքին ազդեցություններից, սակայն կան մի քանի գործոններ, որոնք կարող են այն ենթարկել նման ազդեցության: Դրանցից հատկապես կարևոր են սփյուռքի դերը, Ռուսաստանը որպես քրիստոնեության պաշտպան ներկայացնող քարոզչական հոսքը (մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում), ինչպես նաև Արևմուտքի ենթադրյալ «բարոյական անկման» վերաբերյալ տարածվող նարատիվները:

Պատմականորեն Հայ Առաքելական Եկեղեցու և Ռուսաստանի Ուղղափառ Եկեղեցու հարաբերությունները բարդ ու բազմաշերտ են: Ռուսաստանը 19-րդ դարում, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության դեմ պատերազմների ընթացքում, հանդես էր գալիս որպես քրիստոնյաների պաշտպան: Սակայն Հայաստանի տարածքի գրավումից հետո շատ արագ լարվածություններ սկսվեցին Հայ Առաքելական Եկեղեցու և ցարական իշխանությունների միջև, քանի որ վերջիններս չէին ցանկանում հայերին նույնիսկ ինքնավարություն տրամադրել, իսկ Առաքելական Եկեղեցին դիտում էին որպես սպառնալիք: Այդ պատճառով ցարական վարչակազմը հետևողականորեն սահմանափակում էր Եկեղեցու ինքնուրույնությունը և փորձեր էր անում այն միավորելու ռուսական ուղղափառությանը, թեև այդ փորձերը մնացին անարդյունք: Մյուս կողմից՝ Ռուսաստանը փորձում էր հանդես գալ որպես օսմանյան տիրապետության տակ գտնվող հայերի հովանավոր, ինչը որոշ չափով սահմանափակում էր հայկական հոգևորականության ազատ գործողությունները: Այսօր էլ Հայ Առաքելական

Եկեղեցու որոշ հոգևորականների մոտ Ռուսաստանի ընկալման վրա ազդեցություն են թողնում խորհրդային տարիների հալածանքները, որոնց զոհ են դարձել բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում՝ Խորեն Ա կաթողիկոսը, ով սպանվել է Ստալինի հրամանով: Նշենք նաև, որ ներկայումս Հայաստանում գործող մի շարք հոգևոր առաջնորդներ և բարձրագույն հոգևորականներ ծնունդով սփյուռքից են. օրինակ՝ կաթողիկոս Գարեգին Ա-ն ծնվել է Սիրիայում:

Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին՝ այսպես կոչված «ղարաբաղյան կլանի»՝ ռուսամետ ուղղվածությամբ իշխանության օրոք, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին վայելել է զգալի պետական աջակցություն և ունեցել է ազդեցիկ դիրք: Այս սերտ համագործակցության ազդեցությունը պահպանվում է նաև այսօր՝ արտահայտվելով Եկեղեցու և այդ քաղաքական ուղղության միջև շարունակվող դրական հարաբերություններով: Սա, իր հերթին, նպաստել է լարվածության խորացմանը կաթողիկոս Գարեգին Բ-ի և վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջև: Մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ սփյուռքի ամենամեծ կենտրոնը՝ գնահատմամբ 2-2,5 միլիոն հայերով, գտնվում է Ռուսաստանում: Սա նշանակում է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հարկադրված է պահպանել կառուցողական հարաբերություններ այդ երկրի իշխանությունների հետ: Ռուսաստանում գործում են Եկեղեցու երկու թեմեր. Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմը (որը ներառում է նաև Բելառուսը, Մոլդովան և հետխորհրդային Կենտրոնական Ասիայի հանրապետությունները) և Հարավային Ռուսաստանի թեմը՝ կենտրոնով Կրասնոդարում: Եկեղեցու դիրքորոշման վրա ազդել է նաև Մերձավոր Արևելքի, մասնավորապես Սիրիայի, հայկական սփյուռքի իրավիճակը: Արևմուտքի միանշանակ աջակցությունը Սիրիայի հակաասադյան ընդդիմությանը՝ անտեսելով այն վտանգը, որը նրա ջիհադական հատվածը ներկայացնում էր սիրիացի քրիստոնյաների համար, հանգեցրեց նրան, որ Ռուսաստանը կրկին սկսեց իրեն ներկայացնել որպես «քրիստոնյաների պաշտպան»: Բացի այդ, ռուսական ազդեցության ուժեղացմանը

նպաստում է նաև Փաշինյանի կողմնակից եվրոպամետ քաղաքական շրջանակների մի մասի լիբերալ մոտեցումը, որը, համադրվելով Արևմուտքից եկող ենթադրյալ սպառնալիքների (օր.՝ ԼԳԲՏ) վերաբերյալ տարածվող նարատիվի հետ, հանգեցնում է նրան, որ հոգևորականության որոշ շրջանակներ կրկնօրինակում են հակաարևմտյան կարծրատիպեր և Ռուսաստանը դիտում որպես դաշնակից։

Հոգևորականների շրջանում առանձնահատուկ քաղաքական դերակատարություն ունի Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը։ Նրա ընտանիքը 1971 թվականին Իրանից տեղափոխվել է Հայկական ԽՍՀ։ 1998-2000 թթ. նա բնակվել է Անգլիայում, իսկ 2003-2013 թթ. ղեկավարել է Կանադայի հայոց թեմը, որից հեռացել է խորը հակասությունների պայմաններում։ 2015 թվականից նա հանդիսանում է Տավուշի թեմի առաջնորդ, իսկ 2023 թ. փետրվարից՝ արքեպիսկոպոս։ 2024 թ. մայիսին Գալստանյանը հայտնվեց Տավուշի շրջանի չորս գյուղերի՝ Ադրբեջանին փոխանցման դեմ բողոքի ցույցերի առաջնագծում՝ հիմնելով «Տավուշը հանուն Հայրենիքի» շարժումը։ Նա լայն աջակցություն է ստանում ռուսամետ շրջանակներից, մասնավորապես Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի համախոհներից, ովքեր էլ հիմնականում ձևավորում են նրա քաղաքական հենարանը։ Գալստանյանի հետ առնչվում է նաև Դաղիվանքի խարիզմատիկ վանահայր Հովհաննես Հովհաննիսյանը՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը կտրականապես ընդդիմացող գործիչ, ինչը նրան դրել է վարչապետ Փաշինյանի քաղաքական հակառակորդների շարքում։

Հայաստանում գործում է նաև Ռուսաստանի Ուղղափառ Եկեղեցին։ Չնայած ուղղափառ հայերի թիվը նվազագույն է, 2021 թվականին հիմնադրվեց Երևանի և Հայաստանի թեմը։ Սա տեղի ունեցավ այն պայմաններում, երբ ուղղափառ եկեղեցիների կանոնական իրավասության շրջանակում Հայաստանը

փաստացիորեն գտնվում է Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու ենթակայության տակ: Այնուամենայնիվ, թեմի ստեղծմանն աջակցել է հենց կաթողիկոս Գարեգին Բ-ն:

Բացի այդ, Արցախում հայկական վանքերը անցել են այսպես կոչված ուդիական—ալբանական համայնքի վերահսկողության տակ, որի տեղը քրիստոնեական դենոմինացիաների քարտեզում դեռևս հստակ սահմանված չէ: Այնուամենայնիվ, ամենայն հավանականությամբ, այն կդիտվի որպես ուղղափառ համայնք: Միևնույն ժամանակ, Ադրբեջանում գործում է Ռուսաստանի Ուղղափառ Եկեղեցու Բաքվի թեմը, որի առաջնորդը՝ արքեպիսկոպոս Ալեքսանդրը (Իշչեյն), 2020 թվականին շնորհավորել է նախագահ Ալիևին՝ 44-օրյա պատերազմում տարած «հաղթանակի» կապակցությամբ:

Ե) Ռազմական ղեկավարներ, ռազմական համագործակցություն և ոչ պետական զինված կազմավորումներ

Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանի ռազմական անվտանգության ոլորտում պայմանավորված է հետևյալ գործոններով. Հայաստանի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), Հայաստանի տարածքում ռուսական զորքերի ներկայությունը, վետերանների շրջանում տարածված ռուսամետ տրամադրությունները, ինչպես նաև ռուսական ազդեցությունը հայկական բանակում և անվտանգության ոլորտի կառույցներում:

Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է դրա ստեղծման պահից՝ 1994 թվականից: Սակայն 2022 թվականի մայիսին Հայաստանը փաստացի սառեցրեց իր մասնակցությունը ՀԱՊԿ-ին՝ վերջինիս կողմից հավաքական պաշտպանության մեխանիզմով Հայաստանին օգնություն չցուցաբերելու պատճառով: 2023 թվականից Հայաստանը բոյկոտում է

ՀԱՊԿ-ի գագաթնաժողովներն ու համատեղ զորավարժությունները: Ավելի վաղ՝ 2018 թվականի նոյեմբերին, վարչապետ Նիկոլ Փաշինյանի նորաստեղծ կառավարությունը (իշխանության է եկել 2018 թ. մայիսին) հասավ նրան, որ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնից հեռացվեց գեներալ Յուրի Խաչատուրովը, որը ներկայացնում էր Հայաստանը: Վերջինս մեղադրվում էր 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ընդդիմադիր բողոքի ցույցերի ճնշման մեջ՝ սահմանադրական կարգը տապալելու հոդվածով: Այդ ժամանակ Խաչատուրովը զբաղեցնում էր Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնը: Խորհրդային անցյալը, ՆԱՏՕ-ին անդամակցող Թուրքիայի հետ հակամարտությունը և ՀԱՊԿ-ում անդամակցությունը հանգեցրել են նրան, որ Հայաստանի զինված ուժերը հիմնականում զինված են խորհրդային և ռուսական արտադրության տեխնիկայով: Սակայն դեռևս 2020 թվականից Հայաստանը սկսեց փորձել ձեռք բերել արևմտյան սպառազինություն, սակայն նման քայլերը բախվում էին դժվարությունների, քանի որ Հայաստանը ընկալվում էր որպես Ռուսաստանի դաշնակից: Նման փորձերը ներառում էին նաև Լեհաստանից սպառազինության գնումների փորձերը: Միայն 2023 թվականի հոկտեմբերին Հայաստանը Ֆրանսիայի հետ ստորագրեց հուշագիր Mistral-3 հակաօդային հրթիռային համակարգերի գնման վերաբերյալ: Բացի այդ, ձեռք բերվեցին ֆրանսիական ACMAT Bastion զրահամեքենաներ, CEASAR ինքնագնաց հաուբիցներ և GM-200 ռադիոտեղորոշիչ կայաններ: 2024 թվականի հուլիսին էլ Հայաստանը և ԱՄՆ-ն անցկացրին «Eagle Partner 2024» համատեղ զորավարժությունները: Այս բոլոր քայլերը մաս են կազմում վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության իրականացվող աշխարհաքաղաքական վերաուղղման ռազմավարությանը, որը տարածվում է նաև անվտանգության և ռազմական ոլորտների վրա: Այդուհանդերձ, կառավարությունը փորձում է չխզել բոլոր կապերը Ռուսաստանի հետ՝ մտավախությամբ, որ վերջինս կարող է կազմակերպել ներքաղաքական շրջադարձ՝ օգտագործելով Ռուսաստանում բնակվող հայկական սփյուռքը, ինչպես նաև բանակի ու անվտանգության համակարգում իր կողմնակիցներին: Բացի այդ, Ռուսաստանը

պարբերաբար Հայաստանին սպառնում է Ադրբեջանի կողմից հնարավոր հարձակման հեռանկարով՝ ակնարկելով, թե միայն ինքը կարող է զսպել Ալիևին և կանխել Սյունիքի վրա հարձակումը։

Հայաստանում դեռ տեղակայված են ռուսական զինված ուժեր՝ շուրջ 4,000 զինծառայող, որոնց մի մասը տեղակայված է Գյումրիի 102-րդ ռուսական ռազմաբազայում, իսկ մյուս մասը՝ Հայաստանի սահմաններին Իրանի և Թուրքիայի հետ։ Գյումրիի ռազմաբազան հիմնադրվել է 1992 թ. օգոստոսի 21-ին ստորագրված «Հայաստանի տարածքում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» պայմանագրի, ինչպես նաև 1995 թ. մարտի 16-ի «Հայաստանի տարածքում ռուսական ռազմաբազայի մասին» պայմանագրի հիման վրա։ Ըստ այդ փաստաթղթերի՝ ռուսական ուժերը կարող են մնալ Հայաստանում մինչև 2044 թվականը՝ Հայաստանի տարածքի պաշտպանություն իրականացնելու նպատակով։ Բազան զինված է S-300V հակաօդային հրթիռային համակարգերով, MiG-29 կործանիչներով, ինչպես նաև Mi-24P և Mi-8MT ուղղաթիռներով։ Բազայի մի մասը տեղակայված է Էրեբունի օդանավակայանում, իսկ Գյումրիում գտնվող բազայի մերձակայքում կառուցվել է բնակավայր ռուս զինծառայողների ընտանիքների համար, որտեղ բնակվում է շուրջ 4,000 մարդ։ 1992 թվականից ի վեր Հայաստանի, Իրանի և Թուրքիայի հետ սահմանները վերահսկվում են բացառապես ռուսական զորքերի կողմից։ Սակայն 2024 թ. հուլիսին ռուսական ուժերը դուրս եկան Զվարթնոց օդանավակայանից, իսկ նույն տարվա հոկտեմբերին ձեռք բերվեց պայմանավորվածություն, ըստ որի՝ 2025 թ. հունվարի 1-ից ռուսները կդադարեցնեն վերահսկել Իրանի հետ սահմանը։

Ռուսամետ տրամադրություններ վետերանների շրջանում.

- Արցախյան պատերազմի վետերանների միություն՝ կազմակերպություն, որը հիմնադրվել է 2000 թվականին գեներալ Վիտալի Բալասանյանի կողմից։ Միությունն պահպանում է այն նարատիվը, ըստ որի Նիկոլ Փաշինյանն է

պատասխանատու Արցախի կորստի համար՝ մեղադրելով նրան դավաճանության մեջ: Միաժամանակ կազմակերպությունը շեշտադրում է հայերի ծառայության ավանդույթը խորհրդային բանակում:

- Պահեստազորի սպաների միություն՝ հիմնադրվել է 2021 թվականի ապրիլին: Կազմակերպությունն ընդդիմադիր դիրքորոշում ունի Նիկոլ Փաշինյանի կառավարության նկատմամբ:
- «Ազգային անվտանգության ծառայության պահեստազորի սպաների միություն»
- «Հայրենիքի վահան» միություն
- Այլ՝ ավելի փոքր վետերանական կազմակերպություններ և կիսառազմական միավորումներ

Այս կազմակերպությունների հետ առնչություն ունեցող անձանց թվում են Պաշտպանության բանակի թոշակառու գեներալ-մայոր Հայկ Նահապետյանը, Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Թաթուլ Պետրոսյանը, պահեստազորի գնդապետ Միքայել Համբարձումյանը:

Չնայած 2018-ից հետո հրամանատարական կազմում իրականացված կադրային փոփոխություններին, բանակում և անվտանգության ոլորտում դեռ առկա էին բարձրաստիճան հրամանատարներ, որոնք կապված էին Ռուսաստանի, ինչպես նաև նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ: Այս համատեքստում կարելի է հիշատակել, մասնավորապես՝ գեներալ Յուրի Խաչատուրովին (Գլխավոր շտաբի նախկին պետ՝ 2008–2016 թթ., հետապնդվում է 2008 թ. բողոքի ցույցերի ճնշման համար), նրա որդի՝ գեներալ Գրիգորի Խաչատուրովին, գեներալ Օնիկ Գասպարյանին (ԳՇ նախկին պետ՝ 2020–2021 թթ., 2021 թ. մարտին մի խումբ սպաների կողմից ստորագրված հրաժարականի պահանջի նախաձեռնողներից), գեներալ Մովսես Հակոբյանին (ԳՇ նախկին պետ՝ 2016–2018 թթ.), գեներալ Տիրան Խաչատրյանին (2021 թ. սպաների

հայտարարության համահեղինակներից), գեներալ Միքայել Հարությունյանին (ԳՇ նախկին պետ՝ 1995–2007 թթ., պաշտպանության նախարար՝ 2007–2008 թթ., հետապնդվում է 2008 թ. ցույցերի ճնշման համար, ունի նաև Ռուսաստանի քաղաքացիություն), ինչպես նաև գեներալ Սեյրան Օհանյանին (ԳՇ պետ՝ 2007–2008 թթ., պաշտպանության նախարար՝ 2008–2016 թթ., հետապնդվում է 2008 թ. բողոքի ցույցերի ճնշման համար)։

Չնայած Իրանը Հայաստանում ընկալվում է որպես բարեկամ պետություն, անվտանգության ոլորտում խորացված համագործակցություն առայժմ գոյություն չունի։ Իրանի համար Հայաստանի հետ սահման ունենալը ունի ռազմավարական աշխարհաքաղաքական կարևորություն, և նա բացահայտ սպառնացել է միջամտությամբ՝ Ադրբեջանի կողմից Սյունիքի վրա հարձակման դեպքում։ Այնուամենայնիվ, Հայաստանը վճռականորեն դեմ է իրանական զորքերի ներկայությանը իր տարածքում։ Միևնույն ժամանակ, Հայաստանը կատարել է զգալի սպառազինության գնումներ Հնդկաստանից, որոնց տեղափոխումը կարող է իրականացվել միայն Իրանի տարածքով կամ օդային տարածությամբ։ Իրանը բացել է հյուպատոսարան Կապան քաղաքում՝ Սյունիքի մարզում՝ այդ կերպ ընդգծելով Հայաստանի տարածքային ամբողջականությանը իր աջակցությունը։

զ) Ավանդական մեդիա

Հայաստանում ռուսերեն լեզվի լայն տարածվածության, ինչպես նաև Ռուսաստանում հայկական սփյուռքի նշանակալի դերի շնորհիվ՝ մասնավորապես այն ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ, որոնք ներգրավված են Ռուսաստանին աջակցող ազդեցության գործողություններում (հատկապես Մարգարիտա Սիմոնյանը), ռուսական մեդիան կարևոր դեր է խաղում Հայաստանում ռուսական FIMI գործողությունների իրականացման մեջ։

Միաժամանակ, երկրի մեդիա դաշտում առկա է խոր բևեռացում: Որոշ լրատվամիջոցներ ֆինանսավորվում են Ռուսաստանից կամ կապ ունեն ռուսաստաբնակ հայազգի օլիգարխների հետ: Բացի այդ, ռուսամետ դիրքորոշում ունեն այն մեդիա հարթակները, որոնք կապված են Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի կամ Գագիկ Ծառուկյանի հետ:

Հեռուստաալիքներ և ռադիոկայաններ

- Kentron TV – հեռուստաալիք, որը կապված է Գագիկ Ծառուկյանի հետ:
- 5TV – առնչվում է Ռոբերտ Քոչարյանի հետ:
- Armenia TV – չունի հստակ քաղաքական ուղղվածություն, սակայն ունի կապեր «Գազպրոմ»-ի հետ:
- Yerkir Media
- A-TV – կապեր ունի Ռուսաստանի հետ (հիմնականում կապիտալային):
- Radio 106.5 FM Լրատվական ռադիո
- Լրատվական կայքեր և թերթեր
- Tert.am
- Armlur.am
- Lurer.com – ռուսամետ կապեր և ռուսամետ ուղղվածության բովանդակություն:
- Arminfo – ռուսամետ կապեր և ռուսամետ ուղղվածության բովանդակություն:
- AntiFake – կեղծ փաստերի ստուգում և կասկածելի կապեր
- Novosti Armenia – կապեր ունի Sputnik-ի հետ, ներկայացնում է ռուսամետ բովանդակություն:
- 24news – ռուսամետ և հակաարևմտյան բովանդակություն
- Panorama.am – կապեր ունի Ռոբերտ Քոչարյանի հետ
- Past.am – ռուսամետ և հակաարևմտյան քարոզչական նարատիվ
- Հրապարակ՝ լրատվական կայք և օրաթերթ:

- «Ազգ» շաբաթաթերթ – դրական վերաբերմունք ունի Ռոբերտ Քոչարյանի, իսկ բացասական՝ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ
- «Իրավունք» շաբաթաթերթ – ռուսամետ բովանդակություն: Հիմնադրվել է Սահմանադրական Իրավունքների Միության կողմից, որը ռուսամետ, եվրոսկեպտիկ և պահպանողական կուսակցություն է
- «168 ժամ» շաբաթաթերթ – քաղաքական առումով մոտ է Սերժ Սարգսյանին, հակադիր՝ Նիկոլ Փաշինյանին:
- «Առավոտ» օրաթերթ – կապեր ունի Սերժ Սարգսյանի շրջապատի հետ:
- «Հայաստանի ձայն» օրաթերթ – ռուսալեզու, համագործակցում է «Sputnik»-ի հետ:
- «Դրօշակ» ամսագիր:
- **Ռուսաստանյան մեդիա՝** *Russia Today (RT), Sputnik Armenia, RTR Planeta, Pervyi Kanal, Lenta.ru, Radio Ekho Moskvy*

Է) Այլընտրանքային մեդիա

Սոցիալական ցանցերում ակտիվ են բազմաթիվ ռուսամետ քաղաքական գործիչներ, այդ թվում՝ Գագիկ Ծառուկյանը և Վարդան Ղուկասյանը: Շատ ակտիվ է նաև Տավուշի թեմի առաջնորդ՝ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: Ռուսաստանը, ինչպես նաև ռուսամետ օլիգարխներն ու հայկական քաղաքական գործիչները, սոցիալական ցանցերում՝ հատկապես Telegram-ում, գործում են տրոլ-ֆերմաներ: Ռուսամետ ապատեղեկատվություն են տարածում նաև մի շարք ռուս լրագրողներ, որոնք ակտիվ էին Հայաստանում 44-օրյա պատերազմի ժամանակ՝ հանդես գալով որպես ռազմական թղթակիցներ և այդ ընթացքում ձեռք բերելով մեծ լսարան: Նրանցից ամենահայտնին Սեմյոն Պեգովն է՝ հայտնի «War Gonzo» կեղծանունով:

ը) Գիտական և ակադեմիական համագործակցություն

Ռուսաստան–Հայաստան ակադեմիական և գիտական համագործակցության տեսանկյունից կարևորագույն հաստատությունը Հայ-ռուսական համալսարանն է (ՀՌՀ)։ Համալսարանը առաջարկում է կրթական ծրագրեր ռուսերեն և հայերեն լեզուներով, խթանում է ակադեմիական շարժունությունը և համագործակցում է այլ ռուսաստանյան բուհերի հետ, այդ թվում՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի (ՄՊՀ)։ ՀՌՀ-ում պարբերաբար կազմակերպվում են հայ-ռուսական գիտաժողովներ, օրինակ՝ այս տարվա հոկտեմբերին անցկացվել է «Հայ–ռուսական մեդիաֆորում. երիտասարդների տեսանկյունից» միջոցառումը։ Իսկ հունիսին Մոսկվայում անցկացվել է 10-րդ Հայ-ռուսական երիտասարդական ֆորումը, որը կազմակերպվել էր Ռուսաստանի գիտության և բարձրագույն կրթության նախարարության կողմից։

2018 թվականին ստորագրվեց գիտական համագործակցության համաձայնագիր Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության Ազգային Գիտությունների Ակադեմիայի միջև։ 2021 թվականին ընդունվեց այդ համաձայնագրի իրականացման գործողությունների ծրագիրը, համաձայն որի՝ կողմերը կհամագործակցեն մի շարք գիտական ուղղություններով՝ գլոբալ խնդիրներ և միջազգային հարաբերություններ, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և նյութագիտություն, կենսաբանություն և կենսատեխնոլոգիա, պատմա-բանասիրական գիտություններ, բժշկագիտություն, գյուղատնտեսական գիտություններ, նանոտեխնոլոգիա, էներգետիկա, մեքենաշինություն և մեխանիկա։ Գործողությունների ծրագրով նախատեսված է մոտ 60 համատեղ նախագիծ և հետազոտություն։ Դրանց մի մասը նախատեսվում է իրականացնել Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի մասնակցությամբ։ 2023 թ. հունիսին Երևանում անցկացվեց առաջին հայ–ռուսական գիտակրթական ֆորումը՝ «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝

տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» խորագրով: Հայկական կողմից մասնակցում էին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Երևանի պետական համալսարանը և Հայ-ռուսական համալսարանը: 2024 թ. ապրիլին Հայաստանի Ազգային գիտությունների ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը և Ռուսաստանի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Գրիգորի Տրուբնիկովը ստորագրեցին համագործակցության համաձայնագիր՝ հիմնարար գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և կրթության ոլորտներում: Համաձայնագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել համատեղ հետազոտական միավոր՝ գիտնականների և մասնագետների համագործակցությունը խթանելու, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով՝ Հայաստանի և ՄՀՄԻ-ի (Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ) գիտահետազոտական ինստիտուտների միջև

Նմանատիպ նախաձեռնությունները բազմաթիվ են, ինչը պայմանավորված է, հատկապես այն հանգամանքով, որ Հայաստանի գիտական և ակադեմիական կադրերի զգալի մասը կրթություն է ստացել ռուսաստանյան համալսարաններում: Այս կապերի խորացմանը նպաստում են նաև Ռուսաստանում ապրող բազմահազարանոց հայկական սփյուռքը, ինչպես նաև Հայաստանում ռուսերենի լայն տարածվածությունը:

4. Ընտրված մանիպուլյացիոն տեխնիկաներ և տակտիկաներ, լեզվային ազդեցության մեխանիզմներ, գործողություններ և հոգեբանական հետևանքներ – նույնացում և վերլուծություն

Ազդեցության գործողությունները ռազմավարական միջոցառումներ են, որոնք միտված են փոխելու թիրախային երկրների ընկալումները, հանրային կարծիքը, քաղաքականությունը և հասարակական վարքագիծը: Հայաստանի պարագայում այդ գործողությունները հիմնականում իրականացվում են Ռուսաստանի կողմից, որն օգտագործում է ապատեղեկատվության և հոգեբանական ազդեցության բազմաբնույթ տեխնիկաներ՝ Հայաստանի և Արևմուտքի հարաբերությունները թուլացնելու, ինչպես նաև Հայաստանը սեփական ազդեցության գոտում պահելու նպատակով: Նման գործողությունների հանդեպ Հայաստանի խոցելիությունը պայմանավորված է Ռուսաստանի հետ պատմական, կրոնական և տնտեսական կապերով, ինչպես նաև տարածաշրջանում տիրող անկայուն ու անորոշ աշխարհաքաղաքական միջավայրով

Ապատեղեկատվություն և մանիպուլյացիա

Ալտերնատիվ իրականության ձևավորում. Նարատիվ՝ ըստ որի «Արևմուտքը փորձում է հրահրել Երրորդ համաշխարհային պատերազմ», կառուցվում է արևմտյան քաղաքական գործիչների հայտարարություններից դուրս բերված և համատեքստից կտրված հատվածների վրա: Օրինակ՝ Sputnik Armenia կայքում հրապարակվել է «վերլուծություն», որում Ֆրանսիայի նախագահ Էմանուել

Մակրոնի խոսքերը մանիպուլացվել են՝ տպավորություն ստեղծելու համար, թե ՆԱՏՕ-ն ագրեսիվ նպատակներ ունի Ռուսաստանի նկատմամբ։

Արևմտյան պետությունների՝ իբր ագրեսիվ վարքագծի մասին քարոզչական հռետորաբանությունը կենտրոնանում է վախի սերմանման և միջազգային հաստատությունների նկատմամբ վստահության խաթարման վրա։ Այդպիսի մանիպուլյատիվ պատմություններում օրինակ են հանդիսանում պնդումները, թե «Արևմուտքը փորձում է հրահրել երրորդ համաշխարհային պատերազմը» կամ «Լեհաստանը ծրագրում է Արևմտյան Ուկրաինայի անեքսիան»։ Դրանք տեղեկատվական ռազմավարական մանիպուլյացիայի օրինակներ են, որոնց նպատակը հասարակական ու քաղաքական համակարգերի ապակայունացումն է՝ թիրախ երկրներում։ Նման նարատիվներն ամրապնդվում են պատմամշակութային իրողությունների շահարկման միջոցով, որոնք տվյալ հասարակություններին դարձնում են խոցելի համապատասխան քարոզչական մեխանիզմների նկատմամբ։ Դավադրապաշտական պատմությունները՝ արևմտյան, այդ թվում՝ լեհական, իբր «նեոիմպերիալիստական» նկրտումների մասին («Լեհաստանը հրահրում է 3-րդ համաշխարհային պատերազմը» — Sputnik Armenia-ն թարգմանում և ներկայացնում է լեհ առաջնորդների խեղաթյուրված հայտարարությունները՝ տարածաշրջանային բախման վախ առաջացնելու նպատակով), տարածվում են՝ նպատակ ունենալով ստեղծել տպավորություն ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կողմից տարածաշրջանի (ոչ միայն Կենտրոնական Եվրոպայի, այլև նախկին ԽՍՀՄ տարածքի, ներառյալ Հայաստանի) ապակայունացման ուղղությամբ իրականացվող համակարգված համագործակցության մասին։ Հատուկ ուշադրության են արժանի պարբերաբար կրկնվող մեղադրանքները Արևմուտքի՝ այսպես կոչված «գունավոր հեղափոխություններին» աջակցելու և ծայրահեղական խմբավորումների (ներառյալ ջիհադիստների) գործիքային օգտագործման վերաբերյալ՝ իբրև արևմտյան շահերի սպասարկման միջոց։ Այս հաղորդագրությունները պատահական չեն. դրանց կառուցվածքը հիմնված է

ժամանակակից սոցիալական ինժեներիայի առաջատար տեխնիկաների վրա։ Համաշխարհային բախումների մասին վախերը, ինչպես նաև տարածքային ամբողջականության խախտման մտավախությունները հմտորեն շահարկվում են՝ այդպիսով առավելագույնի հասցնելով քարոզչական նյութերի ազդեցությունն ու տարածման շրջանակը։

Քննարկվող համոզման ռազմավարությունները հիմնված են ճանաչողական մի շարք մեխանիզմների վրա, մասնավորապես՝ հաստատման կողմնակալության (confirmation bias) և մատչելիության էվրիստիկայի (availability heuristic) վրա։ Այդ գործիքակազմի կիրառմամբ հաղորդագրությունները ուղղվում են այն լսարաններին, որոնք ունեն որոշակի աշխարհայացք և հակվածություն՝ ընդունելու այն տեղեկատվությունը, որն արդեն համընկնում է իրենց գոյություն ունեցող համոզմունքների հետ։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ նման բովանդակությունը զգալի տարածում է ստանում հատկապես միջազգային ճգնաժամերի ժամանակաշրջաններում, երբ հասարակությունները առավել խոցելի են դառնում հույզերի վրա հիմնված մանիպուլյացիաների հանդեպ։

Արևմուտքի հասցեին հնչեցվող կեղծ մեղադրանքներ. Ռուսամետ լրատվամիջոցները Հայաստանում, մասնավորապես «Իրավունք»-ը, տարածում են նարատիվներ, ըստ որոնց իբր Լեհաստանը նախատեսում է Արևմտյան Ուկրաինայի անեքսիա՝ Ուկրաինային ֆինանսական աջակցություն ցուցաբերելու դիմաց։ Հրապարակվում են մանիպուլյատիվ քարտեզներ և կեղծ հաղորդագրություններ, որոնց նպատակն է վախ սերմանել և վարկաբեկել Արևմուտքը։

Հաղորդագրություններում կիրառվում են հույզերի վրա հիմնված համոզման տեխնիկաներ։ Այս համատեքստում օրինակ է «Արևմուտքի դավաճանությունը» քարոզարշավը, որը ներկայացնում է Մերձավոր Արևելքի քրիստոնյա հայ բնակչությանը որպես Արևմուտքի կողմից իբր աջակցություն ստացող ջիհադական

խմբավորումների թիրախ: Նմանատիպ մանիպուլյատիվ մեխանիզմ է կիրառվում նաև «Արևմուտքը զոհաբերեց Հայաստանին հանուն սեփական շահերի» քարոզչական նարատիվում (Իրավունք), որտեղ Արևմուտքը քննադատվում է Արցախի հակամարտության ընթացքում Հայաստանի նկատմամբ իբր անտարբերություն ցուցաբերելու համար:

Տեղեկատվական գործողությունները, որոնք ուղղված են Հայաստանում Արևմուտքի ընկալման վրա ազդեցություն գործելուն, կարելի է դիտարկել մի քանի հիմնական տակտիկական մոտեցումների շրջանակում՝

Արևմուտքի մասին կեղծ նարատիվների տարածում՝ իբրև ագրեսիվ կողմի: Տարածվում են պնդումներ, ըստ որոնց՝ «Արևմուտքը ցանկանում է հրահրել երրորդ համաշխարհային պատերազմը» կամ «Լեհաստանը պլանավորում է Արևմտյան Ուկրաինայի անեքսիան»: Հաճախ շրջանառվում է այն գաղափարը, թե ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն օգտագործում են ջիհադիստներին և այսպես կոչված «գունավոր հեղափոխությունները»՝ տարածաշրջանն ապակայունացնելու նպատակով:

Պատասխանատվության վերահասցեավորում: Հայաստանը ներկայացվում է որպես «Արևմուտքի զոհ», որը, իբր, փորձում է այն կտրել Ռուսաստանից՝ հանգեցնելով երկրի ենթադրյալ ապակայունացման: Այս համատեքստում Արևմուտքին վերագրվում է նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրումը, ինչպես նաև Հայաստանի՝ «զոհաբերվելը» աշխարհաքաղաքական խաղում:

Վարկաբեկման հարձակումներ: Արևմուտքի կերպարի, նպատակների, ինչպես նաև արևմտամետ ձգտումների վարկաբեկումը իրականացվում է երկու հիմնական ուղղությամբ:

Առաջինը՝ հաղորդագրությունների անհատականացումը, որը ներառում է հարձակումներ Հայաստանի քաղաքական ղեկավարության, հատկապես վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ: Վերջինս հաճախ ներկայացվում է որպես

«Սորոսի մարիոնետ» կամ Արևմուտքի գործիք, որը գործում է Ադրբեջանի և Թուրքիայի շահերին համապատասխան: Երկրորդը՝ հաստատությունների նկատմամբ վստահության խաթարումը: Տարածվում են այն պնդումները, թե Եվրոպական միությունն ու ՆԱՏՕ-ն անարդյունավետ կառույցներ են, որոնք սպասարկում են բացառապես իրենց ամենահզոր անդամների շահերը՝ անտեսելով Հայաստանի կարիքներն ու շահերը:

«Լավ դաշնակցի» և «վատ դաշնակցի» հակադրության ձևավորում: FIMI քարոզչական շարքի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանը ներկայացվում է որպես Հայաստանի միակ իսկական պաշտպան, մինչդեռ Արևմուտքը՝ որպես անվստահելի ուժ, որը շարժվում է բացառապես սեփական շահերից ելնելով: Միաժամանակ նարատիվները խիստ չափազանցում են Ռուսաստանի «դավաճանության» հետևանքով Հայաստանի կրած ենթադրյալ կորուստները, մասնավորապես՝ ռազմական և տնտեսական անվտանգության առումով: Այս համոզիչ հաղորդագրությունները կառուցվում են վտանգի մթնոլորտի վրա՝ պատերազմի, դավաճանության և մոտալուտ աղետի շուրջ ձևավորված վախերի միջոցով: Հաճախ օգտագործվում են զգացմունքային պնդումներ՝ Հայաստանի իրավիճակը զուգահեռելով այլ հակամարտությունների հետ (օրինակ՝ Սիրիայի կամ Ուկրաինայի), նպատակ ունենալով ընդգծել Արևմուտքի ու նրա դաշնակիցների ենթադրյալ դավաճանությունը և հակադրվել նրան՝ իբր ռուսամետ կողմնորոշումն ապահովում է հայ ժողովրդի անվտանգությունը:

Պատմական համատեքստերի շահարկում: Ռուսաստանի և Արևմուտքի հետ Հայաստանի պատմական հարաբերություններին անդրադառնալով՝ ապատեղեկատվական նարատիվները ծառայում են որպես կարևոր աշխարհաքաղաքական գործիք, որը ձևավորում է Կովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքականության վերաբերյալ ընկալումները: Այսպիսի նարատիվներին հակազդելու համար անհրաժեշտ է իրականացնել կրթական և

տեղեկատվական միջոցառումներ, որոնք ոչ միայն հերքում են կեղծ պնդումները, այլև խթանում են քննադատական մոտեցումը պատմական բովանդակության նկատմամբ՝ հիմնվելով խորապես արմատավորված համատեքստերի վրա, որոնք անդրադառնում են հասարակական կոլեկտիվ հիշողությանը: Հայաստանի պարագայում Ռուսաստանը բազմիցս շեշտել է իր պատմական դերը՝ իբրև քրիստոնեության և ավանդական հայկական մշակույթի ենթադրյալ պաշտպան: Միաժամանակ Արևմուտքին վերագրվում են իբր «դավաճանություններ»՝ մասնավորապես 20-րդ դարի սկզբին Հայոց ցեղասպանության ժամանակ նրա անգործության օրինակով: Նմանատիպ նարատիվների նպատակն է խորացնել անվստահությունը ժամանակակից արևմտյան պետությունների գործողությունների նկատմամբ և ամրապնդել Ռուսաստանի կերպարը՝ իբրև Հայաստանի վստահելի և հուսալի դաշնակից:

Ռուսաստանի՝ Կովկասում քրիստոնեության պաշտպանության վերաբերյալ նարատիվը կառուցված է Ռուսաստանի և Հայաստանի միջև «դարավոր» համագործակցության թեզի վրա: Նարատիվում հատուկ ընդգծվում է Ռուսական կայսրության դերը 19-րդ դարում՝ հայ ժողովրդին Օսմանյան կայսրության կողմից հալածանքներից պաշտպանելու հարցում, ինչպես նաև Ռուսաստանի մասնակցությունը տարածաշրջանի քրիստոնեական մշակութային ժառանգության պահպանման ու անվտանգության ապահովման գործում:

Օրինակ կարող է ծառայել Ռուսաստանի քարոզչության մեջ Հայաստանի ներկայացումը որպես «քրիստոնեական ֆորպոստ» Կովկասում: Այս նարատիվները նաև ընդգծում են Ռուսաստանի և Հայաստանի միջև մշակութային ու կրոնական ընդհանրությունները՝ միտումնավոր անտեսելով Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ եկեղեցիների միջև գոյություն ունեցող էական տարբերությունները: Ռուսաստանը պատկերվում է որպես միակ գերտերությունը, որը ի զորու է պաշտպանել Հայաստանը արտաքին սպառնալիքներից, այդ թվում՝ իսլամական

երկրներից, ինչպիսիք են Թուրքիան և Ադրբեջանը: Նարատիվների երկրորդ առանցքը Արևմուտքի ներկայացումն է որպես անվստահելի գործընկեր, որի պատմական գործողությունները, իբր, վնասել են Հայաստանին: Այս համատեքստում որպես առանցքային հղում հաճախ օգտագործվում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը՝ պնդելով, թե արևմտյան երկրները, այդ թվում՝ եվրոպական գերտերությունները և ԱՄՆ-ը, լռել են այդ ողբերգության հանդեպ՝ թողնելով Հայաստանին առանց որևէ աջակցության: Այս քարոզչական պատումների բաղկացուցիչ մասն է նաև ռուսական նարատիվին անհարմար պատմական փաստերի միտումնավոր շրջանցումը: Դրանց թվում են՝ բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանավորվածությունները, որոնց արդյունքում Հայաստանի էթնիկ տարածքների մի մասը փոխանցվել է Թուրքիային և Ադրբեջանին, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի առաջարկած «Մեծ Հայաստանի» նախագիծը, ինչպես նաև Ֆրանսիայի դերակատարությունը հայ փախստականների տարհանման գործընթացում

Այս տիպի նարատիվները հաճախ կապվում են նաև ընթացիկ իրադարձությունների հետ՝ հատկապես Արևմուտքի վճռական արձագանքի բացակայությանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում: Ընդգծվում է, որ թեև արևմտյան երկրները հայտարարում են իրենց նվիրվածությունը ժողովրդավարությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը, սակայն գործնականում չեն ձեռնարկում որևէ էական քայլ՝ Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի և Թուրքիայի իրականացվող աշխարհաքաղաքական ճնշումները կանխելու կամ մեղմելու ուղղությամբ:

Այս տեսակի պատմական նարատիվները կիրառվում են հոգեբանական մեխանիզմների միջոցով, օրինակ՝ հաստատման կողմնակալություն և մատչելիության էվրիստիկա՝ նպատակ ունենալով ամրապնդել առկա նախապաշարմունքներն ու հասարակական վախերը: Դիմելով հայ ժողովրդի

համար ողբերգական պատմական իրադարձություններին՝ դրանք ձևավորում են մշտական սպառնալիքի զգացողություն, որը կարող է արդյունավետորեն շահարկվել միջազգային քաղաքականությունում՝ որպես ազդեցության գործիք։

Ավելին, պատմական կերպարների՝ որպես «պաշտպան» (Ռուսաստան) և «դավաճան» (Արևմուտք) ներկայացումը նպաստում է միջազգային քաղաքականության ընկալման բևեռացմանը։ Հայ հասարակության համար, որն իրականում բախվում է լուրջ աշխարհաքաղաքական մարտահրավերների, այս նարատիվները հաճախ ընկալվում են որպես հավաստի և տրամաբանական, հատկապես այն համատեքստում, երբ Ռուսաստանը դիտարկվում է որպես Հայաստանի անվտանգության հիմնական երաշխավոր՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակում։

Պատմական համատեքստերի կիրառումը ապատեղեկատվական նարատիվներում նպաստում է Արևմտյան պետությունների նկատմամբ անվստահության խորացմանը և խոչընդոտում է Հայաստանի ու Արևմուտքի միջև հարաբերությունների զարգացմանը։ Հույզերին ուղղված և պատմականորեն զգայուն այս նարատիվների ռազմավարական շահարկումը կարող է ոչ միայն ապակայունացնել Հայաստանի ներկա քաղաքական գործընթացները, այլև ազդել երկրի երկարաժամկետ հասարակական զարգացումների և աշխարհաքաղաքական կողմնորոշման վրա։

Նմանատիպ նարատիվների երկարաժամկետ հետևանքներից մեկն այն է, որ դրանք սահմանափակում են Հայաստանի՝ միջազգային հարաբերություններում անկախ ինքնություն ձևավորելու հնարավորությունները։ Այդ նարատիվների պրիզմայով դիտարկվող Հայաստանը մնում է կախված ռուսական անվտանգության կառույցներից և քաղաքականությունից, ինչը նվազեցնում է իր հնարավորությունը՝ կայացնելու ինքնուրույն և ինքնավար ռազմավարական որոշումներ։

Լրատվամիջոցների նպատակային օգտագործումը՝ որպես ազդեցության գործիք, ազդեցության գործողությունների առանցքային բաղադրիչներից մեկն է, հատկապես՝ հասարակական ընկալումների մանիպուլյացիայի և որոշակի քաղաքական նարատիվների ամրապնդման համատեքստում: Հայաստանում այս գործընթացն առավելապես իրականացվում է արտաքին պետությունների կողմից, որոնց շարքում կենտրոնական դեր ունի Ռուսաստանի Դաշնությունը: Վերջինս լայնածավալ մեդիա ռեսուրսների միջոցով ձգտում է առաջ մղել իր աշխարհաքաղաքական շահերը և միաժամանակ թուլացնել Հայաստանի դաշնակիցների, մասնավորապես՝ Արևմուտքի նկատմամբ հանրային վստահությունը:

Կիրառվող մեխանիզմները՝

- Ռուսամետ մեդիա հարթակների (Sputnik, «Իրավունք», Panorama.am) նպատակային օգտագործում՝ հակաարևմտյան և ռուսամետ նարատիվների տարածման նպատակով:
- Սոցիալական ցանցերում թրոլ-ֆերմաների և քարոզչական էջերի աջակցություն՝ կեղծ տեղեկությունների և ապատեղեկատվության տարածման միջոցով:

Ռուսաստանը արդյունավետ կերպով կիրառում է ինչպես ավանդական, այնպես էլ թվային մեդիա միջոցներ՝ Հայաստանում ռուսամետ նարատիվների տարածման նպատակով: Առանցքային դեր ունեն տեղական մակարդակում գործող ռուսական մեդիա հարթակները, մասնավորապես՝ Sputnik Արմենիա, ինչպես նաև ռուսական հեռուստաալիքների վերահեռարձակվող հաղորդումները (օրինակ՝ RTR Planeta, Perviy Kanal): Նրանց հաղորդագրությունները հաճախ լրացվում և ուժեղացվում են հայկական որոշ լրատվամիջոցների կողմից, որոնք կապված են ռուսամետ քաղաքական կամ ֆինանսական շահերի հետ: Sputnik Արմենիան պարբերաբար

հրապարակում է նյութեր և վերլուծություններ, որոնք ներկայացնում են Արևմուտքը բացասական լույսի ներքո՝ միաժամանակ Ռուսաստանը դիրքավորելով որպես Հայաստանի անվտանգության միակ հուսալի երաշխավոր։ «Իրավունք» և Panorama.am լրատվամիջոցները հաճախ կրկնօրինակում են այս հաղորդագրությունները՝ տարածելով հակաարևմտյան դիրքորոշումներ ռուսամետ փորձագետների և քաղաքական գործիչների հարցազրույցների միջոցով։

Մեդիայի և հասարակության բևեռացում

Հայաստանի մեդիա դաշտը, հատկապես հստակ ռուսամետ կողմնորոշմամբ հանդես եկող լրատվամիջոցները, առանցքային դեր են խաղում հասարակության բևեռացման գործընթացում։ Դրանք հաճախ օգտագործում են հույզերով հագեցած լեզու՝ ընդգծելու արևմտամետների և ռուսամետ ավանդապաշտների միջև աշխարհայացքային տարբերությունները։ Արևմուտքը պարբերաբար ներկայացվում է որպես այնպիսի արժեքների տարածող, որոնք «հակասում են» հայկական ավանդույթներին, օրինակ՝ ԼԳԲՏ համայնքի իրավունքների խթանումը, ինչը նպատակ ունի հասարակական մերժման զգացումներ ձևավորել։ «Հրապարակ» և «Novosti Armenia» լրատվամիջոցները հաճախ հրապարակում են նյութեր, որոնք արևմտամետ կազմակերպություններին մեղադրում են Հայաստանի ազգային շահերին հակասող գործունեության մեջ։ Միևնույն ժամանակ, սոցիալական ցանցերն ակտիվորեն կիրառվում են ռուսամետ բովանդակության և ապատեղեկատվության տարածման նպատակով։ Այս գործընթացներում էական դեր ունեն թրոլ-ֆերմաները և կազմակերպված խմբերը, որոնք գործում են Telegram-ում, Facebook-ում և այլ հարթակներում։ Առանձնահատուկ նշանակություն ունեն համակարգված հարձակումները արևմտամետ քաղաքական և քաղաքացիական գործիչների, մասնավորապես վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ։ Telegram-յան ռուսամետ ալիքները պարբերաբար տարածում են վիրավորական մեմեր և մանիպուլացվող տեղեկատվություն՝ նրան մեղադրելով դավաճանության մեջ։

Քարոզչության մեխանիզմներն ավելի վստահելի դարձնելու նպատակով գործի են դրվում նաև կեղծ «փաստերի ստուգման» հարթակներ։ Օրինակ՝ Antifake-ը նման կայքերից է, որը ռուսամետ նարատիվները տարածում է՝ դրանք ներկայացնելով որպես «փաստերի ստուգման» արդյունք։

Սոցիալական մեդիայի հարթակների մոնիթորինգը ցույց է տվել բազմաթիվ մեկնաբանությունների և հրապարակումների առկայություն, որոնք աջակցում են ռուսամետ նարատիվին՝ նպատակ ունենալով լռեցնել քննադատությունները և շեղել ուշադրությունը Ռուսաստանի կառավարության գործողություններից։ Սոցիալական ցանցերը նաև հնարավորություն են տալիս կիրառել բովանդակության դիֆերենցված ալգորիթմներ՝ «մեդիա հեղինակությունների» և հայտնի անձանց ճանաչելիությունն ու ազդեցությունը մեծացնելու համար՝ կրոնական և մշակութային համատեքստում ռուսամետ ուղերձներն ուժեղացնելու նպատակով։

Լեզվական համոզման մեխանիզմները Հայաստանի ազդեցության և ապատեղեկատվության միջոցառումներում (FIMI)

Ազդեցության գործողություններում լեզուն օգտագործվում է որպես մանիպուլյացիայի առանցքային գործիք՝ հանրային կարծիքի ձևավորման, լսարանների վրա հուզական ազդեցություն գործադրելու և նրան ապակողմնորոշելու նպատակով։ Լեզվական համոզման մեխանիզմները, որոնք կիրառվում են նման գործողությունների շրջանակում, դիտավորյալ մշակված են՝ ամրապնդելու որոշակի նարատիվներ, խարխլելու հակառակորդների հեղինակությունը և հրահրելու հստակ հուզական արձագանքներ։ Հույզերի մանիպուլյացիան ազդեցության գործողությունների առավել արդյունավետ մեթոդներից է։ Այն հիմնված է հոգեբանական մեխանիզմների վրա, որոնք նպատակ ունեն օգտագործել մարդու հուզական արձագանքները՝ ձևավորելու լսարանի վերաբերմունքը, տեսակետներն ու վարքագիծը։ Ի տարբերություն ռացիոնալ

համոզման, հուզական մանիպուլյացիան ապավինում է ենթագիտակցական ճանաչողական գործընթացներին՝ դարձնելով այն հատկապես արդյունավետ ճգնաժամային, քաղաքական և սոցիալական իրավիճակներում: Այս մեխանիզմների շրջանակում լայնորեն կիրառվում են տարբեր լեզվական և նարատիվային ռազմավարություններ, որոնք ուղղված են ուժեղ հույզերի առաջացմանը՝ վախի, զայրույթի, ատելության, կարեկցանքի կամ հպարտության:

Հույզերի մանիպուլյացիան հիմնված է այնպիսի ճանաչողական գործընթացների ակտիվացման վրա, որոնք պայմանավորված են զգացմունքային արձագանքներով և ազդում են տեղեկատվության ընկալման ու որոշումների կայացման վրա: Ռիչարդ Լազարուսի (1991) հույզերի տեսության համաձայն՝ հույզերը կարգավորիչ գործառույթ ունեն՝ ուղղորդելով անհատի ուշադրությունը դեպի անձնական կարևորություն ունեցող խթաններ: Ազդեցության գործողություններում նպատակային օգտագործվում են այն հույզերը, որոնք տվյալ սոցիալական և մշակութային համատեքստում ունեն առավելագույն մոբիլիզացնող ներուժ և ամենահեշտն են հարուցվում:

MUGA-ի վերլուծական մոնիթորինգի արդյունքում բացահայտված մանիպուլյացիոն մեխանիզմներում կիրառվող հիմնական հույզերը.

- Վախ – կապված է անհատի, սոցիալական խմբի կամ արժեքների նկատմամբ սպառնալիքի հետ:
- Զայրույթ – առաջանում է անարդարության զգացումից կամ թշնամական սպառնալիքից:
- Ատելություն – ուղղված է որոշակի խմբի, կառույցի կամ գաղափարախոսության դեմ:

- Կարեկցանք – օգտագործվում է՝ զոհերի նկատմամբ սփոփանք ու զգացմունքային ներգրավվածություն առաջացնելու նպատակով:
- Կարեկցանք – օգտագործվում է՝ զոհերի նկատմամբ սփոփանք ու զգացմունքային ներգրավվածություն առաջացնելու նպատակով:

Հույզերով հագեցած խոսքի կիրառումը որպես տեղեկատվական ազդեցության գործիք.

Հույզային լիցքավորված բառերն ու արտահայտությունները ազդում են թե՛ ճանաչողական, թե՛ զգայական մակարդակներում՝ ներգործելով լսարանի հույզերի վրա դեռևս մինչև տեղեկատվության տրամաբանական վերամշակումը: Այս պատճառով նման նարատիվները դառնում են առանձնապես արդյունավետ հանրային կարծիքի ձևավորման գործընթացում:

Վախը որպես մոբիլիզացման գործիք

Վախին հղումը լեզվական ամենաազդեցիկ միջոցներից մեկն է, որը կիրառվում է՝ վտանգի զգացում առաջացնելու և գործողության անհապաղ անհրաժեշտություն ներկայացնելու նպատակով: Նման ուղերձի օրինակ կարող է լինել՝

- *Առանց Ռուսաստանի աջակցության Հայաստանը կարող է դառնալ Ադրբեջանի ագրեսիայի զոհ:*

Նմանատիպ ուղերձները շահարկում են Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքից բխող իրական սպառնալիքները՝ ընդգծելով երկրի մեկուսացվածությունը և այն հնարավոր վտանգները, որոնք կարող են առաջանալ հուսալի դաշնակցի բացակայության դեպքում: Արդյունքում լսարանի մոտ ձևավորվում է Հայաստանի՝ ռուսական աջակցությունից կախված լինելու զգացողություն, ինչը խոչընդոտում է այլընտրանքային աշխարհաքաղաքական ուղիների վերաբերյալ բաց և առողջ քննարկումների ձևավորմանը:

Զայրույթը որպես բևեռացման գործիք

Զայրույթի վրա հիմնված արտահայտությունները լսարանի ուշադրությունը կենտրոնացնում են իրական կամ ենթադրյալ անարդարությունների և դավաճանությունների վրա՝ առաջացնելով հուզական արձագանքներ, որոնք նպաստում են հասարակության բևեռացմանը: Հայաստանի պարագայում հաճախ կիրառվում են այնպիսի նարատիվներ, որոնք ընդգծում են Արևմուտքի ենթադրյալ անվստահելիությունը, օրինակ՝

- *Արևմուտքը դավաճանել է Հայաստանին՝ օգտագործելով այն միայն սեփական շահերը սպասարկելու նպատակով:*

Նման հայտարարությունները ընդգծում են Արևմուտքի աջակցության բացակայությունը պատմական վճռորոշ պահերին, օրինակ՝ Հայոց ցեղասպանության ժամանակ, և ձևավորում են Արևմուտքի կերպարը՝ որպես հաշվենկատ խաղացողի, որը առաջնորդվում է միայն սեփական շահերով: Նման ուղերձներից առաջացած զայրույթը նպաստում է Արևմտյան միջազգային կառույցների նկատմամբ անվստահության խորացմանը:

Ազգային հպարտությունը՝ որպես հասարակական համախմբման գործիք

Ազգային հպարտությունը զգացմունք է, որը խթանում է համայնքային ինքնության և համախմբման ձևավորումը, հատկապես՝ արտաքին սպառնալիքներին դիմակայելու համատեքստում: Հայաստանի դեպքում նման նարատիվները շեշտում են ազգային ինքնության հերոսական բնույթն ու տոկունությունը:

- *Հայաստանը դարեր շարունակ պաշտպանել է իր քրիստոնեական ինքնությունը՝ հաղթահարելով արտաքին ճնշումներն ու ազդեցությունները:*

Նման ուղերձները հղում են անում Հայաստանի պատմական ժառանգությանը՝ որպես առաջին քրիստոնեական պետություն, ինչպես նաև նրա մղած պայքարին

բազմաթիվ թշնամիների դեմ, ինչը խորացնում է ազգային բացառիկության հանդեպ հպարտության զգացումը: Միջազգային հարաբերությունների համատեքստում նման լեզվամիջոցները խթանում են ներքին համախմբումը՝ միաժամանակ ձևավորելով բացասական վերաբերմունք այն ազդեցությունների նկատմամբ, որոնք ընկալվում են որպես «օտար»:

Չնայած հույզերով գունավորված լեզուն կարող է արդյունավետ լինել կարճաժամկետ հեռանկարում, դրա երկարաժամկետ հետևանքները հաճախ խնդիրներ են առաջացնում: Նման նարատիվների հարուցած ուժեղ հույզերը նպաստում են հակամարտությունների սրմանը և կարծրատիպերի խորացմանը: Բացի այդ, այդպիսի հաղորդագրություններին ենթարկված լսարանը դառնում է ավելի անհաղորդ օբյեկտիվ տվյալներին և ռացիոնալ փաստարկներին:

Աղետային նարատիվների ձևավորում՝ որպես ապատեղեկատվության գործիք

Աղետների մասին նարատիվները, որոնք հղում են անում սպառնալիքների, կործանման կամ անխուսափելի աղետների պատկերներին, կազմում են Հայաստանում իրականացվող FIMI ռազմավարության առանցքային բաղադրիչ: Նման ուղերձները վախը կիրառում են որպես հասարակության մոբիլիզացման և մանիպուլյացիայի գործիք՝ հատկապես սոցիալական, քաղաքական կամ տնտեսական ճգնաժամերի ընթացքում: Աղետային նարատիվների հիմնական նպատակը սպառնալիքի զգացողություն ձևավորելն է և լսարանին մղել պաշտպանություն փնտրելու այն սուբյեկտի մոտ, որը տարածում է տվյալ նարատիվը: Այսպիսի պատումները հիմնված են երեք առանցքային մեխանիզմների վրա՝

- **Առկա վախերի շահագործում:** Նարատիվները հղում են անում հասարակական գիտակցության մեջ արդեն գոյություն ունեցող իրական կամ չափազանցված սպառնալիքներին: Օրինակ՝

Հայաստանի պարագայում ձևակերպումը «Առանց ռուսական աջակցության Հայաստանը կդառնա Արևմտյան իմպերիալիզմի հերթական զոհը» կապվում է պատմական տրավմաների և մտավախությունների հետ, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և Կովկասյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցությանը։

- **Իրականության պարզեցում:** Աղետային բնույթի հաղորդագրությունները պարզեցնում են իրականության բարդությունը՝ վերածելով այն պարզ հակադրությունների, ինչպիսիք են «մենք» ընդդեմ «նրանց» կամ «պաշտպանը» ընդդեմ «սպառնալիքի»։ Այդ կերպ լսարանը դրդվում է ընտրելու միակ, իբր ապահով լուծումը։

- **Զգացմունքների սրում:** Հույզերով լիցքավորված լեզվի կիրառումը, օրինակ՝ «բարոյական անկում», «քաոս» կամ «ազգային կործանում», ուժեղացնում է վախի և իրավիճակի անհետաձգելիության զգացումը՝ միաժամանակ սահմանափակելով լսարանի կարողությունը տեղեկությունը ռացիոնալ կերպով վերլուծելու։ Նման ուղերձի օրինակ է. «Արևմուտքը դիտավորյալ քանդում է մեր ազգային արժեքները՝ տարածելով բարոյական անկում և քաոս»։

Աղետային նարատիվները միաժամանակ իրականացնում են մի շարք գործառույթներ ապատեղեկատվության և մանիպուլյացիայի համատեքստում.

- **Լսարանի մոբիլիզացում:** Անխուսափելի աղետի վախի սերմանումը լսարանին դրդում է պաշտպանություն փնտրել այն սուբյեկտից, որը ներկայացվում է որպես լուծում՝ հաճախ հանդես գալով քարոզիչի կամ քաղաքական դերակատարի դերում։ Հայաստանի դեպքում Ռուսաստանը ներկայացվում է որպես անվտանգության և կայունության միակ երաշխավոր։

- **Վերահսկողության ամրապնդում:** Աղետային նարատիվներ կիրառող սուբյեկտները ձևավորում են լսարանի կախվածության զգացում իրենց գործողություններից, ինչը դժվարեցնում է նրանց հեղինակության կասկածի տակ առնելը: Օրինակ՝ Ռուսաստանի՝ որպես «քրիստոնեական Հայաստանի պաշտպան» ներկայացումը՝ ի հակադրություն ենթադրյալ թշնամական Արևմուտքի:

- **Հասարակության բևեռացում:** Այս նարատիվները բաժանում են հասարակությանը՝ խորացնելով ներքին և արտաքին խմբերի միջև գոյություն ունեցող հակասությունները: Հայաստանի դեպքում այս բևեռացումը կարող է արտահայտվել արևմտամետ և ռուսամետ կողմնակիցների միջև առկա բաժանմամբ:

Աղետային նարատիվները նպաստում են վախի և անորոշության աճին հասարակության մեջ, ինչը կարող է հանգեցնել վերաբերմունքի արմատականացման և ներքին հակամարտությունների սրմանը: Երկարաժամկետ հեռանկարում դրանք սահմանափակում են քաղաքացիների կարողությունը՝ քննադատաբար մտածելու և իրավիճակները ռացիոնալ կերպով գնահատելու: Նման նարատիվները ամրապնդում են ավտորիտար միտումները և արդարացնում քաղաքացիական ազատությունների սահմանափակումը՝ իբր որպես պաշտպանություն ենթադրյալ սպառնալիքներից: Օրինակ՝ դրանք կարող են օրինականացնել Ռուսաստանի աճող ազդեցությունը Հայաստանում՝ որպես ազգային պաշտպանության անհրաժեշտ միջոց: Այս նարատիվները հաճախ հիմնվում են ազգի գոյությանը կամ արժեքներին սպառնացող թեմաների վրա:

Օրինակներ՝

- *«Արևմուտքը դիտավորյալ քանդում է մեր ազգային արժեքները՝ տարածելով բարոյական անկում և քաոս»*
- *«Հայաստանը կհայտնվի մեկուսացված և զրկված աջակցության հնարավորությունից, ինչը կարող է հանգեցնել նրա կործանմանը»:*
- *«Առանց ռուսական աջակցության Հայաստանը կդառնա Արևմտյան իմպերիալիզմի հերթական զոհը»:*

Նման ուղերձները ձևավորում են անվստահության մթնոլորտ արտաքին դերակատարների նկատմամբ՝ միաժամանակ ամրապնդելով կախվածությունը տվյալ նարատիվի տարածողից: Դրանք կառուցված են այն ենթադրության վրա, որ որոշակի դաշինքի կամ գործողության բացակայությունը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների: Այսպիսի նարատիվները նաև ուժեղացնում են մեկուսացման և աշխարհաքաղաքական այլընտրանքների բացակայության զգացումը, հատկապես տարածքային հակամարտությունների համատեքստում:

Աղետային նարատիվները ապատեղեկատվության ամենաարդյունավետ գործիքներից են. դրանք շահարկում են մարդկային հույզերը՝ կոնկրետ քաղաքական և հասարակական նպատակների իրականացման համար: Նրանց ազդեցությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ է զարգացնել հասարակության քննադատական մտածողությունը և խթանել հաղորդագրություններ, որոնք հիմնված են փաստերի և բազմակողմանի վերլուծության վրա: Հայաստանի դեպքում՝ Ռուսաստանի և Արևմուտքի հետ հարաբերությունների համատեքստում, առանձնակի կարևոր է տեղեկատվական անկախության ամրապնդումը և հանրային հաղորդակցության թափանցիկության բարձրացումը:

Հակառակորդի դեմոնիզացումը՝ որպես ապատեղեկատվության և սոցիալական մոբիլիզացիայի գործիք

Հակառակորդի դեմոնիզացումը հաղորդակցման ռազմավարություն է, որի նպատակն է որոշ անհատների, խմբերի կամ հաստատությունների ներկայացնել որպես բոլոր չարիքների, սպառնալիքների կամ անկայունության աղբյուր: Այս տիպի նարատիվները լայնորեն կիրառվում են ապատեղեկատվական արշավներում՝ ուղղված հասարակության բևեռացմանը, ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ վստահության նվազեցմանը և ավտորիտար վերահսկողության ամրապնդմանը: Թշնամու ներկայացումը՝ որպես սպառնալիքի մարմնացում, առանձնահատուկ դեր ունի աշխարհաքաղաքական լարվածություն ունեցող տարածաշրջաններում, ինչպիսին են Հայաստանը և Կովկասը:
Դեմոնիզացման ռազմավարությունը հիմնված է մի քանի հիմնական մեխանիզմների վրա՝

- **Սպառնալիքի անձնավորում:** Թշնամու դեմոնիզացումը հաճախ հիմնվում է որևէ կոնկրետ անձի ներկայացման վրա՝ որպես սպառնալիքի խորհրդանիշ: Հայաստանի դեպքում նման նարատիվի օրինակ կարող է լինել հետևյալը.

  «Վարչապետ Փաշինյանը Սորոսի խամաճիկն է, որը գործում է Արևմուտքի հակազգային շահերի օգտին»:

  Նման ուղերձները հարուցում են բացասական հույզեր քաղաքական առաջնորդների նկատմամբ՝ նրանց ներկայացնելով որպես դավաճաններ կամ ազգային շահերին վնասող անձինք:
- **Խմբերի և հաստատությունների ստիգմատիզացում (խարանում):** Այս տեսակի նարատիվները հաճախ թիրախավորում են ամբողջ սոցիալական խմբեր կամ կազմակերպություններ՝ ներկայացնելով նրանց գործունեությունը որպես պետության կայունությանը սպառնացող:
  Օրինակ.

«Արևմտյան հիմնադրամները աջակցում են հասարակական կազմակերպություններին, որոնք քանդում են մեր ազգային ինքնությունը»: Նման հաղորդագրությունները շահարկում են մշակութային ինքնության կորուստի և բարոյական անկման վախերը՝ այդ սպառնալիքների պատասխանատվությունը վերագրելով արտաքին դերակատարներին:

- **Բարդության նվազեցում (պարզեցում):** Թշնամու դեմոնիզացնող նարատիվները բնութագրվում են իրականության միտումնավոր պարզեցմամբ, երբ բազմաշերտ քաղաքական կամ սոցիալական խնդիրները ներկայացվում են որպես «բարիքի» (ազգային արժեքների պաշտպաններ) և «չարիքի» (արտաքին կամ ներքին սպառնալիքներ) միջև հակամարտություն:
- **Հուզական գունավորում.** Թշնամու դեմոնիզացման գործընթացում կիրառվում է հույզերով լիցքավորված լեզու, որը ուժեղացնում է վախի, զայրույթի կամ վրդովմունքի զգացումը: Հայաստանի դեպքում Արևմուտքը որպես «թշնամական ագրեսոր» ներկայացնող նարատիվները խորացնում են անվստահությունը միջազգային կազմակերպությունների՝ մասնավորապես Եվրոպական Միության և ՆԱՏՕ-ի նկատմամբ:

Թշնամու դեմոնիզացման նարատիվները ծառայում են սպառնալիքի զգացողություն առաջացնելու և հասարակության մոբիլիզացմանը՝ «թշնամուց» պաշտպանվելու նպատակով: Դրանք միաժամանակ խորացնում են հասարակության բևեռացումը՝ մարդկանց բաժանելով «հայրենասերների» և «դավաճանների»: Արևմուտքի, ինչպես նաև արևմտամետ կամ ռուսամետ համարվող քաղաքական գործիչների դեմոնիզացումն օգտագործվում է Ռուսաստանի դիրքը որպես «տարածաշրջանային կայունության երաշխավոր» ամրապնդելու համար: Հակառակորդին բոլոր չարիքների աղբյուր ներկայացնող նարատիվները վերացնում են քաղաքական կամ աշխարհաքաղաքական այլընտրանքների քննարկման հնարավորությունը:

Հայաստանում հայտնաբերված համոզման նարատիվները Արևմտյան պետություններին ներկայացնում են որպես Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների ապակայունացման պատասխանատուներ: Օրինակ՝

- *«Արևմտյան հիմնադրամները հովանավորում են այնպիսի ՀԿ-ներ, որոնց գործունեությունը սպառնում է մեր ազգային ինքնությանը:»*
- *«Արևմուտքը դիտավորյալ ապակայունացնում է տարածաշրջանը՝ առաջ մղելով լիբերալ արժեքներ և հասարակական բաժանումներ:»*

Քաղաքական առաջնորդների՝ որպես դավաճանների ներկայացում: Այս նարատիվները կենտրոնանում են այն քաղաքական առաջնորդների խարանման վրա, որոնց գործողությունները ներկայացվում են որպես հակասող ազգային շահերին: Օրինակ՝ «Վարչապետ Փաշինյանը Սորոսի խամաճիկ է, որը սպասարկում է Արևմուտքի հակազգային շահերը»:

Թշնամու դեմոնիզացումը ազդեցիկ, թեև կործանարար ապատեղեկատվական գործիք է, որը հնարավորություն է տալիս մոբիլիզացնել հասարակությունը, ամրապնդել իշխանությունը և սահմանափակել քաղաքական այլընտրանքային նարատիվները: Հայաստանի և Կովկասի տարածաշրջանի համատեքստում առանցքային նշանակություն ունի հասարակության մեդիագրագիտության զարգացումը և անկախ լրատվամիջոցների աջակցությունը, որոնք կարող են արդյունավետորեն դիմակայել նմանատիպ նարատիվների ազդեցությանը: Թշնամու դեմոնիզացման մեխանիզմների ըմբռնումը կարևոր նախապայման է դրանց երկարաժամկետ հետևանքների դեմ պայքարելու համար:

Մշակութային և պատմական արժեքների շահարկում

Ազգային, կրոնական և պատմական արժեքները կարևոր դեր են խաղում կոլեկտիվ ինքնության ձևավորման գործընթացում: Սակայն քաղաքական և քարոզչական

նարատիվների համատեքստում դրանք հաճախ շահագործվում են՝ լսարանի մեջ սերմանելու հպարտություն, հավատարմություն և պարտավորության զգացում՝ ի շահ որոշակի քաղաքական նպատակների: Նման հղումները ուժեղացնում են լսարանի ինքնության նույնացումը տվյալ նարատիվի հետ՝ միաժամանակ մարգինալացնելով այլընտրանքային տեսակետները:

Ազգային բացառիկության և առաքելության ընդգծում: Ազգային բացառիկությանը հղվող նարատիվները ժամանակակից մարտահրավերները հաճախ ներկայացնում են որպես պատմական առաքելության շարունակություն՝ ուղղված ազգային ինքնության պաշտպանությանը: Հայաստանի դեպքում նման ուղերձները կարող են հնչել այսպես.«Միայն մեր ավանդական դաշնակիցների հետ հավատարիմ համագործակցությունը կարող է ապահովել Հայաստանի գոյատևումը»: Մշակութային և ազգային ինքնության պահպանման սպառնալիքների մատնանշումը խթանում է պարտքի և պատասխանատվության զգացումը՝ կոնկրետ գործողությունների իրականացման անհրաժեշտության համատեքստում: Այս ամենին զուգահեռ՝ լայնորեն տարածվում է մի պատմական նարատիվ, որը կառուցված է մանիպուլացված հավաքական հիշողության վրա: Այդ նարատիվը կասկածի տակ է դնում Հայաստանի և Եվրոպայի դարավոր հարաբերությունները՝ միաժամանակ խիստ չափազանցելով հայ-ռուսական պատմական և մշակութային կապերի դերը:

Պատմական արժեքների գործիքավորումը հաճախ ուղեկցվում է այն անձանց կամ խմբերի խարանմամբ, ովքեր շեղվում են պարտադրվող նարատիվից: Օրինակ՝ Արևմուտքի հետ համագործակցությունը կարող է ներկայացվել որպես ենթադրյալ «ավանդական արժեքների և դաշնակցային հարաբերությունների» դավաճանություն, ինչը սահմանափակում է աշխարհաքաղաքական այլընտրանքների շուրջ բանավեճի հնարավորությունները: Մշակութային և պատմական արժեքները սերտորեն կապված են հույզերի հետ, ինչի շնորհիվ դրանց

վրա հիմնված նարատիվներն ունեն առավել ուժեղ ազդեցություն: Նման տերմինները, ինչպիսիք են՝ «Քրիստոնեության պաշտպանություն» կամ «բարոյական պարտավորություն», ձևավորում են բարձրագոչության և հրատապության մթնոլորտ:

Կոլեկտիվ ինքնության ամրապնդում: Հղումները համատեղ պատմական և մշակութային արժեքներին խթանում են հասարակության համախմբումը՝ որոշակի նարատիվների շուրջ: Հայաստանի պարագայում՝ Ռուսաստանը որպես ավանդական դաշնակից ներկայացնող պատումները ուժեղացնում են պատկանելության զգացումը մի կոնկրետ մշակութային-քաղաքական բլոկին:

Ռուսաստանը հաճախ ներկայացվում է որպես Հայաստանի քրիստոնեական ինքնությունը պահպանելու միակ երաշխավորը: Նարատիվի օրինակ՝

- *«Ռուսաստանը դարեր շարունակ պաշտպանել է քրիստոնեությունը, մինչդեռ Արևմուտքը լռել է Հայոց ցեղասպանության ժամանակ»:*
- *«Միայն մեր ավանդական դաշնակիցների հետ հավատարիմ համագործակցությունը կարող է ապահովել Հայաստանի գոյատևումը»:*

Նման նարատիվները շահարկում են պատմական տրավմաներն ու սպառնալիքի զգացումը՝ ներկայացնելով Ռուսաստանը որպես անփոխարինելի դաշնակից: Այսպիսի հաղորդագրությունները կանխորոշում են քաղաքական այլընտրանքների հնարավորությունը՝ ընդգծելով, որ անվտանգությունը կարող է ապահովվել միայն «պատմական» դաշինքների միջոցով:

Ազգային արժեքները հանրային մոբիլիզացիայի հզոր գործիք են, հատկապես սպառնալիքների պայմաններում: Ուղերձները, ըստ որոնց ժողովրդի գոյատևումը կախված է իր ինքնության պաշտպանությանն օժանդակելուց, դրդում են լսարանին աջակցել որոշակի քաղաքական ուղղություններին: Արժեքների շահագործումը

թույլ է տալիս արդարացնել այնպիսի քայլեր, որոնք այլ պայմաններում կարող էին համարվել վիճահարույց կամ արժանանալ քննադատության: Օրինակ՝ «քրիստոնեության պաշտպանության» մասին նարատիվները կարող են ծառայել Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունը լեգիտիմացնելու նպատակին, նույնիսկ երբ այդ համագործակցությունը քննադատվում է այլ հարթություններում:

Մշակութային և պատմական արժեքների շահագործումը FIMI-ի կողմից մշտապես կիրառվող գործիքներից է, որն ամրապնդում է կոլեկտիվ ինքնությունը և մոբիլիզացնում է հասարակությանը որոշակի ռուսամետ նարատիվների շուրջ:

Զոհի կերպարի շահարկումը՝ որպես համոզման միջոց

Առանձին խմբերին, պետություններին կամ ժողովուրդներին՝ որպես հալածանքների, դավաճանության կամ ագրեսիայի անմեղ զոհեր ներկայացնող նարատիվները լայնորեն կիրառվում են քարոզչական հաղորդակցությունում՝ անկախ դրանց փաստացի հիմքի առկայությունից (նույնիսկ իրական փաստերին հենված պատկերը կարող է գործիքային կերպով շահարկվել մանիպուլյացիայի նպատակով): Պատմական, մշակութային և հուզական հիմքերի վրա կառուցված «զոհի կերպարը» առաջացնում է կարեկցանք, ուժեղացնում է բարոյական պարտավորության զգացումը և լեգիտիմացնում է պատումը տարածող սուբյեկտի քաղաքական քայլերը: Հայաստանի համատեքստում նման նարատիվները հաճախ հղում են անում պատմական տրավմաներին, օրինակ՝ Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև արդի աշխարհաքաղաքական հակամարտություններին, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմին:

Պատմական տրավմաների շահագործում: Զոհի կերպարի վրա հիմնված նարատիվները հաճախ շահագործում են ժողովուրդների պատմական փորձառությունները՝ կապված հալածանքների կամ դավաճանության հետ: Հայաստանի դեպքում հաճախ է հիշատակվում 1915 թվականի Հայոց

ցեղասպանությունը՝ որպես դավաճանության և աշխարհի անտարբերության խորհրդանիշ: Օրինակ՝ «Արևմուտքը աջակցում է ջիհադիստներին, որոնք սպառնում են մեր քրիստոնյա եղբայրներին»:

Բարոյական հակադրություն: Զոհի կերպարի կառուցումը հիմնված է ներկայացվող խմբի անմեղության և հետապնդողների դաժանության միջև ուժեղ հակադրության վրա: Օրինակ կարող է լինել Հայաստանի ներկայացումը որպես քրիստոնեական ամրոց, որը շրջապատված է թշնամական ուժերով՝ իբր Արևմուտքի կողմից աջակցվող:

Անօգնականության ընդգծում: Նման նարատիվները շեշտում են զոհի ինքնուրույն պաշտպանվելու անկարողությունը և արտաքին միջամտության անհրաժեշտությունը: Օրինակ՝

- *«Արևմուտքը լքեց Հայաստանին՝ Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում»:*

Փորձառությունների համընդհանուրացում: Զոհի կերպարի վրա հիմնված նարատիվները հաճախ հղում են անում համընդհանուր բարոյական արժեքներին՝ ինչպես կյանքի, արժանապատվության կամ արդարության իրավունքը, ինչը մեծացնում է դրանց ազդեցության ուժը:

Զոհի կերպարը հաճախ առաջացնում է կարեկցանք և միջամտելու բարոյական պարտավորության զգացում, հատկապես միջազգային հանրության շրջանակներում: Հայաստանի դեպքում այսպիսի նարատիվները մի կողմից խթանում են ներքին հանրային աջակցությունը, իսկ մյուս կողմից՝ փորձ են անում միջազգային ուշադրություն հրավիրել երկրի բարդ իրավիճակի վրա: Այս նարատիվները ծառայում են այնպիսի քաղաքական և ռազմական գործողությունների արդարացմանը, որոնք այլ հանգամանքներում կարող էին համարվել վիճահարույց: Օրինակ՝ Ռուսաստանի հետ սերտ

համագործակցությունը հաճախ ներկայացվում է որպես միակ երաշխիք՝ Հայաստանի պաշտպանության համար գոյություն ունեցող սպառնալիքների դեմ:

Զոհի կերպարով ներկայանալը հնարավորություն է տալիս խուսափել ներքին քաղաքական խնդիրների կամ ռազմավարական սխալների քննարկումից: Այսպիսով, նման նարատիվները շեղում են ուշադրությունը ներքին մարտահրավերներից՝ կենտրոնացնելով այն արտաքին սպառնալիքների վրա: Զոհի կերպարի վրա հիմնված նարատիվները նաև նպաստում են հասարակության բևեռացմանը՝ բաժանելով աշխարհը նրանց, ովքեր աջակցում են զոհին, և նրանց, ովքեր կանգնում են նրա հալածողների կողքին: Հայաստանի համատեքստում նման ուղերձները խորացնում են անվստահությունը Արևմուտքի և նրա ենթադրյալ դաշնակիցների նկատմամբ:

Արևմուտքը՝ որպես հալածանքների համակատարող: Քաղաքական նարատիվներում լայնորեն կիրառվում են այն հաղորդագրությունները, որոնք Արևմուտքին ներկայացնում են որպես պասիվ դիտորդ կամ նույնիսկ որպես Հայաստանի առջև ծառացած սպառնալիքների համակատար:

- *«Արևմուտքը լքել է Հայաստանին ադրբեջանական ագրեսիայի ժամանակ»:*
- *«Արևմուտքը աջակցում է ջիհադիստներին, որոնք սպառնում են մեր քրիստոնյա եղբայրներին»:*
- *«Ռուսաստանի աջակցության բացակայության դեպքում Հայաստանը չէր կարող դիմակայել ագրեսորների ճնշմանը»:*

Հայաստանի՝ որպես անմեղ հալածանքի զոհի կերպարը հաճախ զուգակցվում է Ռուսաստանի ներկայացմամբ՝ որպես միակ դաշնակից, որը հանդես է գալիս նրա պաշտպանության համար:

Այս նարատիվները կարող են խորացնել անօգնականության զգացումը և ուժեղացնել արտաքին դերակատարներից կախվածության զգացողությունը: Միևնույն ժամանակ, դրանք նպաստում են պաշտպանողական մոտեցումների ամրապնդմանը և խորացնում են անվստահությունը միջազգային գործընկերների նկատմամբ: Զոհի կերպարը հաճախ կիրառվում է՝ ավտորիտար գործողությունները կամ այլընտրանքային աշխարհաքաղաքական ուղիները բացառող քաղաքականությունը լեգիտիմացնելու նպատակով: Հայաստանի համատեքստում նման ուղերձները կարող են լեգիտիմացնել Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունը՝ Արևմուտքի հետ բաց հարաբերությունների հաշվին: Զոհի կերպարի շահագործումը կարող է թուլացնել պետության միջազգային դիրքը՝ ներկայացնելով այն որպես աշխարհաքաղաքական զարգացումներում պասիվ դերակատար, ինչը, իր հերթին, նվազեցնում է սեփական ճակատագիրը ձևավորելու նրա կարողությունները:

Զոհի կերպարի օգտագործումը հզոր գործիք է քաղաքական և քարոզչական նարատիվներում, որը հնարավորություն է տալիս ապահովել թե՛ ներքին համախմբում, թե՛ միջազգային ուշադրություն: Թեև դրա կիրառումը կարող է ապահովել կարճաժամկետ առավելություններ՝ օրինակ՝ հանրային համերաշխության աճ կամ արտաքին աջակցություն ստանալու հնարավորություն, սակայն երկարաժամկետ հեռանկարում այն կարող է բերել բացասական հետևանքների, այդ թվում՝ ինքնիշխանության թուլացման և սեփական խնդիրները ինքնուրույն լուծելու կարողության կորստի:

Ռուսական ազդեցության գործիքակազմը Հայաստանում. հույզերի մանիպուլյացիա

Ռուսաստանը Հայաստանում ազդեցության գործողություններ իրականացնելիս հույզերը կիրառում է որպես մանիպուլյացիայի արդյունավետ գործիք՝ նպատակ ունենալով ձևավորել հանրային կարծիքը, մոբիլիզացնել հասարակությանը և առաջ

մղել իր աշխարհաքաղաքական շահերը: Դիմելով այնպիսի զգացմունքների, ինչպիսիք են վախը, զայրույթը, ատելությունը, ազգային հպարտությունն ու կարեկցանքը, այն կառուցում է նարատիվներ, որոնք ձևավորում են Հայաստանի ընկալումները՝ Արևմուտքի, հարևան պետությունների և իր՝ որպես տարածաշրջանային դերակատարի նկատմամբ:

Հայաստանում իրականացվող ազդեցության գործողություններում Ռուսաստանը շահարկում է հույզերի լայն շրջանակ, որոնք միասին ձևավորում են միահյուսված նարատիվային համակարգ: **Վախն ու զայրույթը** օգտագործվում են հասարակությանը Արևմուտքի դեմ մոբիլիզացնելու նպատակով, մինչդեռ **ատելությունն ու կարեկցանքը** խորացնում են Ռուսաստանի նկատմամբ կախվածության զգացումը: Միաժամանակ, **ազգային հպարտությունը** նպաստում է ռուսամետ նարատիվների հանդեպ հավատարմության ձևավորմանը և խթանում է արևմտյան արժեքների նկատմամբ թշնամական վերաբերմունքը:

Այս տեխնիկաները Ռուսաստանի տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռազմավարության անբաժանելի մասն են, որի նպատակը Հայաստանին իր ազդեցության գոտում պահելն ու Երևանի՝ արևմտյան գործընկերների հետ հարաբերությունները թուլացնելն է: Այս գործողություններում շահագործվող հույզերի վերլուծությունը բացահայտում է սոցիալական հոգեբանության խորքային ըմբռնումը և ընկալման նկատմամբ երկարաժամկետ ու համակարգված մանիպուլյացիա իրականացնելու կարողությունը:

Վախը որպես ազդեցության գործիք:

Վախի շահագործումը ազդեցության գործողությունների ամենահզոր մեխանիզմներից է: Այն կիրառվում է հասարակության ընկալումների վերահսկման, որոշումների ուղղորդման և քաղաքական ու սոցիալական վարքագծի ձևավորման նպատակով: Վախի առաջացրած զգացումը թուլացնում է ռացիոնալ

մտածողությունը՝ հնարավորություն տալով մանիպուլյացիային և ցանկալի նարատիվների հաստատմանը: Արդյունքում հասարակությունն առավել պատրաստակամ է ընդունելու այն լուծումները կամ դիրքորոշումները, որոնք ներկայացվում են որպես անվտանգության միակ երաշխիք:

Ռազմական սպառնալիք Պատերազմի կամ արտաքին ագրեսիայի վախի վրա հիմնված նարատիվները հատկապես արդյունավետ են հասարակությանը մոբիլիզացնելու համար՝ ուղղորդելով այն դեպի որոշակի քաղաքական լուծումներ: Հայաստանի պարագայում Ռուսաստանը ներկայանում է որպես միակ անվտանգային երաշխավոր՝ ընդդեմ Ադրբեջանի ենթադրյալ հարձակման: Այս համատեքստում հաճախ տարածվում է հետևյալ պնդումը.

- *«Եթե Հայաստանը դուրս գա Ռուսաստանի ազդեցության գոտուց, ապա Ադրբեջանը կանցնի հարձակման, իսկ Արևմուտքը կթողնի Հայաստանին թշնամու կամքին»:*

Նման ուղերձները շահագործում են տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական լարվածությունները՝ խթանելու Հայաստանի՝ Ռուսաստանի նկատմամբ կախվածության զգացումը և այլընտրանքային քաղաքական ուղղությունների քննարկումը դարձնելու անհնար:

Մշակութային ինքնության կորուստ: Ավանդական մշակութային արժեքների կորուստի վախը հաճախ օգտագործվում է այնպիսի նարատիվների ամրապնդման համար, որոնք խթանում են Արևմուտքից մեկուսացումը: Այս համատեքստում տարածվում են այնպիսի պնդումներ, ինչպիսին է՝

«Արևմուտքը խրախուսում է բարոյական անկումը, որը քայքայում է մեր մշակույթի հիմքերը»:

Նման ձևակերպումները դիմում են այն մտահոգություններին, որոնք առնչվում են լիբերալ արժեքների (օրինակ՝ ԼԳԲՏ+ անձանց իրավունքներ) ազդեցությանը Հայաստանի քրիստոնեական ժառանգության վրա: Արդյունքում ձևավորվում է Արևմուտքի՝ որպես ազգային ինքնությանը սպառնացող ուժի կերպարը:

Քաղաքական ապակայունացում: Ռուսաստանը հաճախ ներկայացնում է Արևմուտքը որպես «գունավոր հեղափոխությունների» և այլ քաղաքական ապակայունացնող գործընթացների նախաձեռնող, որոնց նպատակն է Հայաստանը ենթարկել արտաքին շահերին.

- *«Արևմուտքը միտումնավոր խթանում է «գունավոր հեղափոխություններ»՝ Հայաստանում կառավարությունների տապալման և երկիրը սեփական շահերին ենթարկեցնելու նպատակով»:*

Նման նարատիվները խորացնում են իշխանափոխության նկատմամբ վախերը և խրախուսում այն ընկալումը, թե քաղաքական կայունությունը՝ որպես առաջնահերթություն, հնարավոր է ապահովել միայն Ռուսաստանի հետ սերտ համագործակցության շնորհիվ:

Վախը հնարավորություն է տալիս հասարակությանը շուտափույթ համախմբվել կոնկրետ քաղաքական գործողությունների շուրջ, հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Հայաստանի պարագայում՝ ռազմական սպառնալիքի մասին նարատիվները խթանում են հանրային աջակցությունը ռուսամետ անվտանգության քաղաքականությանը, ինչը պայմանավորված է Ռուսաստանի կողմից վտանգի զգացման պահպանման քաղաքականությամբ: Վախին հղումը հնարավորություն է տալիս արդարացնել այնպիսի քաղաքական քայլեր, որոնք այլ հանգամանքներում կարող էին արժանանալ քննադատության: Օրինակ՝ Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունը ներկայացվում է որպես արտաքին սպառնալիքներից բխող անխուսափելիություն: Վախը թուլացնում է լսարանի

վերլուծական մտածողության կարողությունը և նվազեցնում այլընտրանքային նարատիվները քննադատելու ունակությունը: Սպառնալիքի մթնոլորտում հասարակությունն ավելի հակված է անվերապահորեն ընդունելու պետական և մեդիա ուղերձները: Վախի վրա հիմնված նարատիվները ստեղծում են հստակ բաժանարար գծեր՝ «ավանդական արժեքների պաշտպանների» և «արտաքին վտանգների» միջև: Հայաստանի համատեքստում նման հաղորդումները խորացնում են լարվածությունը ռուսամետ և արևմտամետ կողմնակիցների միջև: FIMI-ի գործողությունների շրջանակում կիրառվող նարատիվները շեշտում են, որ Հայաստանի անվտանգությունն ամբողջությամբ կախված է տարածաշրջանում Ռուսաստանի ներկայությունից.

- *«Ռուսաստանի աջակցության բացակայության դեպքում Հայաստանը կհայտնվի ադրբեջանական հարձակման թիրախում»:*
- *«Արևմուտքը խթանում է բարոյական այլասերումը, որը տանում է դեպի ավանդական արժեքների փլուզում»:*
- *«Արևմուտքի հովանավորած գունավոր հեղափոխությունները ուղղված են Հայաստանի ինքնիշխանության խարխլմանը»:*

Այս նարատիվները նախազգուշացնում են Արևմուտքի լիբերալ արժեքների ազդեցության մասին, որոնք, ըստ դրանց, վտանգում կամ քայքայում են Հայաստանի քրիստոնեական ինքնությունը: Այդ հաղորդագրություններում Արևմուտքը ներկայացվում է որպես Հայաստանի ապակայունացման պատասխանատու ուժ: Վախը, որն առաջանում է նման նարատիվներից, հանգեցնում է անօգնականության զգացման խորացման և հասարակության՝ այդ պատումը տարածող սուբյեկտից (օրինակ՝ Ռուսաստանից) կախվածության աճին: Միաժամանակ, դա սահմանափակում է հասարակության կարողությունը բաց քննարկումների և այլընտրանքային քաղաքական ուղղությունների մասին բանավեճ վարելու: Այս նարատիվները նպաստում են ավտորիտար միտումների ամրապնդմանը՝

օրինականացնելով քաղաքացիական իրավունքների սահմանափակման գործողություններն ու խորացնելով արտաքին ուժերից կախվածությունը: Վախի օգտագործումը որպես քաղաքական նարատիվի գործիք՝ խոչընդոտում է կայուն միջազգային հարաբերությունների կառուցմանը, քանի որ այն ուժեղացնում է հնարավոր գործընկերների նկատմամբ անվստահությունը և պահպանում է ավանդական դաշնակիցներից կախվածությունը: Վախը քաղաքական նարատիվներում հզոր գործիք է, որը հնարավորություն է տալիս մոբիլիզացնել հասարակությունը և օրինականացնել որոշ քաղաքական գործողություններ: Սակայն դրա չափազանց շահագործումը կարող է հանգեցնել երկարաժամկետ բացասական հետևանքների՝ ներառյալ քննադատական մտածողության թուլացումը, հասարակության բևեռացումը և աշխարհաքաղաքական կախվածությունների ամրապնդումը:

Զայրույթը՝ որպես հասարակական մոբիլիզացիայի գործիք

Զայրույթը մարդկանց մոբիլիզացնելու ամենաուժեղ հույզերից մեկն է. այն կենտրոնացնում է լսարանի ուշադրությունը նշված «թշնամու» վրա և խթանում է դրա դեմ գործողությունների պատրաստակամությունը: Քարոզչական նարատիվներում զայրույթը հաճախ օգտագործվում է՝ քաղաքական հակառակորդների դեմ դիմադրություն ձևավորելու, հասարակության բևեռացումը խորացնելու և որոշակի քաղաքական գործողություններ լեգիտիմացնելու նպատակով: Հայաստանի համատեքստում Ռուսաստանը հաճախ շահագործում է Արևմուտքի նկատմամբ զայրույթը՝ վերջինիս ներկայացնելով որպես դավաճան և ագրեսոր: Զայրույթի թիրախ են դառնում նաև Ադրբեջանը և Թուրքիան՝ որպես պատմական և ժամանակակից թշնամիներ: Նման ուղերձները խթանում են զգացմունքային լիցքավորված մթնոլորտի ձևավորումը, որտեղ հասարակությունը հակված է ընդունելու ռուսամետ դիրքորոշումները՝ որպես ազգային անվտանգության և ինքնության միակ իրական պաշտպանություն:

Արևմուտքը՝ որպես դավաճան: Այս տիպի նարատիվները հիմնված են այն համոզմունքի վրա, որ Արևմուտքը վճռորոշ պահերին չի աջակցել Հայաստանին՝ ինչն առաջացնում է վրդովմունք և խորացնում է դավաճանության զգացումը: Նպատակն է ցույց տալ, որ Արևմուտքը հուսալի գործընկեր չէ, այլ շահադիտական ուժ, որն օգտագործում է Հայաստանին իր քաղաքական նպատակների համար: Օրինակներ.

- «Արևմուտքը օգտագործեց Հայաստանին որպես գործիք իր աշխարհաքաղաքական խաղում, ապա լքեց նրան»:
- «Եվրոպական Միությունն ու Միացյալ Նահանգները պարզապես շահարկում են Հայաստանին իրենց շահերի համար՝ անտեսելով նրա ճակատագիրը»:

Պատմական հակասությունների գործիքայնացում (Ադրբեջան և Թուրքիա): Այս նարատիվները շահագործում են Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ներկայացվող պատմական սպառնալիքները՝ առաջ մղելու այն տեսակետը, թե Արևմուտքը սատարում է այդ երկրներին՝ նպատակ ունենալով ապակայունացնել տարածաշրջանը:

Օրինակներ՝

- «Միացյալ Նահանգներն ու ՆԱՏՕ-ն աջակցում են Թուրքիային, որը դարեր շարունակ եղել է Հայաստանի ամենամեծ սպառնալիքը»:

- «Արևմուտքի աջակցությամբ Թուրքիան քրիստոնեական Հայաստանի համար ամենամեծ վտանգն է»:
- «Ադրբեջանը ՆԱՏՕ-ի անդամ երկրներից ստանում է զենք և ռազմական աջակցություն՝ այն երկրներից, որոնք իբր պաշտպանում են մարդու իրավունքները»:

Այս կերպ ռուսամետ լրատվամիջոցները շահարկում են հարևան երկրների նկատմամբ առկա զայրույթը՝ միաժամանակ չափազանցելով և դեմոնիզացնելով Արևմուտքի համագործակցությունը նրանց հետ՝ այն ներկայացնելով որպես Հայաստանի դեմ ուղղված համաշխարհային դավադրության ապացույց

Միջազգային գործողությունների դեմոնիզացում: Արևմուտքի՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ ռազմական կամ տնտեսական համագործակցությունը շեշտող նարատիվները խթանում են սպառնալիքի զգացումը և բորբոքում են զայրույթը: Օրինակ՝

- *«ՆԱՏՕ-ի համագործակցությունը Ադրբեջանի հետ դավաճանություն է Հայաստանի շահերին և աջակցություն՝ ագրեսորին»:*

Զայրույթը հանդես է գալիս որպես հզոր խթան, որը մոբիլիզացնում է հասարակությանը գործողությունների՝ հաճախ նշանակված թշնամու դեմ: Հայաստանի պարագայում այս նարատիվները խրախուսում են արևմտյան դաշինքներից հրաժարումը և գերադասում Ռուսաստանի հետ համագործակցությունը:

Զայրույթը խորացնում է թե՛ ներքաղաքական, թե՛ միջազգային բաժանարար գծերը՝ նպաստելով հակամարտությունների սրմանը և բարդացնելով երկխոսության հաստատումը: Հայկական հասարակության պարագայում այն կարող է նաև խորացնել անվստահությունը այն քաղաքական ուժերի հանդեպ, որոնք առաջարկում են այլընտրանքային ուղղություններ: Զայրույթի գործածումը քաղաքական նարատիվներում նպաստում է ավտորիտար միտումների լեգիտիմացմանը և թուլացնում ժողովրդավարական գործընթացները, քանի որ գերիշխող նարատիվներին հակադրվող քննադատական տեսակետները հաճախ ներկայացվում են որպես «դավաճանական» և դուրս մղվում հանրային դիսկուրսից: Արևմուտքի և հարևան երկրների դեմ ուղղված զայրույթի հրահրումը խոչընդոտում

է հավասարակշռված միջազգային հարաբերությունների կայացմանը՝ խորացնելով Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից՝ որպես անվտանգության միակ երաշխավոր:

Զայրույթը քաղաքական նարատիվներում արդյունավետ, սակայն միևնույն ժամանակ կործանարար գործիք է, որն օգտագործվում է հասարակությանը մոբիլիզացնելու և որոշակի քաղաքական քայլերը լեգիտիմացնելու նպատակով: Սակայն երկարաժամկետ կտրվածքով զայրույթի հրահրումը հանգեցնում է հասարակության բևեռացման, քննադատական մտածողության անկման և Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացման խորացման:

Ատելությունը՝ որպես համոզման գործիք քարոզչության մեջ:

Ատելությունը՝ որպես զայրույթի էմոցիոնալ սրացում, հզոր նարատիվային գործիք է, որը կիրառվում է հասարակության մոբիլիզացման նպատակով՝ ուղղված կոնկրետ խմբի, պետության կամ գաղափարախոսության դեմ: Քաղաքական նարատիվներում ատելությունն օգտագործվում է հակադրությունների խորացման, հանրային քննարկման նվազեցման և որոշ քաղաքական գործողությունների լեգիտիմացման համար: Հայաստանի համատեքստում Ռուսաստանը խթանում է Արևմուտքի նկատմամբ ատելություն՝ ներկայացնելով այն որպես սպառնալիք Հայաստանի քրիստոնեական արժեքների, ազգային ինքնության և ինքնիշխանության համար:

Արևմուտքի դեմոնիզացում: Այս նարատիվները կենտրոնանում են Արևմուտքը որպես չարիքի աղբյուր, բարոյական անկման խորհրդանիշ և Հայաստանի քրիստոնեական ու ազգային արժեքների համար սպառնալիք ներկայացնելու վրա: Նման նարատիվների օրինակներ են՝

- *«Արևմուտքը խրախուսում է բարոյազրկումը՝ վտանգելով մեր երիտասարդությունն ու ավանդական արժեքները»:*

Արևմուտքի դեմոնիզացումը հղում է կատարում ավանդական հասարակական նորմերին և փոփոխության նկատմամբ առկա վախին՝ ուժեղացնելով մշակութային և գաղափարական բաժանարար գծերը։

Սորոսի և արևմտյան կազմակերպությունների նկատմամբ ատելություն։ Այս նարատիվները մեղադրում են արևմտյան հիմնադրամներին, մասնավորապես՝ Սորոսի հիմնադրամին, Հայաստանի ապակայունացման մեջ՝ պնդելով, թե դրանք աջակցում են «հակահայրենասիրական» շարժումներին, որոնք սպառնում են երկրի ինքնիշխանությանը։

- «Սորոսի կազմակերպությունները Արևմուտքի գործիքներն են՝ ուղղված Հայաստանի անկախության ոչնչացմանը»։
- «Արևմուտքը ոչնչացրել է ավանդական ընտանեկան արժեքները Եվրոպայում և այժմ փորձում է նույնը անել Հայաստանում»։
- «Արևմուտքի խրախուսած բարոյազրկումը ամենամեծ սպառնալիքն է մեր երիտասարդության համար»։
- «Արևմտյան հիմնադրամները իմպերիալիստական գործիքներ են, որոնք աշխատում են Հայաստանի թուլացման համար»։

Այս կերպ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ներկայացվում են որպես «հինգերորդ շարասյուն»՝ օտար շահերին ծառայող կառույցներ, որոնք գործում են ազգային ինքնության հաշվին։

Ազգային ինքնության մանիպուլյացիա։ Այս նարատիվները շահարկում են հայկական ազգային հպարտության և քրիստոնեական ժառանգության զգացմունքը՝ Արևմուտքին ներկայացնելով որպես այդ արժեքներին հակադրվող ուժ։ Դրանք շեշտում են Արևմուտքի՝ ավանդական նորմերի նկատմամբ ենթադրյալ թշնամական վերաբերմունքը՝ խորացնելով ատելությունն ու դիմադրողականությունը։

Ատելությունը ուժեղացնում է համայնքային համախմբվածության զգացումը՝ ստեղծելով ընդհանուր թշնամու կերպար։ Հայաստանի պարագայում նման նարատիվները մոբիլիզացնում են հասարակությանը մերժելու Արևմուտքի ազդեցությունը և ընտրելու համագործակցությունը Ռուսաստանի հետ՝ որպես ազգային արժեքների պահպանման երաշխիք։ Արևմուտքի նկատմամբ ատելությունը ծառայում է որպես գործիք՝ ռուսամետ քաղաքականությունը օրինականացնելու, ինչպես նաև ընդդիմադիր ձայները լռեցնելու համար, որոնք կարող են ներկայացվել որպես «հակահայրենասիրական» կամ «դավաճանական»։ Ատելության վրա հիմնված նարատիվները հանգեցնում են հայացքների ռադիկալացման՝ խոչընդոտելով բաց քննարկումները քաղաքական և սոցիալական այլընտրանքային ուղղությունների շուրջ։ Արևմուտքը որպես թշնամի ներկայացնելը ուժեղացնում է Ռուսաստանի՝ որպես Հայաստանի «արտաքին վտանգից» միակ պաշտպան ընկալումը։

Ատելությունը հանգեցնում է հասարակության խոր բևեռացման՝ ուժեղացնելով տարբեր աշխարհայացքներ ունեցող խմբերի միջև բաժանարար գծերը։ Այն կարող է հանգեցնել նաև այն մարդկանց և կազմակերպությունների մարգինալացմանը, որոնք խթանում են երկխոսությունն ու միջազգային համագործակցությունը։ Ատելության կիրառումը խորացնում է ավտորիտար միտումները, քանի որ վերացնում է քննադատական կարծիքների համար անհրաժեշտ տարածքը և արդարացնում է այլընտրանքային քաղաքական ընտրությունների դեմ գործողությունները։ Արևմուտքի նկատմամբ ատելությունը ամրապնդում է Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից և խորացնում մեկուսացումը միջազգային գործընկերներից, ինչը սահմանափակում է համագործակցության և արդիականացման հնարավորությունները։ Ատելությունը՝ որպես քաղաքական նարատիվների գործիք, չափազանց արդյունավետ է հասարակության մոբիլիզացման և որոշակի քաղաքական գործողությունների օրինականացման համար։ Սակայն դրա երկարաժամկետ հետևանքները կործանարար են. այն բերում

է հասարակության բևեռացման, երկխոսության վերացման և աշխարհաքաղաքական կախվածությունների խորացման:

Կարեկցանքը որպես համոզման գործիք Հայաստանում

Կարեկցանքը հիմնարար հուզական վիճակ է, որը նպաստում է սոցիալական կապերի ձևավորմանը, ամրապնդում է համերաշխության զգացումը և մոբիլիզացնում է հանրությանը՝ աջակցելու ճգնաժամերի և հակամարտությունների զոհերին: Քաղաքական և քարոզչական նարատիվներում կարեկցանքը հաճախ օգտագործվում է որպես գործիք՝ որոշակի գործողությունների կամ դերակատարների հանդեպ աջակցություն ամրապնդելու նպատակով: Հայաստանի համատեքստում Ռուսաստանը հաճախ դիմում է քրիստոնյա հայերի հանդեպ կարեկցանքի զգացմանը՝ ներկայանալով որպես նրանց շահերի և արժեքների պաշտպան այն պայմաններում, երբ տարածաշրջանում առկա են մահմեդական հարևաններից բխող սպառնալիքներ, իսկ Արևմուտքը ներկայացվում է որպես անտարբեր կամ պասիվ կողմ:

Քրիստոնեության պաշտպանություն: Այս նարատիվները հայերին ներկայացնում են որպես կրոնական սպառնալիքների զոհեր, իսկ Ռուսաստանին՝ որպես Կովկասում քրիստոնեության միակ պաշտպան: Օրինակներ.

- «Առանց Ռուսաստանի քրիստոնյա հայերը չունեն գոյատևման որևէ հնարավորություն՝ թշնամաբար տրամադրված մահմեդական հարևանների շրջապատում»:
- «Ռուսաստանը միակ պետությունն է, որը պաշտպանում է քրիստոնեական արժեքները Կովկասում»:
- «Ռուսաստանը դարեր շարունակ պաշտպանել է քրիստոնեությունը Կովկասում, մինչդեռ Արևմուտքը աջակցում է ջիհադիստներին»

Կրոնական և պատմական արժեքներին հղումը ամրապնդում է հայերի համերաշխության զգացումը՝ որպես քրիստոնեական համայնքի մաս, և միաժամանակ օրինականացնում է Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում։

Հակամարտության զոհեր: Այս նարատիվները շեշտում են խաղաղ բնակչության, հատկապես Լեռնային Ղարաբաղի փախստականների ողբերգական ճակատագրերը՝ կարեկցանք առաջացնելու և Ռուսաստանի միջամտությունը արդարացնելու նպատակով։ Օրինակներ՝

- «Հազարավոր հայ ընտանիքներ ստիպված են եղել լքել իրենց տները, և միայն Ռուսաստանն է նրանց իրական օգնություն ցուցաբերել»։
- «Լեռնային Ղարաբաղը դարձել է մարդկային ողբերգության վայր, որը Արևմուտքը հրաժարվում է ճանաչել»։
- «Առանց Ռուսաստանի աջակցության՝ հազարավոր հայեր կորցրել են իրենց տները և ապագայի հույսը»։

Այս կերպ Ռուսաստանը իր գործողությունները ներկայացնում է որպես մարդասիրական և անհրաժեշտ քայլ՝ հայ բնակչությանը հետագա կորուստներից պաշտպանելու նպատակով։

Հակադրություն Արևմուտքի հետ: Այս նարատիվները հակադրում են Ռուսաստանի՝ քրիստոնյա հայերի հանդեպ ցուցաբերվող ենթադրյալ հոգածությունը Արևմուտքի անտարբերությանը կամ այն գործողություններին, որոնք, իբր, նպաստում են Հայաստանի մահմեդական հարևաններին։ Օրինակ.

- *«Արևմուտքը աջակցում է Ադրբեջանին և Թուրքիային՝ անտեսելով քրիստոնյա հայերի տառապանքները»։*

Կարեկցանքը ամրապնդում է հասարակության ներսում համերաշխությունը՝ մոբիլիզացնելով աջակցությունը այն գործողություններին, որոնք նպատակ ունեն պաշտպանել զոհերին: Միջազգային մակարդակում այս նարատիվները ձևավորում են Ռուսաստանի դրական կերպարը՝ որպես պետություն, որը հոգ է տանում քրիստոնյա փոքրամասնությունների մասին: Քրիստոնյա հայերի հանդեպ կարեկցանքին ուղղված հղումները հնարավորություն են տալիս արդարացնելու Ռուսաստանի ռազմական ներկայությունը տարածաշրջանում, ինչպես նաև նրա դերը՝ որպես անվտանգության երաշխավոր: Կարեկցանքի վրա հիմնված նարատիվները սահմանափակում են Ռուսաստանի գործողությունների քննադատությունը, քանի որ դրանք ներկայացվում են որպես բարոյապես արդարացված և անհրաժեշտ՝ քաղաքացիական բնակչության պաշտպանությանը միտված: Քրիստոնյա հայերի հանդեպ համակրանքի արթնացումը գործածվում է նաև որպես գործիք՝ ապալեգիտիմացնելու այլընտրանքային աշխարհաքաղաքական ուղիները, մասնավորապես՝ Հայաստանի համագործակցությունը Արևմուտքի հետ, որոնք ներկայացվում են որպես անտարբեր՝ հայ ժողովրդի տառապանքների հանդեպ:

Քաղաքական գործողությունները օրինականացնելու նպատակով կարեկցանքի օգտագործումը ամրապնդում է ավտորիտար միտումները և խորացնում է Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից՝ որպես անվտանգության միակ երաշխավորի: Նման նարատիվները ոչ միայն պահպանում, այլ նաև խորացնում են Հայաստանի՝ Ռուսաստանի վրա հիմնված աշխարհաքաղաքական կախվածությունը՝ միաժամանակ սահմանափակելով հավասարակշռված միջազգային հարաբերությունների ձևավորման հնարավորությունները Եվրամիության, ԱՄՆ-ի և այլ գործընկերների հետ: Կարեկցանքի կիրառումը որպես նարատիվ գործիք կարող է հանգեցնել մարդկային տառապանքի շահարկման՝ քաղաքական նպատակներով, ինչը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնում է նման հաղորդագրությունների նկատմամբ վստահության անկման: Այդպիսի

օրինակ է Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների իրական տառապանքի շահարկումը՝ վարչապետ Փաշինյանին ներկայացնելով որպես նրանց ճակատագրի ենթադրյալ պատասխանատու և, միևնույն ժամանակ, առաջ մղելով Ռուսաստանի հետ կախյալ հարաբերությունների օրինականացումը՝ անտեսելով հենց Ռուսաստանի դերը հայերի արտագաղթի մեջ՝ պայմանավորված իր ստանձնած պարտավորությունները չկատարելով:

Թեև կարեկցանքը մարդկային տառապանքին բնական արձագանք է, այն հաճախ շահագործվում է քաղաքական նարատիվներում՝ զոհերի նկատմամբ համերաշխություն ձևավորելու և որոշ սուբյեկտների գործողությունները օրինականացնելու նպատակով: Հայաստանի համատեքստում Ռուսաստանը արդյունավետ կերպով օգտագործում է քրիստոնյա հայերի հանդեպ կարեկցանքի զգացումը՝ իր աշխարհաքաղաքական դիրքերը ամրապնդելու և այլընտրանքային նարատիվները թուլացնելու համար: Սակայն կարեկցանքի գործիքայնացումը կարող է հանգեցնել հասարակության բևեռացման, հույզերի մանիպուլյացիայի և քննադատական մտածողության սահմանափակման:

Ազգային հպարտության զգացումը որպես մանիպուլյացիայի գործիք

Ազգային հպարտության զգացումը քաղաքական նարատիվների ամենահզոր գործիքներից է, որն օգտագործվում է հասարակության մեջ հավատարմություն ձևավորելու որոշակի արժեքների, գաղափարախոսությունների և դերակատարների նկատմամբ: Հայաստանի համատեքստում ազգային հպարտությունը հաճախ շահագործվում է ռուսամետ նարատիվների նկատմամբ աջակցությունը խթանելու, ինչպես նաև Արևմուտքի արժեքների և ազդեցության նկատմամբ հասարակական հակակրանք ձևավորելու նպատակով: Հղումները՝ անցյալում գոյություն ունեցած «պատմական» դաշնակցություններին, քրիստոնեական ավանդույթներին և հայկական մշակութային ինքնատիպությանը, կազմում են այս նարատիվների հիմնական բաղադրիչները:

Ռուսաստանը որպես ավանդական դաշնակից: Այս նարատիվները ներկայացնում են Ռուսաստանի պատմական դերը որպես Հայաստանի և նրա քրիստոնեական արժեքների ենթադրյալ պաշտպան՝ ձևավորելով հանրային ընկալում՝ իբր Ռուսաստանը եղել և մնում է Հայաստանի անփոխարինելի դաշնակիցը: Օրինակներ՝

- «Հայաստանը գոյատևեց իր պատմության ամենադժվար ժամանակներում՝ Ռուսաստանի շնորհիվ»:
- «Առանց Ռուսաստանի աջակցության Հայաստանը չէր դիմանա պատմական սպառնալիքներին»:
- «Ռուսաստանը միշտ եղել է Հայաստանի քրիստոնեական ինքնության պահապանը»:

«Պատմական» դաշնակցությունների ընդգծումը նպաստում է Ռուսաստանի ընկալման ամրապնդմանը որպես վստահելի գործընկեր, որը իբր կարող է ապահովել Հայաստանի անվտանգությունն արտաքին վտանգների պայմաններում:

Քրիստոնեական արժեքների առաջմղում: Այս նարատիվները ընդգծում են Հայաստանի բացառիկությունը՝ որպես առաջին քրիստոնյա պետություն, և շեշտադրում են արևմտյան լիբերալ արժեքներից բխող սպառնալիքը՝ երկրի քրիստոնեական ինքնության համար:

Օրինակներ՝

- «Հայաստանը, որպես առաջին քրիստոնյա պետություն, պետք է մերժի Արևմուտքի լիբերալ ազդեցությունները»:
- «Որպես առաջին քրիստոնյա պետություն՝ Հայաստանը պետք է հավատարիմ մնա իր արմատներին»:
- «Արևմտյան լիբերալ արժեքները հակասում են Հայաստանի քրիստոնեական ժառանգությանը»:

Այս կերպ ռուսամետ նարատիվները ընդգծում են Հայաստանի ավանդական արժեքների և Արևմուտքի գաղափարախոսության միջև եղած հակասությունները՝ ձևավորելով մշակութային գերակայության զգացում և խթանելով դիմադրություն արևմտամետ ուղղվածությանը:

Ազգային հպարտության ամրապնդումը կարող է նպաստել համերաշխության և հավաքական ինքնության ձևավորմանը, սակայն միևնույն ժամանակ հանգեցնել մեկուսացման միտումների: Այս նարատիվները կարող են գործիքայնացվել՝ ռուսամետ քաղաքական ուղեգիծը պահպանելու նպատակով՝ միաժամանակ մարգինալացնելով աշխարհաքաղաքական այլընտրանքային ուղղությունները: Բացի այդ, դրանք թուլացնում են ժողովրդավարական գործընթացները՝ խարանելով այն ձայները, որոնք քննադատում են գերիշխող նարատիվները:

Ռուսաստանի կողմից զգացմունքների շահագործումը՝ Հայաստանում իր դիրքերի ամրապնդման նպատակով

Ռուսաստանը, Հայաստանում իր ազդեցության գործողություններն իրականացնելիս, հմտորեն կիրառում է մանիպուլյացիոն ռազմավարություններ, որոնք հիմնված են նպատակաուղղված հույզերի առաջացման վրա՝ նպաստելով իր՝ որպես անփոխարինելի դաշնակցի կերպարի ձևավորմանը: Որպես հույզային ներգործության գործիքներ՝ օգտագործվում են երախտագիտություն, անվտանգության զգացում, համայնքային համերաշխություն, կարեկցանք, ազգային հպարտություն, հիացմունք և հարգանք: Այս եղանակով Ռուսաստանը ամրապնդում է իր ազդեցությունը Հայաստանում՝ միաժամանակ թուլացնելով Արևմուտքի հնարավոր գործողությունները:

Երախտագիտություն: Ռուսաստանը ձևավորում է նարատիվներ, որոնք նպատակ ունեն հասարակության մեջ ձևավորելու երախտագիտության զգացում՝ կապված Հայաստանի պաշտպանության հարցում իր պատմական և ժամանակակից

դերակատարման հետ: Անդրադառնալով անցյալին՝ (շատ հաճախ այն վերաիմաստավորելով կամ խեղաթյուրելով), Ռուսաստանը շեշտում է իր ներկայությունն ու դերակատարությունը՝ որպես քրիստոնեության պաշտպան և որպես գործոն, որը նպաստել է Հայաստանին՝ հաղթահարելու պատմական բարդ շրջափուլերը: Այն ներկայացվում է որպես Հայաստանի պաշտպան՝ Օսմանյան կայսրության և մահմեդական հարևանների դեմ: Այս պատկերացումը ամրապնդվում է այնպիսի ուղերձներով, ինչպիսիք են՝ *«Ռուսաստանի շնորհիվ Հայաստանը կարողացել է պահպանել իր քրիստոնեական ինքնությունը»:*

Ռուսական ռազմաբազաներն ու ռազմական աջակցությունը ներկայացվում են որպես անվտանգության հիմնասյուներ՝ Ադրբեջանի և Թուրքիայի սպառնալիքներից Հայաստանը պաշտպանելու համատեքստում: Օրինակ՝ *«Ռուս զինվորների ներկայությունը Գյումրիում մեր ազգային անվտանգության երաշխիքն է»:*

Այսպիսով, հասարակության մեջ ձևավորվում է ընկալում, թե Հայաստանը իր անվտանգությունն ու կայունությունը պարտական է բացառապես Ռուսաստանին, ինչը նվազեցնում է Արևմուտքի հետ համագործակցելու մղումը: Այս նարատիվները նպաստում են ռուսամետ քաղաքական ուժերի և ինստիտուտների հանդեպ լոյալության ամրապնդմանը՝ խորացնելով Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանի ներսում:

Անվտանգության զգացողություն: Ռուսաստանը ներկայացնում է իրեն որպես տարածաշրջանի կայունության երաշխավոր, միակ ուժը, որը կարող է կանխել պատերազմն ու քաոսը: Այն ձևավորում է այնպիսի պատկեր, ըստ որի՝ Ռուսաստանը Հայաստանին ապահովում է ռազմական, քաղաքական և տնտեսական պաշտպանություն:

- Պատերազմի կանխարգելում: Ռուսաստանը շեշտադրում է իր միջնորդական գործողությունները, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ընթացքում, ներկայացնելով դրանք որպես խաղաղության պահպանման հիմնական պայման:
- *«Առանց Ռուսաստանի, Ադրբեջանը անմիջապես կհարձակվեր Հայաստանի վրա»*
- Արևմուտքի այլընտրանքը: Նարատիվները ենթադրում են, որ Արևմուտքը անկարող է իրական աջակցություն ցուցաբերել Հայաստանին սպառնալիքների դիմաց: Օրինակ՝ «Արևմտյան խոստումները միայն խոսքեր են. հենց Ռուսաստանն է, որ ապահովում է տարածաշրջանի կայունությունը»

Նպատակներ – Հայաստանի ազգային անվտանգության ապահովման հարցում կախվածություն ձևավորել Ռուսաստանից, ինչպես նաև նվազեցնել ՆԱՏՕ-ի կամ ԵՄ-ի հետ համագործակցությանը միտված նախաձեռնությունների հանդեպ աջակցությունը:

- **Համայնք և համերաշխություն**: Ռուսաստանը շեշտադրում է Հայաստանի հետ ունեցած սերտ պատմական, մշակութային և կրոնական կապերը՝ համայնքային պատկանելիության զգացումը խթանելու նպատակով: Այս նարատիվների նպատակն է ամրապնդել Ռուսաստանի՝ որպես Հայաստանի «եղբայրական ժողովրդի» կերպարը:
- **Պատմական կապեր:** Ընդգծվում է Հայաստանի և Ռուսաստանի դարավոր համագործակցությունը՝ սկսած Ռուսական կայսրության ժամանակներից մինչև Խորհրդային Միություն: Օրինակ. «Ռուսաստանն ու Հայաստանը դարեր շարունակ գործակցել են՝ քրիստոնեական ժառանգությունը պահպանելու համար»:

- **Կրոնը՝ որպես միավորող կապ**: Ռուսաստանը ներկայացնում է իրեն որպես քրիստոնեության պաշտպան, ինչը խորացնում է մշակութային և քաղաքակրթական միասնականության զգացումը: Օրինակ. *«Քրիստոնեական արժեքների հանդեպ ընդհանուր հավատը միավորում է մեր ժողովուրդներին»:*

Նման մարտավարություն կիրառելով՝ Ռուսաստանը ձգտում է վերահսկել և ազդել հայկական հասարակության վրա՝ խորացնելով հավատարմությունը ռուսամետ նարատիվների նկատմամբ՝ հղում անելով ենթադրյալ ընդհանուր մշակութային ժառանգությանը և մերժելով Արևմուտքի առաջ քաշած արժեքները՝ որպես «օտար» և հայկական ինքնության հետ անհամատեղելի:

Կարեկցանք: Կարեկցանք արթնացնելը այն հիմնական գործիքներից է, որը Ռուսաստանը կիրառում է՝ իրեն ներկայացնելու որպես Հայաստանի և տարածաշրջանի քրիստոնեական համայնքների պաշտպան: Ռուսաստանը հաճախ չափազանցում է իր ներգրավվածությունը մարդասիրական գործողություններում և քաղաքացիական բնակչության պաշտպանությունում՝ միաժամանակ թաքցնելով իր դերի բացասական կողմերը նման իրավիճակներում, օրինակ՝ այսպես կոչված «Լաչինի միջանցքի» շրջափակման ընթացքում կամ 2024 թվականին Սիրիայում Ասադի ռեժիմի անկման ժամանակ:

- **Մարդասիրական օգնություն**: Ռուսաստանը շեշտում է իր դերը Արցախից փախստականներին մարդասիրական աջակցություն ցուցաբերելու հարցում: Օրինակ. «Ռուս զինվորները ոչ միայն պաշտպանում են սահմանները, այլև օգնություն են հասցնում կարիքավորներին»: Այս նարատիվը շրջանցում է այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուս զինվորները 2023 թ. որևէ քայլ չեն ձեռնարկել «Լաչինի միջանցքի» շրջափակումը վերացնելու ուղղությամբ, թեև նրանք պարտավոր էին դա անել:

- **Պաշտպանություն արմատականությունից:** Ռուսաստանը Սիրիայում իր գործողությունները ներկայացնում է որպես քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանություն իսլամական արմատականներից, ինչը միտված է ամրապնդել իր հեղինակությունն Հայաստանում: Օրինակ. «Ռուսաստանը միակ երկիրն է, որը դիմադրում է ջիհադիստներին՝ պաշտպանելով քրիստոնեական համայնքները»: Այս նարատիվը շրջանցում է այն փաստը, որ 2024 թ. դեկտեմբերին Ուկրաինայի դեմ ագրեսիան Ռուսաստանի համար ավելի առաջնահերթ էր, քան իսլամական արմատականների հարձակման պայմաններում քրիստոնյաների պաշտպանությունը:

Ռուսաստանը ներկայացվում է որպես Հայաստանի «հովանավոր», որը նրան պաշտպանում է թե՛ տեղական, թե՛ միջազգային մակարդակներում՝ այսպիսով հիմք ստեղծելով ռուսական աջակցությունից հաճախ անգիտակցաբար ձևավորվող հուզական կախվածության համար:

Ազգային հպարտություն. Ռուսաստանը խթանում է Հայաստանի ազգային հպարտությունը՝ ընդգծելով նրա դերը որպես ռազմավարական դաշնակից և միաժամանակ առաջ մղելով պահպանողական ու քրիստոնեական ընդհանուր արժեքները:

Հայաստանի ռազմավարական գործընկեր: Նարատիվներ, որոնք ներկայացնում են Հայաստանին որպես Ռուսաստանի առանցքային դաշնակից Կովկասում: Օրինակ. *«Հայաստանը տարածաշրջանի անվտանգության սյունն է, որին Ռուսաստանը բարձր է գնահատում»:*

Արժեքների պաշտպանություն: Ռուսաստանը շեշտադրում է Հայաստանի հետ ունեցած ընդհանուր նվիրվածությունը ավանդական արժեքներին՝ հակադրելով

դրանք Արևմուտքի խթանած լիբերալ նորմերին: Օրինակ. *«Միասին կանգնած ենք քրիստոնեական ժառանգության պահպանության ուղին»:*

Ռուսական հոգեբանական գործողության շրջանակում այսպես կառուցված ազդեցության մեխանիզմները միտված են ամրապնդելու Հայաստանի բացառիկության զգացումը Ռուսաստանի հետ հարաբերությունների համատեքստում և մոբիլիզացնելու՝ դիմակայելու արևմտյան նարատիվներին, որոնք ընկալվում են որպես սպառնալիք ազգային հպարտությանը:

Հիացմունք և հարգանք: Ռուսաստանը ձևավորում է իր կերպարը որպես ռազմական և տնտեսական հզորություն, որը կարող է ապահովել Հայաստանի կայունությունն ու հեղինակությունը: Այն ներկայանում է որպես պետություն, որն արժանի է հարգանքի և հիացմունքի:

- **Ռազմական հզորություն:** Ռուսաստանը շեշտում է իր ռազմական ներուժը՝ ներկայացնելով այն որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր: Օրինակ՝ «Ռուսաստանի հետ դաշինքը Հայաստանին հնարավորություն է տալիս օգտվել առաջադեմ ռազմական տեխնոլոգիաներից»:
- **Ռազմական հզորություն:** Ռուսաստանը շեշտում է իր ռազմական ներուժը՝ ներկայացնելով այն որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր: Օրինակ՝ *«Ռուսաստանի հետ դաշինքը Հայաստանին հնարավորություն է տալիս օգտվել առաջադեմ ռազմական տեխնոլոգիաներից»:*

Այսպես կառուցված ազդեցության մեխանիզմները նպատակ ունեն ամրապնդել Հայաստանի հեղինակությունը Ռուսաստանի հետ դաշինքի միջոցով և խորացնել Ռուսաստանի ընկալումը որպես անփոխարինելի ռազմավարական գործընկեր: Ռուսաստանը Հայաստանում իր ազդեցության գործողություններում

արդյունավետորեն կիրառում է հույզերի լայն շրջանակ՝ ներառյալ երախտագիտությունը, անվտանգության զգացումը, համայնքային և համերաշխության զգացումը, կարեկցանքը, ազգային հպարտությունն ու հիացմունքը: Այս հույզերը խթանելով՝ Ռուսաստանը ուժեղացնում է իր քաղաքական, ռազմական և մշակութային ազդեցությունը, միաժամանակ մարգինալացնելով Արևմուտքի ազդեցությունը:

5. Արևմուտքի մասին ընկալումները թիրախավորող քարոզչական գործողություններ

Արևմուտքի հանդեպ վերաբերմունքը այն առանցքային հարցերից է, որի շուրջ աճում է ինչպես հասարակական, այնպես էլ տեղեկատվական դաշտում նարատիվների բևեռացումը: Դա պայմանավորված է, մի կողմից, որոշ հայկական քաղաքական շրջանակների և դրանց հետ կապված մեդիա միջոցների ռուսամետ կողմնորոշմամբ, ինչպես նաև Ռուսաստանի և նրա վերահսկողության ներքո գործող Ռուսաստանի հայկական սփյուռքի տարրերի ուղղակի կամ անուղղակի գործողություններով: Այս համատեքստում հակաարևմտյան նարատիվը ռուսական քարոզչության ուղիղ արտապատկերումն է՝ հիմնված նույն գաղափարական շաբլոնների վրա: Դրանց թվում են՝ ՆԱՏՕ-ի կողմից Ուկրաինայի «գործիքային օգտագործման» ներկայացումը՝ իբր Ռուսաստանի դեմ հիբրիդային պատերազմ սանձազերծելու նպատակով, Արևմուտքի մեղադրումը՝ համաշխարհային երրորդ պատերազմի առաջացման մեջ, ինչպես նաև Արևմուտքի ներկայացումը որպես «ապականված» ուժ, որը ոչնչացնում է կրոնը և ավանդույթները, խթանում է ԼԳԲՏ արժեքները, և հակադրվում է Ռուսաստանին՝ իբր որպես կրոնի և ավանդական արժեքների պաշտպան: Միևնույն ժամանակ, պետք է հիշել, որ որոշ արևմտյան երկրներում բնակվում է մեծաթիվ հայկական համայնք, որի ներկայացուցիչները

հաճախ կարևոր դեր են խաղում այդ երկրներում: Սա հատկապես վերաբերում է ԱՄՆ-ին և Ֆրանսիային: Կարևոր է հիշել, որ Ֆրանսիան և ԱՄՆ-ը ժամանակակից հայ ժողովրդի պատմության մեջ ավելի դրական դերակատարություն են ունեցել, և ռուսական քարոզչության նպատակն է աղավաղել կամ մթագնել այս պատկերը՝ այդ երկրների ազդեցությունը Հայաստանում նվազեցնելու համար: Այդ պատճառով շեշտը դրվում է Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և ընդհանրապես Արևմուտքի վարկաբեկման վրա՝ նրանց կապելով հայ ժողովրդի թշնամիների՝ Թուրքիայի, Ադրբեջանի և ջիհադիստների հետ:

ա) Արտաքին գործոններով պայմանավորված

- Արևմուտքը ցանկանում է սանձազերծել երրորդ համաշխարհային պատերազմ:
- Արևմուտքը աջակցում է ջիհադիստներին Մերձավոր Արևելքում, ինչը սպառնալիք է հայ ժողովրդի համար:
- Եվրոպական երկրները կատարում են ԱՄՆ-ի հակառուսական նպատակները և չեն գործում ինքնուրույն:
- Արևմուտքը օգտագործել է Ուկրաինան Ռուսաստանի հետ հակամարտության համար:

բ) Ներքին գործոններով պայմանավորված

- Արևմուտքը անվստահելի գործընկեր է Հայաստանի անվտանգության ապահովման հարցում, իսկ վարչապետ Փաշինյանի դեպի Արևմուտք ուղղված շրջադարձը հանգեցնում է նրա միակ իսկական դաշնակից Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացմանը:

- Արևմուտքը ապականված է և սպառնալիք է ներկայացնում Հայաստանի ավանդական արժեքների համար։
- Վարչապետ Նիկոլ Փաշինյանը և նրա թիմը Արևմուտքի գործակալներն են և Սորոսի գործիքները, որոնք իրականացնում են Հայաստանի կործանման ծրագիրը՝ համաձայն Թուրքիայի և Ադրբեջանի։

գ) Գործողությունների օրինակներ

1. Ռուսաստանը Սիրիայում պարտվեց Արևմուտքին (համատեքստ. սա տեղավորվում է այն նարատիվի մեջ, ըստ որի Ռուսաստանը բազմաթիվ ճակատներում է պայքարում Արևմուտքի դեմ, որոնցից մեկը Սիրիան էր։ Այդ պայքարի շրջանակում Արևմուտքը Սիրիայում օգտագործել է ջիհադիստներին, որոնք սպառնում էին տեղացի քրիստոնյաներին, այդ թվում՝ հայերին)։

168.am, 10/12/2024, «40-ից ավելի երկիր պատերազմ է հայտարարել Ռուսաստանի. կա Մեծ Թուրանի ստեղծման վտանգ», հարցազրույց Ցանցային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Գագիկ Հարությունյանի հետ, որը Սիրիայում Ասադի անկումը մեկնաբանում է որպես Արևմուտքի, Թուրքիայի և Իսրայելի կողմից Ռուսաստանի դեմ մղվող պայքարի արդյունք, որի վրա Արևմուտքը «միլիարդներ» է ծախսում։

2. **Վարչապետ Նիկոլ Փաշինյանի արևմտամետ քաղաքականությանը հակադրվող նարատիվ**

«Իրավունք», 2024 թ. սեպտեմբերի 18 — «Փաշինյանը Հայաստանին մղում է դեպի Արևմուտքի անդունդը» – https://www.iravunk.com/?p=293022&l=ru Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Ալեքսեյ Ժուրավլովը կոշտ քննադատել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ մեղադրելով նրան Արևմուտքի շահերին ծառայելու մեջ։ Ժուրավլովի խոսքով՝ Փաշինյանի վարած քաղաքականությունը Հայաստանը

տանում է դեպի տնտեսական, սոցիալական և ռազմական ճգնաժամի անդունդ: Հոդվածում ընդգծվում է, որ Փաշինյանի քայլերը թելադրված են Արևմուտքից: Գլխավոր նարատիվն այն է, որ Արևմուտքի կողմնորոշումը հանգեցնում է Հայաստանի և նրա միակ իրական դաշնակցի՝ Ռուսաստանի միջև հարաբերությունների վատթարացման:

«Իրավունք», 2024 թ. հունիսի 25 — «Հայաստանի քաղաքական վեկտորը գնալով ավելի է թեքվում դեպի Արևմուտք» – https://www.iravunk.com/?p=286823&l=ru Հրապարակվել են Ռուսաստանի փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի հայտարարությունները, որտեղ նա մտահոգություն է հայտնում Հայաստանի և արևմտյան երկրների միջև աճող մերձեցման կապակցությամբ: Օվերչուկը նշում է, որ Եվրամիությունն ու Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) համատեղելի կառույցներ չեն, և որ ոչ տարածաշրջանային դերակատարների ներկայությունը Հայաստանում կարող է ունենալ հետևանքներ երկրի համար: Նա միաժամանակ ընդգծում է, որ Ռուսաստանը շահագրգռված է Հայաստանի կայունության ապահովմամբ, ինչպես նաև առևտրային և «եղբայրական» հարաբերությունների պահպանմամբ:

«Իրավունք», 2024 թ. հունիսի 18 – «Արևմուտքը Հայաստանին դիտարկում է որպես Ռուսաստանի դեմ հիբրիդային պատերազմի գործիք» – https://www.iravunk.com/?p=286286&l=ru Ներկայացված է ռուս դիվանագետի դիրքորոշումը՝ Հայաստանի վրա արևմտյան ազդեցության վերաբերյալ: Գալուզինը հայտարարում է, որ ԱՄՆ-ն և Եվրոպական միությունը նպատակ ունեն թուլացնել հետխորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի միջև կապերը՝ փորձելով դրանք հեռացնել Ռուսաստանից և ներառել իրենց ազդեցության ոլորտում: Նրա խոսքով՝ Արևմուտքը Հայաստանը ներառում է իր ռազմավարության մեջ՝ ուղղված Ռուսաստանի դեմ, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանի ապակայունացման:

«Իրավունք», 2024 թ. մայիսի 24 – «Արևմուտքը փորձում է ստեղծել պայմաններ ԱՊՀ երկրներում «գունավոր հեղափոխությունների» համար» – https://www.iravunk.com/?p=284241&l=ru Ռուսաստանի Դաշնության Դաշնային Անվտանգության ծառայության տնօրեն Ալեքսանդր Բորտնիկովը հայտարարում է, որ Արևմտյան երկրները, մասնավորապես ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան, նպատակաուղղված ձգտում են ապակայունացնել Անկախ Պետությունների Համագործակցության երկրները՝ աջակցելով ընդդիմադիր շարժումներին և ոչ կառավարական կազմակերպություններին, որոնք միտված են իշխանության զավթմանը: Նրա խոսքով՝ Արևմուտքը ձևավորում է այսպես կոչված «աքսորյալ կառավարություններ», որոնք պատրաստ են զավթել իշխանությունը՝ ներքին անկայունության պայմաններում: Բորտնիկովը շեշտում է, որ այս քաղաքականության նպատակը Ռուսաստանի ազդեցության թուլացումն է հետխորհրդային տարածքում և տարածաշրջանի քաղաքական քարտեզի վերաձևումը՝ Արևմուտքի շահերին համապատասխան: Գլխավոր նարատիվը՝ Արևմուտքի բացասական ազդեցությունը տարածաշրջանում:

«Իրավունք», 2024 թ. ապրիլի 6 – «Փաշինյանի քաղաքականությունը Հայաստանը կտանի ոչ թե Եվրոպա, այլ դեպի ամոթ կամ նոր ցեղասպանություն» – https://www.iravunk.com/?p=280437&l=ru Հոդվածում ներկայացվում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի քննադատությունը՝ իր արևմտամետ քաղաքականության համար: Հեղինակի պնդմամբ՝ Փաշինյանի յուրաքանչյուր հանդիպում արևմտյան երկրների ներկայացուցիչների հետ Հայաստանը մոտեցնում է ազգային աղետի: Նյութը եզրափակվում է նախազգուշացմամբ, որ Փաշինյանի վարած քաղաքականությունը կարող է երկիրը տանել ոչ թե Եվրոպայի հետ խոստացված ինտեգրման, այլ դեպի անարգանք կամ նոր ցեղասպանություն: Գլխավոր նարատիվը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նպատակաուղղված տանում է Հայաստանը կործանման:

«Իրավունք», 2024 թ. փետրվարի 15 – «Հայաստանի համար մեծ խնդիրներ կառաջանան, եթե ռուսական անվտանգության երաշխիքները փոխարինվեն արևմտյանով» – Ալեքսանդր Կռիլով – https://www.iravunk.com/?p=276372&l=ru Հոդվածում ներկայացված է հարցազրույց Ալեքսանդր Կռիլովի հետ՝ Ռուսաստանի ԳԱ Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի (IMEMO RAN) հետխորհրդային հետազոտությունների կենտրոնի գլխավոր գիտաշխատողի: Կռիլովը նախազգուշացնում է, որ ռուսական անվտանգության երաշխիքները արևմտյանով փոխարինելը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել Հայաստանի համար: Նրա խոսքով՝ նման քաղաքականության փոփոխությունը, որին կարող է ձգտել ներկայիս կառավարությունը, հակասում է հայ հասարակության մեջ ազգային շահերի վերաբերյալ ձևավորված ավանդական ընկալումներին: Գլխավոր նարատիվը՝ Արևմուտքի կողմնորոշումը հանգեցնում է Հայաստանի և իր միակ վստահելի դաշնակցի՝ Ռուսաստանի հարաբերությունների վատթարացման:

«Իրավունք», 2023 թ. նոյեմբերի 15 – «Արևմուտքը դաժանորեն պահում է Հայաստանը և փորձում է հանել Ռուսաստանից» – https://www.iravunk.com/?p=269659&l=ru Հոդվածում ներկայացված են Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովայի հայտարարությունները, որոնցում նա մեղադրում է Արևմուտքին՝ Հայաստանից Ռուսաստանին հեռացնելու փորձերի մեջ: Զախարովայի խոսքով՝ Արևմուտքը տեղական քաղաքական ուժերի միջոցով Հայաստանի վրա է թելադրում իր շահերը: Նա Հայաստանի հրաժարումը ՀԱՊԿ նիստին մասնակցելուց և զենքի մատակարարումների ավելացումը դիտարկում է որպես երկրի Արևմուտքին ենթարկելու ռազմավարության մաս: Հայտարարություններում շեշտվում են Հայաստանի համար Ռուսաստանի հետ հարաբերությունների օգուտները և հնչեցնում է զգուշացում «Արևմուտքի կողմից ստրկացման» վտանգի վերաբերյալ:

«Իրավունք», 2023թ. նոյեմբերի 10՝ «Արևմուտքը «հաճոյախոսում» է Հայաստանին և ցանկանում է նրա հետ ընկերանալ Ռուսաստանի դեմ՝ Լավրով»: https://www.iravunk.com/?p=269273&l=ru Սերգեյ Լավրովի հայտարարությունը, որտեղ նշվում է, որ արևմտյան երկրները ինտենսիվ կերպով հաճոյախոսում են Հայաստանին՝ փորձելով Ռուսաստանի հաշվին ամրապնդել նրա հետ հարաբերությունները: Լավրովը շեշտել է, որ Ռուսաստանը որևէ նախապաշարմունք չունի Հայաստանի գործընկերների նկատմամբ, և որ Երևանը պետք է ինքնուրույն ձևավորի իր հարաբերությունները այլ երկրների հետ: Նա նաև ընդգծել է, որ Ռուսաստանը երբեք դաշինքներ չի ստեղծում որևէ մեկի դեմ: Գլխավոր նարատիվը՝ Արևմուտքը վնասում է Հայաստանի շահերին՝ վատթարացնելով նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ

«Իրավունք», 2023թ. հոկտեմբերի 13 – «Հայաստան. Փաշինյանի հակառուսական շրջադարձը՝ արևմտյան հրաշքի սպասումով»: https://www.iravunk.com/?p=267244&l=ru Ներկայացվում է Նիկոլ Փաշինյանի քաղաքականության վերլուծություն, որտեղ ընդգծվում են նրա հակառուսական քայլերը 2018 թվականից սկսած: Հեղինակն ակնարկում է, որ Փաշինյանը ձգտում է թուլացնել կապերը Ռուսաստանի հետ՝ մեղադրելով նրան Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի խնդիրների համար: Նա նաև շեշտում է, որ ներկայիս հայաստանյան իշխանությունները մեծացնում են հակառուսական տրամադրությունները՝ ձգտելով իրենց անհաջողությունների համար պատասխանատվությունը վերագրել Մոսկվային

«Հրապարակ», 2024թ. սեպտեմբերի 19 – «Փողը՝ ռուսաստանից, քաղաքական լոյալությունը՝արեւմուտքից» Վարչապետ Նիկոլ Փաշինյանի քաղաքականության նկարագրությունը, որը փորձում է հավասարակշռություն պահել Ռուսաստանի և Արևմուտքի միջև: Հեղինակն առաջարկում է, որ Փաշինյանը քննադատում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ)՝

Արևմուտքի աջակցությունն ու համակրանքը շահելու նպատակով, միաժամանակ պահպանում է անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), որպեսզի օգտվի Ռուսաստանի հետ առևտրային առավելություններից: Հոդվածում ընդգծվում է, որ հակառուսական հռետորաբանության ֆոնին առևտուրը Ռուսաստանի հետ աճում է, մինչդեռ Եվրոպական միության հետ առևտրաշրջանառությունը նվազում է: Հեղինակը քննադատում է Փաշինյանին արտաքին քաղաքականության մեջ հետևողականության բացակայության համար՝ ենթադրելով, որ նրա գործողությունները պայմանավորված են ոչ թե Հայաստանի իրական ազգային շահերով, այլ իշխանությունը պահելու ձգտումով:

«Հրապարակ», 2024թ. մարտի 16 – «Փաշինյանը հակառուսական դիրքորոշմամբ դիմում է Արևմուտքին՝ ակնկալելով նրա պաշտպանությունը» https://hraparak.am/post/229e7b7e60a29123d3a6a9a8812f4d1a Վերլուծություն վարչապետ Նիկոլ Փաշինյանի հակառուսական քայլերի շուրջ, որոնք դիտարկվում են որպես փորձ՝ ստանալու Արևմուտքի աջակցությունն ու պաշտպանությունը: «Հայաքվե» նախաձեռնության ներկայացուցիչ Մենուա Սողոմոնյանը նշում է, որ Փաշինյանը, հակադեմոկրատական գործողությունների և կոռուպցիայի հետևանքով կորցնելով իր լեգիտիմությունը, փորձում է Եվրոպական միության վստահությունը շահել՝ Ռուսաստանին քննադատելով:

«Հրապարակ», 2023թ. դեկտեմբերի 28 – «Հայաստանը փորձում է Ռուսաստանի հետ դաշինքը փոխարինել Արևմուտքի «մշուշոտ խոստումներով» https://hraparak.am/post/a92b5a4b7a9af78eb0cb006476cb3292 Հիմնական նարատիվը հետևյալն է. կառավարության գործողությունները հանգեցնում են Հայաստանի իրական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացմանը: Hraparak.am կայքի հոդվածում մեջբերվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի խոսքերը, որը քննադատում է Հայաստանին Ռուսաստանի հետ իր դաշինքը Արևմուտքի «մշուշոտ խոստումներով»

փոխարինելու փորձերի համար: Լավրովը պնդում է, որ Երևանը, ենթարկվելով արևմտյան ազդեցությանը, փոխում է իր արտաքին քաղաքականությունը՝ Ռուսաստանին մեղադրելով իր խնդիրների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կորստի համար: Այդուհանդերձ՝ նրա խոսքով, Հայաստանն Ռուսաստանի համար շարունակում է մնալ ռազմավարական գործընկեր Հարավային Կովկասում:

«Սպուտնիկ Արմենիա», 2024թ. հուլիսի 12 https://am.sputniknews.ru/20240712/erevan-vtyagivayut-v-antirossiyskie-proekty-zakharova-ob-armyano-amerikanskikh-ucheniyakh-78280165.html Հիմնական նարատիվի առանցքը՝ հայ-ամերիկյան համատեղ զորավարժությունները հանդիսանում են Արևմուտքի գործիք Հայաստանի անվտանգության քաղաքականության վրա ազդելու և սպառնալիք ներկայացնում նրա ինքնիշխանությանը: Ավելին, դրանք նշանակում են Հայաստանի իրական դաշնակից Ռուսաստանի մերժում:

3. Արևմուտքը անվստահելի է: Արևմուտքը աջակցում է Թուրքիային և Ադրբեջանին՝ Հայաստանի դեմ: Արևմուտքը փորձում է Վրաստանում իրականացնել իշխանափոխություն՝ «գունավոր հեղափոխությունների» միջոցով: Արևմուտքը սպառնալիք է Հարավային Կովկասի խաղաղության համար:

168.am, 2024թ. դեկտեմբերի 9, https://168.am/2024/12/09/2138386.html, Հարցազրույց Արթուր Խաչիկյանի հետ (ներկայացվում է որպես ԱՄՆ Սթենֆորդի համալսարանի փորձագետ): Վերնագիրը վախեցնում է՝ նշելով, որ Ադրբեջանը կգրավի Հայաստանն այնպես, ինչպես ՀԹՇ-ն գրավեց Սիրիան, իսկ Փաշինյանը կփախչի ինչպես Ասադը: ժողովրդավարության ծաղրանք ՀԹՇ-ի համատեքստում. «ահաբեկիչը չորացրեց մազերը, ուղղեց մորուքը, սանրվեց և դարձավ դեմոկրատ». ԱՄՆ-ն, մասնավորապես Թրամփի նոր վարչակազմը, աջակցում է Իսրայելին, իսկ Իսրայելը Ադրբեջանի հետ խաղում է Իրանի դեմ, ուստի Հայաստանը կզոհաբերվի:

մեջբերումներ. «Թրամփն ունի շատ ագրեսիվ, իսրայելամետ դիրքորոշում: Իսկ Թուրքիան և Ադրբեջանը Իսրայելի դաշնակիցներն են: Նրանք կփորձեն շահագործել իրավիճակը և լուծել Զանգեզուրի միջանցքի խնդիրը». «Արևմուտքի երեսպաշտությունն անտանելի է».

Իրավունք, 2023թ. մայիսի 4, https://www.iravunk.com/?p=254816&l=ru «Ուկրաինան որպես պետություն պահպանելը ամերիկյան ծրագրերի մաս չի կազմում – Պատրուշև» Հիմնական նարատիվը՝ Միացյալ Նահանգներն օգտագործում է Ուկրաինան Ռուսաստանին դիմակայելու համար: Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշևի հայտարարությունը, ըստ որի՝ Միացյալ Նահանգները չեն նախատեսում պահպանել Ուկրաինան որպես պետություն: Պատրուշևի խոսքով՝ ԱՄՆ-ն օգտագործում է Ուկրաինան՝ նրա բնական պաշարները շահագործելու նպատակով, ինչի հետևանքով տեղի է ունենում բնակչության զանգվածային արտագաղթ՝ սոցիալ-տնտեսական խնդիրների և բռնաճնշումների արդյունքում: Պատրուշևը ընդգծում է, որ Վաշինգտոնի գործողությունները վերջին 30 տարիների ընթացքում հանգեցրել են Ուկրաինայի բնակչության զգալի կրճատմանը, իսկ ներկայումս ԱՄՆ-ը շարունակում է պատերազմը Ռուսաստանի դեմ՝ «մինչև վերջին ուկրաինացին», առանց Ուկրաինան որպես ինքնիշխան պետություն պահպանելու մտադրության:

«Հրապարակ», 2024թ. հունիսի 22՝ «Արեւմուտքը հօգուտ հայաստանի դիրքորոշում չի ցուցաբերում, որովհետեւ հայաստանն իրենց դաշնակիցը չէ» https://hraparak.am/post/598c24e218cc9f6cbd0ce5fccc8b65b1 Հիմնական նարատիվը՝ Արևմուտքը անվստահելի է և չի աջակցում Հայաստանին: Հարցազրույց Հայաստանի Կառուցողական կուսակցության նախագահ Անդրիաս Ղուկասյանի հետ, որի ընթացքում քննարկվում է Հայաստանի՝ Եվրոպական միությանը անդամակցելու հնարավորությունը: Ղուկասյանի խոսքով՝ գործող

կառավարությունը դժկամությամբ է վերաբերվում այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու հեռանկարին՝ փոխարենը կենտրոնանալով Թուրքիայի և Ադրբեջանի հետ համագործակցությանը։

Hraparak, 2024 թ. ապրիլի 13՝ «Արևմուտքը փորձում է Վրաստանում կազմակերպել «գունավոր հեղափոխություն» https://hraparak.am/post/b23f6719e35eb4a72b47ff6fc25fce90 Նյութի հեղինակը նշում է, որ Վրաստանի իշխանությունները, ներկայացված «Վրացական երազանք» կուսակցությամբ, Արևմուտքի կողմից ընկալվում են որպես անբավարար չափով հնազանդ, հատկապես հակառուսական պատժամիջոցներին լիովին չմիանալու և Ռուսաստանի հետ առևտրային հարաբերությունները պահպանելու փաստի համատեքստում։ Հետևաբար, Արևմուտքը պլանավորում է աջակցել Վրաստանի ընդդիմադիր ուժերին՝ ֆինանսավորելով կուսակցություններն ու ոչ կառավարական կազմակերպությունները՝ նպատակ ունենալով 2024 թվականի աշնանը կայանալիք խորհրդարանական ընտրությունների ժամանակ իշխանափոխություն կազմակերպել։

Hraparak, 2023 թ. ապրիլի 28 — «Արևմուտքը ստիպում է Հայաստանին կայացնել որոշում»։ https://hraparak.am/post/fd494eac6b7a38c5a12993da9e5a08d2 Արևմուտքի կողմից Հայաստանում գործադրվում է ճնշում՝ Ադրբեջանի հետ արագ խաղաղության պայմանագիր ստորագրելու նպատակով։ Պայմանագրի նախագիծը Հայաստանին փոխանցվել է Էրիկա Օլսոնի կողմից, որը հանդիպել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ։ Փաստաթղթի մանրամասները դեռևս հրապարակված չեն, սակայն ենթադրվում է, որ դրա դրույթները կարող են անբարենպաստ լինել ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) համար։ Արևմուտքը փորձում է դուրս մղել Ռուսաստանին տարածաշրջանից՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելով, որպեսզի վերջինս կատարի Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցները և դուրս բերի ռուս խաղաղապահներին Արցախից։

Hraparak, 2021 թ. ապրիլի 30 — «Նիկոլայ Պատրուշևը՝ Արևմուտքի ապակառուցողական քաղաքականության մասին»։ https://hraparak.am/post/05eb174fb9abab25bfed59511f22bf1e Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշևը հանդես է եկել հայտարարությամբ, որի ընթացքում նա քննադատել է Սորոսի հիմնադրամի և նրա կողմնակիցների գործունեությունը։ Պատրուշևի խոսքով՝ այդ կազմակերպությունները փորձում են տարբեր երկրներին պարտադրել իրենց գնահատման չափանիշները, ինչը կարող է հանգեցնել պատժամիջոցների կիրառման կամ նույնիսկ ռազմական միջամտության՝ խախտելով տվյալ երկրների ինքնիշխանությունը։

«Հրապարակ», 2020 թ. նոյեմբերի 18 — «Արևմուտքը սկսել է սադրել հայ և ադրբեջանցի ազգայնականներին» https://hraparak.am/post/87481333f4d94c10f102b28e136a841b, Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Սերգեյ Նարիշկինի հարցազրույցը, որտեղ նա մեղադրում է Արևմուտքին՝ հայ և ադրբեջանցի ազգայնականների միջև լարվածությունը սրելու մեջ՝ նպատակ ունենալով վարկաբեկել և խափանել Լեռնային Ղարաբաղում հրադադարի վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունները։ Նարիշկինի խոսքով՝ արևմտյան երկրները փորձում են համոզել հայերին, որ Ղարաբաղում խաղաղությունը նշանակում է Երևանի պարտություն՝ նրանց խրախուսելով շարունակել պայքարը։

Novosti Armenia, 2024 թ. նոյեմբերի 13 — «Զախարովա. «ԱՄՆ-ին և ԵՄ-ին չի հետաքրքրում Հարավային Կովկասի ճակատագիրը, նրանք պարզապես ցանկանում են դուրս մղել Ռուսաստանին տարածաշրջանից» https://newsarmenia.am/news/in_the_world/zakharova-ssha-i-es-plevat-na-sudbu-yuzhnogo-kavkaza-oni-khotyat-vydavit-rossiyu-iz-regiona/ Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության խոսնակ Մարիա Զախարովայի հայտարարությունը,

որով նա մեղադրում է ԱՄՆ-ին և Եվրոպական միությանը՝ ձգտելով դուրս մղել Ռուսաստանին Հարավային Կովկասից, ընդգծելով, որ նրանց իրականում չի հետաքրքրում տարածաշրջանի ճակատագիրը: Զախարովայի խոսքով՝ Արևմուտքը, հանդես գալով որպես միջնորդ, փորձում է պատճենել Ռուսաստանի խաղաղարար նախաձեռնությունները՝ միաժամանակ խեղաթյուրելով դրանց բովանդակությունը, որպեսզի խաղաղ գործընթացը իր վերահսկողության տակ վերցնի: Զախարովայի խոսքով՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի իրական նպատակը տարածաշրջանի վրա վերահսկողություն սահմանելն է: Նա ընդգծում է, որ Ռուսաստանը՝ ի տարբերություն Արևմուտքի, իսկապես շահագրգռված է Հարավային Կովկասի կայունությամբ և բարօրությամբ:

Novosti Armenia, 2024 թ. դեկտեմբերի 18 — «Արևմուտքի ձգտումը՝ ուժեղացնել իր դիրքերը Հարավային Կովկասում, կործանարար ազդեցություն է ունենում տարածաշրջանի վրա» — Գերասիմով https://newsarmenia.am/news/armenia/stremlenie-zapada-usilit-pozitsii-v-zakavkaze-destruktivno-vliyaet-na-region-gerasimov-/ Ռուսաստանի Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովի հայտարարության համաձայն՝ ԱՄՆ-ի և Եվրամիության ձգտումը՝ ուժեղացնել իրենց ներկայությունը Հարավային Կովկասում, ունի կործանարար ազդեցություն տարածաշրջանային կայունության վրա: Գերասիմովը ընդգծում է, որ այս քայլերի նպատակը Վրաստանին պահպանել Արևմուտքի ազդեցության գոտում և Հայաստանը իր ազդեցության տակ բերելն է, ինչը բացասաբար է ազդում Հարավային Կովկասի կայունության վրա:

168.am, 2024 թ. դեկտեմբերի 7 — https://168.am/2024/12/07/2137131.html Հարցազրույց ռազմական փորձագետ և վերլուծաբան Դավիթ Զամալյանի հետ, ով ընդգծում է, որ հայ-ռուսական դաշինքը ռազմավարական նշանակություն ունի և պետք է պահպանվի, մինչդեռ զենքի ոլորտում համագործակցության զարգացումը

Ֆրանսիայի կամ Հնդկաստանի հետ չի երաշխավորի Հայաստանի անվտանգությունը:

168.am, 2024 թ. դեկտեմբերի 3 — https://168.am/2024/12/03/2135490.html Հարցազրույց Genesis Armenia ուղեղային կենտրոնի տնօրեն Աբրահամ Գասպարյանի հետ, ով ենթադրում է, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը իրականացնում է ադրբեջանա-թուրքական պլան՝ միտված Հայաստանի ժողովրդավարության կազմաքանդմանը և Ադրբեջանի համար ներխուժման ճանապարհի բացմանը: Գասպարյանի պնդմամբ՝ այդ հակահայկական դավադրության մեջ ներգրավված են նաև Վատիկանն ու Մեծ Բրիտանիան: Մեջբերումներ. «Վատիկանը շատ վատ խաղ է խաղում մեր դեմ: Մենք պետք է հասկանանք, թե որ միջազգային կորպորացիաներն են հեղափոխություն անում ամբողջ աշխարհում կամ ինչ նոր գլոբալիստական կազմակերպություններ է ղեկավարում Վատիկանը»: «Չորրորդ նախագահ Արմեն Սարգսյանն այստեղ բրիտանական քաղաքականության համակարգողն էր: Սևամորթն իր գործն արեց, նեգրը կարող էր հեռանալ: Նիկոլ Փաշինյանը պարզապես ֆասադ է, որին խաղում են դրսից եկածները»:

Ապատեղեկատվություն Ուկրաինայի պատերազմի վերաբերյալ. «Արևմուտքը ձգտում է հրահրել Երրորդ համաշխարհային պատերազմ»:

«Հրապարակ», 5.02.2024՝ «Ուկրաինայի կառավարությունը տեղափոխվում է Լվով», (նյութը ենթադրում է, որ Ուկրաինան պարտվում է, և ՆԱՏՕ-ն ցանկանում է մտնել Ուկրաինա՝ «Կիևի ռեժիմին» օգնելու համար): https://hraparak.am/post/e7d184b60f94e3d755346bc272a56542,

Sputnik, 5 մարտ, 2024: Ուկրաինան պարտվում է, բայց Արևմուտքը հուսահատորեն պատերազմ է փնտրում Ռուսաստանի հետ, ուստի ՆԱՏՕ-ն ցանկանում է

էքսպեդիցիոն կորպուս ուղարկել Ուկրաինա: Մեջբերում. «Ուկրաինա ՆԱՏՕ-ի զորքեր մտցնելու հավանականության մասին Լոնդոնի, Փարիզի և Վաշինգտոնի հետևողական հայտարարություններն արտացոլում են Ուկրաինայի զինված ուժերի աղետալի վիճակը և հավաքական Արևմուտքի՝ Ռուսաստանի հետ ուղիղ զինված հակամարտության մեջ մտնելու հնադարյան ձգտումը»:
https://arm.sputniknews.ru/20240305/nato-i-eqspedicivon-kvorpusn-ukrainajum-linel-te-chlinel-73069314.html;

«Իրավունք», 5 հուլիս, 2024: Նարատիվի հիմնական տարրերը. Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խոսքով՝ արևմտյան երկրները ձգտում են հրահրել Երրորդ համաշխարհային պատերազմը, նույնիսկ այն դեպքում, երբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը խաղաղության կոչ է անում: https://www.iravunk.com/?p=287589&l=am

«Իրավունք», 3 մարտ, 2024: https://www.iravunk.com/?p=277752&l=am Նարատիվի հիմնական տարրերը. Գերմանացի զինվորականների միջև տեղի ունեցած զրույցի արտահոսքը, որը վերաբերում է ՆԱՏՕ-ի արտակարգ ծրագրերին՝ ռուսական թիրախների վրա հարվածներ հասցնելու դեպքում, վկայում է այն մասին, որ ՆԱՏՕ-ի երկրները քննարկում են Ռուսաստանի հետ ուղիղ բախման հնարավորությունը: Դա, անկասկած, կարող է վերաճել Երրորդ համաշխարհային պատերազմի:

«Իրավունք», 28 փետրվար, 2024: https://www.iravunk.com/?p=277430&l=am Նարատիվի հիմնական տարրերը. Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը փորձում է հրահրել Երրորդ համաշխարհային պատերազմը՝ ակնարկելով արևմտյան երկրների զինված ուժերը Ուկրաինա ուղարկելու հնարավորության մասին: Այսպիսով, նախագահ Մակրոնը, կարծես, մոռացել է Նապոլեոնի փորձը և նրա պարտությունը Ռուսաստանում:

Golos Armenii, 20 դեկտեմբեր, 2021: Նարատիվի հիմնական տարրերը. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ագրեսիվ և ամբարտավան քաղաքականությունը սպառնում է ողջ մարդկության գոյությանը՝ մերժելով բազմաբևեռ աշխարհակարգի սկզբունքները: Այս վարքագիծը կարող է հանգեցնել Երրորդ համաշխարհային պատերազմի բռնկմանը, որը, ի վերջո, կարող է վերածվել մարդկության ամբողջական ոչնչացման:
https://www.golosarmenii.am/am/article/137332/La-Jornada--amn-i-agryesiv-qaghaqakanvothyvone-yerrvord-hamashkharhayin-patyerazmi-khangyetsni

Sputnik Armenia,13 հոկտեմբեր, 2024: Նարատիվի հիմնական տարրերը.
ԱՄՆ նախագահի թեկնածու Դոնալդ Թրամփի խոսքով՝ Երրորդ համաշխարհային պատերազմը կարող է սկսվել առաջիկա 3–4 ամսվա ընթացքում՝ ԱՄՆ-ի մեղքով:
,https://am.sputniknews.ru/20241013/tramp-zayavil-chto-tretya-mirovaya-voyna-mozhet-nachatsya-v-techenie-3-4-mesyatsev-iz-za-ssha-81802446.html,

Sputnik Armenia, 18 նոյեմբեր, 2024: Նարատիվի հիմնական տարրերը. Ջո Բայդենի վարչակազմը, համագործակցելով ԱՄՆ ռազմաարդյունաբերական ոլորտի հետ, ձգտում է սկսել Երրորդ համաշխարհային պատերազմը մինչև Դոնալդ Թրամփի հնարավոր վերադարձը նախագահի պաշտոն: Այս նպատակին հասնելու համար, մասնավորապես, թույլ է տվել Ուկրաինային ռուսական տարածքում օգտագործել ամերիկյան զինատեսակներ: Ռուսաստանի նախագահի կարծիքով՝ սա ՆԱՏՕ-ի անմիջական ներգրավվածությունն է հակամարտության մեջ:
https://am.sputniknews.ru/20241118/syn-trampa-vpk-ssha-khochet-nachat-tretyu-mirovuyu-voynu-do-prikhoda-ottsa-k-vlasti-83099683.html

Sputnik Armenia, 26 օգոստոս, 2022: Նարատիվի հիմնական տարրերը. Վերոնշյալ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները՝ Երրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը կանխելու համար, այդ թվում՝

«հատուկ ռազմական գործողության» մեկնարկը: Հետևաբար, այս պայքարում Ռուսաստանի թշնամիներին աջակցող ցանկացած կազմակերպություն անմիջականորեն գործում է համաշխարհային հակամարտություն հրահրելու համար: https://am.sputniknews.ru/20220826/apokalipsis-esche-ne-nastupil-situatsiyu-udaetsya-uderzhivat---medvedev-47358541.html

Sputnik Armenia, 29 ապրիլ, 2020: Նարատիվի հիմնական տարրերը. Արևմուտքը, հատուկ շեշտը դնելով Միացյալ Նահանգների վրա, Ուկրաինան օգտագործել է որպես Ռուսաստանի հետ բախման դաշտ: Այդ նպատակով տարածել է կեղծ տեղեկատվություն և ապատեղեկացրել սեփական հանրությանը: Հետևաբար, Արևմուտքը նույնիսկ պատրաստ է հակառուսական սադրանքներ իրականացնել Ուկրաինայում:
https://am.sputniknews.ru/20220429/tretya-mirovaya---voyna-bez-veteranov-ili-komu-lozh-a-komu-smelaya-i-uspeshnaya-strategiya-41430997.html

Sputnik Armenia, 23.03.2023, 23.03.2023, Նարատիվի հիմնական տարրերը. ԱՄՆ-ն օգտագործում է Ռուսաստանի ներգրավվածությունը «հատուկ ռազմական գործողության» մեջ՝ ռուսական ռազմական արդյունաբերության դեմ նոր պատժամիջոցներ մտցնելու նպատակով: Այս քայլը նպատակ ունի թուլացնել Ռուսաստանը և այն դարձնել խոցելի Արևմուտքից հարձակումների նկատմամբ: Հատկանշական է, որ պատժամիջոցները տարածվել են նաև այն կազմակերպությունների վրա, որոնք պատասխանատու են ռուս զինված ուժերին ճառագայթային պաշտպանություն ապահովելու համար: Արևմտյան պատժամիջոցները, բացի Ռուսաստանի ռազմական անվտանգության թուլացումից, նպատակ ունեն նաև խարխլել երկրի տնտեսական կայունությունը՝ իջեցնելով ռուս քաղաքացիների կյանքի որակը և առաջացնելով զանգվածային գործազրկություն: https://am.sputniknews.ru/20230323/zapad-ne-brezgoval-nichem-mishustin-nazval-nastoyaschuyu-tsel-antirossiyskikh-sanktsiy-57116766.html

Sputnik Armenia, 1 մայիս, 2024: https://am.sputniknews.ru/20240501/v-minfine-ssha-zayavili-o-novykh-antirossiyskikh-sanktsiyakh-75192122.html;

Sputnik Armenia, 18.11.2024, 18 նոյեմբեր, 2024: Երրորդ համաշխարհային պատերազմի բռնկումից վախեցնող նարատիվ. ՆԱՏՕ-ին ենթարկվող ուկրաինական բանակը կարող է հրթիռային հարվածներ հասցնել, այդ թվում՝ Կուրսկի ատոմակայանի ուղղությամբ: Այս թեմայի շուրջ կարելի է առանձնացնել հետևյալ նարատիվային հոսքերը՝ https://am.sputniknews.ru/20241118/na-poroge-iii-mirovoy-ssha-britaniya-i-frantsiya-razreshili-sebe-raketnye-udary-po-rossii-83134397.html

- Փորձ հրահրել վախ՝ կապված Երրորդ համաշխարհային պատերազմի էսկալացիայի հետ:
- Փորձ առաջացնել վախ՝ կապված ռադիոակտիվ աղտոտման վտանգի հետ:
- Փորձ ներկայացնել Ուկրաինան և ՆԱՏՕ-ն որպես ագրեսիվ դերակատարներ, որոնք ձգտում են բաց ռազմական հակամարտության Ռուսաստանի հետ:

4. Եվրոպական արժեքների վարկաբեկումը և Սորոսի շուրջ դավադրական տեսությունները. Committee to Protect Freedom of Expression 2020 թվականի զեկույցի համաձայն՝ եվրոպական արժեքների վարկաբեկմամբ առավել ակտիվ զբաղվել են «Իրավունք» լրատվականը և ռուսաստանյան մեդիա հարթակները, այդ թվում՝ «RTR Planeta»-ն և մասնավորապես «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» ու «60 րոպե» հաղորդումները: Այս ոլորտում գլխավոր նարատիվների շարժառիթներից կարելի է առանձնացնել Ստամբուլի կոնվենցիայի և սեռական փոքրամասնությունների թեմաների վրա կատարվող հարձակումները:

Sputnik, 7.12.2021, Լիբերալ ժողովրդավարությունն ու Արևմուտքի քաղաքակրթությունը հանգեցնում են սպիտակամորթների հալածանքների, ԼԳԲՏ+ համայնքի քարոզի և երեխաների սեռի փոփոխության առաջխաղացման: https://arm.sputniknews.ru/20211207/shur-tvats-rasizm-serapvokhutjun-arevmutqy-paraktvel-e-dzakh-liberal-gaghaparneri-pattsharvov-36150885.html,

LiveNews, 20.04.2020, https://livenews.am/press/2020/39441/20/19/34/, հղում Ալի Խամենեիի խոսքերին, ըստ որոնց Արևմուտքի բարոյական անկումը, այդ թվում՝ COVID-19 համավարակի ընթացքում տարեցների բուժման անտեսումը, պայմանավորված է լիբերալ ժողովրդավարություններում տիրող անաստվածության և նյութապաշտության գերակայությամբ:
Hraparak, 6.12.2022, Հարցազրույց ռեժիսոր Հովհաննես Իշխանյանի հետ, ով կարծիք է հայտնում, որ Սորոսը գործում է Թուրքիայի շահերի համար և հակառուսական ծրագրերի միջոցով փորձում է վնասել Հայաստանին:
https://hraparak.am/post/487010cf0371958e03d8b12f0a1daba1,

Iravunk, 27 lipca 2019 r «Հայաստանին պատերազմ է հայտարարվել՝ նպատակ ունենալով ոչնչացնել մշակույթն ու մարդկանց: Ինչպե՞ս հաղթել»: https://www.iravunk.com/?p=176959&l=ru Գլխավոր նարատիվը՝ Արևմուտքը դեգրադացված է և սպառնում է Հայաստանի ավանդական արժեքներին:Հոդվածը փաստում է, որ Հայաստանում աճում են ավանդական արժեքների և ազգային մշակույթի դեմ ուղղված քայլերը: Հեղինակը նշում է, որ «գունավոր հեղափոխությունից» հետո երկրում սկսվել են քարոզչական և իրավական արշավներ Հայ Առաքելական Եկեղեցու դեմ, որոնք ֆինանսավորվում և աջակցվում են արևմտյան հիմնադրամների կողմից: Գլխավոր նարատիվը՝ Արևմուտքը դեգրադացված է և սպառնում է Հայաստանի ավանդական արժեքներին: Հատուկ ուշադրություն է դարձվում Ստամբուլի կոնվենցիայի Հայաստանի կողմից նախատեսվող ընդունմանը, որը հակասություններ է առաջացրել հասարակության

շրջանում՝ վախենալով օտար մշակութային նորմերի պարտադրումից: Հոդվածում ընդգծվում է, որ նմանատիպ նախաձեռնությունները դիմադրության են հանդիպել նաև այլ եվրոպական երկրներում, ինչպիսիք են Խորվաթիան և Լիտվան: Հեղինակը կոչ է անում պաշտպանել ազգային արժեքներն ու ավանդույթները արտաքին միջամտությունից:

6. Լեհաստանի դեմ ուղղված քարոզչական գործողություններ

Հայաստանում Լեհաստանի նկատմամբ ձևավորված ընկալումները հիմնականում դրական են, ինչը պայմանավորված է երկու ժողովուրդների պատմական բարեկամական հարաբերություններով, ինչպես նաև Լեհաստանում բնակվող հայկական սփյուռքի էական խնդիրների բացակայությամբ: Հայկական լրատվամիջոցներում Լեհաստանի մասին բացասական տեղեկություններ հազվադեպ են հրապարակվում: Հայկական մեդիայի բևեռվածությունը, որը կենտրոնացած է վարչապետ Փաշինյանի, Արևմուտքի, Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի և Արցախի կորստի գնահատականի շուրջ, միայն սահմանափակ չափով է անդրադառնում Լեհաստանի ներկայացմանը: Սա հիմնականում առնչվում է Ռուսաստանի և Ուկրաինայի պատերազմի հետ կապված թեմաներին՝ Լեհաստանի «ռուսաֆոբիայի», ենթադրյալ սահմանների վերանայման և Երրորդ համաշխարհային պատերազմի հրահրման համատեքստում: Նման բովանդակությունը հիմնականում ուղղված է հասարակության այն հատվածին, որը Ռուսաստանը դիտում է որպես դաշնակից և չի աջակցում Հայաստանի՝ դեպի Արևմուտք ուղղված շրջադարձին, իսկ դրա հիմնական աղբյուրը սովորաբար ռուսական լրատվամիջոցներն են: Որոշ չափով բացասական արձագանք կարող են առաջացնել նաև Լեհաստանի և Թուրքիայի համագործակցության մասին տեղեկությունները: Լեհաստանի նախագահի այցը Հայաստան չի հարուցել բացասական նարատիվ անգամ հակաարևմտյան լրատվամիջոցներում

(բացառությամբ մի քանի դեպքերի)։ Լեհաստանին վերաբերող բացասական նարատիվի հիմնական աղբյուրը ռուսական լրատվամիջոցներն են, այդ թվում՝ հայալեզու Sputnik Armenia-ն։

ա) Արտաքին գործոններով պայմանավորված

- Լեհաստանը ռուսաֆոբ է
- Լեհաստանը հրահրում է Ուկրաինայի պատերազմը և նպատակ ունի գրավել նրա արևմտյան մասը
- Լեհաստանը Թուրքիայի դաշնակիցն է, որը Հայաստանի թշնամին է։

բ) Ներքին գործոններով պայմանավորված

- Վարչապետ Փաշինյանի դեմ ուղղված տեղեկատվական գործողություններ, որոնք անուղղակիորեն վնասում են Լեհաստանի իմիջին։

գ) Գործողությունների օրինակներ

Լեհաստանի կողմից Ուկրաինայի արևմտյան շրջանների անեքսիայի կամ Ուկրաինայի բաժանման ծրագրերի վերաբերյալ նյութերը հիմնականում հայտնվում են բացառապես ռուսամետ նարատիվը պահպանող լրատվամիջոցներում և մեծամասամբ հիմնված են ռուսական աղբյուրների վրա։ Հայկական այլ լրատվամիջոցներում հրապարակվել են հոդվածներ, որոնցում նշվում է, որ Լեհաստանի մասնակցությամբ Ուկրաինայի բաժանման ենթադրյալ ծրագրերը ապատեղեկատվություն են։.

«Լուրեր», 6.05.2022, https://lurer.com/article/463251/am, Լեհաստանը սկսել է իրականացնել Ուկրաինայի արևմտյան շրջանների անեքսիայի ծրագիր, որպես աղբյուր նշելով ռուսամետ «Ընտրական հարթակ – Կյանքի համար» նախկին պատգամավորի Telegram-յան գրառումը։ (Տվյալը կրկնված է՝ MediaMall հարթակում, 6.05.2022, https://topnews.mediamall.am/?id=249123)

«Հայաստանի Հանրապետություն» (վերնագիրն այլևս գոյություն չունի), 12.04.2023, https://hhpress.am/mijazgayin/2023/18776/, Լուսինե Մխիթարյանի հոդվածը ներկայացնում է, որ Լեհաստանը պատերազմի շնորհիվ ընդլայնում է իր ազդեցությունը Արևմտյան Ուկրաինայում, ինչպես նաև նշում է, որ «որոշ վերլուծաբաններ եւ լրատվամիջոցներ նշում են համադաշնության մեջ Ուկրաինայի եւ Լեհաստանի մոտալուտ միաձուլման հնարավորության մասին։ Մեկ այլ տեսակետի համաձայն՝ ավելի իրական է դառնում Արեւմտյան Ուկրաինայի անեքսիան (գերմ. Anschluss՝ միացում- խմբ.)։ Օրինակ՝ «Niezależny Dziennik Polityczny» պորտալի սյունակագիր Հաննա Կրամերը նշում է, որ ԱՄՆ-ն կարող է մասնատել Ուկրաինան և երկրի արևմտյան հատվածը փոխանցել Լեհաստանին՝ Վարշավայից Կիեւի իշխանություններին ֆինանսական օգնություն ստանալու դիմաց։ Նարատիվը հիմնված է լեհալեզու ապատեղեկատվական ֆեյք լրատվականի նյութերի վրա։

Azg.am, 29.11.2024, հոդվածում նշվում է, որ Ուկրաինայի տարածքը բաժանվելու է Բրիտանիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Ռումինիայի միջև։ Հոդվածը հղվում է «ՌԴ արտաքին հետախուզության ծառայության մամուլի հաղորդագրությանը»։ Բացի այդ, նշվում է ՆԱՏՕ-ի ծրագիրը՝ Ուկրաինա ներխուժելու և այնտեղ 100 հազար խաղաղապահ զորք տեղակայելու մասին։ (Նույն տեղեկատվությունը ներկայացված է նաև Hayastan.news-ում՝ https://hayastan.news/am/post/34528)

https://azg.am/news/%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80%D5%A8/%D5%B8%D6%82%D5%AF%D6%80%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A2%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B6%D5%BE%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%AE-%D5%A2%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%A3%D5%A5/,

«Իրավունք» 18.01.2023, https://www.iravunk.com/?p=246450&l=am՝ հրապարակվել է ռուսական ֆեյք՝ կեղծ սքրինշոթ, որտեղ TVP1 հեռուստաալիքի եղանակի կանխատեսման քարտեզում Լեհաստանի տարածքը ներառում էր Արևմտյան Ուկրաինան: Հոդվածում ենթադրվում է, որ Լեհաստանը արդեն ընդունում է Արևմտյան Ուկրաինայի այդ տարածքը որպես իր մաս:

Politik.am, 25.03.2022, «Լեհաստանում ցույց են տվել Ուկրաինայի բաժանման քարտեզը»՝ որպես աղբյուր նշվում է ռուսամետ նախկին ուկրաինացի պատգամավոր Իլյա Կիվան: Ըստ հրապարակման՝ քարտեզը ցուցադրվել է լեհական TVP հեռուստաալիքով:

https://politik.am/am/lehastanum-cucadrel-en-ukrainayi-bazhanman-qartezy

NewsPress.am, 29.06.2023, կայքում հրապարակված հոդվածում ներկայացվում է, թե Լեհաստանն ու Լիտվան պատրաստվում են ներխուժել Ուկրաինա, իսկ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարել էր, որ Լեհաստանը ցանկանում է Ուկրաինայի միջոցով ոչնչացնել Ռուսաստանը՝ որպես անկախ պետություն:

https://www.newspress.am/?p=187326&l=am,

«Իրավունք», 07.05.2022, https://www.iravunk.com/?p=226234&l=ru Հոդվածում ներկայացվում է իբր Լեհաստանի պլանը՝ գրավելու Արևմտյան Ուկրաինան՝ շեշտելով, որ նման քայլը հնարավոր կլինի միայն Ռուսաստանի համաձայնությամբ: Նյութը հիմնված է Լեհաստանի նախագահի՝ Լեհաստանի և Ուկրաինայի միջև ապագայում սահմանների բացակայության վերաբերյալ մանիպուլյատիվ կերպով մեկնաբանված հայտարարության վրա, ինչպես նաև Ռուսաստանի Պետդումայի փոխնախագահ Օլեգ Մորոզովի մեկնաբանության:

Ռուսաֆոբիա և Ռուսաստանի դեսպանի վրա հարձակումներ Լեհաստանում (համատեքստ՝ այս տեղեկությունները կարող են ազդել միայն հասարակության որոշ հատվածների վրա, քանի որ դեսպանի նկատմամբ հարձակումն ինքնին չի համարվում շոկային իրադարձություն հայերի համար, ովքեր որպես ազգ ավելի հակված են զգացմունքային և ինտենսիվ արձագանքների):

- «Իրավաբան», 09.05.2023, https://iravaban.net/384728.html — Կադիրովը Լեհաստանի իշխանություններից պահանջել է պաշտոնական ներողություն, այն բանից հետո, երբ Անդրիևը խորհրդային զինվորների գերեզմանատանը ծաղկեպսակ դնելու փորձի ժամանակ հարձակման է ենթարկվել ագրեսիվ ամբոխի կողմից: Տեղեկատվությունը ներկայացված է բացասական երանգով՝ որպես աղբյուր նշելով Sputnik-ը:
- General News, 9.05.2023 — Անդրիևի վրա հարձակման մասին հաղորդագրությունում շեշտվում է, որ «ՌԴ դեսպանատան աշխատակիցները այցելել են հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու ֆաշիզմից Լեհաստանի ազատագրման համար զոհված զինվորների հիշատակին»: Հաղորդագրության աղբյուր՝ նշված է TASS-ը https://generalnews.am/hy/article/1ceb109ed740ea7df0ec3b7d4b6b3584/ Sputnik, 10.05.2023, հաղորդման մեջ նշվել է, որ Անդրիևի նկատմամբ հարձակումն մաս էր կազմում Լեհաստանի լայնածավալ ռուսաֆոբիական գործողությունների, և «տեղում ներկա ոստիկանը հայտարարել է, որ բողոքի ակցիան համաձայնեցված է եղել քաղաքապետարանի հետ»:
- https://arm.sputniknews.ru/20230510/rusastanum-lehastani-gvortseri-zhamanakavvor-havatarmatary-kanchvel-e-rd-agn-59457745.html;

- «Օրագիր», 16.11.2022, https://oragir.news/hy/material/2022/11/16/62437 — վերնագրում հնչում է հարց՝ արդյոք Լեհաստանը պատրաստ է ներողություն խնդրել Անդրիևից։ Համատեքստը հետևյալն է. Լեհաստանը գիշերը հրավիրել է Անդրիևին ԱԳՆ, կապված Պշևոդովոյի դեպքի հետ, և լեհական լրատվամիջոցները սկզբում մեղադրել են Ռուսաստանին, սակայն հետագայում ԱՄՆ-ն ու նախագահ Դուդան ընդունել են, որ այդ հրթիռը չի արձակվել Ռուսաստանից (աղբյուր՝ Զախարովայի Telegram-յան հաշիվը)։
- Oragir, 16.11.2022, https://oragir.news/hy/material/2022/11/16/62425 - «Լեհաստանի տարածքում ընկած հրթիռների բեկորները ուկրաինական S-300-ներն են»։ Պեսկովը նշել է, որ «Լեհաստանի արձագանքը հիստերիկ և ռուսաֆոբիկ էր»։
- Sputnik, 16.11.2022, «ԱՄՆ–ի արձագանքը «զուսպ» էր, Լեհաստանինը՝ «հիստերիկ». Պեսկովը՝ Լեհաստանում պայթյունի մասին» (Պշևոդովոյի միջադեպի համատեքստում) https://arm.sputniknews.ru/20221116/amni-ardzaganqy-zusp-er-lehastaniny-histerik-peskvovy-lehastanum-pajtjuni-masin-51366654.html,
- Sputnik, 22.10.2024, „Լեհաստանը փակում է Պոզնանում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոսությունը» վերնագրով հոդվածում ներկայացված է մի հայտարարություն, որը այս քայլը կապում է Արևմուտքի՝ Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու ենթադրյալ ծրագրերի հետ. «Վերջին շրջանում Արևմուտքում գնալով ավելի հաճախ են հնչում ուղիղ զինված բախման մտքեր դաշինքի և Ռուսաստանի Դաշնության միջև։ Կրեմլը հայտարարել է, որ ՌԴ-ն ոչ մեկին չի սպառնում, սակայն անտեսելու չէ այն գործողությունները, որոնք կարող են պոտենցիալ վտանգ ներկայացնել երկրի շահերի համար։ Բացի այդ, վերջին տարիներին Ռուսաստանը ՆԱՏՕ-ի

աննախադեպ ակտիվություն է արձանագրել իր արևմտյան սահմանների մոտ»:
https://arm.sputniknews.ru/20241022/lehastany-pakum-e-pvoznanum-rd-glkhavvor-hjupatvosutjuny-82152290.html

Խորհրդային զինվորների հուշարձանների ոչնչացում (համատեքստ՝ Հայերի մասնակցությունը խորհրդային բանակին Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում)

- 1in.am, 14.04.2022, https://www.1in.am/3097782.html՝ Լեհաստանում զանգվածաբար ապամոնտաժվում են խորհրդային զինվորներին նվիրված հուշարձանները, իսկ մինչ այդ դրանք պղծվել են: Տեղեկատվության աղբյուրն է՝ Sputnik:
- Sputnik, 21.05.2021, հոդվածում նշվում է, որ լեհերը, խորհրդային զինվորների հուշարձանները ոչնչացնելով, նմանվում են ադրբեջանցիներին և թուրքերին, որոնք քանդում են հայկական մշակութային ժառանգությունը
- https://arm.sputniknews.ru/20210521/voch-voq-alievin-thaj-hartser-chi-talis-27635532.htm

Ուկրաինայում տեղի ունեցող պատերազմի վերաբերյալ տեղեկություններ, որոնք Լեհաստանը ներկայացնում են որպես խաղաղության չձգտող պետություն:

- Panorama, 23.11.2024, Շվեյցարիայի կառավարությունն Ուկրաինայի պատճառով արգելել է ռազմական տեխնիկայի արտահանումը Լեհաստան

https://www.panorama.am/am/news/2024/11/23/%D5%87%D5%BE%D5%A5%D5%B5%D6%81%D5%A1%D6%80%D5%AB%D5%A1-

%D4%BC%D5%A5%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6/3081916

- 168.am, 10.04.2024, https://168.am/2024/10/04/2106408.html՝ Լուկաշենկոյի հայտարարությանը, ըստ որի՝ Բելառուսը պատրաստ է աջակցել Ուկրաինային՝ պաշտպանվելու Լեհաստանի կողմից Ուկրաինայի արևմտյան տարածքները գրավելու հնարավոր փորձերից:
- Sputnik, 10.07.2023, Լեհաստանը Ուկրաինայի հետ կնքել է անվտանգության համաձայնագիր և պատրաստակամություն է հայտնել աջակցել Ուկրաինային ավելի լայնածավալ ձևով, քան ՆԱՏՕ-ի մյուս անդամ երկրները, ինչը, ըստ նյութի, կարող է հանգեցնել ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև պատերազմի և «վտանգավոր է ողջ աշխարհի համար»: https://arm.sputniknews.ru/20240710/hrg-lehastany-mtadir-e-lvvovi-erknqum-voch-trichqajin-gvoti-steghtsel--78207725.html,

- **Նախագահ Անջեյ Դուդայի Հայաստանի կատարած այցի վերաբերյալ տեղեկություններ, որոնք ունեն կամ կարող են ունենալ բացասական ենթատեքստ:**

- Rusarminfo, 26.11.2024 թ., հարցազրույցում վերլուծաբան Վլադիմիր Բրուտերը պնդում է, որ նախագահ Դուդայի այցը Հայաստան հանդիսանում է նրա «կայսերական ծրագրերի» մաս: Ըստ Բրուտերի՝ Դուդան Հայաստանը դիտարկում է «Լեհաստանը ծովից ծով» գաղափարի շրջանակում՝ որպես «լեհական սահմանային գոտի»: https://rusarminfo.ru/2024/11/26/polsha-ot-morya-do-armenii-duda-v-erevane-ishhet-imperiyu-video/

- Yerevan Today, 26.11.2024, Լեհաստանի նախագահի հակառուսական ելույթը, https://yerevan.today/all/politics/147043/lehastani-naxagahy-hayastani-ambionn-ogtagortsec-hakarousakan-haytararoutyounner-anelou-hamar
- 168.am, 11.12.2024, https://168.am/2024/12/11/2139221.html՝ նախագահ Դուդայի Հայաստան կատարելիք այցի նախապատրաստական փուլում Հայաստանի իշխանությունները ֆինանսական անթույլատրելի սխալներ են գործել:

0. **Լեհաստանը Թուրքիայի բարեկամն է** (Լեհաստան–Թուրքիա համագործակցության մասին տեղեկությունները պարտադիր չէ, որ լինեն հակալեհական արշավի մաս, սակայն կարող են հասարակության որոշ շրջանակներում առաջացնել բացասական վերաբերմունք):
1. Armtimes, 31.01.2018, https://www.armtimes.com/hy/article/130238՝ «Հայ համայնքը բողոքում է Կրակովում թուրք զինվորի հուշարձան տեղադրելու ծրագրի դեմ»:Տեղեկությունը ներկայացվում է բավական չեզոք ձևով, սակայն կարող է առաջացնել այն տպավորությունը, որ Լեհաստանը ցանկանում է հարգանքի տուրք մատուցել թուրք զինվորներին, որոնք պատասխանատու են հայերի ցեղասպանության համար, չնայած նրանք որևէ արժանիք չունեն Լեհաստանի համար. աղբյուրը՝ segodnia.ru

0. Բացասական հնչեղություն ունեցող այլ տեղեկատվության օրինակներ

168.am, 14.11.2023, https://168.am/2023/11/14/1957306.html — վերնագիրը՝ «Հայերը պետք է ապրեն միջազգային հանրության կողմից ճանաչված տարածքում. ՀՀ-ում Լեհաստանի դեսպան», խեղաթյուրում է ասվածի իրական իմաստը: Բովանդակությունից պարզ է, որ Լեհաստանի դեսպան Պյոտր Սկվյեցինսկին նշել է, թե Լեհաստանը երբեք չի ճանաչել Արցախի

տարածքը որպես Հայաստանի մաս, սակայն խոսք չի եղել այն մասին, որ հայերը չպետք է այնտեղ բնակվեն: (Համատեքստ՝ հայտարարությունը արվել է Ադրբեջանի կողմից Արցախի գրավումից և բնակչության տեղահանումից կարճ ժամանակ անց):

- Sputnik, 23.22.2018, «Լեհաստանի մայրաքաղաքում հայերին ստիպել են թաքցնել Արցախի դրոշը»՝ տեղեկություն այն մասին, որ տուրիստական ցուցահանդեսի ընթացքում ադրբեջանցիները ստիպել են հեռացնել Արցախի դրոշը տաղավարներից մեկի վրայից: https://arm.sputniknews.ru/20181123/lehastanum-hayastani-nerkayacucchin-stipel-en-heracnel-arcakhi-droshy-15835618.html;

7. Դեպքի ուսումնասիրություն՝ Լեհաստանի դեմ ուղղված նարատիվի վերլուծություն՝ հիմնված DISARM մոդելի վրա

DISARM RED շրջանակային մոդել – տեղեկատվական տարածքում գործողությունների նկարագրման և տվյալների փոխանակման ձևաչափի միատեսակեցման փորձ

DISARM RED Framework մոդելի պատմությունը

DISARM RED (DISinformation Analysis & Risk Management RED) մոդելը վերլուծական գործիք է, որն օգտագործվում է տեղեկատվական տարածքում (ինֆոսֆերայում) հարձակողական գործողությունների նկարագրման համար: Դրանց վերլուծության հիմնական մարտահրավերներից մեկը հասկացությունների մեծ անհամաչափությունն է: Այս ոլորտում սպառնալիքների ուսումնասիրությամբ և

դրանց կանխարգելմամբ զբաղվող կազմակերպությունները մշակել են իրենց սեփական բառապաշարն ու տերմինաբանությունը՝ նմանատիպ գործունեությունը նկարագրելու համար: 21-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսերից սկսած, երբ շարունակաբար աճում է բազմադոմեն տեղեկատվական գործողությունների ինտենսիվությունը, որոնց բաղկացուցիչ մասն են նաև ազդեցության օպերացիաները, ի հայտ է եկել անհրաժեշտություն ապահով և հստակ տեղեկատվության փոխանակման այն կառույցների միջև, որոնք զբաղվում են այս սպառնալիքների հայտնաբերմամբ և դրանց դեմ պայքարով:

2017–2018 թվականների սկզբին Սառա-Ջեյն «SJ» Տերպը՝ կիբերանվտանգության մասնագետներից բաղկացած խմբի հետ միասին, սկսեց աշխատել արդեն գոյություն ունեցող թվային սպառնալիքները նկարագրող գործիքների հիբրիդային գործողությունների իրականությանը հարմարեցման ուղղությամբ: Կարճ ժամանակ անց ստեղծվեց DISARM-ի նախատիպը՝ AMITT շրջանակը (Adversarial Misinformation Influence Tactics & Techniques), որը սկսեցին օգտագործել ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն, ԱՀԿ-ն և ՄԱԿ-ը: DISARM RED-ի ներկայիս տարբերակը AMITT-ի և MITRE Corporation-ի կողմից ստեղծված SP!CE մոդելի համադրության արդյունք է՝ հիմնված դասական MITRE ATT&CK կիբերանվտանգության շրջանակի վրա, որը կիրառվում է կիբերտարածքում հարձակողական գործողություններում օգտագործվող մարտավարությունների և տեխնիկայի նույնականացման և նկարագրության համար3:

DISARM-ը լիովին բաց կոդով նախագիծ է, որը համակարգում է DISARM հիմնադրամը: Այն համատեղելի է STIX լեզվի և MISP հարթակի հետ, պարբերաբար թարմացվում է՝ իրականությունը ավելի ճշգրիտ նկարագրելու և նման մոդելների հետ առավել համատեղելի դառնալու նպատակով, ինչպիսին է, օրինակ, Meta Kill Chain-ը:

DISARM RED Framework մոդելի հիմնական հատկանիշներ

DISARM RED Framework մոդելը բաժանվում է մի քանի հատվածների՝ դասավորված որոշակի հիերարխիկ կառուցվածքով, որոնք նկարագրում են ազդեցության գործողություններում կիրառվող առանձին փուլերն ու գործիքները: Մոդելը սկսվում է «փուլերով» (phases), որոնք նշվում են «P» տառով սկսվող պիտակներով: Յուրաքանչյուր փուլի ներքո ընդգրկված են համապատասխան մարտավարություններ (tactics), որոնք նշվում են «TA» տառերով սկսվող պիտակներով: Իսկ մարտավարությունների կազմում ընդգրկված են տարբեր տեխնիկաներ (techniques), նշված «T» տառով սկսվող պիտակներով:

«P» պիտակները նկարագրում են տեղեկատվական գործողությունների 4 հիմնական փուլերը՝ պլանավորում, պատրաստում, իրականացում և գնահատում: Նրանց կազմի մեջ մտնող «TA» պիտակներով նշվող մարտավարությունները ցույց են տալիս յուրաքանչյուր փուլի նպատակները, որոնք իրականացվում են տարբեր գործիքների, այսինքն՝ «T» պիտակով նշվող տեխնիկայի կիրառմամբ: Փուլերի, մարտավարությունների և տեխնիկայի նկարագրությունը հասանելի է DISARM նախագծի պաշտոնական կայքում:

DISARM RED Framework մոդելի օգտագործման օրինակ՝

DISARM RED Framework մոդելը հատկապես օգտակար գործիք է միջադեպերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար: Այն թույլ է տալիս պարզ, միատեսակ և ստանդարտացված ձևով նկարագրել առկա իրողությունները՝ չթողնելով անորոշության կամ տարաձայնությունների տեղ: Այս շրջանակը հարմար է հատկապես տեղեկատվական տարածքում գործողությունների առաջին փուլում՝ դրանց ճանաչման համար, ինչպես նաև վերլուծության և հեղինակության (ատրիբուտացիայի) գնահատման ժամանակ, որտեղ այն գործիք է հանդիսանում՝ հստակ և կրկնվող տեխնիկաները նկարագրելու համար, ինչը օգտակար է ազդեցության գործողությունների հեղինակին նույնականացնելու համար: Նրա առավելությունն է STIX շարահյուսության հետ համատեղելիությունը, որը թույլ է

տալիս օգտագործել այն Open CTI նման հարթակներում:

DISARM-ի օգտագործման օրինակ է այն իրավիճակը, երբ վերլուծաբանը սոցիալական ցանցում հայտնաբերում է կեղծ հաշիվների ցանց, որոնք տարածում են նույն մեմը՝ փորձելով օրինականացնել մի նարատիվ, որն ավելի վաղ արդեն շրջանառվել էր այլ լրատվամիջոցում, օրինակ՝ ինտերնետային պորտալում: Framework-ի շնորհիվ հնարավոր է հստակեցնել, անվանել և դասակարգել կիրառված տեխնիկաները, դրանք կապել համապատասխան մարտավարությունների հետ, ապա փոխանցել տվյալները մյուս վերլուծաբանին, ով կարող է շարունակել դրանք համալրել և կատարելագործել հետախուզության շրջանակում:

DISARM RED framework-ի սահմանափակումները՝

DISARM RED framework-ը ճշգրիտ և օգտակար գործիք է, սակայն անհրաժեշտ է գիտակցել դրա սահմանափակումները: Չնայած DISARM RED-ը լավ գործիք է տեղեկատվական տարածքում առանձին միջադեպերի նկարագրության, հաշվետվությունների և OSINT հետաքննությունների ընթացքում ձեռք բերված թվային ապացույցների դասակարգման համար, այն չունի բավարար բաղադրիչներ՝ տվյալ գործունեության հոգեբանական ազդեցությունները մանրամասն ներկայացնելու, և բավական հեռու է այն մոդելներից, որոնք կիրառվում են հոգեբանական գործողությունների վերլուծության նպատակով:

DISARM RED-ը հոգեբանական ազդեցության նկարագրությունը սահմանափակում է միայն առաջին փուլում՝ պլանավորման ժամանակ կիրառվող մի քանի (մոտ մեկ տասնյակի չափ) տեխնիկայով: Framework-ը նկարագրում է այս տեխնիկաները որպես մարտավարական մակարդակում նպատակին հասնելու միջոցներ, մինչդեռ իրականում վերոնշյալ տեխնիկաները հաճախ հանդես են գալիս միաժամանակ թե՛ որպես գործիք, և թե՛ որպես ինքնին նպատակ: Դրանք ներառված են հոգեբանական

ազդեցության շատ ավելի լայն սպեկտրում, որն օգտագործվում է ազդեցության գործողություններում ներգրավված՝ հարձակվող կողմ հանդիսացող սուբյեկտների կողմից:

Ռուսաստանի ազդեցության գործողություն ՀԱՅԱՍՏԱՆԻ տեղեկատվական դաշտում. Լեհաստանին և Արևմուտքին ներկայացնելու կեղծ պատկեր որպես ագրեսորներ, որոնք ձգտում են բռնակցել Ուկրաինայի տարածքները:

Ուկրաինայի տեղեկատվական տարածքում իրականացված ռուսական ազդեցության գործողությունների վերլուծություն՝ հիմնված DISARM RED v1.6 framework մոդելի վրա

Ներածություն

Սկսած 2014-ին՝ Ուկրաինայի վրա հարձակման պահից, Կրեմլը հետևողականորեն կիրառում է ապատեղեկատվություն՝ իր ագրեսիվ քաղաքականությանը օրինական տեսք տալու համար: Ռուսական քարոզչությունը, հատկապես Ուկրաինայում ընթացող պատերազմի համատեքստում, հիմնված է մանրակրկիտ մշակված նարատիվ կառուցվածքի վրա, որի նպատակն է ազդել լսարանի վրա՝ խառնելով փաստերն ու հորինվածքները, ներգործելով հույզերի վրա և ձևավորելով կեղծ պատմական ենթատեքստ: Վերլուծությունը բացահայտում է տվյալ տեղեկատվական տարածքում կիրառվող արդի ապատեղեկատվության տեխնիկաներն ու նարատիվային մեխանիզմները: Վերջին օրինակներից մեկն է Ուկրաինան բաժանելու Արևմուտքի ենթադրյալ ծրագրերի մասին լայնորեն շրջանառվող պատումը:

Ռուսական քարոզչամեքենան շարունակում է իր ապատեղեկատվական

գործողությունները, որոնց հիմնական նարատիվները հիմնված են այն թեզի վրա, թե իբր Լեհաստանը, Հունգարիան և Ռումինիան ծրագրում են միացնել իրենց արևմտյան Ուկրաինայի տարածքները:

Հայաստանի տեղեկատվական տարածքի մոնիթորինգը ցույց է տվել, որ երկրում առկա են ռուսական լայնածավալ ազդեցության գործողությունների հետքեր, որոնց նպատակն է միջազգային հարթակում Լեհաստանի վարկաբեկումը՝ այն ներկայացնելով որպես ագրեսիվ և իմպերիալիստական նկրտումներ ունեցող պետություն: Կեղծ նարատիվների նպատակն է լսարանի մոտ ձևավորել այն համոզմունքը, թե Լեհաստանը պատրաստվում է անեքսիայի կամ օկուպացիայի ենթարկել Ուկրաինայի այն տարածքները, որոնք ժամանակին մաս են կազմել Երկրորդ Լեհական Հանրապետության:

DISARM v1.6 մոդելի համաձայն կիրառվող մարտավարություններն ու տեխնիկաները՝

ՓՈՒԼ	ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	ՏԵԽՆԻԿԱ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
P01 - Plan	**TA02 - Plan Objectives**	**T0066 - Degrade Adversary**	Ռուսաստանն օգտագործում է նարատիվներ, որոնք Լեհաստանը ներկայացնում են բացասական լույսի ներքո՝ նպատակ ունենալով վնասել նրա հեղինակությունը:
		T0079 - Divide	Լեհաստանը ներկայացվում է որպես ագրեսիվ և նեոիմպերիալիստական երկիր, որը գործում է «չար,

			կոլեկտիվ Արևմուտքի» թելադրանքով:
		T0138 - Motivate to act	Նպատակ է հետապնդվում Լեհաստանի և լեհերի նկատմամբ բացասական զգացմունքներ առաջացնելը:
		T0135 - Undermine	Փորձ՝ տպավորություն ստեղծելու, որ Լեհաստանը թաքցված մտադրություններ ունի Ուկրաինայի նկատմամբ և պլանավորում է նրա մեջքի ետևում անեքսիայի ենթարկել նրա տարածքների մի մասը:
P02 - Prepare	**TA07 - Select Channels and Affordances**	**T0152.004 - Website Asset**	Ռուսական կամ ռուսամետ կայքեր (RT, Sputnik): Հայաստանում գործող մի շարք լրատվական կայքեր բացահայտորեն ռուսամետ են, ռուսամետ կամ ակամա տարածում են իրենց նպատակներին համապատասխանող պատմություններ (Lurer, Hhpress, Azg, Topnews, Hayastan News, Iravunk), օրինակ՝ https://lurer.com/article/463251/am, https://hhpress.am/mijazgayin/2023/18776/, https://azg.am/news/%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%

			D6%80%D5%A8/%D5%B8%D6%82%D5%AF%D6%80%D5%A1%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A2%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B6%D5%BE%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%AE-%D5%A2%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%A3%D5%A5/, https://topnews.mediamall.am/?id=249123, https://hayastan.news/am/post/34528, https://www.iravunk.com/?p=246450&l=am, https://politik.am/am/lehastanum-cucadrel-en-ukrainayi-bazhanman-qartezy,
		T0151.004 - Chat Platform	Telegram հաղորդակցիչ
		T0151.001 - Social Media Platform	Սոցիալական ցանցեր, ինչպիսիք են Facebook և Instagram
		T0151.008 - Microblogging Platform	X (նախկինում՝ Twitter)
	TA14 - Develop Narratives	**T0003 - Leverage Existing Narratives**	Փորձ ապացուցելու, որ Լեհաստանը ցանկանում է գրավել Ուկրաինայի արևմտյան տարածքները Արևմուտքի «օրհնությամբ»:

		T0022 - Leverage Conspiracy Theory Narratives	Նշումներ, որ ՆԱՏՕ-ի երկրները՝ Լեհաստանը, Ռումինիան, Մեծ Բրիտանիան և Գերմանիան ցանկանում են բաժանել Ուկրաինան իրենց միջև: Կեղծիքներ, թե Լեհաստանը իրականացնում է «Արևելյան ծովերի վերադարձ» ծրագիրը, ինչը ենթադրում է Երկրորդ Հանրապետության նախկին հողերի միավորումը Երրորդ Հանրապետության հետ:
		T0068 - Respond to Breaking News Event or Active Crisis	Կախված ներկայիս քաղաքական իրադարձություններից՝ Ռուսաստանը տարբեր հաղորդագրություններում տարածում է կեղծ նարատիվներ:
	TA06 - Develop Content	**T0023 - Distort Facts**	Կեղծ հոդվածների տեղադրում վեբկայքերում, որոնք հարվածում են Լեհաստանի հեղինակությանը: Կեղծ քարտեզների հրապարակում, որոնք ներկայացնում են բաժանված Ուկրաինան և տարբեր պետությունների ազդեցության գոտիները:
		T0085 - Develop Text-Based Content	
		T0086 - Develop Image-Based Content	

			Կեղծված՝ վերամշակված քարտեզների օգտագործում, որոնք իբր ցուցադրվել են Լեհաստանի հեռուստատեսությամբ: Հղում անելով 2014 թվականի իրադարձություններին, երբ Ռուսաստանը Լեհաստանին ենթադրում էր Ուկրաինայի որոշ տարածքների անեքսիա՝ օգտագործելով արխիվային հեռուստատեսային նյութեր (քարտեզներ, որոնք ներկայացնում են ռուսական առաջարկը)՝ իբր՝ ապացուցելու Լեհաստանի "իրական ծրագրերը":
	TA15 - Establish Assets	**T0092 - Build Network**	Կեղծ նարատիվների տարածում՝ օգտագործելով բազմաթիվ ինտերնետային պորտալներ, որոնք կամ միմյանց են մեջբերում, կամ տարածում նույն տեղեկատվությունը:
	TA16 - Establish Legitimacy	**T0097.102 - Journalist Persona** **T0097.108 - Expert Persona**	Պաշտոնական ռուսական աղբյուրների մեջբերում, ինչպիսիք են արտասահմանյան հետախուզությունը՝ SWR, որի նպատակն է ենթադրել

		T0097.111 - Government Official Persona	փոխանցվող «տեղեկությունների» իսկությունը:
		T0097.202 News Outlet Persona	Հղում տալ մասնագետների, քաղաքական գործիչների (ներառյալ՝ Ուկրաինայի ռուսամետ կուսակցություններից՝ օրինակ՝ «Ընդդիմադիր պլատֆորմից՝ Կյանքի համար»), ինչպես նաև լրագրողների հայտարարություններին:
P03 - Execute	**TA09 - Deliver Content**	**T0115 - Post Content**	Կեղծ նարատիվների տարածում՝ որպես հոդվածներ վեբկայքերում, կեղծված եվրոպական քարտեզների գրաֆիկաներ և սոցիալական ցանցերի գրառումներ:
	TA17 - Maximise Exposure	**T0119 - Cross-Posting**	Նույն կամ շատ նման բովանդակության հրապարակում բազմաթիվ տարբեր լրատվական ծառայություններում և տարբեր հարթակներում:

Ամփոփում

Այս արշավի ներկայիս ընթացքը ենթադրում է, որ Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան և այլ արևմտյան երկրներ արդեն «պլանավորում» են Ուկրաինայի բաժանումը կոնկրետ տարածքների: Քարոզչությունը փորձում է վարկաբեկել

Արևմուտքի աջակցությունը Ուկրաինային և այդ պնդումները ներառել ՆԱՏՕ-ի հարձակողական ծրագրերի մասին ապատեղեկատվության մեջ:

Այս հաղորդագրությունները միաժամանակ օգտագործվում են քարոզչական նպատակներով, որոնք Ռուսաստանը ներկայացնում են կեղծ լույսի ներքո՝ որպես իրեն պաշտպանող երկիր, այլ ոչ թե ռազմականորեն հարձակվող Ուկրաինայի վրա (հակառակ տրամաբանության ռազմավարություն):

Ռուսաստանը համառորեն օգտագործում է նարատիվ, որը Ուկրաինան և Արևմուտքը համեմատում է նացիզմի հետ: Նման կոչերը նպատակ ունեն առաջացնել հուզական արձագանք և «օրինականացնել» Ուկրաինայի դեմ ագրեսիայի մասին ռուսական ապատեղեկատվությունը որպես «դենացիֆիկացման» գործողություն կամ, ավելի լայն իմաստով, որպես Արևմուտքի դեմ պաշտպանական գործողություն՝ ենթադրելով, որ Արևմուտքի գործողությունները բնույթով սադրիչ և վիրավորական են և հանգեցնում են հակամարտության:

Այս մեխանիզմների ըմբռնումը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն ավելի խորապես վերլուծել քարոզչությունը, այլև ավելի արդյունավետ պաշտպանվել դրանից.

8. Դեպքի ուսումնասիրություն՝ Հայաստանի եվրոպական ձգտումների թուլացում

Ռուսաստանի և Ադրբեջանի նարատիվային պատերազմը Հայաստանի եվրոպական ուղու դեմ

Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարները հաճախ առաջ են մղում միմյանց հետ սերտորեն կապված, երբեմն էլ նույնական նարատիվներ, որոնք խոչընդոտում են

Հայաստանի՝ Եվրոպական միության հետ մերձեցման ջանքերին: Երկու երկրներն էլ ունեն ընդհանուր շահ՝ կանխելու Հայաստանի և Եվրոպայի միջև հարաբերությունների խորացմանը: Ռուսաստանը ձգտում է կանխել Հայաստանի՝ Մոսկվայից կախվածության նվազեցումը, մինչդեռ Ադրբեջանը փորձում է պահպանել տարածաշրջանային ուժերի հավասարակշռությունը՝ թուլացնելով Հայաստանի պաշտպանական կարողությունները և տոկունությունը: Երկուսն էլ այդ նպատակներին հասնելու համար համակարգված կերպով գործում են տեղեկատվական դաշտում՝ կիրառելով նմանատիպ նարատիվներ Հայաստանի դեմ:

Ռուսական և ադրբեջանական ապատեղեկատվական արշավները՝ ուղղված Հայաստանում Եվրոպական միության դիտորդական առաքելությանը (EUMA)

2023 թվականին, Հայաստանի կառավարության պաշտոնական դիմումի հիման վրա, Եվրոպական միությունը ստեղծեց ԵՄ դիտորդական առաքելություն (EUMA)՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև միջազգային ճանաչում ունեցող սահմանի հայկական կողմում: EUMA-ի առաքելությունն է վերահսկել եւ տեղեկացնել տեղում տեղի ունեցող զարգացումների մասին, նպատակը՝ բարձրացնել հակամարտությունից տուժած տարածքների բնակչության անվտանգությունը եւ խթանել վստահության կառուցումը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Սակայն EUMA-ն հաճախ դառնում է Ռուսաստանի եւ Ադրբեջանի քարոզչական ապարատի ապատեղեկատվական արշավների թիրախ:

2024 թվականի մարտին Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը մեղադրեց ԵՄ դիտորդական առաքելությանը (EUMA)՝ ՆԱՏՕ-ի առաքելության վերածվելու մեջ՝ Նորվեգիայից, Կանադայից և ԱՄՆ-ից մասնագետների ներգրավման պատճառով: Նմանատիպ հայտարարությամբ 2024 թվականի սեպտեմբերին հանդես եկավ նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը՝ պնդելով, որ Կանադայի ներկայացուցիչների ներգրավմամբ EUMA-ն փաստացի վերածվել է

ՆԱՏՕ-ի առաքելության:

Սա EUMA-ի դեմ համընկնող հռետորաբանության առաջին դեպքը չէր: 2023 թվականի մարտին Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան հայտարարել էր, որ EUMA-ն Հայաստանի տարածքից լրտեսում է Ռուսաստանը, Իրանը և Ադրբեջանը՝ նպաստելով տարածաշրջանում «լարվածության» աճին: Կրկնելով այդ պնդումները՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը մեղադրել էր ԵՄ դիտորդական առաքելությանը «բինոկլային դիվանագիտությամբ» զբաղվելու մեջ: Բացի այդ, Ադրբեջանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Քարիմ Վալիևը հայտարարել էր, որ EUMA-ն սրում է իրավիճակը Հարավային Կովկասում:

Meltwater գործիքի օգտագործումը՝ ռուսական և ադրբեջանական մեդիայում EUMA-ի վերաբերյալ հիշատակումների վերլուծության համար, ցույց տվեց, որ երկու երկրներն էլ ակտիվորեն անդրադարձել են EUMA-ին 2024 թվականի փետրվարին և մարտին: Հետաքրքիր է, որ նշված մեդիաները որոշակի օրերին հրապարակել են մոտավորապես հավասար քանակի հոդվածներ EUMA-ի վերաբերյալ, ինչը ենթադրում է համադրելի հետաքրքրվածություն թեմայի նկատմամբ: Այդ հոդվածների հիմնական մասը ներառել է նարատիվներ, որոնց նպատակը եղել է վարկաբեկել EUMA-ն:



Գրաֆիկը ներկայացնում է EUMA-ին վերաբերող հրապարակված հոդվածների քանակը ռուսական և ադրբեջանական լրատվամիջոցներում:

Երկու դեպք, երբ ադրբեջանական և ռուսական լրատվամիջոցներում EUMA-ի վերաբերյալ հրապարակումների թիվը հասել է նմանատիպ գագաթնակետերի՝ 2023 թվականի մարտի 20-ին և ապրիլի 4-ին, համընկնում են Մարիա Զախարովայի հայտարարություններին EUMA-ի վերաբերյալ: Բացի այդ, ապրիլի 3-ին Զախարովայի արված հայտարարությունը, ըստ որի առաքելությունը վերածվում է ՆԱՏՕ-ի առաքելության, հնչեցվել է նաև ապրիլի 5-ին Բրյուսելում կայացած Հայաստան–ԵՄ–ԱՄՆ եռակողմ հանդիպումներից անմիջապես առաջ



Էկրանային կադրեր՝ Զախարովայի պնդումը EUMA-ի ՆԱՏՕ-ի առաքելության վերածվելու մասին արտացոլող վերնագրերով: Վերին շարքում ներկայացված են օրինակներ ռուսական լրատվամիջոցներից, իսկ ներքևում՝ ադրբեջանական լրատվամիջոցներից, որը ցույց է տալիս ռուսական և ադրբեջանական քարոզչական գործողությունների ու հաղորդագրությունների փոխկապակցվածությունը:.

Ռուսաստանն ու Ադրբեջանը արձագանքում են Ֆրանսիայի որոշմանը՝ Հայաստանին զենք մատակարարելու մասին

Վերջին տարիներին Ֆրանսիան դարձել է Հայաստանի կարևոր գործընկեր՝ տրամադրելով առաջադեմ ռազմական տեխնիկա՝ տարածաշրջանային մարտահրավերների պայմաններում երկրի պաշտպանունակությունը ուժեղացնելու նպատակով: Հայաստանին զենք մատակարարելու Ֆրանսիայի որոշումը արագորեն առաջացրեց Ադրբեջանի և Ռուսաստանի բացասական ու

փոխկապակցված արձագանքները: 2023 թվականի նոյեմբերի 21-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Ֆրանսիան «հիմք է դնում նոր տարածաշրջանային պատերազմի»՝ զինելով Հայաստանին: Բաքուն մեղադրեց Ֆրանսիային «ոչ միայն իր նախկին և ներկայիս գաղութները, այլև մեր տարածաշրջանը՝ Հարավային Կովկասը, ապակայունացնելու մեջ»: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը նույնպես մեղադրեց Ֆրանսիային տարածաշրջանում զինված հակամարտության վերսկսումը սադրելու մեջ: Ռուսաստանի ԱԳՆ մամուլի խոսնակ Մարիա Զախարովան նշեց, որ Ֆրանսիան, որը ձախողվել է խաղաղություն պահպանելու իր ջանքերում Աֆրիկայում, այժմ փորձում է այդ ձախողումը փոխհատուցել՝ ստանձնելով խաղաղարարի դեր Կովկասում:

Ուշագրավ է, որ 2024 թվականի փետրվարի 24-ին, երբ Ֆրանսիան և Հայաստանը ստորագրեցին պաշտպանական համաձայնագրեր, ռուսական և ադրբեջանական մեդիաներում հրապարակվեց գրեթե նույն քանակի հոդվածներ այդ իրադարձության վերաբերյալ (համապատասխանաբար՝ 130 և 127): Նույն թեմայով հրապարակումների թիվը կրկին աճեց 2024 թվականի հունիսին՝ այն բանից հետո, երբ հայտարարվեց Ֆրանսիայից CAESAR տեսակի հաուբիցների գնման մասին: Ադրբեջանական մեդիան առանձնակի շեշտադրում էր Մարիա Զախարովայի հայտարարությունները, իսկ ռուսական լրատվամիջոցները լայնորեն լուսաբանում էին Իլհամ Ալիևի դիտարկումները այս թեմայի վերաբերյալ: Հետաքրքիր է, որ 2023 թվականի նոյեմբերին, երբ նախագահ Ալիևը մեղադրեց Ֆրանսիային նոր պատերազմի հիմքը դնելու մեջ, նրա հայտարարությունն ավելի լայն արձագանք գտավ ռուսական մեդիայում, քան ադրբեջանականում: Մեդիայի վերլուծության

համաձայն՝ նոյեմբերի 21-ին Ալիևի հայտարարությանը անդրադարձած





Վերին գրաֆիկը ցույց է տալիս ռուսական և ադրբեջանական լրատվամիջոցներում հրապարակված հոդվածների քանակը՝ Ֆրանսիա–Հայաստան ռազմական համագործակցության վերաբերյալ։ Ներքևի գրաֆիկը ներկայացնում է ռուսական և ադրբեջանական լրատվամիջոցներում Ալիևի կողմից Ֆրանսիայի հասցեին հնչեցված մեղադրանքներին վերաբերվող հոդվածների քանակը։

հրապարակումների թիվը ադրբեջանական լրատվամիջոցներում կազմել է 51, մինչդեռ ռուսական մեդիայում այն հասել է 111-ի։

Ադրբեջանական լրատվամիջոցներում Ալիևի հայտարարությունների լուսաբանման մեծ մասը կենտրոնացած էր նրա՝ Ֆրանսիան նեոգաղութատիրության մեջ մեղադրող ելույթների վրա։ Պետական վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական լրատվամիջոցները շեշտադրում էին Ֆրանսիայի գաղութային անցյալը՝ համահունչ լինելով Ալիևի և Ռուսաստանի

արտաքին գործերի նախարարության առաջ քաշած ավելի լայն նարատիվին: Այս հռետորաբանությունը նպատակ ունի վարկաբեկել Ֆրանսիային և նրա գործընկերությունը Հայաստանի հետ՝ ներկայացնելով Ֆրանսիային որպես երեսպաշտ տերություն, որը քննադատում է ուրիշներին՝ անտեսելով սեփական շահագործման և գաղութատիրության պատմությունը: Կառավարամետ լրատվամիջոցներում հայտնվել են վերնագրեր, օրինակ՝ «Ադրբեջանի նախագահ. մարդկության գաղութատիրության պատմության մեջ արյունալի հանցագործությունների մեծ մասը կատարվել է Ֆրանսիայի կողմից»: Սա լրացուցիչ ամրապնդում է այն նարատիվը, որը միտված է խաթարել Ֆրանսիայի հեղինակությունը տարածաշրջանում և զրոյացնել նրա աջակցությունը Հայաստանին:

Ադրբեջանի կառավարության վերահսկողության տակ գտնվող և կառավարամետ լրատվամիջոցների վերնագրերը, որոնք աջակցում են Ալիևի նոյեմբերի 21-ի ելույթին, ուժեղացնում են նրա մեղադրանքները՝ շեշտելով Ֆրանսիայի գաղութային պատմությունը և նպաստելով Ֆրանսիա–Հայաստան ռազմական համագործակցությունը խաթարող նարատիվին։

Միևնույն ժամանակ Կրեմլի վերահսկողության տակ գտնվող խոշոր ռուսական քարոզչական լրատվամիջոցները, ինչպիսիք են RT-ն, *Komsomolskaya Pravda*-ն, *Vzglyad*-ը և *Regnum*-ը, կրկնեցին Ալիևի հայտարարությունը և մեղադրեցին Ֆրանսիային «տարածաշրջանը պատերազմի մեջ ներքաշելու» մեջ՝ կենտրոնանալով տարածաշրջանի ապակայունացման նարատիվի վրա։ Այնուամենայնիվ, գաղութատիրության թեման նույնպես տեղ էր գտել։ 2023 թվականի նոյեմբերի 21-ին հրապարակված 111 հոդվածներից 30-ը վերնագրերում օգտագործել էին «գաղութատիրություն» կամ «նեոգաղութատիրություն» բառերը, ինչն ուժեղացրել է ադրբեջանական նարատիվը Ֆրանսիայի դեմ՝ այդ կերպ ազդելով նաև ռուսական լսարանի վրա։



Կրեմլի վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցների օրինակներ, որոնք տարածում են Ալիևի մեղադրանքները Ֆրանսիայի դեմ՝ հատուկ շեշտադրությամբ նոր պատերազմի և գաղութատիրության թեմաների վրա։

Ռուսաստանն ու Ադրբեջանը փորձում են հարցականի տակ դնել Հայաստանի՝ Եվրոպայի և Միացյալ Նահանգների հետ եռակողմ բանակցությունների լեգիտիմությունը։

2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում կայացավ եռակողմ հանդիպում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենի, ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Խոսեպ Բորելի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի մասնակցությամբ։ Հանդիպման ընթացքում Եվրոպական միությունը ներկայացրեց 270 միլիոն եվրո արժողությամբ դիմակայության և

զարգացման ծրագիր, իսկ Միացյալ Նահանգները հայտարարեցին Հայաստանին տրամադրելու 65 միլիոն դոլարի ֆինանսական աջակցություն:

Ինչպես նախորդ հանդիպումների դեպքում, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարները հանդես եկան զարմանալիորեն նմանատիպ պնդումներով: Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Բրյուսելի հանդիպման նպատակն էր խաթարել տարածաշրջանային համագործակցությունը և «ստեղծել բաժանարար գծեր ու մեկուսացնել Ադրբեջանը»: Նմանատիպ ձևակերպումներով Մարիա Զախարովան քննադատեց մասնակիցներին՝ հայտարարելով, թե հանդիպումը «հակառուսական» էր: Նա մեղադրեց նրանց «Հարավային Կովկասում նոր բաժանարար գծեր գծելու» և «Ադրբեջանը մեկուսացնելու» քաղաքականություն առաջ մղելու մեջ: Զախարովան նաև Արևմուտքին մեղադրեց Հայաստանը օգտագործելու մեջ՝ տարածաշրջանում անկայունություն հրահրելու համար խաղաղություն խթանելու փոխարեն և կրկին ընդգծեց, որ Ռուսաստանը աջակցում է Ղարաբաղի հայերի վերամիավորման վերաբերյալ Ադրբեջանի ծրագրին:

Meltwater-ի կողմից իրականացված վերլուծության արդյունքներով՝ եռակողմ հանդիպման օրը ադրբեջանական մեդիայում հրապարակվել է ավելի քան 230 հոդված այդ իրադարձության վերաբերյալ, մինչդեռ ռուսական մեդիայում՝ ավելի քան 130, և թեմային անդրադարձները շարունակվել են նաև հաջորդ օրերին: Զախարովայի՝ Հայաստանին վերաբերող հայտարարությունների հիշատակումների հետագա որոնման արդյունքում ռուսական լրատվական կայքերում հայտնաբերվել է ավելի քան 3800, իսկ ադրբեջանական մեդիայում՝ ավելի քան 2100 հիշատակում: Ադրբեջանական լուսաբանման ծավալը գերազանցել է ռուսականին ապրիլի 18-ին, ինչը համընկել է ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովայի պարբերական մամուլի ճեպազրույցի հետ:





Վերին գրաֆիկը ներկայացնում է ռուսական և ադրբեջանական լրատվամիջոցներում հրապարակված այն հոդվածների քանակը, որոնք վերաբերում են Հայաստանի հարաբերություններին Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ: Ստորին գրաֆիկը ցույց է տալիս ռուսական և ադրբեջանական մեդիայում հրապարակված այն հոդվածները, որոնք պարունակում են Մարիա Զախարովայի և Հայաստանի վերաբերյալ հիշատակումներ:

Հետաքրքիր է, որ Զախարովայի ապրիլի 18-ի ճեպազրույցը ռուսական լրատվամիջոցներում գրեթե չլուսաբանվեց. Meltwater-ի տվյալներով արձանագրվել է ընդամենը 32 հիշատակում: Իսկ նրա հայտարարությունների ադրբեջանական օրակարգին համահունչ լինելու պատճառով այդ ճեպազրույցը ադրբեջանալեզու լրատվամիջոցներում լուսաբանվել է 106 անգամ: Զախարովայի մեջբերումների սովորական ընդգծումներից բացի, հինգ ադրբեջանական

կայքերում հայտնաբերվել է ինը նույնական հոդված՝ «Արևմուտքի վտանգավոր ծրագիրը. ինչի՞ համար է օգտագործվելու Հայաստանին տրամադրված 10 միլիոն եվրոն» վերնագրով: Այս գումարը վերաբերում էր Հայաստանի և ԵՄ-ի միջև նախնական համաձայնագրին՝ Եվրոպական խաղաղության հիմնադրամից 10 միլիոն եվրո հատկացնելու՝ հայկական զինված ուժերը հզորացնելու նպատակով: Հաղորդագրություններում շեշտվել են Զախարովայի մեկնաբանությունները և ԵՄ աջակցությունը ներկայացվել է որպես Հայաստանը հակառուսական հարթակի վերածելու փորձ:



Հոդվածների օրինակներ, որոնք ուժեղացնում են Զախարովայի հայտարարությունները և պնդում, թե Արևմուտքի աջակցությունը Հայաստանին նպաստում է տարածաշրջանում նոր լարվածության ստեղծմանը:

Ռուսաստանն ու Ադրբեջանը բացասական տեղեկություններ են տարածում ԵՄ–Հայաստան վիզային ազատականացման երկխոսության վերաբերյալ։

2024 թվականի սեպտեմբերին Եվրամիությունն ու Հայաստանը սկսեցին բանակցություններ վիզային ռեժիմի ազատականացման վերաբերյալ։ Կանխատեսվում է, որ բանակցությունները կտևեն մի քանի տարի, որի ընթացքում Հայաստանը պետք է իրականացնի համապարփակ և լիբերալ բարեփոխումներ՝ ԵՄ չափանիշներին համապատասխանելու համար։

Ռուսաստանն ու Ադրբեջանը կրկին տարածեցին նմանատիպ բացասական հաղորդագրություններ այս իրադարձության վերաբերյալ։ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ ԵՄ-ի հետ վիզային ռեժիմի ազատականացումը «կհանգեցնի երիտասարդ և տնտեսապես ակտիվ մարդկանց զգալի արտահոսքի դեպի Եվրոպա և կունենա բացասական ազդեցություն Հայաստանի տնտեսության և անվտանգության վրա»։ Զախարովան նշեց, որ Եվրոպան դիտավորյալ ուշացնում է վիզային ռեժիմի ազատականացման գործընթացը՝ դարձնելով հայերին «եվրոպացիների պարբերական քաղաքական ինտրիգների պատանդներ»։ Նմանապես, Ադրբեջանի պաշտոնական լրատվական գործակալությունը՝ Azertag-ը, հայտարարեց, որ Եվրոպա մուտքն առանց վիզաների կվատթարացնի Հայաստանի ժողովրդագրական վիճակը և կհանգեցնի «երկրի դատարկմանը»։ Ադրբեջանում կառավարամետ փորձագետները հանդես են եկել նմանատիպ փաստարկներով և կանխատեսումներով։

9. Առաջարկություններ

ա) Տեղեկատվական միջավայրի ամփոփում

Հայաստանի տեղեկատվական միջավայրը խիստ բևեռացված է՝ կապված Ռուսաստանի և Արևմուտքի նկատմամբ դիրքորոշումների, ինչպես նաև վարչապետ Նիկոլ Փաշինյանի և նրա գլխավոր քաղաքական հակառակորդ՝ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի շուրջ։ Արևմտամետ և եվրոպամետ կողմնորոշմամբ լրատվամիջոցները, որպես կանոն, փորձում են պահպանել մասնագիտական չափանիշները և կիրառել չեզոք լեզու։ Սակայն նրանք անքննադատ չեն իշխանությունների նկատմամբ. որոշ լրատվամիջոցներ քննադատում են Նիկոլ Փաշինյանի քաղաքականությունը՝ այն համարելով բավարար չափով արևմտամետ չլինող։ Նույն լրատվամիջոցներում հաճախ Ռուսաստանը ներկայացվում է որպես երկիր, որը դավաճանել է Հայաստանին Ադրբեջանի հետ պատերազմում և սպառնում է նրա անվտանգությանը։ Իսկ ռուսամետ լրատվամիջոցները հաճախ օգտագործում են կոշտ և ագրեսիվ լեզու՝ հատկապես վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեմ, նրան մեղադրելով դավաճանության, Սորոսի շահերը սպասարկելու (որոնք, ըստ այդ աղբյուրների, ադրբեջանամետ և թուրքամետ են) և հայկական հողերը Ադրբեջանին հանձնելու մեջ։ Այս լրատվամիջոցներում հաճախ իդեալականացվում է Բագրատ Գալստանյանի կերպարը։

Հայաստանի տեղեկատվական միջավայրի վրա խոր ազդեցություն է թողնում 2020 թվականին Ադրբեջանի հետ տեղի ունեցած 44-օրյա պատերազմում կրած պարտության և Արցախի կորստի հետևանքով ձևավորված տրավման, որի պատճառով շուրջ 120.000 հայ բնակիչներ ստիպված էին լքել իրենց տները։ Պարտության պատճառների հետ հաշտվելու դժվարությունը նպաստել է հանրային դաշտում դավադրապաշտական վարկածների տարածմանը, որոնց մի մասը սնվում

է ռուսական քարոզչությունից՝ նպատակ ունենալով շեղել ուշադրությունը Ռուսաստանի՝ Հայաստանի նկատմամբ ունեցած դաշնակցային պարտավորությունների չկատարումից: Այն հանգամանքը, որ Հայաստանը փոքր երկիր է և վերջին տարիներին քաղաքական զարգացումները զգալիորեն ազդել են ոչ միայն հայերի կյանքի, այլև նրանց հուզական վիճակի վրա (առաջին հերթին՝ զայրույթի, անարդարության զգացման և վախի), մեծացնում է նրանց ընկալունակությունը դավադրության տեսությունների նկատմամբ: Մեկ այլ կարևոր գործոն, որը հուզականորեն պայմանավորում է հայերի իրականության ընկալումը, Մերձավոր Արևելքի իրավիճակն է, կապված Լիբանանում և Սիրիայում ապրող բազմամարդ հայկական համայնքների ու ջիհադիստների հանդեպ վախի հետ, ինչը համադրվում է Ռուսաստանի՝ իբրև Մերձավոր Արևելքում քրիստոնեության պաշտպան ներկայացնող քարոզչական կերպարի հետ:

Քաղաքականության նկատմամբ հուզական վերաբերմունքը, ինչպես նաև տեղեկատվության ընկալման ձևը, պայմանավորված են նաև պատմական հիշողությամբ՝ հարուստ պատմության և մշակույթի հանդեպ հպարտությամբ, 1915 թվականին Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությամբ ու պատմական Հայաստանի մաս կազմած բազմաթիվ տարածքների կորստով ձևավորված տրավմայով: Դրան միանում են նաև Ռուսաստանի դերի երկիմաստությունը հայոց պատմության մեջ և խորհրդային ժամանակաշրջանի հանդեպ հակասական վերաբերմունքը: Վերջին հանգամանքի մասով՝ ավելի հաճախ կասկածի տակ է դրվում Ռուսաստանի՝ հայ ժողովրդի պատմության մեջ, այդ թվում՝ Ադրբեջանի դեմ Արցախի համար մղված պայքարում, ենթադրյալ դրական դերի վերաբերյալ թեզը: Խորհրդային շրջանի հիշողության և դրա տեղեկատվության ընկալման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից կարևոր գործոններ են՝ խորհրդային բանակում հայերի նշանակալի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ԽՍՀՄ-ի նկատմամբ որոշակի նոստալգիկ վերաբերմունքը՝ պայմանավորված ներկայիս սոցիալ-

տնտեսական դժվարություններով, ինչպես նաև այդ ֆոնին խորհրդային անցյալի իդեալականացումը: Գարեգին Նժդեհը Հայաստանի տեղեկատվական դաշտում հաճախ ներկայացվում է որպես հայրենասիրության օրինակ և կարևոր պատմական գործիչ: Զարմանալի է, որ այն հանգամանքը, որ նա պայքարել է ռուս բոլշևիկների դեմ, մահացել է խորհրդային բանտում, իսկ Ռուսաստանը դժգոհություն է հայտնել նրա հուշարձանի տեղադրման կապակցությամբ Երևանում (Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին), չի խանգարում նրան, որ Նժդեհի կերպարը շարունակի կիրառվել որպես խորհրդանշական անձնավորություն նաև ռուսամետ շրջանակներում

Հայաստանի տեղեկատվական միջավայրի վրա ազդում է նաև խոսքի ազատությունը, որը բնորոշ չէ հարևան երկրների մեծ մասին: Սակայն լուրջ խնդիր է մնում լրատվամիջոցների ֆինանսավորումը: Ռուսամետ լրատվամիջոցների զգալի մասը փաստացի վերահսկվում է Ռուսաստանի հետ կապ ունեցող օլիգարխների և բիզնես կառույցների կողմից, որոնք աջակցում են նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին: Մի շարք լրատվամիջոցներ ֆինանսական և բովանդակային աջակցություն են ստանում եվրոպական և ամերիկյան հաստատություններից՝ մասնագիտական չափորոշիչների պահպանման ուղղությամբ: Այնուամենայնիվ, հայկական տեղեկատվական միջավայրի զգալի հատվածը շարունակում է հիմնականում հիմնվել ռուսական աղբյուրներից ստացվող լուրերի՝ առանց քննադատական վերլուծության տարածման վրա: Սա պայմանավորված է, մի կողմից, այդ աղբյուրների հեշտ հասանելիությամբ և սեփական թղթակիցների ցանցի սահմանափակությամբ, մյուս կողմից՝ ռուսերենի լայն տարածմամբ Հայաստանում, ինչպես նաև այն հանգամանքով, որ բազմաթիվ հայ լրագրողներ աշխատել են ռուսական մեդիայում: Ռուսական լրատվամիջոցները նույնպես անմիջական ազդեցություն են ունենում Հայաստանի տեղեկատվական միջավայրի վրա՝ հանդիսանալով հակաարևմտյան ապատեղեկատվության և մանիպուլյացիաների

հիմնական աղբյուրներից մեկը, որոնք ազդում են ճանաչողական դաշտի վրա: Բացի այդ, ԱՄՆ-ում մեծ թվով և լավ կազմակերպված սփյուռքը նույնպես տիրապետում է իր սեփական մեդիա գործիքներին և ազդեցություն է գործում Հայաստանի տեղեկատվական միջավայրի վրա:

բ) Ռազմավարական վերլուծություն. տարածաշրջանային իրավիճակի ազդեցությունը Լեհաստանի ռազմավարական նպատակների վրա

Լեհաստանում Հայաստանի և Հայաստանում Լեհաստանի ընկալումը դրական է, և այս երկրի ինտեգրումը ԵՄ-ին ծառայում է թե՛ Լեհաստանի, թե՛ Հայաստանի շահերին: Հայաստանի արևմտամետ կուրսը քաղաքական և տնտեսական կայունության հասնելու, ինչպես նաև Հայաստանի համար կործանարար ռուսական ազդեցություններից դուրս գալու միակ ուղին է: Վերջիններս հիմնված են հասարակական կյանքի օլիգարխացման, համատարած կոռուպցիայի և, ի վերջո, պետության ծայրահեղ թուլացման վրա, ինչը այն դարձնում է անկարող դիմակայելու Ադրբեջանի ագրեսիային: Լեհաստանի համար Հարավային Կովկասում ռուսական ազդեցության ցանկացած թուլացում ցանկալի է, իսկ ժողովրդավարության և եվրոպական արժեքների աջակցությունը մի երկրում, որի պատմական քաղաքակրթական կապերը Եվրոպայի հետ անվիճելի են, ոչ միայն բարոյական անհրաժեշտություն է, այլև արժեքային հիմք ինչպես Եվրոպայի, այնպես էլ Լեհաստանի համար: Ժողովրդավարական Հայաստանի աջակցության բացակայությունը կխաթարի ողջ եվրոպական նարատիվի վստահելիությունը՝ կապված Եվրոպայի նվիրվածության հետ այնպիսի արժեքների, ինչպիսիք են ժողովրդավարությունը, անհատական ազատությունը, խոսքի ազատությունը և մարդու իրավունքները: Վրաստանի փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարացման և ռուսական ազդեցությունից դուրս գալու գործընթացները անշրջելի չեն: Հետևաբար, ԵՄ-ն պետք է դասեր քաղի Վրաստանի փորձից, որպեսզի այն չկրկնվի

Հայաստանում, այսինքն՝ պետք է մասնավորապես ակտիվորեն աջակցի Հայաստանի եվրոպամետ կուրսին և դրան առնչվող բոլոր քաղաքացիական նախաձեռնություններին, ինչպես նաև ուժեղացնի Հայաստանի դիմադրողականությունը երկրում ռուսական FIMI գործողությունների նկատմամբ։

Լեհաստանի դերը ԵՄ-ի կողմից Հայաստանի արևմտամետ կուրսի աջակցման գործում պետք է լինի վճռորոշ, քանի որ Լեհաստանը ոչ միայն կարևոր անդամ պետություն է ԵՄ-ում և միշտ եղել է արևելյան քաղաքականության ակտիվ կողմնակից՝ նպատակ ունենալով ԵՄ-ի ընդլայնումը՝ նախկին ԽՍՀՄ-ի կազմում եղած ժողովրդավարական երկրների ներառմամբ և այդ կերպ ռուսական ազդեցության ոլորտի սահմանափակմամբ, այլև հաշվի առնելով պատմական պայմանները և հայ համայնքի նշանակությունը Լեհաստանի պատմության մեջ։ Բացի այդ, Լեհաստանը, որը տարիներ շարունակ բախվում է Ռուսաստանից եկող հիբրիդային սպառնալիքների, այդ թվում՝ FIMI-ի, ունի համապատասխան փորձառություն և գիտելիքներ՝ նման գործողություններին հակազդելու և դիմադրողականությունը ամրապնդելու համար։ Ցավոք, վերջին տարիներին լեհ–հայկական հարաբերությունները չեն պահպանվել ցանկալի ինտենսիվության մակարդակով։ Լեհաստանի Հանրապետության նախագահի 2024 թվականի նոյեմբերին Հայաստան կատարած այցելությունը առաջինն էր 2011 թվականից ի վեր, չնայած այդ ընթացքում Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետություններ կատարվել են բազմաթիվ բարձր մակարդակի այցելություններ։ Հատկանշական է, որ հայկական լրատվամիջոցները՝ անկախ իրենց արևմտամետ կամ ռուսամետ կողմնորոշումից, այդ այցը լուսաբանել են դրական կամ առնվազն չեզոք տոնով։ Սա վկայում է Լեհաստանի զգալի ներուժի մասին՝ որպես կամուրջ Հայաստանի և Եվրոպայի միջև։ Հետևաբար, անհրաժեշտ է ակտիվացնել քաղաքական շփումները, այդ թվում՝ ամենաբարձր մակարդակով։

Լեհաստանը պետք է նաև ակտիվորեն աջակցի Հայաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման բանակցային գործընթացին՝ հստակ ընդգծելով Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանումը և նրա տարածքի նկատմամբ լիակատար ինքնիշխանության հարգումը: Միևնույն ժամանակ, այս գործընթացը չպետք է սահմանափակի Հայաստանի զինված ուժերի արդիականացմանը, որի իրականացման գործում Լեհաստանը ևս պետք է մասնակցություն ունենա՝ հատկապես նկատի ունենալով, որ Հայաստանը դեռ մի քանի տարի առաջ էր հետաքրքրություն հայտնել նման համագործակցության նկատմամբ: Բացի այդ, Լեհաստանը պետք է հանդես գա որպես Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ մուտքի վիզաների ազատականացման ջատագով և նպաստի գիտական ու կրթական փոխանակման հնարավորությունների ընդլայնմանը՝ մասնավորապես Erasmus+ ծրագրի շրջանակում:

գ) Տարածաշրջանում ռուսական քարոզչության հիմնական ուղերձների ամփոփում

Ռուսական քարոզչությունը կենտրոնանում է Արևմուտքի հեղինակությունը խաթարելու և նարատիվի տարածման վրա, ըստ որի՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պատասխանատու է 2020 թվականի 44-օրյա պարտված պատերազմի և Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթման համար: Այս կերպ Ռուսաստանը հետապնդում է երկու հիմնական նպատակ. առաջին՝ շեղել ուշադրությունը այն փաստից, որ չի կատարել իր դաշնակցային պարտավորությունները Հայաստանի և Արցախի բնակչության նկատմամբ, և երկրորդ՝ վարկաբեկել Հայաստանի ներկայիս կառավարության արևմտամետ կուրսը՝ նրա վրա ճնշում գործադրելով այդ քաղաքականությունը փոխելու համար: Այս նարատիվի համաձայն՝ Ռուսաստանը ներկայացվում է որպես Հայաստանի միակ հուսալի դաշնակիցը, իսկ համագործակցության սահմանափակումը, այդ թվում՝ ՀԱՊԿ-ից դուրս գալը,

ներկայացվում է որպես քայլ, որը վտանգի տակ է դնում Հայաստանի անվտանգությունը՝ բարձրացնելով ադրբեջանա-թուրքական ներխուժման և հայկական պետականության վերացման ռիսկը։ Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի կողմից պարտավորությունների չկատարումը քողարկվում է Փաշինյանի և նրա թիմի հասցեին հնչեցվող մեղադրանքներով՝ դավաճանության և հայկական տարածքները դիտավորությամբ Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ՝ իբր Սորոսի հանձնարարականներով։ Արևմուտքը, ըստ այս նարատիվի, օգտագործում է Հայաստանին որպես գործիք Ռուսաստանի դեմ հիբրիդային պատերազմի մեջ՝ միաժամանակ չմիջամտելով Ադրբեջանի կամ ադրբեջանա-թուրքական հնարավոր ներխուժման դեպքում։ Ըստ ռուսական նարատիվի՝ Արևմուտքի քաղաքականությունը Հարավային Կովկասում մեծացնում է տարածաշրջանային պատերազմի բռնկման վտանգը, որը կհանգեցնի Հայաստանի վերացմանը, եթե վերջինս չպահպանի դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ։ Այս նարատիվը համադրվում է նաև Ուկրաինայում ընթացող պատերազմի վերաբերյալ պնդումներին, որոնցում Արևմուտքը ներկայացվում է որպես ագրեսոր և մեղադրվում է երրորդ համաշխարհային պատերազմ հրահրելու մտադրության մեջ։ Բացի այդ, Արևմուտքը ներկայացվում է որպես այլասերված ուժ, որը պայքարում է քրիստոնեական կրոնի դեմ և խթանում է ԼԳԲՏ արժեքները։

Ռուսական FIMI գործողություններին արդյունավետ հակազդելու համար անհրաժեշտ է մշտադիտարկել Հայաստանի տեղեկատվական միջավայրը՝ ներառյալ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն լեզվով շրջանառվող նյութերը, և արագ արձագանքել ապատեղեկատվության կամ ճանաչողական արշավների ցանկացած դրսևորման, որոնք շահարկում են հայկական պատմական տրավմաները, հավաքական հիշողությունը, ինչպես նաև այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են զայրույթը, վիրավորվածության զգացումը և վախը։ Ռուսական նարատիվներին հակազդող հաղորդումները պետք է լինեն թափանցիկ և հենվեն ընդհանուր քաղաքակրթական արժեքների վրա՝ ընդգծելով Հայաստանի տեղը

ժողովրդավարական եվրոպական պետությունների ընտանիքում: Անհրաժեշտ է նաև զարգացնել և ամրապնդել փաստերի ստուգմամբ զբաղվող հարթակները Հայաստանում՝ ապահովելով նրանց միջև և ազդեցության գործողություններին հակազդող լեհական կազմակերպությունների միջև մշտական և գործնական համագործակցություն: Այս քայլերին նպաստում է այն հանգամանքը, որ Հայաստանը ներկայում ժողովրդավարական պետություն է, և նրա իշխանությունները բաց են նման համագործակցության համար, ինչը (ինչպես ցույց է տալիս Վրաստանի օրինակը) կարող է փոխվել, եթե համապատասխան գործողություններ չիրականացվեն: Ժողովրդավարության ամրապնդումը, Հայաստանի անկախացումը ռուսական ազդեցությունից և նրա դիմադրողականության բարձրացումը FIMI գործողությունների նկատմամբ, անշուշտ բխում են երկրի շահերից:

դ) Իրականացման ուղիներ

Առաջարկվում է ձեռնարկել հետևյալ քայլերը, որոնց իրականացումը հիմնավորված է զեկույցում ներկայացված դիտարկումներով և եզրակացություններով.

- Մասնագետների գործուղում Հայաստան՝ տեղական գործընկերների հետ համագործակցության ամրապնդման և մշտական գործընկերային կենտրոնների ձևավորման նպատակով: Այդ կենտրոնները կշարունակեն իրականացնել տեղեկատվական միջավայրի մոնիտորինգ, կկասեցնեն մանիպուլյացիաները և կզարգացնեն դրանց դիմակայելու կարողությունները:
- Միջազգային համաժողովի կազմակերպում՝ զեկույցի ներկայացման նպատակով: Համաժողովին կմասնակցեն փորձագետներ, գիտական շրջանակների ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության գործիչներ և պետական պաշտոնյաներ Լեհաստանից, Հայաստանից և զեկույցում ընդգրկված այլ երկրներից:

- Կիրառման և լավագույն փորձի ուղեցույցների մշակում (տեղական գործընկերների հետ համատեղ):
- Ուսանողների համար ուսուցողական նյութերի մշակում և դասընթացների իրականացում՝ տեղական գործընկերների հետ համատեղ։

- Տեղական մասնակիցների հետ հաղորդակցման ալիքի ստեղծում (որոնց հետ համագործակցություն կհաստատվի իրականացվող քայլերի արդյունքում)՝ միասնական աշխատանքային և մենթորական միջավայր ձևավորելու նպատակով
- Հասարակական և մեդիա կրթության ոլորտում միջոցառումների և գործիքների մշակում, ներդրում և գնահատում՝ միջազգային ապատեղեկատվության և արհեստական բանականության տեխնոլոգիաների վտանգավոր կիրառման վերաբերյալ։ Գործիքները կարող են ներառել տեղեկատվական նյութեր (թռուցիկներ, լավագույն փորձի կանոնակարգեր, white paper սոցիալական ցանցերում ԱԲ-ի կիրառման վերաբերյալ)։ Դրանց շնորհիվ տեղական համայնքները կկարողանան, օրինակ, ձևակերպել առաջարկություններ և ակնկալիքներ ապատեղեկատվության դեմ պայքարի օրենսդրական ու իրավական դաշտի վերաբերյալ։
- Մեդիա-նախագծի մեկնարկ՝ ուղղված Հայաստանի տեղեկատվական միջավայրի անվտանգության ապահովման ոլորտում լավագույն փորձի տարածմանը, ինչպես նաև Հայաստանում հայտնաբերված առավել կարևոր ապատեղեկատվական և քարոզչական արշավների մասին հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը։
- Դրամաշնորհային ծրագրի ավարտից հետո՝ գործունեության շարունակականությունն ապահովող և դրա արդյունքների երկարաժամկետ պահպանմանը միտված հետագա քայլերի մշակումը։

Ե) Դասընթացներ

Զեկույցում ներկայացված դիտարկումներին և եզրակացություններին հիմք ընդունելով՝ առաջարկվում են հետևյալ գործողությունները.

- Դասընթացների անցկացում DFRLab-ի կողմից, որոնք ուղղված են սեմինարների շրջանավարտներին (ծրագրային գործողություններ 1-4), ինչպես նաև որոշում կայացնողներին, փորձագետներին, լրագրողներին, ազդեցիկ անձանց և կարծիքի ձևավորողներին: Դասընթացների նպատակն է ձևավորել հմտություններ և գիտակցություն տեղեկատվական անվտանգության ոլորտում, այսինքն՝ տեղեկատվական սպառնալիքների և ապատեղեկատվության հայտնաբերումը, ազդեցության և մանիպուլյացիաների արշավների մեղմացումը, թվային դիմադրողականության ամրապնդումը վնասակար նարատիվների համատեքստում:
- Տեղեկատվական միջավայրի անվտանգության վերաբերյալ մի շարք դասընթացներ, այդ թվում՝ DISARM մոդելի վերաբերյալ ուսուցում, FIMI արտաքին միջամտության հայտնաբերման գործողություններ, fact checking, մեդիա կրթություն:
- Դասընթացների շնորհիվ ակնկալվում է ապատեղեկատվության հայտնաբերման և վնասազերծման արդյունավետության բարձրացում, ինչպես նաև քաղաքացիական կրթության որակի բարձրացում տվյալ ոլորտում:
- Դասընթացների շնորհիվ նախագիծը կբարձրացնի Հայաստանում ակադեմիական, հետազոտական շրջանակների և մեդիայի կարողությունները՝ ապատեղեկատվական արշավները (այդ թվում՝ արհեստական բանականության տեխնիկայով իրականացվող) հայտնաբերելու և դրանց դեմ պայքարելու ուղղությամբ, ինչպես նաև

կբացահայտի օտար դերակատարների տարածած ապատեղեկատվական նարատիվները, որոնք միտված են Լեհաստանի, Արևմուտքի և ժողովրդավարական արժեքների վարկաբեկմանը։

Դասընթացների արդյունքում կզարգացվեն, կիրագործվեն և կգնահատվեն քաղաքացիական ու մեդիագրագիտության ոլորտում կիրառվող գործիքներ՝ ապատեղեկատվության թեմայով։ Նախագիծը կտրամադրի բարձրորակ զեկույցներ և նյութեր, որոնք կընդգրկեն առաջարկությունների փաթեթ՝ նպաստելով հուսալի գիտելիքի տարածմանը և ապատեղեկատվության դեմ պայքարի լավագույն փորձի տարածմանը։

- Նախագիծը նախատեսում է մշակել երկարաժամկետ ռազմավարություն, որը կապահովի ձեռքբերված արդյունքների կայուն պահպանումը և կնպաստի ապատեղեկատվության դեմ պայքարի նախաձեռնությունների շարունակական զարգացմանը։

զ) Տեղեկատվական և կրթական գործողություններ

Առաջարկվում են հետևյալ գործողությունները, որոնց իրականացումը հիմնավորված է զեկույցում ներկայացված դիտարկումներով և եզրակացություններով. մեդիա դաշտում տեղեկատվական ակտիվություն, մեդիա նախագծի մեկնարկ, ինչպես նաև սեմինարների և աշխատաժողովների կազմակերպում։ Այս գործողությունների նպատակն է հնարավորինս լայն շրջանակի հասցնել տեղեկատվություն նախագծի իրականացման մասին, ներկայացնել դրա հիմնական նպատակները, ժամանակացույցը և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև կիսվել փորձով տարբեր երկրների համապատասխան կառույցների հետ, որոնք ներգրավված են ռուսական ազդեցության գործողություններին հակազդելու գործում։ Այս գործողություններից կօգտվեն տեղեկատվական միջավայրի և մեդիա հաղորդագրությունների սպառողները և ստեղծողները, այդ թվում՝ որոշում կայացնողներ, փորձագետներ, լրագրողներ,

ազդեցիկ անձինք, կարծիք ձևավորողներ, ակադեմիական և հետազոտական շրջանակներ (գիտահետազոտական ինստիտուտներ, վերլուծական կենտրոններ), քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՀԿ-ներ)։ Սա վերաբերում է ոչ միայն Լեհաստանում գործող կառույցներին, այլև դաշնակից երկրներին և հատկապես այն պետություններին, որոնք առավել խոցելի են ռուսական ազդեցության գործողությունների նկատմամբ։

Մեդիա նախագիծը կնպաստի տեղեկատվական միջավայրի անվտանգության ոլորտում լավագույն փորձի տարածմանը և կզգուշացնի նպատակային երկրում հայտնաբերված ամենակարևոր ապատեղեկատվական և քարոզչական արշավների մասին։ Նախագծի արդյունքում կուժեղանա հասարակության դիմադրողականությունը ապատեղեկատվության նկատմամբ և կբարձրանա հանրային իրազեկվածությունը՝ ապատեղեկատվական արշավների ազդեցության վերաբերյալ տարբեր տարածաշրջաններում, այդ թվում՝ Իրաքում։ Կանոնավոր զեկույցներն ու տեղեկատվական արշավները կնպաստեն հասարակության գիտելիքի մակարդակի բարձրացմանը թե՛ Եվրոպայում և Լեհաստանում, և թե՛ Հայաստանում ու այն պետություններում, որոնք առավել խոցելի են ռուսական ազդեցության գործողությունների նկատմամբ։ Սա կխորացնի հանրային գիտակցումը՝ ապատեղեկատվության ազդեցության վերաբերյալ երկրի և տարածաշրջանի անվտանգության ու կայունության վրա։

Բացի այդ, մեդիա ակտիվությունը՝ հեռուստատեսային և ռադիոհաղորդումների, ինչպես նաև մամուլին, ինտերնետային պորտալներին և փոդքաստներին տրվող հարցազրույցների ձևաչափով, կծառայի լայն հանրությանը հասնելու, նրանց գիտելիքի և դիմադրողականության բարձրացման նպատակին, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության զարգացմանը և հայ-լեհական բարեկամական հարաբերությունների խորացմանը։

է) Հասարակական բևեռացման կանխարգելում և հաղթահարում

Հայաստանում հասարակության բևեռացումը շատ խորն է, և ռուսական ապատեղեկատվությունը հանդես է գալիս որպես այս գործընթացը խթանող հիմնական գործոն: Ռուսաստանի նպատակն է հրահրել հասարակական պոռթկում վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության դեմ՝ այդ կերպ իրականացնելու ոչ ժողովրդավարական հեղաշրջում, տապալելու ժողովրդավարությունը Հայաստանում և վերադարձնելու երկիրը ռուսական ազդեցության ոլորտ: Քանի որ բևեռացման վրա ազդող հիմնական գործոններն են արցախյան հարցի հետ կապված հայ ժողովրդի տրավմայի շահագործումը և Արևմուտքի վստահելիության խաթարումը՝ ապատեղեկատվության միջոցով, ապա ակնկալվում է, որ այս գործողություններին հակազդող միջոցառումները կնպաստեն բևեռացման նվազեցմանը և Հայաստանում ժողովրդավարության տապալման բացասական սցենարի կանխարգելմանը: Դրան կարող է նպաստել նաև Լեհաստանի դրական իմիջը Հայաստանում, որն իր հերթին կուժեղացնի վստահությունը լեհական կազմակերպությունների ձեռնարկած նախաձեռնությունների նկատմամբ:

ը) Հետագա ուսումնասիրություններ

- Հայաստանի դեմ ուղղված տեղեկատվական սպառնալիքների վերաբերյալ բաց աղբյուրների հիման վրա կատարված հետազոտություններ և վերլուծություններ:
- Պարբերական գործողություններ թվային հետաքննությունների ոլորտում, ինչպես նաև Հայաստանի տեղեկատվական տարածքի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով ապահովել տվյալ երկրների տեղեկատվական միջավայրի իրավիճակի երկարաժամկետ պատկերացում, ինչպես նաև արձագանքել հնարավոր ընթացիկ միջադեպերին և դրանք վերլուծել:

- Արդյունք՝ հոդվածներ (case study), թվային հետաքննություններ և կարճաժամկետ զեկույցներ/մոնիտորինգներ, որոնք կներկայացնեն նախագծով ընդգրկված պետությունների տեղեկատվական տարածքի կամ դրանցում արձանագրված տեղեկատվական միջադեպերի վերաբերյալ ընդհանուր պատկերացում:
- Ռուսաստանի և այլ դերակատարների կողմից կիրառվող մեթոդների ու գործողությունների վերաբերյալ հետագա էմպիրիկ հետազոտությունների անցկացում՝ ուղղված Լեհաստանի, Արևմուտքի և ժողովրդավարական արժեքների դեմ իրականացվող ապատեղեկատվությանը, մանիպուլյացիային և այլ ազդեցության գործողություններին, ներառյալ Իրաքի տեղեկատվական դաշտում տարածվող հաղորդագրությունների բովանդակության վերլուծությունը:
- Հայ լրագրողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացում՝ օտարերկրյա տեղեկատվական աղբյուրների օգտագործման ժամանակ լավագույն փորձի կիրառման և մանիպուլյացիաների նկատմամբ դիմադրողականության ամրապնդման ուղղությամբ:
- Արհեստական բանականության վրա հիմնված վերլուծական գործիքների մշակում, ներառյալ կեղծ բովանդակության ավտոմատ հայտնաբերման մեխանիզմները, տեղեկատվության տարածման օրինաչափությունների վերլուծությունը, ինչպես նաև բնական լեզվի վերլուծության ալգորիթմների և մեխանիզմների ստեղծումը՝ լեզվի կառուցվածքի, տոնի և համատեքստի հիման վրա կեղծ լուրերի նույնականացման նպատակով:
- Զարգացնել միջազգային համագործակցությունը Հայաստանում FIMI-ի դեմ պայքարի ոլորտում՝ նմանատիպ գործունեություն իրականացնող այլ հասարակական կազմակերպությունների հետ գործընկերություն հաստատելով:
- Մասնագիտական և մեթոդական աջակցություն՝ Հայաստանում փաստերի ստուգման հարթակների զարգացման համար:

- Ապատեղեկատվության նկատմամբ ընկալունակության հոգեբանության վերաբերյալ հետագա հետազոտությունների իրականացում՝ ներառյալ լսարանների վրա ազդեցության մեխանիզմները, ինչպես նաև նախնական համոզմունքների (ապրիորի) և նախապաշարմունքների դերակատարությունը ապատեղեկատվության նկատմամբ զգայունության ձևավորման գործընթացում: